

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՋԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ Ա Ն Բ Ե Ր
Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

14

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի
որոշմամբ


Խմբագրական մասին

Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (գլխավոր խմբագիր), Բ. ԶՈՒԳԱՍՂՅԱՆ, Հ. ՓԱՓԱԶՅԱՆ,
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ (պատասխանատու փառապարտ)



5000000000
Բ ————— 91—84
703 (02)—84

© Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1984



L. S. Brown

ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԽՈՉԻԿՅԱՆ

1982 թ. մարտի 12-ին կյանքից հեռացավ սովետահայ անվանի պատմաբան, բանասեր-աղբյուրագետ, Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խոչիկյանը:

Լ. Խոչիկյանը ծնվել է 1918 թ. մայիսի 1-ին, Երևան քաղաքում: 1935 թ. ավարտելով Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, 1940 թ. աշխատանքի է անցել Մատենադարանում, սկզբից որպես բիրլիոգրաֆ, ապա՝ ձեռագրական բաժնի վարիչ, իսկ 1954 թվականից մինչև իր կյանքի վերջին օրը՝ որպես տնօրեն: 28 տարի անընդմեջ վարելով այդ պատասխանատու պաշտոնը, Լ. Խոչիկյանը որպես գիտնական և գիտության կազմակերպիչ մեծ ավանդ է մուծել հին հայերեն ձեռագրերի ամենամեծ հավաքածուի ուսումնասիրման, նրա ֆոնդերի հարստացման և բարձր որակավորման ձեռագրագետ-բանասերների պատրաստման գործում: Այդ տարիներին Մատենադարանը որպես ձեռագրական մշակույթի ուսումնասիրման ու պահպանման եզակի գիտական կենտրոն ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Այստեղ Լ. Խոչիկյանի ղեկավարությամբ ծավալվեց լայն աշխատանք մատենագրական հուշարձանների հետազոտման և հրատարակման գծով, բացվեցին ուսումնասիրությունների նոր ասպարեզներ, կապեր հաստատվեցին սովետական և արտասահմանյան ձեռագրական կենտրոնների հետ:

Լինելով ներհուն պատմաբան ու բանասեր ակադ. Հ. Մանանդյանի աշակերտը, Լ. Խոչիկյանը երիտասարդ տարիքից համակվեց ձեռագիր մատյանի հանդեպ աննահանջ սիրով, մատյանի, որն իր մեջ պարունակում է շրացահայտված բազում գաղտնիքներ և հետազոտողին պարզում հայտնագործության բերկրանքը: Լ. Խոչիկյանի համար աշխատանքը ձեռագրի վրա ստեղծագործական պրոցես էր, որն իր մեջ ընդգրկում էր հուշարձանի մանրակրկիտ զրբագիտական հետազոտությունը՝ նրա բովանդակության և պատմամշակութային արժեքի համակողմանի հետազոտման հետ մեկտեղ:

Գիտական գործունեության ողջ ընթացքում ամեն մի ձեռագրի հանդեպ կիրառված նման մոտեցումը հնարավորություն տվեց Լ. Խոչիկյանին գիտական շրջանառության մեջ դնել մի ամբողջ շարք նորահայտ հուշարձաններ, ինչպես նաև բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, վանական դպրոցների գործունեության, գրչատների և գիտական մտքի օջախների վերաբերյալ: Այսպես, ձեռագրական նոր տվյալների հիման վրա «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» հոդվածում (1946) գիտական մտքի այդ խոշոր կենտրոնը իր արժանի տեղը զբաղեցրեց գիտության պատմության մեջ:

Նույն եղանակով առաջին անգամ մանրամասն լուսարանվեց Տաթևի, Ծործորի և Քոնայի ականավոր ներկայացուցիչների զրական և գիտական գործունեությունը («Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը», 1956, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը», 1973, «Քոնայի հոգևոր մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական ժառանգությունը», «Յովհաննէս Քոնեցի, Յաղագս բերականին» գրքում, 1977):

Զեռագիր սկզբնաղբյուրներից բաղված նոր ավյալների հիման վրա Լ. Խաչիկյանը նորովի լուսարանեց միջնադարյան քաղաքի, գյուղական համայնքի և ազանդավորական շարժումների պատմության էջերը («Ազանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դարերում», 1947, «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից», 1951, «14—15-րդ դարերի հայկական գյուղական համայնքի մասին», 1958, «Երզնկա քաղաքի «Սղբարց միաբանության» կանոնադրությունը», 1962): Լ. Խաչիկյանը արժեքավոր հետազոտություններ է նվիրել հայ ֆեոդալական տների պատմությանը, հատուկ կանգ է առել երկրի սոցիալ-քաղաքական և մշակութային կյանքում նրանց խաղացած դերի վրա («էջեր համշինահայ պատմությունից», 1969, «Մյունխաց Ծորելյանների Բուրթելյան ճյուղը», 1969):

Սովետական պատմագրության և աղբյուրագիտության բնագավառում խոշոր ավանդ հանդիսացավ Լ. Խաչիկյանի պատրաստած XIV—XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների քառահատոր հրատարակությունը (Եր., 1950—1967), ընդարձակ ներածական ուսումնասիրություններով: Այդ աշխատությամբ Լ. Խաչիկյանը լրացրեց պատմագիտության մեջ եղած բացը և գիտական շրջանառության մեջ դրեց հարուստ փաստական նյութ, որի կարիքը վաղուց արդեն զգում էին Հայաստանի և հարևան երկրների քաղաքական, տրեսասական և մշակութային կյանքի պատմությամբ զբաղվող միջնադարագետները: «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» աշխատության համար Լ. Խաչիկյանին 1961 թ. շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Անվանի ռուս միջնադարագետ ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը գնահատեց այն որպես մի քանի դոկտորական դիսերտացիաներին հավասար կոթողային աշխատություն, որն անփոխարինելի մի սկզբնաղբյուր և հետազոտություն է XV դարի ողջ Անդրկովկասի պատմության լուսարանման համար: Այդ երկու գիտնականները կապված էին իրար երկար տարիների բարեկամական ստեղծագործական կապերով: Դրան շէր խանգարում տարիքային մեծ տարբերությունը: Նրանց միավորում էր հարազատ ժողովրդի պատմության ու մշակույթի հանդեպ ունեցած անշահախնդիր սերն ու նվիրվածությունը: 1960 թ. Մ. Տիխոմիրովի և Լ. Խաչիկյանի նախաձեռնությամբ կազմակերպված հնագրագիտական առաջին համամիութենական կոնֆերանսը դարձավ երկու գիտնականների բարեկամության վառ արտահայտությունը: Այդ կոնֆերանսը հիմք հանդիսացավ օժանդակ պատմական գիտությունների գծով սովետական մասնագետների ավանդական հանդիպումների համար, ուր միութենական հանրապետությունների գիտնականները և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հնագրագիտական հանձնաժողովը ամփոփում են մի քանի տարիների աշխատանքի արդյունքները, ծանոթանում են հնագրագիտության բնագավառում եղած նորագույն նվաճումների հետ և նախանշում մոտակա տարիների համատեղ աշխատանքների պլանները:

Լ. Խաչիկյանի հատուկ ուշադրության առարկան էր հայ ժողովրդի՝ ուսուսակական և ուսուսակական ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, անտեսական և մշակութային վաղեմի կապերի պատմությունը: Չեռագրական նոր տվյալների հիման վրա նա լուսարանեց հայ-սլավոնական բարեկամության մի շարք անհայտ էջեր և Հայաստանի՝ պարսկական և թուրքական լծից ազատագրելու համար մղված պայքարի ընթացքում ծնված հայ ժողովրդի ուսուսակական կողմնորոշման պատմական արմատները («Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16—17-րդ դարերում», Երևան, 1954. «Նոր նյութեր Կիևի հին հայկական գաղթի մասին», Եր., 1961. «Սարգիս արեղայի Ուղեգրությունը», 1970):

Լ. Խաչիկյանի վերջին խոշոր աշխատանքներից մեկը նույնպես նվիրված էր այդ սիրված թեմային, որը շատ կարևոր է և՛ գիտական, և՛ հասարակական-քաղաքական առումով: Վերջինս «Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա» (Երևան, 1980) աշխատությունն է, որը լույս ընծայվեց «Բանբեր Մատենադարանի» 13-րդ հատորում: Սովորաբար Լ. Խաչիկյանն իր աշխատությունները գրում էր հայերեն, բայց դրանց համառոտ տարբերակները տպագրում էր նաև ռուսերեն՝ համամիութենական ընթերցողին հասցնելու նպատակով: Նրա վերջին աշխատության ռուսերեն համառոտ տարբերակը լույս տեսավ գիտնականի մահվանից հետո Լենինգրադում «Ռուս և հայ գրականություններ» ժողովածուում (1982):

Լ. Խաչիկյանը «Բանբեր Մատենադարանի» 3—13-րդ հատորների խմբագիրն էր, պարբերական մի ժողովածու, որը նրա ղեկավարությամբ դարձավ բնագրագիտության, աղբյուրագիտության ու գիտության պատմության հարցերին նվիրված հեղինակավոր հրատարակություններից մեկը: Որպես հեղինակ և խմբագիր նա գործուն մասնակցություն է ունեցել կուլեկտիվ աշխատանքների ստեղծման գործին, որոնց շարքում առանձնանում է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի 4-րդ հատորը (14—18-րդ դդ.), որտեղ առաջին անգամ մանրամասն լուսարանվում է Հայաստանի և հայկական գաղթավայրերի բիշ ուսումնասիրված ժամանակաշրջանը: Նրա խմբագրությամբ լույս են ընծայվել տասնյակ մենագրություններ, բնական բնագրեր և միջնադարյան մատենագրության հուշարձանների թարգմանություններ: Մահվանից առաջ Լ. Խաչիկյանն ավարտեց և տպագրության հանձնեց «Հովհաննես Տեր-Մովսեսի Զուղայեցու հաշվետվածքը», որը շատ արժեքավոր նյութ է պարունակում Պարսկաստանի, Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի XVII դարի անտեսական պատմության վերաբերյալ: 15 տարի շարունակ Լ. Խաչիկյանը (Հ. Փափագյանի աշխատակցությամբ) աշխատում էր Միջին Արևելքի անտեսության պատմությանը վերաբերող այդ արժեքավոր հուշարձանի վրա: Այդ գիրքը առաջինն է վաղուց նրա կողմից մտահղացված «Տեսական պատմության հուշարձաններ» մատենաշարի, որը հետազոտողներին առատ նյութ է տրամադրելու հայերեն ձեռագիր մատյաններից և արխիվային փաստաթղթերից՝ հայ և հարևան ժողովուրդների անտեսական կյանքի մասին և միջազգային առևտրում հայ վաճառականության խաղացած դերը լուսարանելու համար: Լ. Խաչիկյանին շվիճակվեց տեսնել իր գիրքը հրատարակված: Բայց նրա հետազոտությունը և հրատարակումը ամուր հիմքեր ստեղծեց նոր բնագավառում լայն աշխատանք ծավալելու և գիտական շրջանառության մեջ ներգրավելու հայերեն ձեռագրերի և վավերագրերի մի ստվար շերտ:

Գիտական և գիտակազմակերպչական բեղմնավոր իր գործունեությունը Լ. Խաչիկյանը զուգակցում էր հասարակական աշխատանքի հետ. նա Երևանի քաղաքային խորհրդի դեպուտատ էր, նրա գործադիր կոմիտեի անդամ, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի վարչության անդամ, ՍՍՀՄ-ի Իրան ընկերության հայկական բաժանմունքի նախագահ: Նրա ծառայությունները Հայրենիքի առաջ բարձր էին գնահատված սովետական կառավարության կողմից: Նա պարգևատրվել էր «Փողոզուրդների բարեկամության» շքանշանով և մի ջանի մեդալներով: Սովետական գիտնականներից նա առաջինն էր արժանացել Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկրի կոչման:

Մատենադարանի երախտավոր տնօրեն, ականավոր գիտնական և քաղաքացի, հայագիտության անխոնջ մշակ Լևոն Խաչիկյանի պայծառ անունն ու հիշատակը հավերժ կմնա գիտության պատմության մեջ և մեր սրտերում:

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՍՏԱՆ

Մատենադարանի տնօրեն,
ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի
թղթակից անդամ

Հ Ո Ւ Վ Ա Մ Ն Ե Ր

ԱՍԱՏՈՒՐ ՄԵԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՄՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ «ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԸ ԵՎ ՆՐԱ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ա. «Բան իմաստության» պոեմի ուսումնասիրության վիճակը
և հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրների որոշման հարցը

Անի քաղաքի մշակութային կյանքի պատմության շարադրանքի, գնահատման և մանավանդ ամբողջացման գործը կարոտում է լուրջ ու համակողմանի հետազոտությունների: Ինչպես արդեն նշել ենք¹, այն իր հաջող ավարտին կմոտենա, երբ առանձին-առանձին հետազոտված և հրատարակված կլինեն այդ մշակույթի բոլոր բնագավառները՝ իրենց համապատասխան կաթողներով: Կամենալով օգտակար լինել այդ գործին, այս անգամ կգրադվենք Հովհաննես Սարկավազի «Բան իմաստության» պոեմի քննությամբ²:

Առաջին անգամ, ամփոփ ուսումնասիրությամբ, այն հրատարակել է Ղ. Ալիշանը՝ հիմք ունենալով ժամանակին Մարսվանում պահվող մի հին աղոթագիրք³, որն այժմ կորած է: Հետագայում այդ բնագիրը, Զմմառի վանքի ձեռագրերից մեկում գտնվող նույն պոեմի մի նոր օրինակի քաղդատությամբ, հրատարակել է Ա. Աբրահամյանը⁴:

Մասնագետները բարձր են գնահատել «Բան իմաստության» պոեմի գաղափարական և գեղարվեստական արժանիքները: Հատուկ ուշադրություն է նվիրվել նրա մեջ հեղինակի դրսևորած առաջավոր հայացքին՝ բնության գաղափարի գնահատման առումով: Ղ. Ալիշանն այդ պոեմն արժեքալոր է համարել նաև «...իր մանր դիտողությամբ և զգացմամբ բնության տեսարանաց և օրինաց»: Ըստ նրա՝ «բնապատում կրրնա գովությամբ հիշել այս սարեկին եղանակին հատկությունները, որք երբեմն Սարկավազին աղոթքը շփոթել կուտային»⁵: Սույն դիտողություններին հաջորդել են Մ. Աբեղյանի նախ՝ ամ-

1 Ա. Մնացականյան, Անիի բանաստեղծ վարդան Անեցին և նրա ներքողը («Բաների Մատենադարանի», 1971 № 10, էջ 261—294):

2 Այս թեմայով զեկուցում ենք կարդացել Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանում՝ 1980 թ. նոյեմբերի 13-ին:

3 «Բնագմավէպ», 1847, էջ 214—225. տե՛ս նաև Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ, Վենետիկ, 1921, էջ 248—278:

4 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 319—324:

5 Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ, էջ 261:

փոփ⁶, ապա՝ ծավալուն⁷ ուսումնասիրությունները: Ըստ նրա՝ Հովհաննես Սարկավազի այդ պոեմի մեջ «Մեր իմաստասեր Բանաստեղծը, շատ աչոյ լուծել է կարևոր գրական խնդիրը, պնդելով, թե բանաստեղծը նմանում, հետևում է բնությանը, իրականությանը: Այս հայացքը, որով արժեքը տրվում է բնությանը, այս արդեն մի մեծ նորություն էր մեր գրականության մեջ և կարող էր ծագել միայն վերածնության դարում իրրև հետևանք այն նոր ոգու և ազատախոհության, որ առաջ էր եկել կյանքի մեջ»⁸:

Մ. Արեղյանին են հետևել հաջորդ ժամանակների բոլոր մասնագետները ինչպես գրականագիտության, այնպես էլ փիլիսոփայության, դեղագիտության, երաժշտագիտության և այլ բնագավառներում՝ իրենց արժեքավոր հետազոտությունները կատարելիս⁹:

Այժմ, երբ տասնամյակներ են անցել Մ. Արեղյանի տեսության վերջնական մշակումից հետո, հայագիտական միտքն ավելի լայն հունի մեջ է մտել և երևան են եկել նոր փաստեր, հնարավորություն ու անհրաժեշտություն է ստեղծվել վերստին անդրադառնալու «Բան իմաստության» պոեմի գնահատմանը:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր ստեղծագործություն անհամեմատ ճիշտ է ընկալվում, երբ հայտնի են դառնում նրա հիմքում ընկած սկզբնաղբյուրները: Պետք է ասել, որ մինչև օրս ոչ միայն չեն բացահայտվել «Բան իմաստության» պոեմի սկզբնաղբյուրները, այլև չի բարձրացվել այն հարցը՝ եղև՞ է են այդպիսիք, թե՞ ո՛չ: Այդ պատճառով էլ թվացել է, թե Հովհաննես Սարկավազն անձամբ է մտահղացել պոեմի մեջ քննված բոլոր հարցերը և ինքն էլ դուրս նրանց պատասխանները: Այսպես, ըստ Մ. Արեղյանի՝ բանաստեղծն ինքն է, որ «նախ մտածել է իր բերթվածի հիմնական գաղափարը—թեման և ապա ստեղծել դրա համար պատշաճավոր սյուժետը—Բանաստեղծի իրեն և Սարկելի տրամախոսությունը»¹⁰: Հենց այս սկզբունքով էլ ուսումնասիրվել է քրննչովոր ստեղծագործությունը: Պետք է ասել, սակայն, որ, ինչպես ցույց են տալիս մեր որոնումները, «Բան իմաստության» պոեմի հիմքում ընկած են Փիլոն Աղեքսանդրացու (Երրայեցու) երկերի շարքում գտնվող «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» գործի գլխավոր գաղափարները, ինչպես նաև Փիլոնի և ուրիշ հեղինակների տարբեր ստեղծագործություններում առկա առանձին մտքերն ու գաղափարները: Հովհաննես Սարկավազը, ելակետ ունենալով այդ աղբյուրներում առկա հայացքները, դարգացրել է դրանք և հասցրել նոր ընդհանրացումների: Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում առավել որոշակի և համակողմանի պատկերացում կազմել «Բան իմաստության» պոեմի հեղինակի հայացքների վերաբերյալ: Ըստ այսմ՝ Մ. Արեղյանի տեսության հիմնական կետերի մի մասը մնում է ուժի մեջ, իսկ մյուս մասը՝ ենթարկվում ճշգրտումների կամ՝ վերանայվում ամբողջապես:

6 Մ. Արեղյան, Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության (խմբորատիպ), Երևան, 1923, էջ 42—45: «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1941, № 5—6, էջ 95:

7 «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 31—60: «Հայոց նոր գրականության պատմություն», Բ, 1946, էջ 52—61: «Երկեր», Գ, Երևան, 1970, էջ 72—82:

8 Մ. Արեղյան, Երկեր, Գ, Երևան, 1970, էջ 82:

9 Համապատասխան աշխատանքների համեմատաբար լրիվ ցանկը տրված է Ն. Թահմիզյանի «Հովհաննես Սարկավազ իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը» հոդվածում («Բազմալեզու», 1978, 3—4, էջ 356):

10 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 75:

Քանի որ առաջադրված հարցերի քննությունը կապված է ամենից առաջ «Քան իմաստութեան» պոեմի բնագրի հետ, ուստի հարկ է առաջացել զբաղվելու նաև այդ առումով առաջնահերթ հարցերի ուսումնասիրությամբ: Դրանցից առաջինը վերաբերում է պոեմի քննական բնագրի ճշգրտմանը: Այդ պոեմը վերևում հիշված երկու հիմնական հրատարակություններից բացի, լույս է տեսել նաև ուրիշ առիթներով: Այդպիսիներից կարևորներն են Մ. Արեղյանի կատարած վերահրատարակությունը՝ Ղ. Ալիշանի օրինակից¹¹, Ա. Մադոյանի և Գ. Անանյանիներ՝ Ա. Արրահամյանի (որոշ վերանայումներով)¹²: Ուշադիր նայելով բոլոր հրատարակություններով ներկայացրած բնագրերին, էական տարբերություններ ենք տեսնում Ա. Արրահամյանի կազմած քննական բնագրում՝ Ղ. Ալիշանի հրատարակած օրինակի համեմատությամբ: Եվ դա բնական է: Առկա են կարևոր լրացումներ, վերանայումներ: Ցավոք, Ա. Արրահամյանը թույլ է տվել որոշ վրիպումներ, բնագիրը ճշգրտելու մասնակի սխալներ, իսկ նորահայտ օրինակի մասին չի տվել բավարար տեղեկություններ, որոնք առաջացնում են առանձին տարակուսանքներ: Օրինակ, նրա օգտագործած Զմմառի ձեռագրի մասին մեզ ծանոթ մի ուրիշ տեղեկության համաձայն, պոեմի խորագիրն սկսվում է «Յօհաննու սուրբ վարդապետին ստացեալ...» բառերով¹³, մինչդեռ նրա կազմած քննական բնագրում «սուրբ» բառը բացակայում է: Այնուհետև, ոչ մի տարրնիքացում չկա պոեմի վերջին 2 հատվածի տողատակում. ուստի տարակուսելի է դառնում դրա ստույգության պարագան. արդյո՞ք այդպիսիք չեն եղել, թե՞ Զմմառի օրինակը չի ունեցել այդ հատվածները: Ա. Արրահամյանի թույլ տված բնագրագիտական որոշ վրիպումներ նկատված և ուղղված են վերջին վերահրատարակության մեջ: Այստեղ էլ, սակայն, տեղ են գտել մասնակի վրիպումներ: Օրինակ, տպագրված բոլոր օրինակներում ունենք այսպիսի տողեր.

Աղքատ և անհամբար ընդ այլսն և դու ես կոչեցեալ,
Անհոգ և անարար, որպէս ուսաք ի Քրիստոսէ...

Վերջին վերահրատարակության մեջ անհամբար բառը փոխարինված է անհամբեր բառով: Եթե դա մեխանիկական վրիպակ չէ, ապա կոպիտ միջամբություն է, որովհետև հեղինակի խոսքը թուշունների «աղքատ և անհամբար» լինելու մասին է, որի կապակցությամբ բանաստեղծն ասում է. «ուսաք ի Քրիստոսէ»: Խոսքը վերաբերում է Ղուկասի Ավետարանի հետևյալ հատվածին. «Հայեցարուք ընդ ազոաւունս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ զոն շտեմարանք և ոչ համբարանոցք, և աստուած կերակրէ զնոսա...» (ԺԲ, 24. հմմտ. Մատթեոս, 2, 26): Հովհաննես Սարկավազն այդ բառի մի այլ առումն օգտագործել է նաև պոեմի վերջում, ուր սարյակն ինքն է ասում, թե թուշունները շունեն՝

Ոչ Համբարքս մըթերեալս ի լիութիւն հարկաւորացն...

Անհարկի համարելով բոլոր համանման հարցերին անդրադառնալը, նկատենք, որ մեր առջև բարձրացավ Զմմառի մատենադարանում եղած ընդօրինա-

11 «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 53—58:

12 «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևան, 1979, էջ 79—85:

13 Մ. Փեշիշյան, Յուդակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, շեռ. № 156, թերթ 136բ:

կուսթյան նոր օրինակ ստանալու և քննական նոր բնագիր կազմելու խնդիրը: Այժմ մենք առաջնորդվում ենք այդ նոր բնագրով¹⁴:

Հարցի առավել համակողմանի պատկերացման համար մենք փորձել ենք նաև արդի խոսակցական լեզվով ներկայացնել «Բան իմաստության» պոեմի բնագիրը, որպիսին ցարդ գոյություն չունի: Դա միաժամանակ օգնել է նրա սուսումնասիրության զործին, փոխադարձաբար շահելով նրանից¹⁵:

Այստեղ հարկ է առաջանում խոսել պոեմի բուն խորագրի և ենթախորագրերի մասին: Այն ունի 6 հատվածներ դրված 5 ենթախորագրերի տակ: Առանց ենթախորագրի է մնացել առաջին հատվածը: Հարց է առաջանում, մի՞թե հեղինակը մոռացել է այս պարագան: Պարզվում է, որ ո՛չ, այդ ենթախորագիրը կա, բայց միաձուլված է ընդհանուր խորագրի հետ: Անշատելով դրանք միմյանցից՝ ստանում ենք բուն խորագրի և առաջին ենթախորագրի հետևյալ պատկերը:

ա) «Յովհաննու Սարկալագի իմաստասիրի և վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զքօսանաց»:

բ) «Առ ձագն, որ գաղօթանոցաւ նորա հոռուղէ բաղցրածայն, որ կաշի սարիկ»:

Որ, իրո՞ք, երկրորդ մասը պոեմի սկզբի հատվածի ենթախորագիրն է, դա երևում է նաև հաջորդ (երկրորդ) հատվածի ենթախորագրից, որն ասում է. «Ձագն պատասխանէ»: Իսկ ո՞ր է հարցը, որի համար ստեղծվել է այդ պատասխանը: Հարցն էլ, ահա՛, հենց մեր անշատած մասն է, որով բանաստեղծը դիմել է սարյակին («Առ ձագն...»): Բուն խորագիրն այդ շփոթությունից ազատվելուց հետո, ազատվում է նաև ստեղծված որոշակի տարտամությունից, որովհետև թողնում էր կրկնակի խորագրի տալավորություն:

Նկատելի է նաև մի ուրիշ անհարթություն: Իրեն չի արդարացնում պոեմի «Վասն լեզկէին, որ բանա՛ն ի վերայ վաքեցաւ» ենթախորագիրը, որովհետև նրա տակ դրված մեծածավալ հատվածի լոկ սկզբի 5 տողերն են համապատասխանում դրան: Արդյո՞ք փոփոխություն չի մտել հեղինակային օրինակի մեջ: Դժվար է ասել:

«Բան իմաստության» պոեմի ենթաբաժանումները կատարված են ըստ մշակված հարցերի, որոնց թիվը հավասար է 6-ի: Անկախ դրանից, սակայն, կարող ենք ասել, որ պոեմն իր բովանդակությամբ բաժանվում է 2 մասի: Առաջինում քննվում է այն հարցը, թե կենդանիների և մարդկանց ունեցած շնորհներից ո՞րն է առաջնադաս, իսկ երկրորդում ցույց են տրվում այդ երկու կողմերի կենցաղային պայմանների անհավասարությունն ու անարդարությունները: Բանաստեղծը գտնում է, որ շնորհների (խոսելու, երգելու, նվագելու, բանաստեղծելու և այլն) առումով առաջնադասը կենդանիների շնորհներն են, այսինքն՝ բնության, իսկ կենցաղային հարցերում՝ անարդարացիները, բնացոլները՝ մարդիկ են: Այս սուր հակադրությունների մեջ հեղինակը պաշտպանում է առաջինների, այսինքն՝ բնության իրավունքները:

Ըստ այսմ, Հովհաննես Սարկավագն ստեղծել է երկու կերպար՝ ի դեմս Սարյակի ընդհանրացրել է բնության և ողջ կենդանական աշխարհի գաղափա-

¹⁴ Օգտվելով առիթից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում գերապատիվ Ս. Քեշիշյանին, որն ընդօրինակեց և մեզ ուղարկեց նշված բնագիրը:

¹⁵ «ՏՆ՝ «Գաբուն», 1982, № 10, էջ 81—86:

րը, իսկ ի դեմս Վարդապետի՝ մարդկություն: Այս կերպարները նկատի ունեն իրենց ներկայացրած աշխարհների ամբողջ պատմությունը՝ սկսած արարչագործությունից և աստվածաշնչային պատկերացումներով ճանաչված անսահման հեռավոր ժամանակներից: Վիճաբանությամբ տարվող քննությունը երկու դեպքում էլ ավարտվում է Սարյակի, այսինքն՝ բնության առաջնությամբ ու արդարացիությամբ: Առկա են ստեղծագործական առումով լարված դրություններ, գործողություններ, հանգուցալուծումներ և բոլոր այն կարևոր տվյալները, որոնք հիմք են տալիս այդ ստեղծագործությունը համարել պոեմ: Ամենայն իրավամբ կարելի է պնդել, որ այն ունի նաև վերջերգ. խոսքը պոեմի քառատող ամփոփման մասին է, որը դրված է հատուկ ենթախորագրի տակ: Ուշադիր լինելիս կարելի է պոեմի առաջին հատվածը բնութագրել իբրև նախերգ, որ հիմնականում ներբողվում է գլխավոր հերոսը՝ Սարյակը:

Այժմ անցնենք «Բան իմաստութեան» պոեմի հիմքում ընկած ամենագլխավոր սկզբնաղբյուրին՝ «Յաղագս բան ունել...», երկին: Քանի որ այն բաղկացած է երկու առանձին մասերից և հեղինակային պատկանելիության հարցում առկա են վիճելի հարցեր, ստիպված ենք նախ սարգություն մտցնել դրանց մեջ, որպեսզի խույս տված լինենք անխուսափելի շփոթություններից:

Բ. «Յաղագս բան ունել...» երկի հեղինակային պատկանելիության հարցը և «Բան իմաստութեան» պոեմի գաղափարական կապը նրա հետ

Հայ հին թարգմանական հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ ունի «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացող» երկը¹⁵: Այն դեռևս V դարում թարգմանվել է հունարենից և այժմ փոխարինում է հունարեն բնագրին, որովհետև վերջինիցս լուրջ փշրանքներ են պահպանվել: «Յաղագս բան ունել...» աշխատության գլխավոր արժանիքը նրա բովանդակությունն է: Այստեղ հարուստ ու համակողմանի նյութեր են հավաքված կենդանական աշխարհի մասին, կապված նրանց՝ բանականություն ունենալու հարցի հետ: Գիտական որոշակի արժեք ունեն երկում տեղ գտած համապատասխան մեկնաբանությունները, որոնք զերծ են կրոնական պատկերացումներից և առավելապես անընկճում են հեթանոսական առասպելներին:

Արդ, ո՞վ է «Յաղագս բան ունել...» երկի հեղինակը:

Հին սկզբնաղբյուրների, միջնադարյան մեկնաբանությունների, ինչպես նաև մասնագիտական ուսումնասիրությունների¹⁶ համաձայն, այդ աշխատության հեղինակը մ. թ. I դարի անվանի մտավորական Փիլոն Աղեբսանդրացին (Երբայեցին) է, որի անունով էլ հրապարակվել ու մասսայականացվել է երկը:

Բայց ահա XX դարում հրապարակ է հանվել նոր կարծիք, որի համաձայն «Յաղագս բան ունել...» երկը պատկանում է մ. թ. ա. II-I դդ. գործիչ ու հեղինակ Մետրոդորոս Սկեփացուն: Այսպես, օրինակ, Կ. Տրևերը գրում է. «Հայտնի է, որ մ. թ. ա. I դարի 60-ական թվականներին որոշ ժամանակ Տիգրան Բ-ի պալատում է գտնվել փիլիսոփա և ճարտասան Մետրոդորոս Սկեփացին... նրան վերագրում են Տիգրան Բ-ի մասին պատմական մի ստեղծագործություն,

15 «Փիլոնի Երբայեցոյ Բանք երեք...», Վենետիկ, 1822, էջ 123—172:

16 Գ. Գրիգորյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 188—200: Նույնի՝ «Բաների Մատենագրանի», 1960, № 5, էջ 95—116:

ինչպես նաև արամախոսություն՝ նվիրված կենդանիների բանականության հարցին: Վերջին ստեղծագործությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն պատճառով, որ նրա հայերեն թարգմանությունը հիշատակվում է մ. թ. I դարի սկզբների հեղինակ Փիլոն Աղեքսանդրացու երկերի շարքում: Այս ստեղծագործության հայերեն թարգմանության անհրաժեշտությունը կարող է բացատրվել նրանով, որ այդ աշխատանքը Մետրոդորոսի կողմից գրվել է նրա՝ հայ թագավորի պալատում գտնված լինելու ժամանակ: Բացի դրանից, այդ թարգմանությունը հանդիսանում է փայլուն վիպություն այն բանի, որ մ. թ. I դարի սկզբում, այսինքն՝ Մետրոդորոսի մահից կես դար հետո, հայ հասարակությունը շարունակել է հետաքրքրվել այդ, ըստ էության, գիտական աշխատանքով¹⁷: Այս միտքը դրեթե նույն խմատով կրկնել է Ա. Տեր-Պողոսյանը¹⁸: Շատ շանցած հարցին անդրադարձել է Գ. Սարգսյանը՝ նույն հեղինակին վերագրելով ևս մեկ աշխատություն. «Սովորությունների մասին», «Անբան կենդանիների բանականությունն ունենալու մասին», «Տիգրանի մասին»¹⁹: Այստեղ նորություն է Ստրաբոնի վկայած «Սովորությունների մասին» երկը²⁰:

Ինչպես երևում է, Գ. Սարգսյանը չի խորացել հարցի մեջ, այլապես կբացատրեր թե ինչու՞ ինքը երկու աշխատանքի փոխարեն նշում է 3-ը: Ավելին, Կ. Տրևերի հոդվածից բացի, հավանաբար նա կծանոթանար նրան Յուրիմացության մեջ գցած Մ. Վելմանի աշխատությանը²¹, ինչպես նաև վերջինիս վաղուց արդեն հերքված լինելու փաստին²²:

Այսպիսով, կարող ենք ասել, թե «Յաղագս բան ունել...» երկը ինչպես որ վերագրվել է Մետրոդորոս Սկեփացուն, այնպես էլ, շատ շանցած, համարվել է շիոթության արդյունք: Մեր որոնումները ևս համոզում են այդ իրողության մեջ, հիմք տալով շենվել Կ. Տրևերի, Ա. Տեր-Պողոսյանի և Գ. Սարգսյանի վերոհիշյալ հավաստիացումների վրա²³: Մնում է անդրադառնալ մի ուրիշ հարցի: Արդյո՞ք «Յաղագս բան ունել...» երկը սոսկ Փիլոնի ստեղծագործությունն է, թե՞ նաև Աղեքսանդրի, որի անունը քանիցս հղվելում է նրա էջերում:

«Յաղագս բան ունել...» երկը, ինչպես նկատված է, հիմնականում; երկխոսություն է Փիլոնի և Լյուսիմաքոսի միջև. Փիլոնը, հենց սկզբից, իր խոսքն ուղղում է գրուցակցին՝ Լյուսիմաքոսին. «Յիշես զերիկեան բանսն, ո՞վ Լյուսիմաքոս, զորս Աղեքսանդրոս եղբորորդին մեր պատմեաց, յաղագս այնորիկ՝ թէ ոչ միայն մարդիկդ, այլև անասուն կենդանիդ բանի բաժին ունին»²⁴: Լյուսիմաքոսը նույնպես ներկայանում է որպես բարեկամ թե՛ Փիլոնին և թե՛ Ա.

17 К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении. М.—Л., 1953, էջ 11: Սխալ է մտածել, թե այդ երկը, հայերեն է թարգմանվել I դարի սկզբում, որը հնարավոր չէր նրա թարգմանությունը կատարվել է V դարում:

18 Ա. Տեր-Պողոսյան, Բիւրզգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 34—35:

19 «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 109, նաև «Գրական թերթ», 26 հունիսի, 1970 թ.:

20 Страбон, География, XVI, 4, 16:

21 Wellmann, Hermes, Bd. LII, 1917, էջ 135.

22 Paulus Realencyclopädie der classischen AltertumsWissenschaft., Erste Reihe 30 Halbband, Շուտադարդ, 1932, էջ 1481—1482.

23 Համապատասխան աղբյուրների թարգմանության հարցում մեղ օգնել են Ս. Վարդանյանը և Գ. Արզարյանը, որոնց և հայտնում ենք մեր շնորհակալությունը:

24 «Փիլոնի Երայնցայ Բանք երեք»..., էջ 123:

դերսանդրին, ընդգծելով վերջինի ոչ միայն հեղինակային ընդունակությունները, այլև անձնական առաքինությունները: Երբ Փիլոնն ու Լյուսիմարոսը հասունացնում են Աղեքսանդրի համապատասխան տեսության և դրան նվիրված նրա ստեղծագործության բնությանն անցնելու հարցը, այդ ժամանակ ծառան (սպասավորը) Փիլոնին է մատուցում Աղեքսանդրի երկը. «Ծառայի միոյ՝ որում դէպ եղև անդ կալ յետոյ կողմանէ ո՛չ հետի ուրեք, գիրս կարկառեալ, առեալ ընթեռնոյր Փիլոն»²⁵: Այստեղ գրված է լրացուցիչ խորագիր. «Ճառ Աղեքսանդրի Յաղագս կարծեցեալ բանի անբանից»: Ապա ներկայացված է այդ ճառն ամբողջությամբ, որն էլ փաստորեն բուն երկն է՝ հայտնի «Յաղագս բան ունել...» խորագրով: Ճառի վերջում Լյուսիմարոսի նկատողությունն է. «Այսորիկ են, ո՛վ պատուական Փիլոն, զորս Աղեքսանդրոս եղբորորդին մեր շարագրեաց, և ի մէջ անցեալ եցոյց»²⁶: Սրան հաջորդում է Փիլոնի և Լյուսիմարոսի հարցազրույցը, ապա Փիլոնի ընդարձակ մեկնաբանությունը՝ նվիրված Աղեքսանդրի երկին:

Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև հետևյալ իրողությունը: Այն տպագիր հատորը, որում ղետեղված է «Յաղագս բան ունել...» երկը, բովանդակում է ևս երկու ուրիշ աշխատություն, որոնք նույնպես կապված են Աղեքսանդրի անվան հետ: Ահա այդ երեք ստեղծագործությունների խորագրերն՝ ըստ գրքում ունեցած հաջորդականության.

- ա) «Փիլոնի յաղագս յառաջախնամութեան առ Աղեքսանդրոս»²⁷;
- բ) «Փիլոնի յաղագս նախախնամութեան (առ Աղեքսանդրոս)»²⁸;
- գ) «Փիլոնի յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ (ըստ Աղեքսանդրի»^{28*}:

Ուշագրավ է, որ հայերենի թարգմանիչը կամ մեկնիչը հիշում է Փիլոնի մի ուրիշ գիրք ևս, «զոր Տերունեան անուանէ գիր», որի մասին ասված է. «և զայս ևս առ Աղեքսանդրոս ուսումնական և հարցանող, և առ Լիւսիմարոս ազգային իւր ասնէ, զոր և եղբայր իսկ ասէ իւր. և ղերկոսին աշակերտէ ի հաւանութիւն...»²⁸ ր:

Այս և այլ փաստեր հիմք են տալիս Աղեքսանդրին պատմական անձնավորություն համարելուց բացի, ճանաչել նաև որպես «Յաղագս բան ունել...» երկի մեջ առկա «Ճառի» հեղինակ: Մանավանդ, որ նա և Փիլոնը պաշտպանում են հակառակ հայացքներ: Այսպես, Աղեքսանդրը գտնում է, որ կենդանիներն օծոված են բանականությամբ, իսկ Փիլոնն առարկում է, պնդելով, թե կենդանիներն առաջնորդվում են լոկ բնազդով: Թե մեկը և թե մյուսը բերում են բազմաթիվ և բազմապիսի օրինակներ կենդանիների կյանքից (իսկ Փիլոնը նաև բուսական աշխարհից) ու մեկնաբանում դրանք՝ ամեն մեկն ըստ յուր հայացքի: Դրանով էլ «Յաղագս բան ունել...» երկը դարձել է կենդանական և բուսական աշխարհներին վերաբերող կենսափորձային իմացությունների մեծահարուստ գանձարան:

Այսպիսով, կարող ենք ասել, որ «Յաղագս բան ունել...» երկը բաղկա-

²⁵ Նույն տեղում, էջ 126:

²⁶ Նույն տեղում, էջ 161:

²⁷ Նույն տեղում, էջ 1—43:

²⁸ Նույն տեղում, էջ 44—121: Այս և նախորդ գործը նույն երկի 2 մասերն են:

^{28*} Նույն տեղում, էջ 123—172:

²⁹ Նույն տեղում, էջ XI:

ցած է երկու շերտից, որը ցարդ որոշակիորեն չի տարբերակված: Նրա առաջին շերտը Փիլոնի եղբորորդու՝ Աղեքսանդրի շարադրանքն է՝ կենդանիների բանականություն ունենալու մասին, իսկ երկրորդը՝ Փիլոնի մեկնաբանությունն է՝ նվիրված այդ երկին: Գեթ հայ մատենագրության մեջ հարցի այդ կողմի մասին պարզորոշ պատկերացում չկա: Ավելին, հաճախ Աղեքսանդրի նշված աշխատությունից վկայակոչված փաստերը ներկայացված են Փիլոնի անունով, որ ճիշտ չէ:

Ահա այդ երկից է, որ հիմնականում օգտվել է Հովհաննես Սարկավազը՝ իր «Բան իմաստության» պոեմը գրելիս: Նախքան բուն փաստերին դիմելը, պատասխանենք այն հարցին, թե արդյոք կարո՞ղ էր բանաստեղծը ծանոթ լինել Աղեքսանդրի և Փիլոնի վերոհիշյալ երկին: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը: Ինչպես ժամանակին կոահել էր միջնադարյան գրչուհի Բրաբիոնը, Փիլոնի անունով հայտնի «Ծօթնադրեանքի» մեկնությունները կատարված են Հովհաննես Սարկավազի կողմից: Գ. Գրիգորյանը, խորանալով այս հարցի ուսումնասիրության մեջ²⁹, հաստատել է Բրաբիոնի կարծիքը և միաժամանակ արել այսպիսի դիտողություն. «Հայտնի է, որ Սարկավազի «Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն, որ զաղօթանոցաւ նորա ճոռեղէր քաղցրածայն, որ կոչի սարիկ» շափածո տրակտատի մեջ արտահայտված առաջատար ու հիմնական գաղափարներից մեկն էլ այն է, թե սարյակ թռչնակի երգեցողության արվեստը բնածին է, ոչ թե սովորովի, ինչպես մարդկայինն է: Նույն այս միտքը արտահայտված է պարզ ու որոշակի կերպով Փիլոնի մեկնությունների մեջ: Այստեղ կարդում ենք. «Մի՞թէ արուեստի և խորհրդով գործէ մեղուն...»³⁰: Խոսքը՝ Հովհաննես Սարկավազի կատարած մեկնության մասին է: Ցավո՛ք, Գ. Գրիգորյանը չի խորացել այս հարցում, շնչելով անգամ, թե Հովհաննես Սարկավազի մեկնաբանած այդ միտքը գտնվում է «Յաղագս բան ունել...» երկում: Դա նրան չի հետաքրքրել և նրա նպատակից դուրս է եղել:

«Բան իմաստության» և «Յաղագս բան ունել...» երկերում առկա կապի մասին՝ միմյանց լրացնելով վկայում են նաև հետևյալ փաստերը: Ս. Արևշատյանը դիտել է, թե «Դավիթը ծանոթ է Փիլոն Աղեքսանդրացու «Վասն բան ունել անասուն կենդանեաց» (խոսքը՝ «Յաղագս բան ունելի...» մասին է—Ա. Մ.) աշխատությանը, որը հայերեն է թարգմանվել V դարում³¹: Իսկ Ա. Մաղոյանը և Հր. Միրզոյանը ցույց են տվել, որ Հովհաննես Սարկավազն է եղել Դավիթ Անհաղթի նշված երկի մեկնիչը: Ավելին, նրանք, մատնացույց անելով այդ մեկնության և «դավթյան սահմանումների» կապը, վկայակոչում են, «Բան իմաստութեան» պոեմի «Վասնզի օտարացաք ի բնականէն» նշանաբանը³²:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Հովհաննես Սարկավազը ոչ միայն ծանոթ է եղել «Յաղագս բան ունել...» երկին, այլև, ի շարս Փիլոնի այլ ստեղծագործությունների, նա մեկնաբանել է նաև այդ գործը: Ավելին, մասնագետներն

29 Գ. Գրիգորյան, Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 188—200): Նույնի՝ «Փիլոն Աղեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները» («Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 95—116):

30 «Բանբեր Մատենադարանի» 1960, № 5, էջ 102:

31 «Դավիթ Անհաղթ», Երևան, 1980, էջ 322:

32 «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 1, էջ 119:

անուղղակի փաստարկումներով արդեն հուշում են «Յաղագս բան ունել...» երկի և «Քան իմաստութիան» պոեմի կապերի առկայության մասին:

Ընդհուպ մոտենալով մեզ հետաքրքրող փաստերի քննությանը, նպատակահարմար ենք գտնում ծանոթությունն սկսել «Յաղագս բան ունել...» երկի հետևյալ տողերից, որոնք գտնվում են Աղեքսանդրի Տառում. «Քանզի կեռնեխք (լս. սարիկք) և տատրակք (իրր տորդիկք) և ծիծառնուկք (որպէս սոխակք) ոչ միայն երգել բնատուրեալ են, այլև յօղատու ձայնիւ երգեն, մինչ զի և ասել և գրել կարել զնուագացն բառս: Եւ եթէ կամեսցի որ հաստատուն լսելեօր ուսանել, փորր մի ի մերձաւոր դրախտիցդ մի՛ դանդաղեսցի երթալ՝ յորս նշմարտութեամբ են երաժշտակք ամենագան հատուց, որ ի միասին հնչեն. և ըստ խառնման իմն յարմարութեան հակառակարարքառ նուազեն երգս»³³: Թվում է, թե Հովհաննես Սարկավազն իր պոեմը դրելիս առաջնորդվել է հենց այս տողերով: Թե այստեղ և թե պոեմում հատուկ ուշադրություն է հատկացված թռչունների երգելու շնորհքին: Երկու դեպքում էլ առաջին հերթին հիշվում է կեռնեխ—սարյակ թռչունը³⁴, որին պոեմում տրվել է գլխավոր հերոսի դերը: Թե՛ Աղեքսանդրի նշված տողերում, թե՛ Փիլոնի պատասխանի մեջ և թե՛ պոեմում խոսք կա թռչունների ձայնի հողավորության մասին: Ըստ Աղեքսանդրի՝ նրանց ձայնը հողավոր է. «յօղատու ձայնիւ երգեն», իսկ ըստ Փիլոնի՝ ո՛չ, «Քանզի կեռնեխք և ազաւք և պապկայք և որ միանգամայն հոմանունք, զի թէպէտ և դանազանագոյն բարբառեսցին, յօղատու ո՛չ երբէք և ոչ իւիք ձայն կարանցեն հանել» (էջ 171): Այս հարցում Հովհաննես Սարկավազը, հետևելով հանդերձ Աղեքսանդրին, չի էլ ժխտում Փիլոնի կարծիքը, ուստի դիմելով Սարյակին՝ նրան կ' «յօղաձայն վերձանող» է համարում, կ' «անյօղ ձայնիւ» վարդապետող.

Մի՛ պատճառեր դանբանութիւն, դո՛ւ, յօղաձայնրդ վերձանող,
Անյօ՛ղ ձայնիւ վարդապետեա և ստացի՛ր զիս աշակերտ...³⁵:

³³ «Փիլոնի երաչեցոյ Բանք երեք...», Վենետիկ 1822, էջ 128—129:

³⁴ Աղեքսանդրի տողերում «կեռնեխք (լս. սարիկք)» արտահայտությունից երևում է, որ օգտագործված ձեռագրի լուսանցքում կեռնեխք բառի դիմաց տրված է եղել «սարիկք» բացատրությունը: Համապատասխան բացատրություն կա նաև Հայկազյան բառգրքում. «Սարիկ թռչունն քաղցրաձայն նման ազաւու փորկան», կարգում ենք կեռնեխ բառահոգվածում («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, 1979, էջ 1089): Որոշ բառարաններում կեռնեխ-սարյակին տարբերում են կեռնեխ-ճարեկից, բայց երկուսին էլ համարում քաղցրաձայն երգողներ: Մեզ համար կենդանաբանական այս նրբություններն էական նշանակություն չունեն: Կարևորն այն է, որ Հովհաննես Սարկավազը նկատի է առել Աղեքսանդրի և Փիլոնի նկատի առած կեռնեխ-սարեկին: Ըվ եթե բանաստեղծը դրել է. «Առ ձագն... քաղցրաձայն որ կոչի սարիկ», այս Հայկազյան բառգրքում ևս, անկախ նրանից, «կեռնեխք» մեկնաբանված է. «Սարիկ թռչունն քաղցրաձայն» դարձվածքով: Հ. Տաշյանն ունի այսպիսի տողեր. Բարսեղ կեսարացու մոտ հանդիպում է «սարիկ առ ի նշանակելոյ զտարմահա... իսկ յետինք գրեն սարեակ, սարեկ առ ի նշանակել նաև զկոչեցեալն «կեռնեխ», հմմտ. նոր ճարեկ» (Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920, էջ 621—622):

³⁵ Գիտական առումով բանաստեղծը հավանաբար համաձայն է եղել Փիլոնի հետ: Այս տեսակետից ուշադրավ է նրա հետևյալ մեկնությունը՝ Փիլոնի համապատասխան մտքերից մեկի կապակցությամբ, որի համաձայն կենդանիների «ձայնն մի ոչորակ ունին՝ ամէնն անյօղ, զի և ոչ իրրև փողից և քնարաց չեն, որ թէպէտ անյօղ են. այլ զօրութիւն բանի դիմ ի ձայնն... և զանասնոցն ձայն զեղ փողոյ և քնարի կու ասէ. զի ձայնին վերացումն միտն ունին՝ անասունք զեղ զփող և զքնար, ապայ երկուքն անյօղ են, զի բառի չեն ի յօղել և նշանակել՝ որպէս ոչորա-



Այսպիսով, որքան խորանում ենք փաստերի մեջ, այնքան ամուր հող է ստեղծվում մեր կաթձիքի համար: Ուստի առայժմ, թեկուզ պայմանականորեն անվիճելի համարելով դա, ուշադրություն հրավիրենք մի ուրիշ փաստի վրա: Պարզվում է, որ «Յաղագս բան ունել...» երկից հնում, բնականաբար, օգտվել են ոչ միայն հայ հեղինակները, այլև՝ հույն: Հովհաննես Սարկավազն էլ, ծանոթ լինելով նաև վերջիններիս համապատասխան գործերին, երբեմն օգտվել է նրանցից: Այդ հեղինակներից են, օրինակ, Գրիգոր Աստվածարանը³⁶, Բարսեղ Կեսարացին³⁷, Հովհաննես Ոսկերեբանը³⁸ և ուրիշներ: Հանգամանալից զննությունը ցույց է տալիս, որ սխալ կլիներ կարծել, թե Հովհաննես Սարկավազը վերջիններիս միջոցով է օգտվել «Յաղագս բան ունել...» երկի մտքերից, մանավանդ, որ ինչպես տեսանք, նա հանդիսացել է նաև այդ երկի հայ մեկնիչներից մեկը, իսկ պոեմում իշխում են Աղեքսանդրի և Փիլոնի մտքերը: Այժմ անցնենք «Բան իմաստության» պոեմի բննությանը՝ ըստ «Յաղագս բան ունել...» երկի և օժանդակ մյուս սկզբնաղբյուրների: Նկատենք, որ այսուհետև նրանց կապերի ապացուցման գործն այլևս հատուկ հարց չենք դարձնելու, որովհետև այն ինքնաբերաբար լիովին բացահայտվելու է շարադրանքի ընթացքում:

Գ. «Բան իմաստության» պոեմում բարձրացված հարցերի առաջին խումբը

Որպեսզի առհավարակ ճիշտ հասկանանք «Բան իմաստության» պոեմի բուն էությունը, ամենից առաջ պիտի ուշադրություն դարձնենք նրա գործող անձանց և հատկապես հերոսի կերպարի վրա, որոնց մասին բնդհանուր ակնարկ արվեց վերևում: Մինչև օրս այնպես է ընդունվել, որ Սարյակը բնական թռչունի կերպար է: Մ. Արեղյանը գրում է, թե «Այս երկն իր նյութով բանաստեղծի և սարեկ թռչունի միջև փոխանակված մի տրամախոսություն է, որի մեջ թռչունը ներկայացուցիչն է արտաքին բնության»³⁹: Չնայած նա քիչ հետո գրում է, թե «Չկա քերթվածի սկզբում այլաբանություն, այլ մեր առաջ երևում է իրական երգեցիկ թռչունը», բայց նորից գտնում է, որ բանաստեղծը «Լ՛ իրական թռչունի մասին է երգում, և՛ իր տեսության»: Ուշադիր հետևելիս կարելի է կռահել, որ այլաբանություն հասկացությունը նա չի տարածում Սարյակի վրա, այլ պոեմի միջին և վերջին մասերի, որովհետև նա միշտ էլ թռչնիկին դիմում է իբրև բնական սարյակի: Եթե անգամ ընդունենք, թե ինչ որ եղանակով նա այդ հասկացության տակ նկատի է առել նաև Սարյակին, միևնույն է, դրանից հարցի էությունը չի փոխվի, որովհետև նրա ուսումնասիրության մեջ ո՛չ մի բառ չկա Սարյակի այլաբանական կերպարի վերաբերյալ, էլ չենք խոսում այդ հարցի գիտական բննության մասին: Անհարկի կլիներ փաստարկել, որ

կան կու նմանեն մարդոյ ձայնի և դյուրափոփոխ ղյօղաւորին կու ասէ զմարդոյն, որ նշանակօղ է, որ լսօղքն կու լսեն միապէս, զփողոյն և զանասնոցն շեն ի լսելիս միապէս» (Ձև. N 2595, թերթ 251ա):

36 Ձև. N 61, թերթ 103բ-105բ և այլն:

37 «Սերոյն Բարսղի... Ճառք», Վենետիկ, 1830, էջ 5, 9, 62, 165—169, 187—190 և այլն:

38 «Յովհաննու Ոսկերեբանի Մեկնութիւն թղթոցն Պալղոսի», Ա, Վենետիկ, 1862, էջ 430—432 և այլն:

39 Մ. Արեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 75:

այս հիման վրա էլ բոլոր հաջորդ մասնագետները Սարյակին դիտել են իբրև իրական թաշուն:

Այդ պատկերացումը, ինչպես պարզվում է հիմա, կարոտ է վերանայման: Բանն այն է, որ պոեմի մեջ Սարյակի կերպարը սկզբում է միայն բնական թաշունի գաղափարի գեղարվեստական վերարտադրություն, իսկ հետո վերաճում է գերբնական էակի: Եթե հետևելու լինենք նրա բնավորությանը, այսինքն՝ աստվածաբանական ճոխ գիտելիքներին, անվերջանալի քարոզներին, իր իմացություններով Վարդապետին ուսուցանելուն, ապա նույնիսկ իսկական թաշունի հետ նրա ունեցած կապի փաստարկումը կզժվարանա, որովհետև պոեմի սկզբնամասում էլ առկա են այլաբանական տարրեր: Օրինակ, Սարյակի գրվատանքում օգտագործած «հակող», «պաշտօնասէր» բառերը՝ աղոթողի և կրոնական ծեսերի սիրահարի իմաստներով ենթադրել են տալիս ոչ իրական թաշուն: Այժմ, երբ պարզվում է Սարյակի կերպարի կապը Աղեքսանդրի նկատի առած իսկական սարյակի գաղափարի հետ, տարակուսանքը շքանում է, մանավանդ, որ պոեմի առաջին հատվածում, իրոք, խիստ հմտորեն նկարագրված է բնական սարյակ: Պոեմի երկրորդ հատվածից է, որ բանաստեղծի հետապնդած ստեղծագործական նպատակների թելադրանքով, թաշունը կերպարանափոխվում է՝ դառնալով գերբնական էակ, որպեսզի պատասխանի հեղինակին հուզող հարցերին: Կարճ ասած՝ Սարյակը բանաստեղծն է, նրա գաղափարախոսը, նրա ներկայացուցիչը՝ պոեմում:

Գալով պոեմի մյուս գործող անձի՝ Վարդապետի կերպարին, պիտի ասել, որ նա մարդկության ներկայացուցիչն է՝ մերթ բանաստեղծի, մերթ Վարդապետի անվան տակ: Այստեղ էլ, անշո՛ւշտ, առկա է հեղինակը, բայց ինքնաքննադատվողի դերում: Եթե խոսելու լինենք միջնադարի բառապաշարով, ապա կարող ենք ասել, որ Սարյակը երևան է գալիս հոգու, իսկ Բանաստեղծ-Վարդապետը՝ մարմնի դերով: Ուստի առաջինը և՛ անմեղ է, և՛ իրավացի, և՛ աստվածաբան: Երկրորդը, համաձայն է նրա սկզբունքներին՝ մեղավոր է իբրև Ադամի ժառանգ, ուստի իր կյանքը նվիրաբերել է այդ մեղավորությունից ազատվելու միջոցներին, որպեսզի կարողանա՝ Զուգել մեծաց և աճուսնեաց, նաև վերին իսկ զօրութեանցն...»: Ահա այս եղանակով, աստվածաշնչային պատկերացումների օգնությամբ, հեղինակն առաջ է տանում իր կերտած երկու կերպարների փճաբանությունը, միաժամանակ հետևողականորեն արտահայտելով իր հիմնական գաղափարները, բնության ուժերի գնահատման և պաշտպանության մասին:

Արդ, որո՞նք են այդ հիմնական գաղափարները՝ պոեմի առաջին հարցախմբում: Մ. Արևելյանի ուսումնասիրության մեջ արդեն բացահայտված է, թե պոեմի «Թեման՝ արվեստի ծագման խնդիրն է, հատկապես երաժշտության ու բանաստեղծության, որոնք երկուսը հնում սերտ կապված են եղել միմյանց հետ. բանաստեղծը երգի և՛ խոսքերը, և՛ եղանակը հորինողն էր, և՛ երգողը. այսինքն՝ կատարողը»⁴⁰: Միանգամայն ճիշտ ընդհանրացում, որը, սակայն, չպիտի տարածվի պոեմի ողջ թեմայի վրա, այլ՝ սկզբի մասի, որովհետև երկրորդ մասի թեման վերաբերում է ուրիշ հարցերի: Այնուհետև, ճիշտ չէ, որ պոեմի մեջ առկա խոսելու (բանաստեղծության) և երգելու (երաժշտության) հարցերը, միասին են քննվել, որովհետև դրանք հեղինակի կողմից դիտված են

40 Նույն տեղում, էջ 72—73:

իրև տարբեր հարցեր: Պատճառն այն է, որ հեղինակը հետևել է Աղեքսանդրին նաև այս հարցում, իսկ Աղեքսանդրը նույն հարցերի կապակցությամբ (սոսկ գիտական նկատառումներով) ասում է. «Չայնի կրկին տեսակ է, է՛, որ յասել է, և է՛, որ չերգել» (էջ 128): Ըստ այսմ էլ Հովհաննես Սարկավազը նախ գրել է «ասելու» մասին (տող 29—59), ապա «երգելու» (տող՝ 60—72): Ուստի փորձենք դրանց ծանոթանալ շոկ-շոկ:

Պոեմի առաջին հատվածում բանաստեղծը դրվատելով Սարյակի ֆիզիկական հատկությունները, անցնում է նրա հոգևոր առաքինություններին (խոսելու, երգելու, պարելու և նվագելու), ապա շեշտը դնում խոսելու վրա.

Մբանչելի ի քեզ խորհուրդ, որոց քնարեաց Տէր յաշխարհէ,
Իայց շառեր դու գորութիւն, որով դիւրաւ խօսին լեզուք.
Ոչ մքտեր ի վերնատուն՝ քնդ հրաւիրեալսքն յաւտիսն.
Արդ ուստի՞ իցէ քեզ խօսել յայլալեզուս և յրնտանիս,
Ե՛կ, ուսո՛ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս...

Ինչպես նկատել են Ղ. Ալիշանը և Մ. Արեղյանը, խոսքն այստեղ Հոգեգալըստյան առասպելի մասին է, ըստ որի առաքյալները Վերնատանն արժանանում են Սուրբ Հոգու գալուստին և պարզևատրվում հրեղեն լեզուներով: Այդ լեզուների շնորհիվ նրանց խոսքը դառնում է բոլորին հասկանալի. տարբեր ազգերի ներկայացուցիչները միաժամանակ հասկանում են նրանց ու զարմանում: Բանաստեղծը հիշեցնելով այս առասպելը, Սարյակին հարց է տալիս, չէ՞ որ դու Վերնատանը շես եղել, ինչպես է, հապա, որ խոսում ես բոլորին հասկանալի լեզվով: Այսպէս ասելով նա նկատի է առել այն իրողությունը, որ թոշուներին լսել ու հմայվել են և՛ թոշուները, և՛ մարդիկ: Համապատասխան միտքը գալիս է Աղեքսանդրից, այլ հեղինակներից և մանավանդ բանաստեղծի սեփական գիտարկումներից: Դա արժեքավոր և իր ժամանակի համար նոր ու առաջավոր միտք է՝ առաջին անգամ մշակման նյութ դարձած քննվող պոեմում: Ուշագրավ է, որ այն կատարյալ լեզուն, որ կա «Գործք առաքելոցում» և բացատրվում է կրոնական առասպելով, Հովհաննես Սարկավազի կարծիքով՝ կա բնության մեջ: Եվ նա դա ցույց է տալիս Սարյակի օրինակով: Առավել ուշագրավն այն է, որ պոեմի մեջ ուսանելու հույսն ու ձգտումը կապված է ոչ թե առաքյալների հետ, այլ՝ Սարյակի:

Ե՛կ, ուսո՛ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս...

Այդ առումով էլ հիմք կա Աղեքսանդրի ճառում: Այստեղ հեղինակը հետևողական համոզմունքով խոսում է ոչ միայն թոշուներին, այլև բոլոր մյուս էակների բանականություն ունենալու մասին: Նրանցից սովորելու (ուսանելու) վերաբերյալ էլ ակնարկ կա վկայակոչված «Կեռնեխք...» հատվածում: Պիտի միաժամանակ շնորհանալ, որ դեռևս Փիլոսոֆ է ժխտել Աղեքսանդրի հայացքները, իսկ քրիստոնեության հաշորդ դարերն է՛լ ավելի են խորացրել այդ մերժումը: Ուստի Հովհաննես Սարկավազը, ուշադրություն հրավիրելով բնագիտական ճշմարտության վրա, իբրև հոգևոր առաջնորդ, փորձում է տալ նաև իր բարձրացրած հարցի բացատրությունը, որը, ինչ խոսք, պիտի թևածեր կրոնական պատկերացումների ոլորտում: Ըստ այդմ էլ, այն հարցին, թե ինչո՞ւ Սարյակի խոսքը լիարժեք է, իսկ մարդունը՝ կիսակատար, բանաստեղծի կամքով Սարյակը պատասխանում է Աստվածաշնչի դրույթների համաձայն: Ելակետը Ադամի

մեղքն է, որի պատճառով մարդկությունը զրկվել է երկնային դրախտից և վտարվել այս աշխարհը: Այդտեղ էլ, սակայն, նրանք դրադվել են աշտարակաշինութեամբ և պատժվել՝ աստվածապարգև լեզուն կորցնելով և տարբեր լեզուներ ստանալով: Այդ պատճառով մարդկային լեզուն կիսակատար է, իսկ թռչուններինը՝ ո՛չ, որովհետև նրանք հավատարիմ են մնացել աստծու պատգամներին, շեն մեղանշել և շեն զրկվել իրենց ստացած նախնական շնորհքներից:

Ո՛չ մեղայ, ո՛չ մահացայ, ո՛չ կորուսի զոր ընկալայ,
 Հաւանդրն պահեցի և տուգանաց ո՛չ ըզգացի.
 Զշինեցի՛ ես աշտարակ, զի յոգնակի դարձեալ մեղայց
 Կամ ընկալայց ըզպատուհաս՝ նրմանապէս բանատրացդ՝
 Միոյ շրթան և բարբառոյ բազմատեսակ բաժանելոյ...⁴¹

Այսպես, ուրեմն, դրվատված երևույթը՝ թռչունների խոսքի կատարելութեան մասին գալիս է գիտական հիմքերից ու փորձերից, իսկ նրա բացատրութեանը՝ Աստվածաշնչից: Կարևորն առաջինն է, և հենց դրանով էլ Հովհաննես Մարկավազի պոեմում տեղ գտած այդ հարցը անխական ժամանակների ու միջավայրի աշխարհայացքային մեծարժեք նվաճում-նորութուններից մեկն է:

Այսպիսին է խոսելու կատարչալ արվեստի հարցը՝ քննվող պոեմում:

Հովհաննես Մարկավազը, ըստ Աղեքսանդրի նշումի («Ձայնի կրկին տեսակ է... յասել... յերգել»), պոեմի երբորդ հատվածում անցնում է երգելու շնորհքի քննությանը: Այստեղ թռչունին տրվելիք հարցը բացակայում է, բայց այն ենթադրվում է վերջինիս պատասխանից և հեղինակի խոսքի մեջ եղած համապատասխան ակնարկից: Ըստ երևույթին, բանաստեղծն անհարկի է համարել լեզվի կապակցութեամբ տրված հարցը նորովի կրկնել երգի համար: Հատվածն սկսվում է թռչունի ուղղակի պատասխանով.

Հայս ասաց պատճառ բազմանրազ եղանակացն
 Թռչունն քաղցրախօս ի հարցանելըն մեր ըզնա...
 Ուսայ ես դեզերմամբ, ևս ի բազմաց ամաց հետէ,
 Զի տըքնեցայ զոր ամենայն և ըզգիշերն բովանդակ՝
 Առ իմաստըս ցանկութեամբ, նա և սիրովն, որ ա՛ռ հանձար...

Մասնագետները մինչև օրս այս մեծարժեք փաստը ճիշտ չեն ընկալել, ուստի և այն չեն գնահատել: Նրանց այնպես է թվացել, թե այդ տողերը վերաբերում են բանաստեղծին: Այսպես, Ղ. Ալիշանի կարծիքով, Հովհաննես Մարկավազը «...իր անխոնջ ուսմանց զբաղելուն համար կրսէ հոն. Ուսայ ես

⁴¹ Գրիգոր Նարեկացին Հոգեգալստյան տաղերի մեջ անդրադարձել է լեզվի հարցին, սակայն, հետո է նրա գիտական գրվածքից: Ուշագրավ է, որ նա առասպելի հրեղեն լեզուների օգնութեամբ առաքյալների ստացած գլուխախոսութեան շնորհքը դիտում է իրեն աստծուց ստացված մարդկային երբեմնի ընդհանուր միասնական նախալեզվի վերականգնման միջոց.

Աստանար ծագեաց լոյս անտեսաց կենաց...
 Հոգին Սուրբ հընչեաց բազմաց լեզուս ազգաց ազանց ի ձայն...
 Բարբառ ժողովազ զազգս և զազինս բաժանման լեզուաց,
 Լեզուար հրեղինար նոր արհնութիւնք ընդ տիեզերս հընչեն...

դեզերմամբ...»⁴²; Մ. Արեղյանը ևս այդպես է ընկալել նույն տողերի իմաստը. «Քերթողն ընդունում է Սարյակի պատասխանը... բայց ավելացնում է, թե... այդ տեսակետին հասել է նա բնությունը դիտելով և գիշեր-ցերեկ ուսման ու գիտության հետևելով»⁴³; Հարցին այդպես է մոտեցել նաև Ա. Աբրահամյանը⁴⁴:

Որ, իսկապես, այդտեղ խոսքը Սարյակի ուսման մասին է, դա երևում է ինչպես նախորդ տողերից («Զայս ասաց... թուշունն քաղցրախօս»), այնպես էլ նրանց անմիջապես հաջորդող հետևյալ հատվածից.

Զայս ասաց և հաստատեաց որպէս կրնիք իւրոցն իրաց,
Յանդիմանեաց ըզմեզ ուղիղ և ինքն օղովըն սլացաւ,
Ի բարձուրիւնն ոստոյն նրատա՛ ըզհայրենին բարբառելով:

Ամեն ինչ այնքան հստակ է ու որոշակի, որ կարելի կլիներ դարձանալ՝ ինչպե՞ս են փորձառու մասնագետները սխալվել, եթե միայն շիմանալինք, որ նրանք հավատացած են եղել Սարյակի ամբողջապես բնական թուշուն լինելու հարցում: Հիրավի՛, մի՞թե սովորական սարյակն այդպիսի փիլիսոփայական ընդհանրացում կաներ՝ մանավանդ աշխատանքի վերաբերյալ: Ամեն արգելք վերանում է, երբ նկատի ենք առնում Սարյակի կերպարանափոխությունը և գերբնական էակի վերաձևելը՝ պոեմում: Պարզվում է, որ այդ փիլիսոփայական մտքի համար ևս սկզբնաղբյուր է հանդիսացել Աղեքսանդրը. նրա կարծիքով կենդանիների շնորհքը «յօղացեալ է ի ձեռն նոցա ինքնալուր և ինքնուսումն վարեցեալ բնութեամբ» (էջ 127—128): Նա միաժամանակ գտնում է, որ «ոչ միայն ինքնալուր և ինքնուսումն հանձարոյ ոմանք ի նոցանէ հասին, այլ բազումք և ուսեալք... զոր նոցա վարդապետք պատուիրեն» (էջ 134): Ինչպես տեսնում ենք, Աղեքսանդրի և Հովհաննես Սարկավազի տողերում կան անգամ բառերի ու դարձվածքների համանմանություններ: Օրինակ, պոեմում Սարյակը համարված է «ինքնաբաւ և ինքնուսումն», իսկ Աղեքսանդրի մոտ՝ «ինքնալուր և ինքնուսումն», երկուսի մոտ էլ այդ շնորհքները կապված են հանձար և իմաստություն հասկացությունների հետ և այլն:

Կենդանիների ուսման մասին խոսում են նաև ուրիշ հեղինակներ՝ հետևելով Աղեքսանդրին, օրինակ, Գրիգոր Աստվածարանը գրում է. «կամիս՝ քեզ և զայլոց կենդանեաց զանազանութիւնք առ մեզ և առ միմեանս... Զիա՞րդ ոմանք... իբրև մերձաւորագոյն իմն ի բան և յուսումն, և այլք ամենեկին անբանք և անուսումնագոյնք... կէսք նախահոգակք, այլք՝ ամենեկին անգործք և առանց յառաջագոյն հոգալոյ...»⁴⁵: Բացառիկ կարևորություն ունեն Աղեքսանդրի հետևյալ մտածումները. «Այսպիսով յամենայն ոգւոջ զիշխանական միտսն հաստատեաց. այլ է յումեք որ իբր նուազագոյն է նկարագրութեան ընդ աղօտ, և դիւրաջինջ ձև կերպարանի. և է յումեք՝ յորում՝ որ իբր անջինջ յայտնագոյն է և զժուարալուաց կերպարան նկարեալ է: Արդ անյայտ տեսակն յայլսն է. իսկ հաստատուն և յայտնի տիպք ի մարդկան կերպարանս կրի»⁴⁶:

42 «Բազմավէպ», 1847, էջ 216. տե՛ս նաև «Յուշիկք հայրենեաց...» Բ, էջ 254:

43 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 78:

44 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 23:

45 Ձեռ Ն 61, Թերթ 103բ:

46 Ուշադրով է նաև Աղեքսանդրի հետևյալ պատկերացումը՝ բանականության տեսակների մասին: «Քանզի բանի կրկին տեսակ է,—գրում է նա,— մին ի ներքս ի խորհուրդն եղեալ է՝ իբրև զազբիր, վայր ունելով զոգուցն զառաջնորդականն և զիշխանականն: Իսկ զոչօղն նման

Բայց, — շարունակում է նա, — ի վերայ ասացելոցս՝ ոչ վայրապար և զայն ասելի է, եթէ իմաստութիւն և գիտութիւն և քաջախորհրդութիւն, և այն ևս, որ յառաջատեսակն է՝ հանդերձ նախախնամութեամբ, և որ ինչ միանգամ այլ ևս խորհրդոյ իմաստութեան եղբայր է, բազումք և այլք ի կենդանեաց՝ զայսոսիկ զորս բանական ասեն ոգոյ առաքինութիւնք են՝ ունի՛ն» (էջ 138—139):

Իր ճառի վերջում Աղեքսանդրն ասում է. «Արդ այլ ևս մասին հասին, ոչ միայն մարդ, այլ և այլ կենդանիք մտաց խորհրդականութեան ժառանգութիւն բնկալան՝ ոչ անյայտ է, այլ ի կցորդութիւն առաքինութեան և շարութեան ի նոցանէ մատուցեալ լինի հաւատ» (էջ 161):

Այս մտքերի՝ իրենց ժամանակի համար ունեցած առաջավոր նշանակութիւնը ցույց տալու նպատակով, հարկ է հիշել Ֆ. Էնգելսի հետևյալ տողերը. «Նակայն, բստինքյան հասկանալի է, եո մենք մտադիր շնք ժխտելու պլանաշափ, նախամտածված գործողութիւններ կատարելու ընդունակութիւնը կենդանիների մոտ: Ընդհակառակը, գործողութիւնների պլանաշափ եղանակն արդեն սաղմային վիճակի մեջ գոյութիւն ունի ամենուրեք, որտեղ պրոտոպլազմա կա, որտեղ կենդանի սպիտակուց գոյութիւն ունի և հակադրում է, այսինքն թեկուզ ամենապարզ շարժումներ է կատարում, որպես հետվանք դրսից եկած որոշ գրգիռների... Կենդանիների մոտ գիտակցական, պլանաշափ գործողութիւններ կատարելու ընդունակութիւնը զարգանում է ներվային սիստեմի զարգացմանը համապատասխան և արդեն կաթնասունների մոտ բավականաչափ բարձր աստիճանի է հասնում... Մեր ընտանի կենդանիների մոտ, որոնք ավելի շատ են զարգացած մարդկանց հետ շփվելու շնորհիվ, կարելի է ամեն օր խորամանկութեան ակտեր գիտել, որոնք երեխաների նույնպիսի ակտերի հետ հավասար մակարդակի վրա են կանգնած»⁴⁷:

Ահա այսպիսի պատկերացումների վրա հենվելով է, որ Հովհաննես Սարկավազը կերտել է Սարյակի փիլիսոփայական կերպարը՝ սեփական գիտողութիւններից ու գիտելիքներից հանված կրթակացութիւնների օգնությամբ: Ըստ որում, նա իբրև բանաստեղծ այդ կերպարին օժտել է գերբնական հատկանիշներով և հեռացել նախորդներից: Ուստի, ինքնուսումնությամբ կամ վարժողութեամբ կենդանիների ձեռք բերված արվեստի փոխարեն, նա դրվատել է անդուլ աշխատանքով ստեղծված արվեստը: Դա արդեն աշխատանքի դերի գնահատման փաշտուն օրինակ է, որպիսին չի հանդիպում մեր մատենագրութեան մեջ: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում հիշել Ֆ. Էնգելսի այն միտքը, թե «Աշխատանքն ամեն մի հարստութեան աղբյուրն է, պնդում են քաղաքատնտեսները: Նա իսկապես այդպիսին է հանդիսանում բնութեան հետ միասին, որը նրան նյութ է մատակարարում, իսկ այդ նյութը նա հարստութեան է փոխարկում»⁴⁸:

Ինչ խոսք, Հովհաննես Սարկավազի պատկերացումներն այդպիսի ստուգութեան շէին կարող հասած լինել, սակայն, առկա վիճակով խիստ ուշագրավ

է հոսման, ի ձեռն բերանոյ և լեզուի ի բնական գործարարութեան լսելեօք լինքն պեղեալ...

Արդ անաեսանելի՛ տեսակացն զոր բնկալաւ միտք. իսկ որ ի զգայութիւն հասանէ՛ փորձեալ լսելեօք... Բազումք են՝ որ յօղացեալ է ի ձեռն նոցա՝ ինքնալուր և ինքնուսումն վարեցեալ բնութեամբ. և բազումք են՝ որք և ուսուցեալ լինին, որպէս զագաւազ ասեն, և որ ի Հնդկա պապկայքն են» (էջ 127—128):

47 Կ. Մարտ. Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 102—103:

48 Նույն տեղում, էջ 91:

են: Նրա մոտ էլ աշխատանքի գաղափարը կապված է բնության հետ: Բացի դրանից, քանաստեղծը ուշադրություն է դարձրել արվեստի ծագման մի ուրիշ գործոնի՝ «գործի» հասկացության վրա, առանց որի կատարչալ արվեստի հասնելը նա անհնար է համարում: Բառարանական բացատրություններից գործիի գաղափարին ավելի մոտ է միջոցը (հնարավորության իմաստով), բայց տվյալ դեպքում ավելի ճիշտ կլինեք շնորհիք, օժտվածությունը: Խոսքն այն տողերի մասին է, ուր առասպելական մարդ-երգիչներն իրենց երգելու արվեստով շեն հավասարվում Սոխակին, ասպուճակին, ճպուռին՝ համապատասխան գործի շունենալու պատճառով:

Զի գործի այս արուեստի նորա շունին ի բնութենէ...

Այսինքն՝ շնորհների պարգևով բնության կողմից ավելի շատ օժտված են կենդանիները, քան մարդիկ, ուստի մարդը բնությանից է սովորել: Այս տեսակետից ուշագրավ է պոեմի հետևյալ հատվածը, ուր խոսքն ուղղված է Սարյակին.

Հոմերական տաղիցքն շափ քե ծանուցեալ լինի բազմաց,
 Ոտանաուր և ցուցական՝ ըստ ֆերբողացքն տեսակի,
 Կամ թե ևս աւելագոյն՝ որպէս թուի ինձ՝ գիտողիս,
 Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բրնութիւն:

Վերջին տողով հեղինակը հասկացնում է, որ բնությունը չի կարող սովորել ուրիշից, և քանի որ Սարյակը տիրապետում է կատարչալ արվեստի, ապա դա՝ նրա սեփականն է, նրա օժտվածության արդյունքը: Հետևապես մարդը պիտի սովորի նրանից՝ բնությունից:

Ինչպես Մ. Աբեղյանն է նկատել, «Բան իմաստության» պոեմում արվեստի մի քանի ճյուղեր (խոսք, երգ, նվագ և այլն) միասին են ներկայացվում. օրինակ.

Ո՛վ պարող դու անձանձիր և կափալիչ յոգնանուագ...
 Աստ գաս նըստիս մերձ առ ինձ՝ իբր արուեստի ինձ յանգակից,
 Բազմաղեաւ երգաբանաւ եղանակես և կափանս...⁴⁹:

Հիշենք նաև հոմերական տաղաչափությանը, «ոտանաուր և ցուցական» քերթություններին, «ևս աւելագոյն» արվեստների տիրապետելը, որ հիշված են վկայակոչված նախորդ տողերում: Բոլոր այս շնորհներով Սարյակը ներկայացնում է արվեստների մի ընդհանուր բնագավառ, և այն՝ իբրև մեկը մյուսի հետ կապված հարադատ ճյուղերի ամբողջություն: Խոսքից անբաժան է տաղաչափությունը, քերթությունն իր տեսակներով, ապա երաժշտությունը, նրանից՝ երգարան գործիքը, իսկ բոլորից՝ պարն ու կաքավը: Այստեղ նկատելի է արվեստի հարակից ճյուղերի կոմպլեքսային ծագման ու համատեղ զարգացման տեսության գաղափարը, որն ինքնին արժանի է մեծ ուշադրության: Չենք կարող չհիշել Մ. Աբեղյանի այն միտքը, թե արվեստի հետ կապված բոլոր այն խնդիրները, որոնք առկա են պոեմում քանաստեղծն ինքն է լուծել: Ծիշտ չէ. դրանք, հիմնականում, հին աշխարհի մտքի նվաճումներն են՝ վերածնված հայ միջնադարում: Այս առումով խնդրին ճիշտ է մոտեցել Հ. Ապրեսյանը, երբ

⁴⁹ Աստվածաշնչում երգի ու քնարի ստեղծողը երևակայական Հովրաղն է. «Յովրաղ. նա է հայր՝ որ եցոյց զերգս և զքնարս» (Մեունդք, Գ, 21):

արվեստի ընդօրինակության հարցի կապակցությամբ գրել է. «Շատ ավելի վաղ քան Հովհաննես Իմաստասերը հին հունական մտածողները, սկսած առնվազն Դեմոկրիտից, պնդել են, որ արվեստը բնության նմանողության արդյունք է: Այս համոզմունքն իր ամենալիարժեք դրսևորումը ճիշտ ձևակերպումով ստացել է Արիստոտելի «Պոետիկայում»⁵⁰:

Մասնագետները Հովհաննես Սարկավազին են վերագրել այն միտքը, թե բնությունը ենթակա չէ ուսման և դրա համար վկայակոչել են հատկապես հետևյալ տողը.

Զի վարժումն և կրթութիւն ո՛չ ժամանէ առ բնութիւն...

Հիրավի, դա փիլիսոփայական մեծ ընդհանրացում է՝ խիստ դիպուկ ձևակերպմամբ, որն իր այս ուղղակի առումով մեզ հայտնի չէ սկզբնաղբյուրներից, շնայած այնտեղ այդպես մտածելու առիթներ տվող փաստեր կան: Օրինակ՝ Աղեքսանդրը բանական համարելով կենդանիներին, նրանց մի մասին դիտում է իբրև սովորելու ընդունակներ, իսկ մի մասին՝ ո՛չ: Այդ միտքը կրկնում են նաև հաջորդ դարերի հեղինակներից շատերը: Փիլոսոփ, սակայն, մերժում է կենդանիների սովորել կարողանալու ընդունակություններն առհասարակ, պնդելով, թե նրանք, զուրկ լինելով բանականությունից, զրկված են և նախահոգությամբ (կանխամտածվածությամբ, նախապես հոգալ կարողանալով) սովորելու հնարավորությունից և ստեղծագործելու հանձարից: «Քանզի եթէ նախախնամութիւն ի բաց բարձեալ է, դադարեսցէ երաժշտականութիւնն, իմաստաւորութիւնն, երկրաշափութիւնն, նաւաստականութիւնն, և ամենայն առաքինի մարթանք հանձարոյ» (էջ 15): Փիլոսոփ միաժամանակ հրճվում է բնության դեղեցկություններով, թռչունների դաշլաշլանքով, այդ բոլորը համարելով ոչ թե բանականության, այլ բնազդի հետևանք: «Քանզի անուսումն ամենայն ոգի եղիցի, — գրում է նա, — յորժամ նախախնամութիւն ոչ գոյ: Քանզի և ոչ զմրջիւն նախահոգական որ կալցի, և ոչ զմեղու արարչական, և ոչ զծիծառն իմաստուն, բանզի ոչ նախիմացությամբ, ի բնութենէն դայս գիտէ» (էջ 24): Այստեղ արդեն կարելի է տեսնել բավարար հիմք՝ այնպիսի կուռ ընդհանրացման համար, որ առկա է պոեմի վերոհիշյալ տողում⁵¹:

Քանի որ այդպիսիք են եղել բանաստեղծի համար առկա պատրաստի և ելակետային մտքերը, բնականաբար, նա իր հերոսին՝ Սարյակին միակը չի համարում արվեստի բնագավառում, այլ շատերից մեկը: Այս տեսակետից ուշագրավ է պոեմի հետևյալ հատվածը.

Թէ աղգակից ես սոխակի, ասպունակի կամ՝ նպուան⁵²...

Երաժիշտք են և նորա, բայց ցանկացան անապատի,

Դաշնակացրն նուագօք ըզբացավայրսրն դարդարեն...

50 Г. Апресян. Из истории армянской эстетической мысли. Ереван, 1973, стр. 139.

51 Հովհաննես Սարկավազը նույն մտքերին հետևյալ մեկնաբանությունն է տվել. «Զգիտութիւնն և գիմաստն որ կարգաւորարար ի բանականքս է, ասէ, և ոչ ի շնչաւոր անասունդդ»: «Ամենայն իրօք գիտութիւն ի բաց բարձեալ է ի նոցանէ. միայն բանականքն է ունակական գիտութիւն և արուեստ իմաստութեանն, զոր շունէր յառաջ և ուսմամբ եզիտ»: «Զէ պատե՛հ ասել, թէ բնորութեամբ և յառաջախո՛սութեամբ առնին (իմա՛ կենդանիները — Ա. Մ.) զգործն, այլ բնութիւնն բաշխեաց և ետ դայն ընտանի յար իբրաքանչիբոց» (Ձև. № 2595, թերթ 250ա—251ա):

52 Ընդգծված բառերը Ղ. Ալիշանի ունեցած օրինակում վնասված են եղել և հրատարակողի կողմից լրացվել են «ասա զու ինձ գիմադրութեամբ» կիսատողով, որն իրեն չի արդարացնում: Տողի այդ վնասված կեօք լրացվել է Զմմատի ձեռագրից:

Ամփիոնն այր Քերացի և Արիոն Միթեմնացի,
 Որփես Քրակացի, այս երաժիշտք են մեծագույնք.
 Այլ նուազեալ են առ նորօք, որք բնականաւն են պաճուճեալք,
 Զի գործի այսր արուեստի նորա շունին ի բնութենէ:
 Մի և դու ես յայնցանէ, զորոց լուար զպատմութիւնն,
 Համարուեստ և անուանի որպէս արդյունքն վրկայեն...

Ահա թե ինչպիսի առափելութիւններ ունեն բնության ներկայացուցիչները: Աղերսանդրի մտա կենդանիների՝ մարդու նկատմամբ ունեցած առափելութիւնների կապակցութեամբ հիշված փաստերից մեկն էլ սարդի օրինակն է. «Զսարդ ս՞չ տեսանես որչա՞փ և որպիսի՞ և ի՞րր սքանչելի իմն կազմէ: Քանզի ո որ տաժանագործ նիւթող և կամ ոստայնանկ բաւական է՝ ոչ հակառակելով ասեմ, բայց նմանեցուցանելով, կարել տանել արուեստի զերկրորդութիւնն... Քանզի առեալ իրր ասր անգործ նիւթ՝ հանճարաբար իմաստութեամբ յոյժ արուեստաւ կազմէ» (էջ 130):

Ահա և նմանողության հարցը: Կարևորն այն է, սակայն որ, ըստ հեղինակի, բազմաթիւ տաժանակիր մարդ պիտի պահանջվիր՝ ոչ թե նման գործ ուրույնաբար անելու, այլ ընդօրինակելու համար: Այստեղ ուշադրով է մի այլ փաստ ևս, որը ջուլց է տալիս, թե բանաստեղծն օգտվել է ոչ թե լսկ Աղերսանդրից, այլև նրան բաշածանոթ ուրիշ հեղինակներից: Այս առումով պերճախոս է հետևյալ տողը.

Թէ աղգակից ես սոխակի, ասպուճակի կամ՝ ճպրան...

Ասպուճակի մասին խոսք չկա ոչ միայն Փիլոնի ու Աղերսանդրի մտա, այլև հայ մատենագրութեան մեջ, բացի Հովհաննես Ոսկերեբանի Պողոսի թղթերի հայ մեկնութիւնից⁵³: Այստեղ կարդում ենք. «Այլ թերևս ձայնի՞ւ ինչ հպարտանայցես, բան զփորն և զսոխակ և զասպուճակ շկարիցես երբէք ձայն ինչ քաղցր և հեշտական մրմնջել»⁵⁴:

Ճպուտի օրինակի համար կարող ենք հիմք համարել Գրիգոր Աստվածաբանի և Բարսեղ Կեսարացու մտքերը: Առաջինն ասում է. «Ո՞ր ես ճպրան ի լանջս զմանեկաճևութիւն և ի վերայ ոստոցն զերզան և զղայլայլիկան՝ յորժամ արեզական շարժումն զմիջորեալն առնիցէ, երզէ և հնչեցուցանէ ձայնիւ զանտառան, և զուղեզնացն ձայնիւր անցուցանեն»⁵⁵: Բարսեղ Կեսարացին ևս մտաւորապես նույնն է կրկնում. «Զարմանալ պարտիմք զարձեալ և ընդ քաղցրանուագ բարբառ՝ զոր զեղզեղեալ յօրինէ ճեպիոն (տարրնթ. ճպուտն). զիա՞րդ մէջօրեալ ժամանակի զխածեակն զոր ունի ի լանջսն՝ ձգեալ պրկէ... և այնպես անդադար զեղզեղէ զբարբառն քաղցր և հեշտ նուազույք, առաւել բան զերգս արուեստականաց»⁵⁶: Ահա թե ինչպես են հնում բարձր դասել կենդա-

53 Հ. Անաչյան, Հայերեն արմատական բառարան, Ա, Երևան, 1971, էջ 276. «ուրիշ տեղ չէ օգտագործված». տե՛ս նաև «նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, Երևան, 1979, էջ 516:

54 «Հովհաննէս Ոսկերեբանի Մեկնութիւն թղթոցն Պողոսի», Ա, Վենետիկ, 1862, էջ 430:

55 Չեռ. N 69, թերթ 105 բ:

56 «Մերոյն Բարսղի... ճառք», էջ 174: Չնայած ճպուտի մասին խոսում է նաև Փիլոնը, բայց նրա մտա աղգպիսի միտք չկա: նա գրում է «իբր ասեն զճպրանցղ ազգք օգով կերակրիլ» («Փիլ. Տեառական»): Այս միտքն օգտագործված է Նզիշեի կողմից. «Անարին ճպրանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց ապրին» (Ը): «Բան իմաստութեան» պոնժում ևս աղգպես է մտածված. «նուազօրքն կերակրեալ»:

նինների շնորհները, այդ թվում նաև ճպտու միջատի, որին թռչուն են համարել ու գետեղել սոխակի, ասպունձակի ու նրանց ցեղակիցների շարքը:

Հովհաննես Սարկավազի «Բան իմաստութեան» պոեմի հերոսը յուրովի հիշեցնում է քրիստոնեական եռաստվածության Սուրբ Հոգուն և կարծես միտում է փոխարինել նրան: Այստեղից ինքնին առաջանում է այն կասկածը, թե արդյո՞ք Հովհաննես Սարկավազը Սարյակի միջոցով չի՞ տվել Սուրբ Հոգու գաղափարն արտահայտող նոր ոգու պատկեր: Այս հարցը կարող է ծագել և առիթ դառնալ թյուրիմացությունների, եթե այստեղ դրան շտրվի որոշակի պատասխան: Բանն այն է, որ Սուրբ Հոգին ևս հաճախ նկարագրվում է նույնպիսի հատկանիշներով, ինչպիսիներով Սարյակը: Օրինակ, Գրիգոր Նարեկացին «Փալատեան Հոգույն» տաղում այսպես է ներկայացնում նրան.

Յանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն
 Հրահոսավտակ բոցաշաւեղ եռանդն.
 Որոյ դրանդն ի յերկնից հողմահնչեաց
 Բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուաց:
 Ի ձայն բիրակերպ օգինատիպ լրումն
 Աւետարարոյ տրումականաց դասուց
 Պետրոսեան երամ հրաւիրողակ բարեաց:
 Հրով մարրողին վերառաքեմք
 Իննարար երգ ի նա մէտ.
 Եւթնաղի շնորհաց Հոգույն Սրբոյ.
 Հոգի Հօր, ելումքն նոյնատիպ դիմաց:
 Հոգի Աստուծոյ, Հոգի գօրութեան,
 Հոգի հեղութեան, հոգի գիտութեան, իմաստութեան,
 Հոգի խորհրդոյ և հանճարոյ...⁵⁷:

Այստեղ հեղինակը նկատի ունի այն տեսարանը, ուր Սուրբ Հոգին հրեզեն լեզուներ է նվիրում առաքյալներին և նրանց հետ ներկա գտնվողներին: Բանաստեղծն էլ նրան համարում է «Եւթնաղի շնորհաց», «գիտութեան» «իմաստութեան», «հանճարի» ստեղծող ու հովանավոր: Բայց, ինչպես տեսանք, Հովհաննես Սարկավազը, Սարյակին համեմատելով առաքյալների հետ, նշում է, թե նա այնտեղ չի եղել և հրեզեն լեզվով չի պարզևատրվել: Հետևապես հեղինակը որոշակի գիտակցությամբ է տարբերել իր հերոսին թե առաքյալներից և թե Սուրբ Հոգուց: Բացի դրանից, Սարյակն ու Սուրբ Հոգին միանգամայն տարբեր են նաև իրենց բոլոր առանձնահատկություններով: Եթե Սուրբ Հոգին աղավնակերպ է⁵⁸, պոեմի հերոսը՝ սարյակակերպ է, եթե Սուրբ Հոգին անմահ է, ապա երկրորդը՝ մարդկանց նման և՛ մեռնող է, և՛ հարություն առնող, եթե առաջինն ի սկզբանե աննյութական է, ապա երկրորդը նյութական է՝ վերաճած գերբնականի, եթե առաջինը եռաստվածության բաղկացուցիչներից մեկն է, ապա երկրորդը կապ չունի նրանց միասնության հետ, եթե առաջինը արվեստների բաշխողն է, ապա երկրորդը՝ ստեղծողը՝ այն էլ՝ աշխատանքով.

57 Գրիգոր Նարեկացի, Մասնագրությունք, Վենետիկ, 1840, էջ 479—480:

58 Մասնաբաժնի Ավետարանում ասված է, «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի շրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև գաղանի և գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. դա է Որդի իմ սիրելի՛ ընդ որ հաճեցայ» (Մ, 16, հմմտ. Մարկոս, Ա, 10, Ղուկաս, Գ, 22, Հովհաննես Ա, 32):

եթե առաջինը հոգեւոր հասկացութիւնների մարմնացումն է, ապա Սարյակը նյութական՝ բնության-տիեզերքի և այլն:

Պարզ է, որ Հովհաննես Սարկավազն ստեղծել է բնության ուժերի մարմնավորման և հովանավորի մի նոր կերպար՝ հեթանոսական խառնվածքով:

Քննված փաստերը թույլ են տալիս պնդելու, որ, իրո՞ք, Հովհաննես Սարկավազն իր պոեմը գրել է հին սկզբնաղբյուրների և հատկապես Աղեքսանդրի ու Փիլոնի «Յաղագս բան ունել...» երկի գաղափարների օգտագործմամբ, ինչպես և սեփական իմացութիւնների շնորհիվ դրանց զարգացմամբ: Ըստ սրում, Սարյակի կերպարը ոչ թե բնական թոշունի գեղարվեստական վերարտադրութիւնն է, այլ՝ բնականի հիման վրա ստեղծված գերբնական էակի: Այն՝ իր ամբողջութեամբ (պոեմի առաջադրած հարցերի առաջին խմբի առումով) փաստորեն ստեղծագործական մի նոր ու ինքնատիպ կերպար է հայ միջնադարյան գրականութեան մեջ, որի Բրիտանական ձևի տակ վերակենդանացել է հեթանոսական ոգի: Բրիտանական ձև ասելով նկատի ունենք Սարյակի բարոզած գաղափարախոսութիւնը՝ հատկապես մեղքի և մեղանշականութեան աստվածաշնչալին դրույթներն ու առասպելները պաշտպանելու և տարածելու նպատակով: Դրանք աստվածարան բանաստեղծի պատկերացումներն ու հայրաքի արտահայտութիւններն են: Հեթանոսական ոգի ասելով նկատի ունենք Սարյակի՝ արվեստի բնագավառի ստեղծող, սովորեցնող լինելը՝ իբրև բնության ներկայացուցիչ: Դրանք արդեն գիտնական-բանաստեղծի պատկերացումներն ու համոզմունքներն են: Այս միասնութեան մեջ է հեղինակի մեծութիւնը և պոեմի իսկական արժեքը:

Պետք է ասել, սակայն, որ այս կապակցութեամբ հրապարակի վրա են նաև ոչ ճիշտ կարծիքներ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ հաջորդ էջերում:

Գ. Ոչ ճիշտ կարծիքներ «Բան իմաստութեան» պոեմում զարգացված առաջին խմբի հարցերի մասին

Պոեմի հիմքում ընկած սկզբնաղբյուրների բացահայտված շինելը առիթ է հանդիսացել մի շարք սխալ կարծիքների, որոնք ուժի մեջ են նաև այսօր: Արդեն նկատեցինք, թե ինչպես նախ Մ. Արեղյանը, ապա նաև ուրիշ մասնագետներ այնպես են կարծել, թե պոեմում առկա բոլոր նոր ու առաջավոր մտքերը հղացել ու լուծել է Հովհաննես Սարկավազը, մինչդեռ դրանք առնված են Աղեքսանդրի, Փիլոնի և այլ հին հեղինակների աշխատութիւններից և զարգացված հեղինակի գրողութիւնների օգնութեամբ: Առհասարակ այն տպավորութիւնն է ստեղծվել, որ «Բան իմաստութեան» պոեմի հեղինակը բնութիւնն ընկալել է այնպես, ինչպես կրնալեր ժամանակակից առաջավոր մտքերից ելնող որևէ հավատացյալ: Դա ևս ճիշտ չէ, որովհետև նման պատկերացումների սկիզբը Տ. էնգելսը դիտում է XVI—XIX դարերում զարգացած բնագիտութեան ոլորտներում: Խոսելով XVIII դարի կապակցութեամբ նա գրում է. «Ինչքան XVIII դարի առաջին կեսի բնագիտութիւնն իր իմացութիւնների ծավալով և նույնիսկ նյութի փաստեմատիզացիայով ավելի բարձր էր հունական հնագարից, նույնքան էլ այն զիջում էր նրան այդ նյութին իդեալապես տիրապետելու իմաստով, բնութեան նկատմամբ ընդհանուր հայացքի իմաստով: Հունական փիլիսոփաների համար աշխարհն ըստ էութեան բոսոսից ծաղած, զարգացում

ապրած, գոչացած ինչ որ մի բան էր: Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանի բնախույզների համար աշխարհը մի ինչ որ քարացած, անփոփոխ, իսկ մեծամասնության համար միանգամից ստեղծված բան էր: Գիտությունը դեռ խորն ընկղմված էր թևոտգիայի մեջ»⁵⁹: Հետևապես, միանգամայն անհնարին կլինեի կարծել, թե Հովհաննես Սարկավազը «ամենայն մանրամասնությամբ»⁶⁰, «ինչպես մի բնագետ»⁶¹ ուսումնասիրել է «իրական թռչունին»⁶² և հանգել այն բոլոր առաջավոր մտքերին, որոնք առկա են «Բան իմաստութեան» պոեմում: Սա՛ ընդհանրապես:

Մ. Արեղյանի մոտ տեղ են գտել նաև առանձին ոչ ճիշտ մեկնարանություններ:

Այստեղ առաջին հերթին կկամենայինք անդրադառնալ նրա պաշտպանած այն կարծիքին, թե Հովհաննես Սարկավազը «արվեստի ծագման մասին մի նոր տեսություն է առաջ բերել: Մինչդեռ ըստ հին կրոնական հաջացքի՝ արվեստի աղբյուրը «հայտնությունն» է, նա բանաստեղծությունը համարում է բնության նմանողություն և ներբողում է բնությունը»: Այնուհետև, նա կատարելով որոշ քննություններ, եզրակացնում է. «Այսպիսով ժխտվում է հայտնությունն իբրև մարդու արվեստի աղբյուր, և հնարավոր է լինում արվեստը համարել բնության նմանողությամբ սովորովի: Ահա թե որպիսի գրույթներով է ստածել մեր Քերթողը...»⁶³: Մ. Արեղյանը, սրելով հարցի հակադրության եզանակով լուծված տեսնելու այս միտքը, կատարում է նաև հատուկ վերապահություն, որպեսզի ընթերցողը չկարծի, թե «Սարկավազ վարդապետը մերժում է ընդհանրապես հայտնությունը: Այդ դեռ շատ վաղ էր նրա դարի համար, երբ իշխում էր մեծ բարեպաշտությունը: Նա ընդունում է կրոնական հայտնություններն իբրև ճշմարիտ եղելություններ և իր քերթվածի մեջ հիշատակում էլ է առաքյալներին եղած հայտնությունը վերնատանը Հոգեգալստին. «որպէս և այլ տնտեսականքն», այսինքն՝ Քրիստոսի մարդկության վերաբերյալ հայտնությունները, որոնք առկա են նաև «անօրինականք»: Նա այդ հին տեսությունը չի ընդունում մարդկային արվեստի—երածշտության ու բանաստեղծության նկատմամբ»⁶⁴: Իր այս կարծիքը հաստատելու նպատակով Մ. Արեղյանը «Բան իմաստութեան» պոեմից վկայակոչել է հետևյալ տողը.

Արդ կացի ի բնականին, որոյ պարզեն է յայտնութիւն...

Ապա նա անմիջապես եզրակացրել է. «Այդ կնշանակի բնականի մեջ մնալու հետևանքով է արվել նրան (իմա՛ Սարյակին—Մ. Մ.) երգելու շնորհքը, կամ նրա արվեստի ներշնչումն «բնականի պարզե է», արդի բառով ասած բնատուր է»⁶⁵:

Պետք է ասել, սակայն, որ պոեմում ոչ մի խոսք չկա հայտնության շնորհիվ ստեղծագործելու, մուսայի և նման այլ պատկերացումների, մանավանդ նրանց քննադատության ու ժխտման մասին: Դա առաջացել է Սարյակի կերպարի այլարանական կողմը չնկատելու, շուտամնասիրելու, ուստի և բնություն

59 Կ. Մարտի, Ֆ. Էնգելս, նշվ. աշխ., էջ 71—72:

60 Մ. Արեղյան, Երկեր, 7, էջ 76:

61 նույն տեղում:

62 նույն տեղում, էջ 75:

63 նույն տեղում, էջ 77:

64 նույն տեղում, էջ 74:

65 Մ. Արեղյան, Երկեր, Ա, էջ 74. ընդգծումը մերն է:

բառը տարբեր իմաստներով շրնկալելու պատճառներով: Այժմ կարող ենք պնդել, որ Մ. Աբեղյանի հիմք դարձած բնությունը իսկական բնության հետ կապ չունի, այլ՝ կրոնական հասկացություն է, իսկ հայանությունն էլ վերաբերում է ոչ թե ստեղծագործական շնորհք պարգևելու մասին եղած հին պատկերացումներին, այլ Քրիստոսի մարգեղությանը: Ուստի վերջինիս նպատակն էր, ըստ բանաստեղծի, ոչ թե Սարյակին երգելու շնորհք բնծայելը, ինչպես բացատրում է Մ. Աբեղյանը, այլ՝ մարգեղությանը հավերժական մահից փրկելը և նրան օգնելն առհասարակ:

Մ. Աբեղյանի վրիպած լինելը ցույց տալու նպատակով նախ հիշենք բնություն բառի օգտագործման հետևյալ առումները, ուր նրանք ունեն զուտ կրոնական բովանդակություն. «Որով և բնականը իսկ էր նորա (Աստուծոյ) ընտանութեամբ, ըստ քրիստոսական հաւատոցն»⁶⁶: «Զի նորիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք»⁶⁷: «...երեք անձինք և մի բնութիւն մի աստուածութիւն»: «Նոյն է Աստուած և մարդ ասել և երկու բնութիւն Քրիստոսի»: «Նա ըստ բնութեան որդի է Աստուծոյ, իսկ մեք ըստ շնորհի. մեք ըստ բնութեան եմք որդիք Ազամայ»: «...աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք». «Աստուծոյ բնութեամբ է տէրն անուն». «Ոչ ասեմք զմի բնութիւն՝ զյատկութիւն էութեանցն շփոթելով» և այլն⁶⁸:

Ինքնին հասկանալի է, որ Հովհաննէս Սարկավագն էլ կարող էր իր պոեմում բնություն բառն օգտագործել և՛ իսկական իմաստով, և՛ կրոնական: Այն բոլոր դեպքերում, երբ նրա էլակետն Աղեքսանդրն է՝ նա նկատի է ունեցել իսկական բնությունը, իսկ այն բոլոր դեպքերում, երբ նա խոսում է կրոնական-աստվածաշնչային պատկերացումների մասին, նրա նշած բնությունը լոկ կրոնական իմաստ ունի: Համոզվելու համար, մասամբ կրկնելով, հիշենք պոեմի այն հատվածը, որից առնված է Մ. Աբեղյանի վկայակոչած տողը:

Զաւանդրն պահեցի և տուգանաց ո՛չ քղզայցի.
 Զշինեցի՛ ևս աշտարակ, զի յողնակի դարձեալ մեղայց,
 Կամ ընկալայց ըզպատուհաս՝ նըմանապէս բանաւորացդ.
 Միոյ շրթան և բարբառոյ բազմատեսակ բաժանելոյ.
 Ըզշար կամացրն միութիւն այնու ի բաց անշատելոյ.
 Զի և բազմացն է միութիւն նըմանապէս պարսաւելի,
 Փոխադարձիչ յո՛չ բընաւոր ըստ մեղանացրն շահեցման:
 Առդ, կացի ի բնականին, որոյ պարզևն է յայտնութիւն,
 Որ ի լրման ժամանակաց բնծայեցաւ փոքու հօտին.
 Ընձեռեցաւ նոցա բազում, զի կոշեցին բազումքն ի մին,
 Զոր միովքն կորուսին՝ հակառակաւքն շահեցին.
 Որպէս և այլ անտեսականքն, որով կեցար ի մահուանէ,
 Ըզմեղ նորոգեցին ընդդիմակօք սրխալանացն:

Թռչնիկն այստեղ, ինչպես վերևում էլ տեսանք, իր ձայնային առավելությունները կապում է արարչագործության նախնական վիճակի և աստուծու պատգամները պահելու հետ. «Զաւանդն պահեցի» և «Կացի ի բնականին» դարձվածքները լոկ այդ կրոնական պատկերացման իմաստն ունեն, և այդտեղ

⁶⁶ «Նոր բառգիրք Հայկազան լեզուի» Ա, Երևան, 1979, էջ 495—499:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում:

ձայն, և՛ կենդանիները, և՛ մարդիկ բնական արարածներ են՝ օժտված ստեղծագործելու սեփական կարողություններով: Այլ բան է, երբ նա այդ պատկերացումները հիմնավորում է մեղանշականության դոգմաների օգնությամբ: Ըստ այդմ է, որ թռչունը արարչագործության բնական վիճակին հաստատ մնալով, չի կորցրել աստծու տված շնորհները, իսկ մարդը կորցրել է մեղանշելու (և ոչ թե զարգանալու) պատճառով: Հետևապես նա պիտի հանապազօրյա մեղսաքաղությանը ձգտի բարձրանալ դեպի նախկին վիճակը, քաջ իմանալով, որ երբեք չի հասնելու այդ վիճակին («ի բնականին»): Այս կապակցությամբ ուշադրավ է Ա. Մաղոյանի և Հ. Միրզոյանի դիտողությունը, որի համաձայն Գավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը պատկանում է Հովհաննես Սարկավազին: Նրանք իրավացիորեն իբրև փաստարկ վկայակոչել են մեկնիչի հետևյալ միտքը. «Նւ ծանիր, որքան և ջանալ մարդն յիմաստասիրութիւնն, չկարէ ելանել յայն, որ ունէր նախքան զմեղանշելն: Վասնզի օտարացաք ի բնականէն»⁷²: Այստեղ էլ բնականը մեղսագործությունից առաջ եղած արարչական վիճակն է, որից մարդն օտարացել է մեղանշելու պատճառով:

Մ. Արեղյանը «Բան իմաստության» պոեմի հիմնական զաղափարները համարելով սոսկ Հովհաննես Սարկավազի բնագիտական դիտումների արդյունք, սխալ պատկերացում է կազմել Գրիգոր Նարեկացու մասին: Նրա համաձայն վերջինս «բնությունն զգում է ներհայեցական-ինտուիտիվ կերպով. նա բնությունից վայրկենական տպավորություն ստանալով՝ անմիջական ծանոթություն է ունենում նրա մասին և այդ ինչպես և իր դիտակցության մեջ ծնված մի միտք կամ մի հուշիկ, — արտահայտում է բանաստեղծորեն ինքնարուխ և արագ ծագած պատկերներով: Այսպես չէ Սարկավազ Վարդապետի համար: Սա էլ հարկավ, տպավորվում է բնությունից, բայց նրան մատչում է երկար դիտելով այն, խորհելով և դատելով, ուսումնասիրելով և կրթակացություն հանելով նրա մասին: Այսպես վարվում է նա իբրև իմաստասեր, և որովհետև նա միաժամանակ և բանաստեղծ է, «իբ այսպիսի հոգեկան գործունեությունը ձևավորում է բանաստեղծորեն»⁷³: Պետք է ասել, որ դա էլ այդպես չէ, որովհետև Հովհաննես Սարկավազի պոեմի մեջ առկա իմացությունները ոչ թե լուր նրա դիտարկումների արդյունքն են եղել, այլև նախորդ սերունդների՝ ընդհուպ մինչև հեթանոսական հեռավոր ժամանակները: Գրանք մատչելի են եղել նաև Գրիգոր Նարեկացուն. նրա ստեղծագործություններում ևս կարելի է ցույց տալ բնագիտական-կենսաբանական մեծահարուստ գիտելիքներ: Չմոռանանք, որ նա էլ և՛ իմաստասեր էր, և՛ բանաստեղծ: Տարբերությունը նրանց աշխարհայացքների մեջ է, որը պիտի բացատրվի նրանց ասլրած ժամանակների և միջավայրերի միջև եղած տարբերություններով:

Մ. Արեղյանն ուշադրություն է հրավիրել նաև «Բան իմաստության» պոեմում գրսևորված սոցիալական մոտիվների վրա, որոնք, իրօք, կան: Սակայն այստեղ էլ նա վրիպել է՝ ցույց տալով այնպիսի փաստեր, որպիսիք հեղինակի մոտ չկան: Ըստ Մ. Արեղյանի Բանաստեղծը (կամ Վարդապետը), իբր թե, գտնում է, որ աստվածաշնչային հայտնի «մեղքն՝ ինքը չի գործել»: «Նա չի հասկանում, թե ինչո՞ւ ուրիշների մեղքերի համար ինքը պիտի

72 «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 1, էջ 119:

73 Մ. Արեղյան, Երկեր, Գ, էջ 75:

պատժվի»⁷⁴: «Այն միտքը, թե ինքն իբրև մարդ մեղքի տակ է ծնված և բնականից զրկված»⁷⁵, դառնում է մտատանջությունների առարկա և բանաստեղծին մղում ավելի համարձակ մտքերի: «Քանաստեղծը... շի ըմբռնում այն, որ ուրիշների մեղքերի (Ադամա մեղքի և աշտերակաշինության) համար ինքը պիտի պատժվի, և մի վայրկյան նա ըմբոստանում է Ադամա մեղքի դեմ և թվում է, թե նա պիտի մերժեր այն: Բայց այդ հնարավոր չէր XI դարում՝ առանց ընկնելու թոնդրակեցոց աղանդի մեջ»⁷⁶:

Պիտի նկատել, որ այս բոլորը թյուրիմացության արդյունք է, որովհետև պոեմում ո՛չ բանաստեղծը, ո՛չ Վարդապետը նման տրամադրություն չեն արտահայտում. ընդհակառակը նրանց խոսքը ներծծված է աստվածաշնչային հավատքով: Համոզվելու համար ընդօրինակենք Վարդապետի հակաճառության հետևյալ տողերը, որոնք հագեցած են իսկական հավատացյալի կրոնական պատկերացումներով ու առօրյա ապաշխարանքի դրվատմամբ, ինչպես նաև իրեն խանգարող Սարյակի որոշ քննադատությամբ.

Յանապատի աստ գամ նըստիմ, զի օգտեցայց հանդարտութեամբ,
Ասացից և իմացայց զի մի՛ եղէց ընդվայրատանջ,
Աշխատեցայց անշահարար ունայնասոյր աստանդութեամբ,
Բազմադիմի վնասուն ձրգմամբ, որ հանդիպի ի մէջ մարդկան:
Դու նեղես զիս անձանձիր՝ որպէս գրտեալ յինէն վընաս,
Դատախաղես աղաղակաւ՝ որպէս օրէնն է զըրկելոց,
Ատենարար առ դատաւորն սաստիկ զինէն ամբաստանես
Կամ թէ կարծես զիս թըշնամի՝ օտարապէս քեզ մարտուցեալ.
Ձորմէ սիրեմըդ տըրտընջեմ, զի աստ կրեցի զոր ասացիդ,
Նաև այսու ևս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ,
Յոյով ժամքս պարապեալ ի գրով ձեռին քզքէն տրտունջ.
Ըզկարևորսըն մոռացեալ, որով ապրէ անձն ու մարմին,
Ըզմերձն առ նոյնըս խափանեալ, որով լինի իմաստնանալ,
Ձուգել մեծաց և անուանեաց, նաև վերին իսկ զօրութեանցն...

Այսինքն՝ ես անապատն եմ նախընտրել, կամովին զրկվելով առօրյա պետքերից, մերձավորներից, դու եկել՝ խանգարում ես ինձ քո անվերջանալի «աղաղակաւ», ինձ կարծելով քեզ թշնամի:

Ստեղծագործական հնարանքների թելադրանքով երբեմն էլ Վարդապետն է հանդիմանում Սարյակին, դարձյալ հավատարիմ քրիստոնեության դոգմաներին: Հիշենք «Վասն Աշկէին...» հատվածը.

Այլն զայժմուս իսկ պատահումն ոչ լրոնցից արտաբերել,
Ըզնախահօրքն փոխազգեսան որ յեա յանցմանն ընձեռեցաւ
Ապացոյց մեռելութեանն և գուշակիչ ունակութեան,
Ըզվերարկուս ինձ համուճակ զայս արարեալ դու անպիտան,
Զի ի Բո բանսդ անդ ըզբաղմամբ ներկեաւ սաստիկ այս մելանաւ:

74 նույն տեղում, էջ 79:

75 նույն տեղում, էջ 78:

76 նույն տեղում, էջ 80:

Այս մեղադրանքով նա կամենում է Սարյակին ասել, որ նրա պատճառով ինքը ջղայնացել է, շփոթվել և թանաքը թափել՝ իր մաշկեղեն վերարկուի վրա: Այն վերարկուի, որն աստված էր տվել Ադամին, դրախտից արտաբովելիս իբրև վերակենդանանալու, վերածնվելու խորհրդանշան: Ավելացնենք, որ այս միտքն էլ Հովհաննես Սարկավագը վերցրել է Փիլսոնից: Վերջինս դրան անդրադարձել է «ընդէ՞ր աստուած պատմունանս մաշկեայս առնէ Ադամայ և կնոջն, և զգեցուցանէ զնոսա»⁷⁷ ենթախորագրի տակ:

Մ. Արեղյանը, կամենալով իր կարծիքը նաև ուրիշ փաստերի օգնությամբ հիմնավորված տեսնել, գրում է. «Բժրախտաբար մեզ շեն հասել Սարկավագ Վարդապետի ուրիշ բանաստեղծությունները, որ տեսնելիք, թե ինչպես է գործադրել նա իր տեսությունը»⁷⁸: Պետք է ասել, որ հետո լույս է տեսել հեղինակի մի նոր տաղը, որի մեջ նա հանդես է գալիս ոչ թե Ադամա մեղքի դեմ, այլ որպես աստվածաշնչային նույն զոգմաների հավատարիմ պաշտպան ու քարոզիչ: Ահա որոշ տողեր այդ բանաստեղծությունից.

Յիսո՛ւս, Հաւր միածին, զուգապատիւ և գոյակից, բան և ծնունդ...

Հա՛ս յազնութիւն վշտագնելոյս յախտից մեղաց և շարութեան,

Առա՛ արժանի ողորմութեան զանձամբ բնորոգս կորստեան.

Նախնոյն հետադի եղէ ծնունդ՝ հաւր հանկունակ աւիճազանց.

Նոյն անեցեալ յիս շարութիւն յոգնապատիկ ի սպանողէն...

Մանեա՛ այժմ գտուգանս մոլորութեան յետ վտանգի աղփատութեան,

Ի քեզ գիմեցի, Հա՛յր բարեգութ, ամենառատ, Տէր սեղանոյ իմաստութեան,

Խնայեա՛ յիս քաղցրութեամբ աստուածայնով՝ որպէս յորդին յայն անառակ
յանձտաց,

Նորո՛վ պատմութեանաւ զիս զաբզաբեա և մատանեա հայրականաւ.

Դողամ զարհուրագին յորժամ չիշեմ զփարթամութեանն զհայրենեացն
իմոց վատնումն...⁷⁹:

Իսկ եթե դիմելու լինենք Հովհաննես Սարկավագի դավանաբանական բնույթի ստեղծագործություններին և աղոթքներին, էլ ավելի կհամոզվենք նրա ունեցած նույն պատկերացումների անհողողողության հարցում: Տեսականորեն կարելի է ընդունել անգամ, որ թոնդրակեցիական մտքեր կարող էին լինել Վարդապետի հակաճանություններում, սակայն, դրանք Հովհաննես Սարկավագին վերագրվել չէին կարող, որովհետև նրա գաղափարախոսը Սարյակն է, իսկ քննադատելի կերպարը՝ Վարդապետը՝ մեղավոր մարդկության ներկայացուցիչը:

Սոցիալական տրամադրություններ կան Սարյակի՝ որպես իրականությունը քննադատողի մոտ, չափված քրիստոնեական մահացու մեղքերի տարողունակ ըմբռնումների վրա: Դրանք էլ վերաբերում են առհասարակ բոլոր ժամանակներին: Ահա մի նմուշ, համապատասխան դրվագից, ուր Սարյակը մեղադրում է մարդկությանը՝ Ադամի և աշտարակաշինության հանցագործությունների պատճառով.

77 «Փիլսոնի Երբայեցայ Մնացորդը ի Հայս», Վենետիկ, 1826, էջ 35:

78 Մ. Արեղյան, Եջվ. աշխ., էջ 75:

79 Ա. Աբրահամյան, Եջվ. աշխ., էջ 325—326:

Աստուածութեանն ցանկացայք, զոր ունէիք՝ զայն կորուսէք,
 Յերկինս ելանելով՝ մերձ առ դժոխքս սողացէք,
 Չեռնարկելով առ նոխանալ՝ աղքատացայք և տնանգացայք,
 Առ գերակայսն ամբառնալով կործանեցայք ի ստորին վայրս,
 Առ մեծ փառքս դիմեցմամբ՝ վերջոտնեցայք աստ առ մեզ...
 Փուշ և տատասկ ձեզ՝ փոխարէն, զի շսիրեցէք ըզփափկութիւնն,
 Մահու վնիս ձեզ՝ հատուցումն, զի շախտեցէք ըզկեանս անեղծ...

Այս տողերում առկա ընդհանրացումների մեջ կարելի է տեսնել աստվածամարտ բոլոր ուժերի գաղափարական խտացումը, որոնք, սակայն, Հովհաննես Սարկավազին վերագրվել և նման մի այլ տեսքով կոնկրետանալ չեն կարող:

Ահա թե ինչպիսի թյուրիմացություններ են ծնվել «Բան իմաստության» պոեմի շոշափած հարցերի առաջին խմբի մեկնարանությունների ժամանակ՝ այն պատճառով, որ նրա հիմքում ընկած սկզբնաղբյուրները պարզաբանված չեն եղել: Ըստ երևույթին, այդ հարցում ակամայից դեր են խաղացել 1940-ական թվականներին եղած սոցիոլոգիական սխալ հայացքները, ինչպես նաև հայկական Վերածննդի գաղափարն ավելի ամուր հիմքերի վրա դնելու պահանջը: Ինքը՝ Արեղյանն այդ պոեմին անդրադարձել է հատկապես վերջին հարցը հիմնավորելիս⁸⁰:

Ե. «Բան իմաստության» պոեմում բարձրացված հարցերի
 երկրորդ խումբը

Պոեմում որոշակի սահման չկա առաջին և երկրորդ խմբերին վերաբերող հարցերին հատկացված հատվածների միջև: Այն ընկած է միջին մասերում, որտեղ հեղինակն աստիճանաբար շնորհների և արվեստի հարցերից անցում է կատարում դեպի այս երկրում մարդկանց ու կենդանիների համատեղ գոյատևման և ներքին հակամարտությունների հարցերը: Այդուամենայնիվ, կարելի է ասել, որ հարցերի երկրորդ խումբը «Վասն Լեշկէին...» հատվածից արդեն սկսվում է, իսկ հաջորդ՝ «Հաւն պատասխանէ ամբաստանաբար առ Վարդապետն» հատվածն ամբողջապես նվիրված է դրան: Վարդապետն այսպես է սկսում իր խոսքը Սարյակի այդ ամբաստանականի կապակցությամբ:

Դարձաւ պատասխանեաց բոլոր բանիցս ասացելոց
 Երագագոյն բան զոր լրւան, ապարանեաց հազներգութեամբ.
 Մանոյց ինձ հաւաստեաւ կորովակի արտադրութեամբ
 Զիմաստքս խոհեղոց մեզ բնո միմեանքս բնակութեան:

Ահա բուն հարցը, որից էլ ճյուղավորվում են ենթահարցերը: Ի՞նչ է նշանակում այդ համատեղ գոյակցությունը, ինչո՞ւ են դրանում մեղավոր մարդիկ, ինչպե՞ս են տուժել նրանք և կենդանիներն այդ մեղավորության պատճառով, որքա՞ն ծանր է կենդանիների վիճակը՝ մարդկանց հալածանքներից, և ինչքա՞ն մեղավոր են նրանք կենդանիների առջև: Կենդանիների և մարդկանց համատեղ գոյակցության հարցի մասին Սարյակն այսպիսի պատասխան է տալիս, դիմելով Վարդապետին.

⁸⁰ «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 31—60:

Լս'ւր և դու իմոց բանից, արդարախօս դատեցելոյս,
Իմ և ձեր է այս աշխարհ, յորում և դուք էք պանդրխտեալ.
Ընտանի և սեփական ըստ որում էրրն բնակութիւն
Ի յարարչէն մեզ աւանդեալ՝ տեղի ուսման և աճեցման.
Յարմարական մեզ առ ի պէտս՝ որպէս ունիմք ըզկազմութիւն.
Ի ուք ըզձերքն տուժեցայք՝ վասն յանցման առ արարչին...
Առ մեծ փառքս դիմեցմամբ՝ վերջոտնեցայք ա՛ստ, առ մեզ...

Այսինքն՝ մարդիկ հանցանք գործելով, զրկվել են դրախտից և պատժվելով երկիր եկել կենդանիների հետ նրանց բաժին տարածքում ապրելու: Ո՞րն է այդ հանցանքը: Նորից Ադամի և աշտարակաշինութեան մեղքերը.

Աստուածութեանըն ցանկացայք, դոր ունէիք՝ զայն կորուսէք,
Յերկինս ելանելով՝ մերձ առ դժոխքս սողացէք...

Այդ մեղքերի պատճառով, ըստ Մարչակի, տուժել են ոչ միայն մարդիկ, այլև իրենք՝ կենդանիները.

Արդ մեզ և ձեզ առհասարակ եղէք զբտիչք կորրստեան,

Ձի և ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին:

Արդ, որտեղի՞ց են այս դատողութիւնները՝ մարդկանց և կենդանիների համատեղ բնակութեան վերաբերյալ: Այս հարցին պատասխանելու առումով կարևոր նշանակութիւն ունի հետևյալ տողը.

Իմ և ձեր է այս աշխարհ, յորում և դուք էք պանդրխտեալ...

Այս տողի համաձայն մարդիկ և կենդանիներն այս աշխարհում պանդուխտներ են: Պարզվում է, որ այս միտքն էլ առնված է Փիլոն Աղեքսանդրացուց: Եվսերիոս Կեսարացին, թվարկելով Փիլոնի երկերը, նշում է. «է նուա և նառ վասն պանդիտութեան»⁸¹: Ըստ այդմ, Փիլոնի երկերի մեջ հանդիպում ենք այսպիսի ենթախորագրի. «Ընդէ՛ր ասացաւ... պանդուխտ լիցի զառակ Բոյեկիւր ոչ յիւրում»: Այս հարցին հաջորդում է հետևյալ պատասխանը. «...դի մարդկան ազգ բնակեալ է յայլոյ երկրի քանզի ամենայն որ ընդ երկնաւ է՝ Աստուծոյ ստացուած է. և որ են ի սմա կենդանիքս, իսկապէս և բուն պանդրխտանալ առաւել չիրաւի ասացին, քանզի բնակել չիրեանց աշխարհ բնութեամբ ոչ ունին...»⁸²:

Հովհաննես Մարկավագի՝ Փիլոնից օգտված լինելը հաստատվում է նաև հետևյալ փաստով: Բանաստեղծը՝ Մարչակի միջոցով կենդանիների անունից ասում է.

Բայց և անմեղքս վնասեցաք վասն ձերոյդ ժպրհութեան.

Ի փառքս ձեր մեք գոյացեալք և վասն ձեր ապականեալք...

Ինչո՞ւ են աստու պատգամներին հավատարիմ մնացած կենդանիները ևս պատժվել. չէ՞ որ նրանք անմեղ են: Այս հարցի պատասխանն էլ դանում ենք Փիլոնի մոտ, որը հարց է տալիս. «Ընդէ՛ր սպառնացեալ զմաւոյն ջնջել, և զանասունսն ընդ նմա ապականել... քանզի զի՞նչ մեղանչլին անասունքն»⁸³,

81 «Եւսերիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ», Վենետիկ, 1877, էջ 116:

82 «Փիլոնի երթայեցոյ Մնացորդք ի Հայո», Վենետիկ, 1826, էջ 181: Այս կրօնական պանդիտութեան դադափարի մասին տե՛ս մե՛ր հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսի» 1980 թ. № 4-ում (էջ 278—287. հատկապէս՝ էջ 278—282):

83 Այստեղ նկատի են առնված Աստվածաշնչի հետևյալ տողերը. «Եւ ջնջեաց զամենայն հասակ որ էր ի վերայ երեսաց երկրի, ի մարդոյ մինչև յանասուն և ի սողնոց մինչև ի թռչուն երկնից» (Մեծնոգր, է, 23):

և պատասխանում. «զի ոչ հարկատրապէս նախկին վասն ինքեանց եղեն անասունքդ, այլ յաղազս մարդկան... որոց ապականելոց, յիրաւի և նորա ընդ սոսա ապականին...» (էջ 67):

Այս նույն տրամադրութեամբ է հարցին մոտեցել բանաստեղծը՝ նաև Քրիստոսի մարդեղութեան և նրա տնօրինականների մասին գրելիս, երբ Սարյակն ասում է. «կեցաք ի մահուանէ», «Ըզմեզ նորոզեցին ընդդիմակօք սխալանացն»:

Պոեմում առանձնահատուկ ուշադրություն են դրավում կենդանիների ծանր ու հալածական կյանքին վերաբերող տողերը.

Եւ ԱՂԷՏՔ վըշտագինք պարապատեն ըզմեզ յերկրի,
ԽՈՐՇԱԿՔ և ԶԸՄԵՐՈՒՆՔ և պիտոյից պակասութիւնք,
Յաւք և խօթութիւնք և տարածամ մահու արկուածք...

Պարզվում է, որ այս միտքն էլ է գալիս Փիլոնից, որը խոսելով վերոհիշյալ պանդխտության մասին, ցույց է տալիս այդ պանդխտների թշվառ վիճակը. «Արտաքոյ ԶՄԵՐՈՒՆՍ, որ հովացուցանեն (իմա՛ սառեցնում, մրսեցնում են, Ա. Մ.), ամառն, որ ԽՈՐՇԱԿԱԶԱՐ առնէ, ևաղց, ծաւալ և այլ բազում ԱՂԷՏԸՍ»⁸⁴: Առկա է նույնիսկ բառապաշարի ընդհանրություն (ընդգծված մեր կողմից. բնագրում նմանների թիվն ավելի շատ է): Դրանք ընդհանուր բնույթ ունեն. վերաբերում են մարդկանց ևս: Պոեմում, սակայն, առկա է բողոք նաև մարդկանց դեմ:

Ի փառքս ձեր մեք գոչացեալք և վասքն ձեր ապականեալք
Ո՛չ միայն մահուամբ, այլև սաստիկ դանարբութեամբ...

Այսպիսով, մարդուն մեղադրելու հիմքերը կրկնապատկվում են. ընդհանուրին գումարվում է մասնավորը, ուստի և Սարյակը բացականշում է.

Զբրկումըն մեր՝ ի ձէնչ, և դո՞ւք ըզմէնչ ամբաստանէք,
Իրաւ՛մբք դատեցարուք, ըստ հրամանի բստեղծողին...

Բողոքի այս պարագան սկզբնաղբյուրներում չի հանդիպում: Մեզ հայտնի միակ փաստը՝ Հովհաննես Մարկավազի ավագ ժամանակակից և Անիի միջավայրի զավակ Գրիգոր Մաղիստրոսի հետևյալ ծաղրատակն է. «Այլ եկն առ մեզ նամակ յանտառէ կեղերջական տրտունչ տողորեալ սրտի յեղանց, յեղջերուաց և ի բուրբ գազանաց, եթէ էլեալք ի դրախտէն, ղմեզ ի մերոյն սեփականէ արտաքս հանին, իսկ Գաւթայ մեզ ի լերինս հրամայեալ կալ, այժմ և անտուտ հալածեն»⁸⁵:

Պետք է նկատել, որ Հովհաննես Մարկավազի գրչի տակ այս երգիծական բնույթի բողոքը վեր է ածված իսկական բողոքի:

Այսպիսին է ընդհանուր դժբերով «Բան իմաստության» պոեմի մոտավոր պատկերը: Այստեղ էլ հաղթանակը տանում է Սարյակը՝ ուստի և Հովհաննես Մարկավազն իր պոեմն ավարտում է ընդհանուր հաղթանակի դրվատանքով.

84 «Փիլոնի Մնացորդք ի Հայս», էջ 181—182:

85 «Գրիգոր Մաղիստրոսի Բղթերք», հրատ. Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 91: Այդ կապակցությամբ տե՛ս Ա. Մնացականյան, Գրիգոր Մաղիստրոսի «Առ Հայրն Վարագայ» Բողոքը, «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ հաս. բաժանմունքի, 1979, № 1, էջ 70:

Ճշմարտի գալստի խօսեցաւ ըստ պատահանցրն հանդիպման,
 Ըզրացատրեալ հոյլըս բանից իմաստարար բարբառելով,
 Որով յաղթեալ մե՛զ՝ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս,
 Կրուի՞նեամբ յանդիմանեալ, ո՛չ կարօտեալ երկար բանից:

Ի՞նչ է ստացվում վերջին հաշվով. այն, որ «Բան իմաստութեան» պոեմում, իրո՞ք, մշակված է մի թարմ թեմա՝ մարդու և բնութեան հարաբերութեան հարցը. ա) Բնությունը ի դեմս Սարյակի, արվեստների սկզբնաղբյուրն է, որից սովորել ու սովորում է մարդկությունը, բ) Մարդկությունն անարգար է, որ հալածում է բնութեան ստեղծագործ ուժերին: Այս հարցադրումների ելակետը հին հեթանոսական պատկերացումներն են՝ հեղինակի իմացութեանների և անմիջական գիտողականութեանից արված համոզմունքների հետ միասին, իսկ բացատրութեանը՝ քրիստոնեական-աստվածաշնչային առասպելներն ու դոգմաները:

Ո՞րն է եղել հեղինակի բուն նպատակը. լոկ այդ իրողութեանների բացահայտումն ու խորացումը, թե՞ նաև համապատասխան գիտական, սոցիալական հարցերին անուղղակիաբար, բայց անհրաժեշտաբար անդրադառնալը: Եթե զործ ունենայինք հեղինակի գիտափիլիսոփայական աշխատութեան հետ, հիմնականում պիտի բավարարվեինք այդքանով, միաժամանակ նկատի ունենալով այդպիսի աշխատանքների ընդհանուր հասարակական նշանակութեանը: Տվյալ դեպքում, սակայն, երբ քննութեան առարկան մի բարձրարվեստ պոեմ է, այսինքն՝ փիլիսոփայական հայացքները գեղարվեստական խոսքի միջոցով մարմնավորող ստեղծագործութեան, այն էլ այլաբանական գաղափարների հարուստ օգտագործմամբ, կամա թե ակամա, պիտի մտածենք անհամեմատ լայն ու համակողմանի ընդգրկումների մասին: Եթե անգամ հեղինակը շափավոր իսկ եղած լինի այդ ընդգրկումների հարցում, միևնույն է, նրա ընդգրկումները պիտի գնահատվեն օգտագործված սկզբնաղբյուրներում շոշափված, ինչպես նաև պատմական իրականութեան առաջադրած առաջնահերթ հարցերի ընդհանուր գումարի համաձայն: Միշտ էլ նման դեպքերում վճռորոշը՝ կյանքի առաջադրած հուզող հարցերն են, որոնք և պահանջում են իրենց թելադրանքով աշխարհ եկած երկերն ուսումնասիրելիս նկատի առնել և իրենց: Չմոռանանք, որ բանաստեղծն ապրել է ոչ միայն Անիի միջավայրում, այլև երկրին հասած աղետաբեր ժամանակներում:

Այսպես մոտենալով հարցին կարող ենք ասել, որ «Բան իմաստութեան» պոեմի մեջ քննված արվեստի հարցերը ծնվել են Անիի միջավայրում զարգացած մշակութային ընդհանուր նվաճումների հիման վրա: Աշխարհայացքային այն փոփոխութեանները, որ նկատելի ու գնահատելի է Մ. Արեղյանն այդ ժամանակների հայ իրականութեան մեջ, այն պարարտ հողն էին, որի վրա ծլարձակել է սարկավազյան տեսութեանը՝ բնութեանից սովորելու մասին: Եվ պատահական չէ, որ այդ դարերում ծնված երաժշտական եղանակների անունների շարքում տեղ ունեն նաև թուրքերի անունները: Դրանք, ինչպես նաև բնութեան այլ ուժերի վերաբերող երաժշտական եղանակների կապն այդ տեսութեան հետ (կամ վերջինիս կապը դրա հետ) անժխտելի է: Բնական է կարծել, որ նրանից առաջ էլ հայ երաժշտագետները պիտի հետևած լինեին բնութեան ձայններին⁸⁶: Ինչ վերաբերում է Հովհաննես Սարկավազի երաժշտագիտա-

⁸⁶ Տե՛ս «Բանքեր Մատենադարանի», 1980, № 13, էջ 119—121:

կան հատուկ գիտելիքներին, դրանք վաղուց են հայտնի և առավել հայտնի դարձան վերջերս⁸⁷: Այսպես, ուրեմն, «Բան իմաստութեան» պոեմի արվեստագիտական հարցերը ծնվել են իրականության պահանջով և ունեցել տեսական-գործնական առաջնահերթ նշանակություն:

Ավելի բարդ է պոեմում քննված երկրորդ խմբի հարցերի և իրականության առնչությունների բացահայտման խնդիրը: Այն իր ուղղակի առումով, բնության նկատմամբ գուժ շարժելու և նրան պաշտպանելու գաղափար է՝ ամփոփված գողարիկ տողերի մեջ: Հիշենք Սարյակի տրտունջ-ողբից մի հատված.

Յորս անելի մեք աշխատիմք՝ ոչ ունելով չարկս և քաղաքս,
Ո՛չ համբարբս մըթերնալս՝ ի չիութիւն հարկաւորացն,
Ո՛չ դեղս և ո՛չ բրժիշկս, որով ցաւոց ախտ դադարէ,
Ո՛չ կակուղ ինչ կերակրիկ մեզ՝ ի սփոփանքս դիւրութեան...

Այստեղ՝ իրական թուշունների ողբն է, բոլոր կենդանիների դառն վիճակի պատկերը: Բայց կարելի՞ է ասել, որ այդ ողբն ու դժգոհությունն ուղղված է մարդկության դեմ: Վերևում Փիլոնի օգնությամբ տեսանք, որ խոսքը, հիմնականում, բնդհանուր բնույթ ունի և վերաբերում է նաև մարդկանց ծանր վիճակին (դրախտի համեմատությամբ): Հիրավի, ահա թե ինչպես է Սարյակը նախատում մարդկանց և թվարկում նրանց թշվառ վիճակի մանրամասնությունները.

Փո՛ւշ և տատա՛սկ ձեզ փոխարէն, զի շիրեցէք ըզփափկութիւնն,
Մահու վրձիռ ձեզ հատուցումն, զի շախորժէք ըզկեանս անեղծ...
Կերակուր ձեզ ի վայրէ՛ որպէս և մեզ երկրակեցացս,
Անասնականքս պարենիկ՝ շիմացողացդ ըզվայելուշն,
Է՛նդ մեզ կենակցութիւն ձեզ, շրնտրողացրդ առ Աստուածն,
Առ ծառայս անգուգութիւն՝ զանգուգութիւն մեծարողացդ...

Այս բոլորը մարդկության վիճակին վերաբերելով նաև կենդանիների վիճակին է վերաբերում: Միայն թե կենդանիները համատեղ կյանքից ավելի են տուժել: Ո՞ւմ դեմ է այս բոլորի կապակցությամբ Սարյակի բողոքը. դարձյալ առաջին մեղսագործության. հանցանք, որը միշտ էլ քրիստոնեական պատկերացումներով դատափեհտվել է, ուստի և դատափեհտվում է Սարյակի կողմից: Այստեղ բոլորովին էլ չի կարելի տեսնել «բողոք այդ կրոնական հայացքի դեմ, — դրանով լուելլայն և Ադամա մեղքի դեմ»⁸⁸, այն իմաստով, ինչ քննադատված է Մ. Արեղյանի ուսումնասիրության մեջ: Բանաստեղծը Սարյակի միջոցով դատապարտել է ոչ թե Աստվածաշնչային դոգման կամ՝ համապատասխան պատկերացումները՝ քրիստոնեական պաշտամունքի մեջ, այլ՝ մեղանշակալության երևույթը, ինչ որ բնականոն էր միջնադարում: Ավելին, անգամ վարդապետին ուղղակի հակադրվելիս, նրան Ադամի և աշտարակաշինարարների (նաև բոլոր աստվածամարտ ուժերի) ներկայացուցիչ համարելով հանդերձ, ունի մի նպատակ՝ փրկել նրան, օգնել բարձրանալու դեպի նախկին փառքը, որովհետև միայն այդ եղանակով է, որ կփրկվի նաև կենդանական աշխարհը (մարդկության ծառաները): Այս միասնության մեջ է պոեմի քրիստոնեական

⁸⁷ Այս առումով հատուկ ծառայություն է մատուցել Ն. Քահնիզյանն իր վերևում հրատարակված ուսումնասիրությամբ («Բազմավէպ», 1978, № 3-4, էջ 328-356):

⁸⁸ Մ. Արեղյան, Երկեր, Գ, էջ 81:

գաղափարապայքարի իմաստը: Ուստի, ինչպես նշեցինք, կրոնական առումով Սարյակը հոգու դերումն է, Վարդապետը՝ մարմնի: Ըստ Փիլոնի՝ պանդրիտություն մի այլ փոխարեքական իմաստի համաձայն «...նշանակաւ մարդի մեզ միտքս են, և անասուն զգայութիւնքս» (էջ 63), իսկ պոեմում, ըստ Աղեքսանդրի, ընդհակառակը, Սարյակը միտք է, հոգի, իսկ Վարդապետը՝ մարմին, զգայարաններ: Բանաստեղծը, քրիստոնեական կրոնի գաղափարախոս լինելով, չէր կարող ժամանակին իշխող այս պատկերացման դեմ (այն է՝ հոգու գերազանցությունն դեմ) բացահայտորեն պայքարել: Բայց նա այդ գաղափարին հասել է իրրե գիտնական, երբ քննել է իսկական բնության և մարդու հարաբերությունը՝ Աղեքսանդրի դիրքերից: Այստեղից էլ՝ պոեմի գաղափարական երկչերտվածությունը հարցը, որով և պայմանավորված է Սարյակի գաղափարի երկակիությունը՝ բնական և այլաբանական: Նա բնական է, երբ դրվատվում է բանաստեղծի կողմից, գնահատվում՝ իրրե խոսքի, երգի, տաղաչափության, նվագի, պարի տիրապետող՝ սոխակի, ասպունձակի, ճպուռի և այլ թռչունների ազգակից և այլն: Միաժամանակ նա այլաբանական կերպար է իրրե աստվածաբան, քարոզող և կրոնի ուսուցիչ:

«Բան իմաստության» պոեմում Փիլոնից փոխ առնված «պանդրիտության» այլաբանությունը Փիլոնի մոտ առաջին հերթին կապված է բուն հարցի («Ընդէ՞ր ասացաւ պանդուխտ լիցի դաւակ քո...») հետ և ունի մի այլ առում, առանց որի չի կարելի ճիշտ հասկանալ բանաստեղծին: Այդ հարցը «Գործք առաքելոցից» է և վերաբերում է Աբրահամ նահապետին: Վերջինիս հետ կապված պատկերացումները հաճախ են օգտագործվել հայ մատենագրության մեջ հայրենասիրական, ազատագրական հարցերի կապակցությամբ: Գեոևս Մեսրոպ Մաշտոցն է այդ միջոցին դիմել հայրենի պետության վերականգնման հուշումը⁸⁹: Ըստ աստվածային կանխագուշակության՝ Աբրահամի դավակներն են, որ պիտի 400 տարի պանդուխտ լինեն՝ ունենալով «տեարս բազում», գտնվելով «ի կոփանս և ի շարշարանս»: Նրանց է, որ օտար բռնակալները պիտի «ծառայեցուցեն և վատթարեցեն և շարշարեցեն», — ըստ Փիլոնի մեկնության (էջ 181—182): Ուստի Հովհաննես Սարկավազն այդ մեկնությունից և նրա հիմքում բնկած «Գործք առաքելոցից» քաջատեղյակ լինելով է, որ խոսել է այլաբանական «պանդուխտների» թշվառ ու ծանր վիճակի, ինչպես նաև նրանց հալածող ուժերի մասին, որը, ինչ խոսք, նկատի ունի նաև սոցիալական իրողություններ: Այս կապակցությամբ հարկ է հիշել Աղեքսանդրի և Փիլոնի համապատասխան բանավեճերից մի ուշադրավ օրինակ: Առաջինը, զայրացած իրականության մեջ առկա անհավասարությունից, առարկելով Փիլոնին, ասում է. աստվածային ի՞նչ նախախնամության մասին է քո խոսքը, երբ կյանքը լի է խոսվությամբ ու վրդովմունքով: Գուցէ «դու՞ միայն ոչ գիտես, զի շարացն և անզգամացն առատութեամբ ամենայն բարիք զեղանին... իսկ որք... իմաստութեան և առաքինութեան... ուսողք՝... աղքատք, ցականեալք...»: Ինչպե՞ս կարելի է «զրել օրէն՝ շարացն և վատացն պատիւս, և լաւացն՝ պատիծս պատուհասի» սահմանելով: Ապա զայրացած նա ասում է, թե նմաններին պետք է «քարկոծ առնել, դառն հատուցանել դատաստան, փոխանակ, զի իշխեաց զբնութեան զաւղարն և զբարին» (էջ 45—47): Փիլոնը, սակայն, գտնում է,

⁸⁹ Ա. Մնացականյան, Մեսրոպ Մաշտոցը որպէս բանաստեղծ («Բաների Մատենադարանի», 1964, № 7, էջ 144):

թե այդ ամենն աստծու կամքի արտահայտությունն է, որը «Ի ձեռն ինքեան գայն գործէ, սով ի վերայ ածելով, և ժանտախտ, և շարժումն. և կամ որքան միանգամ այլ ինչ աստուածառաք, յորոց ժողովք մեծամեծք և բազմամարդիկ հանապազօր կորնչին, և բազում մասն աշխարհիս ապականեալ լինի՝ յաղագս յառաջախնամութեանն առաքինութեան» (էջ 71—72):

Հովհաննես Սարկավազը, որ ծանոթ է եղնլ այս գրականությանը և լիցքավորվել է Աղեքսանդրի աղատասիրական, արդարասիրական այդ տրամադրություններով, ձգտել է յուրովի իրականացնել նրա պահանջը. «զի իշխեաց զբնութեան զարդարն ու զբարին»: Պոեմի ամբողջությունից բխող բնության ու մարդկության պաշտպան Սարյակի պահանջը ևս նույնն է՝ «Արդարութեամբ դատեցարուք»: Դա Աղեքսանդրի պահանջի արձագանքն է անցյալի մշտապես անարգար կարգերի դեմ:

Այժմ, երբ պարզված է «Բան իմաստութեան» պոեմի գաղափարական կապը հեթանոսական և վաղ քրիստոնեական ժամանակների մատենագրության, ինչպես նաև անցյալի դիցաբանական պատկերացումների հետ, բնականորեն, հարց է առաջանում՝ որոնել Սարյակի կերպարի նախատիպեր՝ ժողովրդական բանահյուսության մեջ: Փաստորեն առաջադրվում է նոր սկզբնաղբյուրի հարց, որի մասին ցարդ խոսք չի եղել: Այս առումով լուկ կարելի է հիշել Ամփիոն Թեբացու, Արիոն Միթեմնացու (մ. թ. ա. 628—538)⁹⁰ և Որփևս Թրակացու առասպելական ու կիսաառասպելական կերպարների մասին Ղ. Ալիշանի և Մ. Աբեղյանի տված տեղեկությունները, որոնք սոսկ նրանց մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակն են հետապնդել: Դա ինքնին խոսում է Հովհաննես Սարկավազի՝ դեպի ժողովրդական բանահյուսությունն ունեցած հետաքրքրասիրության մասին և առավել որոշակի հիմք տալիս՝ Սարյակի կերպարի նախատիպերին ևս այնտեղ, ժողովրդական բանահյուսության բնագավառում որոնելու համար: Ըստ որում, պարտադիր չէ, որ անպայման այն որոնվի սարյակ թռչունին վերաբերող փաստերում. կարևորը որևէ թռչունի կերպարն է՝ համապատասխան դերով, հատկություններով: Նկատենք, որ նմանների թիվը մեծ է և բոլորն էլ մեզ տանում են դեպի տոտեմիզմի ժամանակները՝ կապվելով հետագայում ծնված այնպիսի աստվածությունների գաղափարների հետ, որոնք հանդիսացել են արվեստի ստեղծողներ կամ ցեղերի ու ժողովուրդների պահապան-հովանավորներ:

Այս մտտեցմամբ է, որ մենք կարող կլինենք ավելի լրիվ հասկանալ Սարյակի գաղափարի հետ կապված հարցերը՝ պոեմում: Նա բնական թռչուն է, երբ ներկայացվում է իր մարմնական տկարությամբ՝ դասված «ընդ փանաքիս և աննրշանս», «զի գեղաւ անվայելուչ» է և «ըստ հասակի յոյժ անարգիկ»: Նա գերբնական էակ է, երբ երևան է գալիս խոսելու ամենահասկանալիության շնորհքով և արվեստի տեսակներն արարողի դերով: Նա քրիստոնեական սքեմի մեջ է, երբ աստվածաբանական դասեր է տալիս Վարդապետին, իրեն ու իր նմաններին համարում «չընկալողքս զգիտութիւն», «հետեալքս ըստ բնութեան», «անբանութեամբ պարաւանդեալքս», որպեսզի այս եղանակով կենդանական աշխարհը սահմանադատի «ազատ կամաց» հետևող, «մտաւոր» և «բանաւոր» մարդկանցից: Նա մայր-աստվածուհի, հովանավոր ուժ է՝ երբ ող-

90 Фр. Любккер. Реальный словарь классической древности, СПб.—М., 1888, с. 120.

բուժ է կենդանական աշխարհի թշվառ վիճակը և պահանջում արդար դատաստան՝ «ծուռ դատավորների» դեմ:

Այստեղ, բնականաբար, նորից է առաջանում այն հարցը, թե ի՞նչ պատճառներ են եղել, որոնք բանաստեղծին մղել են նման ստեղծագործության: Այս հարցի պատասխանը պիտի որոնել, ինչպես նշեցինք, իր ժամանակի իրականության մեջ: Ինչպես հայտնի է, այն ժամանակ երկիրը գտնվում էր օտար լծի տակ և ծանր տառապանքների մեջ: Այդ դառն վիճակից ազատվելու երազանքն է, որ դրսևորված է «Բան իմաստության» պոեմում: Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանը, երբ Հովհաննես Սարկավազի այլ գործերի կապակցությամբ գրում է. «Ինչ ժամանակի թշվառությունը նրա մեջ ևս զորացրել է հայ հայրենասիրական ոգին»⁹¹: Նա մատնացույց է անում այն, թե ինչպես բանաստեղծը մտահոգված է եղել ցրված հայության տունդարձի և ազատության հոգսով. «Հեղմամբ արեան սրբոց Բոց հօտապետաց զկեղեցույ Բոյ ցուեալ մանկունքս ժողովեա՛ յուրախութիւն, բզվարատեալս առմուրեամբ և առտասուաց յորդահոս բրդխմամբ փրկութեան մերոյ պարզևաց բաշխող»⁹²: Ըստ երևույթի, բանաստեղծի համար բիշ են թվացել բրիստոնեական եկեղեցու հնարավորությունները, նրա սրբերի կարողությունները, ուստի և նա ավելի գործոն, հզոր ուժի գաղափարն է մարմնավորել Սարկավազի կերպարում: Եվ եթե նշված աղոթքում նա անցյալից օգնության է կանչում բրիստոնյա գործիչներից մեծագործ Տրդատ արքային, Ներսես Սահակ, Մեսրոպ մեծերին, Ղևոնդյանց և Վարդանանց քաջերին, ապա պոեմում դիմում է նաև հեթանոսական ուժերին:

Ընդգծենք, որ բանաստեղծը Սարկավազի օրինակով հանդես է եկել իր ժողովրդի մեծ հովանավորի դերում: Ավելին, գաղափարական այդ հովանավորությունն իրրև փիլիսոփայական ընդհանրացում տարածված է ողջ մարդկության վրա: Հեղինակի նպատակն է հովանավորված տեսնել երկրի ներքո գտնվող բոլոր էակներին, նրանց ազատված տեսնել բնության ու հասարակության ճշող ուժերից, պաշտպան կանգնել համերկրային բոլոր զրկվածներին՝ հանուն բնական արդարության, ստեղծագործ աշխատանքի և հոգևոր ու նյութական բարիքների: Դա մի ամբողջ փիլիսոփայություն է, որն իրավունք է տալիս հաստատապես պնդելու Մ. Աբեղյանի հայտնած կարծիքը, թե «Բան իմաստության» պոեմը հայկական Վերածննդի արտահայտություն է՝ Վերևում շարադրված նոր բացահայտումները միանգամայն անառարկելի են դարձնում այդ կարծիքը:

АСАТУР МНАЦАКАНЯН

ПОЭМА ОВАННЕСА САРКАВАГА «СЛОВО МУДРОСТИ» И ЕЕ ОЦЕНКА НА ОСНОВЕ ИСПОЛЬЗОВАННЫХ ПОЭТОМ ИСТОЧНИКОВ

Резюме

В настоящей статье впервые делается попытка исследовать поэму выдающегося поэта и философа XI—XII вв. Ованнеса Саркавага «Слово

⁹¹ Մ. Աբեղյան, Երկեր, Գ, էջ 70:

⁹² Նույն տեղում, էջ 71:

мудрости» исходя из использованных автором первоисточников, которые до сих пор не были выявлены, хотя и имелись отдельные наблюдения.

Среди этих источников основное место занимает сочинение «О разуме животных», а также другие сочинения Александра и Филона Александрийского. Доказывается, что автором сочинения «О разуме животных» является не Метродор Скепсийский, а Александр и Филон Александрийский. Поэма «Слово мудрости» исследуется по уточненному нами тексту.

Поскольку по сей день использованные автором первоисточники не были выявлены, то все основные вопросы, затронутые в поэме, и их решения приписывались Ованнесу Саркавагу. В действительности же выясняется, что в основе поэмы лежат идеи языческих и раннехристианских времен. В связи с этим некоторые оценки предшествующих исследователей, в частности М. Абеяна, нуждаются в пересмотре.

Поэма в целом является исключительно ценным и высокохудожественным произведением, заслуживающим большого внимания.

A. CH. MNATZAKANIAN

LE POEME "PAROLE DE SAGESSE, DE HOVHANNES
SARKAVAG ET SON APPRECIATION SELON LES SOURCES
UTILISEES PAR L'AUTEUR

(Résumé)

Cet article est un premier essai d'étudier le poème „Parole de sagesse, du célèbre poète et philosophe des XI^e—XII^e siècles Hovhannes Sarkavag en se basant sur les sources utilisées par l'auteur, ces sources n'étant pas déterminées jusqu'à présent, bien qu'il y ait eu certaines observations à ce sujet.

Parmi ces sources, une place de choix revient à l'oeuvre „De la raison des animaux, („De ratione quam habere etiam bruta animalia,“), ainsi qu'aux autres oeuvres de Philon d'Alexandrie et d'Alexandre (neveu de Philon). Il est démontré que l'auteur de l'oeuvre „De la raison des animaux“ n'est pas Métrodore de Scepsis, mais Philon d'Alexandrie et Alexandre. Le poème „Parole de sagesse“ a été analysé d'après le texte rectifié.

Les sources utilisées par l'auteur n'étant pas déterminées, toutes les questions fondamentales soulevées dans le poème „Parole de sagesse, et leurs solutions étaient jusqu'à présent attribuées à Hovhannes Sarkavag. A présent qu'il est démontré que ce poème est basé sur les idées de l'époque païenne et paléochrétienne, sa valeur croît considérablement. Les parties du poème où l'auteur se laisse guider par les idées d'Alexandre et leur donne un développement original, sont dignes d'attention.

Il s'ensuit qu'une partie des opinions de M. Abéghian sur le poème en question étaient réellement exactes et profondes, tandis que les autres doivent être revues. Ce poème et les autres oeuvres de Hovhannes Sarkavag donnent plus de raisons d'y découvrir des expressions mystiques et propres à la Renaissance que ne l'avait montré M. Abéghian.

Le poème "Parole de sagesse", est une oeuvre littéraire d'une valeur exceptionnelle qui mérite un grand intérêt.

ՄԻՋԻՆ ԲԱՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԽԱՉԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՐ

Ներկա հոգվածն անմիջական շարունակությունն է՝ հայկական միջնադարյան երաժշտական ձեռագրերում նկատվող խաղային տարրեր հյուսվածքների վերծանության հետ կապված մեր այն աշխատանքների, որոնք առաջ ենք տանում 1970-ական թվականների սկզբներից:

Հիշեցնենք, որ այլազան երգերի խաղագրությունները միջնադարյան ձեռագրերում դատորոշվում են նրանցում կիրառված նշանների ամենատարրեր քանակով՝ 3—4-ից մինչև 30—40 և ավելի: Մեր դիտումները ցույց են տվել, որ նշանների քանակը հիշյալ երգերում ավելանում է՝ նրանց մեղեդիներում ձայննդանակային նորանոր պտույտների բնագրվման, ընթացքի (տեմպի) դանդաղեցման, կշռույթի կտորակման և առհասարակ երաժշտական բաղադրիչին հատկացված ձևակառուցողական դերի մեծացմանը զուգընթաց:

Որպես հետևանք՝ գոյանում են խաղավորումներին հատուկ հյուսվածքի տարրեր տիպեր: Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս աստիճանաբար բացահայտելու այդ տիպերից ամեն մեկի առանձնահատկությունները (ամբողջապես առած), ու՝ ի վերջո՝ նաև դրանց մեջ ներթաշված յուրաքանչյուր խաղանշանի գորությունը:

1971 թվականին, Մատենադարանում ավելի քան տաս տարի նախապատրաստական մի շարք հետազոտություններ կատարելուց հետո¹, հրապարակել էինք հինգ խաղագրերով՝ «շեշտ», «բուժ», «պարույկ», «երկար» և «փուշ» նշաններով իրացված պարզագույն խաղագրությունների վերծանության մա-

¹ Հմմտ. մեր հոգվածները՝ «Խաչատուր էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսարան» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 11), «Ոսկան վարդապետն ու խաղագրության արվեստը», («Էջմիածին», 1966, № 11—12), «Հայկական խաղագրության հիմնական նշանների երկու ցուցակների մասին» («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1), «Ուշ միջնադարյան երաժշտական բանաբաղված մի հոգված» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1968, № 3), «Կոմիտասը և հայ հոգևոր նրբաստեղծության ուսումնասիրության հարցերը», «Կոմիտասական» (ժողովածու, Երևան, 1969, հատ. 1), «Կոմիտասը և հայկական խաղերի վերծանության խնդիրը» («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4), «Հիմնական խաղերի միակցությունը» («Բանբեր Մատենադարանի», 1969, հատ. 9). *Из литературного наследия Комитаса. (*Советская музыка., М., 1969 № 10), «Դիտողություն Փարպեցու պատմության մեջ Մահակ Գարթևին վերաբերող մի արտահայտության մասին» («Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 3), *Les anciens manuscrits musicaux arméniens et les questions relatives a leur déchiffrement. (*Revue des études arméniennes, N. S., 1970, t. VII). «Կոմիտասի մատորումները արհույթյան և առողանության նշանների հարաբերության մասին» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 8), «Հիմնական դրույթներ խաղագրության արվեստի վերաբերյալ», («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1971, հատ. 10):

սին հողավածը²: Մի քանի տարի անց³, 1977-ին հանդես եկանք պարզ խազավորումների վերծանությանը նվիրված գիտական զեկուցումով⁴: Խազավորումներ, որոնք ընդգրկելով վերոհիշյալ հինգ խազագրերը, ներառում են ևս վեց նշան՝ «սուղ», «թաշտիկ», «ծունկ», «խունճ», «թաշտ» ու «ոլորակ»:

Այժմ մի քայլ ևս առաջ գնալով, գիտական հասարակայնությանը ներկայացնում ենք՝ միջին բարդության առաջին կարգի խազավորումների վերծանությունը:

Ուսումնասիրության մեթոդն ու օգտագործվող աղբյուրները նույնն են⁵:

Միջին բարդության առաջին կարգի խազավորումները իրացվում են 15-ից ավելի նշաններով, որոնց շարքում նոր, հյուսվածքի գիտարկվող տիպին հատուկ են վեց խազագրեր՝ «ստորադիր», «ծնկներ», «խոսրովային», «սուր»,

2 Ն. Քահմիզյան, Պարզագույն խազագրությունների վերծանության փորձ («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2):

3 Եվ դարձյալ նոր ուսումնասիրությունների, հրատարակումների ու խազագրության հարցերի հետ ևս առնչվող երկու մենագրությունների լույս ընծայումից հետո, որոնք են՝ «Ութ-ձայնի սկզբածրները» («Էջմիածին», 1972, № 2—4), «Գրիգոր Գապասարայանի «Համառօտութիւն երածշտականի գիտութեան» անտիպ աշխատությունը» («Բանբեր Մատենադարանի», 1973, հատ. 11), «Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ», («Բանբեր Մատենադարանի», 1976, հատ. 12), «Ներսես Շնորհալին երգահան և երածիշտ», Երևան, 1973, «Теория музыки в древней Армении, Ереван, 1977»:

4 Ավելի ստույգ՝ 1977 թվականի հոկտեմբերին՝ ՍՍՀՄ ԳԱ-ի հնագրագիտական հանձնաժողովի և Մաշտոցի անվան Մատենադարանի կազմակերպած գիտական նստաշրջանին, ուր լայնորեն քննարկվեցին միջնադարյան դպրության ու գրքի պատմատեսական հարցերը: Տե՛ս «Конференция по истории средневековой письменности и книги (к 60-летию Великой Октябрьской социалистической революции)», Тезисы докладов, 25—27 октября 1977 г., Ереван, 1977, էջ 91: Մեր զեկուցման հիման վրա պատրաստված ուսումնասիրությունը այնպես էլ չհրատարակեցինք, նրանում գիտարկվող խազագրերի ամանակային նշանակությունը մի անգամ ևս երկարատև քննության ենթարկելու համար (հմմտ. մեր վերոհիշյալ հողավածը՝ Ութ-ձայնի սկզբածրները, («Էջմիածին», 1972, № 2, էջ 31—33, ծանոթ. 27): Վերջերս միայն այդ ուսումնասիրությունը ազուցանեցինք մի նոր հետազոտության շարադրանքին և այդպիսով հանձնեցինք տպագրության: Տե՛ս Ն. Քահմիզյան, Նյութեր հայկական և ուսական հոգևոր միջնադարյան երգարվեստների համեմատական ուսումնասիրության («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1980, հատ. 13):

5 Այն է՝ հիմնականում՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1576 գրչագիր ընտիր շարակնոցը (Դրաղարկ, 1328 թ.), և անցած հարյուրամյակի վերջին բառորդում էջմիածնում Ն. Քաշնյանի կազմած ձայնագրյալ ժողովածուները, մասնավորապես՝ «Ձայնագրեալ Շարականը» (Վաղարշապատ, 1875):

Կարող է թվալ, որ այնքան էլ ճիշտ վարվելուկերպ չէ՝ ավելի քան հինգ զարերով իրարից բաժանված, թեկուզ նույն երգերը պարունակող մատյանների համեմատության արդյունքները կշռելը: Սակայն, ի մոտո ծանոթությունը գործի բոլոր հանգամանքներին՝ փարատում է նման կասկածները: Ինչպես գիտենք, XIV—XV դարերից հետո խազագրության արվեստն սկզբունքային որևէ կատարելագործության չի ենթարկվել: Ուշ միջնադարում շարունակվել են տարբեր երգարանների խազավորման աշխատանքները: Սակայն դրանք, ինչքան էլ օգտակար, իրենց մակարդակով երբեք չեն հասել նախորդ շրջանում ձևոր բերված արդյունքներին: Խոսքը մասնավորելով Շարակնոցի շուրջ կարող ենք նույնիսկ ավելացնել, որ այն՝ խազավորման (դրական բնագրերի վրա խազագրերի տեղաբաշխման) առումով էլ որևէ կարևոր փոփոխության չի ենթարկվել: Ի՞նչ չհաշվենք այլադան աղճատումներն ու աղավաղումները, նշանների ավելագրությունն ու թերագրությունները, դրափոխություններն ու շփոթության հետևանքները և այլն: Այնպես որ, XIV դարի ընտիր ձևագրին դիմելն ու նրա վրա կանգ առնելը, տվյալ դեպքում պարզապես նշանակում է՝ XIX դարում կատարված ձայնագրությունները, զեթ վերը նշված թերություններից զղալիորեն զերծ մի մատյանի միջոցով ստուգել: Այլապես ինչքանով արդյունավետ կլինեն ևս առհասարակ համեմատական աշխատանքները:

«թուր» և «զարկ»: Ստորև ճիշտ այս հերթականութեամբ էլ կկատարենք քննութիւնը:

«Ստորագիր». հիմնախաղերի միակցութիւնը որոշելիս արդեն նշել էինք⁶, որ «ստորագիրը» (ինչպես և «վերագիրը») այդ միակցութեան մեջ դասելը առաջին հայացքից կարող է և անհասկանալի թվալ, բայց դա արվել է նույնիսկ միջին դարերում, և իրավացիորեն: «Ստորագիրը» սերվում է առօրինակ նշանների շորրորդ խմբի (կամ սեռի) մեջ մտնող ենթամնայից և ունի վերջինիս գծագրաձևը: Չնայած նշանիս անվանակոչութեանը, որ ունի նաև «ստորագասի» իմաստը⁷, խաղագրութեաններում նրան կարևոր դեր է հատկացվել: Այն գրվել է ոչ միայն գրեթե ամեն տեսակ խաղաղոր, այլև անխաղ վանկերի տակից⁸. և ցույց տվել որ տվյալ վանկը (լինի անխաղ, թե խաղաղորված որևէ բարդ նշանով, կամ մի «շեշտով», «ծունկով» և անգամ մի «սուղով»), եղանակավորված է մեկից ավելի հնչյուններով, որոնք հարկ է կատարել կապակցված:

«Ստորագիրի» օգնութեամբ կապվել են (legato են երգվել), ինչպես նույն վանկի վրա տեղադրված իրար կից տարբեր խաղագրեր⁹, նույնպես և մեկ խաղագրով նշանակվող մի խումբը, կամ գոնե մի-երկու տարբեր բարձրութեան հնչյուններ, երբ այն գրվել է մեկ, առանձին առած վանկի տակից¹⁰: «Ստորագիրին» մենք դեռ կհանդիպենք հաջորդ նշանների քննութեան կապակցութեամբ բերվող օրինակներին ծանոթանալիս:

«Ծնկներ». Անվանակոչութեամբ ու գծագրաձևով էլ՝ պարզ խաղաղորութեանից արդեն հայտնի «ծունկ» նշանի կրկնապատկումն է ներկայացնում սա: Ճիշտ այսպես են հասկացել ու բացատրել խաղագիրս հին և նոր մի քանի գիտնականներ: Շրջոգերը հայկական խաղանշանների անունների լատիներեն թարգմանութեաններում պարզորոշ բացահայտութեամբ մատնանշում էր «ծունկի» և «ծնկների» այդ կապը¹¹: Խաչատուր Էրզրումեցին ուղղակի գրում է. «Նա ծրնկներ անուանակոչի, որ եօթն և տասներորդ լինի: Վասն զի զայն կրկնապատկէ. որ ծունկ յարանուանեցեալ է»¹²:

Դեռևս XVIII դարի սկզբներում արված այս բացատրութիւնն ընդհանուր առմամբ ճիշտ է: Միայն՝ սրանից հստակ չի երևում, թե Էրզրումեցու կարծիքով «ծնկերը»՝ «ծունկին» համապատասխանող պտույտի տեսողութեանն է կրկնապատկում, թե՞ շարժումը (որով բնականաբար կրկնապատկված է լինում նաև տեսողութիւնը), և ի՞նչպես: Շուրջ երկու հարյուր տարի վերջ գրեթե նման մի բացատրութիւն արձանագրեց Իգն. Կյուրեղյանը, ասելով. «ծնկներն ալ բնականապես ուրիշ բան չեն, բայց եթե ծունկին կրկնութիւնը, որով և զայն երգելու համար պետք է ծունկը կրկնել»¹³:

6 «Բաները Մատենադարանի», Երևան, 1969, հատ. 9, էջ 106:

7 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ:

8 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1576, էջ 29ա:

9 Նույն տեղում, ձեռ. № 755, էջ 4ա (տե՛ս «Յիշեցութ» խոսքի առաջին վանկը):

10 Նույն տեղում (տե՛ս «ի գիշերի» խոսքի «ի» նախդիրի խաղը):

11 J. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami, 1711, էջ 244:

12 Խաչատուր Էրզրումեցին որպէս միջնադարյան հայ երաժշտութեան տեսաբան, ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր», 1966, № 11, էջ 72:

13 Իգն. Կյուրեղյան, Լուսարանութիւն խաղից և երգեցողութեան շարականաց, «Բազմավէպ», Վենետիկ, 1904, № 3, էջ 128:

Այստեղ խոսքը «ծնկների» միջոցով «ծունկի» պտույտը կրկնելու մասին է, և սա էլ ընդունելի է, սակայն ճշտված չէ, թե հատկապես ի՞նչ է ենթադրում այդ կրկնությունը: «ծունկի» պտույտը նույնությամբ երկրորդել, թե՛ այն նաև մեկ այլ աստիճանից հնչեցնել, որպիսի դեպքում առհասարակ շարժումն է, որ կրկնված և կամ կրկնապատկված է լինում: Վերջին կետի վրա պնդում է Պ. Վազնեբը: Նա, ոչ «ծունկը» համեմատել է բյուզանդական Apostrophos-ի հետ, «ծնկների» համապատասխանն էլ տեսնելով Dyo Apostrophoi-ի մեջ, ավելացնում է, թե «ծնկները» «ծունկի շարժումն է կենսապատկում»¹⁴:

Խաղափոր ձևազրեքում «ծնկների» կիրառման պայմանների քննությունը և Զայնագրչալ Շարակնոցում դրան համապատասխանող պտույտների վերլուծությունն ու համեմատությունը մեզ հանգեցնում են համոզման, որ խաղանշանս նայած տեղին, կրկնապատկում է «ծունկի» տևողությունը, կամ կրկնում է «ծունկի» պտույտը, և կամ առհասարակ շարժումը (տարբեր աստիճաններից), ստանալով կշռույթային այլազան ձևավորումներ, որոնք կարող են ընդլայնվել ու բարդանալ ծանր երգեցողություններում: Այդ ձևերի պարզ տեսակները հասնում են հինգի: Ահա դրանք, իրենց տարբերակներով, հետևյալ հերթականությամբ. ծունկի տևողության կրկնապատկումը (1), ծունկին համապատասխանող պտույտի կրկնությունը (2), նույն պտույտի կրկնությունը՝ նրա երկրորդ հնչյունի բարձրությունից (3), նույնը՝ վարընթաց կարգով հաջորդ ձայնաստիճանից (4), և նույնը՝ վերջից մի ձայնահատի (պաուզայի) ընդգրկմամբ (5): Օրինակում նախ, հիշեցման կարգով, բերում ենք «ծունկի» պտույտը, հետո նրանից սերված այն ձևերը, որոնք ներկայացնում են «ծնկները» (տե՛ս էջ 49):

Ինչպես պարզ երևում է, «ծնկների» մեղեդիական այս պտույտները շափական երկու միավորի արժեք ունեն: Իսկ կշռույթային գծագրերի, մանավանդ դրանց գրավոր արտահայտությունների մասին պետք է ասել, որ վերջիններս տվյալ պտույտի իրական հնչողությանը բավարար չափով համապատասխանում են՝ առաջին սյունակում տեղադրված հիմնաձևերի շրջանակներում: Տարբերակների կապակցությամբ, որոնք տեղադրված են երկրորդ սյունակում, նույնն անվերապահորեն երկրորդել չենք կարող: Դրանց կշռույթի գրավոր արտահայտությունները կողմնորոշիչ նշանակություն ունեցող առավել ընդհանուր (մոտավոր) պատկերներ են, որոնց այդ նկարագիրը այլևի կա խորանում է նախահարուկների (Vorschlag), վերջնահարուկների (Nachschlag) ու նման զարդարանքների կիրառմամբ¹⁵:

Աղյուսակում ցույց տրված հինգ ձևերից ու դրանց տարբերակներից յուրաքանչյուրի համար խաղային առանձին օրինակներ բերելով զբաղվելը մեզ

¹⁴ P. Wagner, Neumenkunde (Palä)graphie des Liturgischen Gesanges, Leipzig 1912, s. 74.

¹⁵ Դրանց հատուկ անդրադարձել ենք «խունճ» խաղաղիրը քննելիս ու նշել, որ իրենց գրավոր արտահայտությամբ կարճ տևողության հիշյալ զարդարանքները հայ միաձայնային երաժշտության պայմաններում, որպես ընդհանուր կանոն, զգալի կշռական են կատարվում (տե՛ս մեր հոդվածը՝ Նյութեր հայկական և ռուսական հոգևոր միջնադարյան երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1980, հատ. 13, էջ 125): Շեշտներ, որ դա այդպես է, անկախ որևէ զարդարական հնչյուն՝ տվյալ խաղաղիրն համապատասխանող մեղեդիական պտույտին հատուկ, այն կազմող անհրաժեշտ ձայնաստիճաններից մեկը համարելու կամ շհամարելու հանգամանքից:

հետև կտաներ: Մի քանի ձևերի կիրառության տեսողական ընկալումն ապահովելու նպատակով կրեթներ խաղաչին ամբողջական նմուշներ, մյուսների կապակցությամբ՝ համապատասխան հղումներ կանենք:

Ծուռկ



Ծնկներ

1

2

3

4

5

«Ծնկներ» խաղազրի կասարման առիթներով բավական հաճախ հնչած մեղեդիական պատույտներից մեկը եղել է վերևի օրինակում ցույց տրված առաջին հիմնածևր: Ահա այն՝ ննջեցելոց ԳԶ միջակ տեր երկնիցի («Որ երկայնամիտդ ես տէր») երկրորդ տան մեջ հանդիպող «նոյին» խոսքի (հատուկ անվան) երկրորդ վանկի զուգորդությամբ¹⁶ (տե՛ս էջ 50):

¹⁶ $\frac{314p}{992}$

Իհրակ

Հի - ռա սակ հրա - ծա - ըն - լույն
 ի հա - ճոյս ինչ ըն - կալ - ցիս
 եւ զուրս զսո մեր ըն կալ
 սր - ւէս զն - ըն - լին զնո յին
 և զնչ - քա հա - մուն, զի մի դարչ զի
 սեանկն ա մա - ընչ - եալ յա տուրն
 ա հնչ ա - տն նին

Հետևյալ նմուշը, որ է Մարտիրոսաց «Որք դանձինս» թի միշակ սղորմյան, ցույց է տալիս առաջին հիմնածնի տարբերակի կիրառումը, դարձի «սղորմեա մեզ» խոսքի հետ կապակցումով¹⁷ (տե՛ս էջ 51):

Ի դեպ, այստեղ «չարչարանաց» խոսքի վերջին վանկի տակից դրված

¹⁷ 291բ—292ա
938

Միգակ

Արև արևն չիևս իւր ետևից ըն - ծա յն ցին
 ինչ իրիս - սու սա - լորը ղն - լով իուց շար -
 ըս ըս նայ. ըս ըն - իս - սու - թնայր տ -
 ցա .. դորը - նեա - նեց
 Աս - ջը - ուած

նշանը վերը քննված «ստորադիրն» է: Եվ դա էլ հուշում է, որ տվյալ դեպքում «երկար» հիմնախաղը կրող վանկը պետք է հնչյունավորված լինի առնվազն երկու տարբեր ձայնաստիճանների օգնությամբ¹⁸, որոնք կատարվելու են legato, փնչպես բացատրել ենք վերը:

«Մեկների» մյուս հիմնաձևերին հանդիպում ենք այնպիսի խաղափորումներում, ուր կիրառված են նաև մի շարք այլ, բարդ և մեր կողմից տակավին չքննված նշաններ: Գրանցից մեկին սակայն, «խոսքովայինին» անդրադառնալու ենք ստորև, այնպես որ ծանոթանանք հետևյալ նմուշին ևս (տե՛ս էջ 52):

Ապաշխարության Բկ երրորդ շարքից «Յոյս իմ ևս» շափավոր ողորմյալի երկրորդ տունն է սա (մինչև դարձը)¹⁹: Տվյալ տողատումով հստակ երևակվում է երգի տան յուրահատուկ կառուցվածքը. 1-ին ու 3-րդ տողերը շափական 9-ական միավորից են բաղկացած, 2-րդ և 4-րդ տողերը՝ 7-ական: 1-ին ու 3-րդ տողերի սկզբում դեպի վեր ուղղված «երկարի» տեսքով նշանը «խոսքովայինն» է:

¹⁸ Ձայնադրյալ Շարակնոցում այդ վանկի հետ զուգորդված է երկար տևողության մեկ հնչյուն (երկրորդ «փուշը»), որ ուղղել ենք:

¹⁹ $\frac{72\omega}{251}$

«Ծնկները» զուգորդված է երրորդ տողի «մեղայ» խոսքի երկրորդ վանկի հետ²⁰։ Մնացած հիմնաձևերի կապակցությամբ ընթերցողին հղում ենք մեր ազբյուրների համապատասխան էջերին, ինչպես պայմանավորվել ենք։ Երրորդ հիմնաձևը մի փոքրիկ դրամատիզմով երևում է հայրապետաց կանոնի Գձ չափավոր մանկունքի առաջին տան մեջ, «զումար» խոսքի առաջին վանկի զուգորդությամբ²¹։ Զորրորդ հիմնաձևը հանդիպում է ճաշու«զովեա»-ներից

Չափաւոր

20 Չեռագրում հիշյալ վանկի վրա գրված են «ծնկներ» և «բուժ» նշանները, որոնք նույն խոսքի նախորդ վանկի «երկարի» հետ միասին՝ չափական 5 միավոր են գոյացնում։ Չափազանց Շաբակնոցում աղ վանկին հատկացված մեղեդիական պատույթը չափական 2 միավորով պակաս է.

վերևում ուղղել ենք այս սխալը (տե՛ս ուղղանկյուն փակագծերում բերված չափական միավորները)։

21 $\frac{256p}{853}$ (նշված դրամատիզմները հեշտությամբ ուղղվում է, մեղեդիական պատույթում առաջին հնչյունն է, որ պետք է կատարի օժանդակ-գարգարական ձայնաստիճանի պաշտոնը և ոչ թե երկրորդը՝ «էկորնը»)։

«Յարեա Քրիստոս» կտորի Գ տան մեջ, «լուսաւորեաց» խոսքի երրորդ վանկի վրա²²: Հինգերորդը՝ Վարդավառի առաջին օրվա կանոնի «Ուրախացիր պսակ կուսից» Դկ շախավոր-ծանր ճաշուի առաջին տան մեջ, «տիրամայր» խոսքի երրորդ վանկի վրա²³:

Սրանց տարբերակներում, նույնիսկ լավ պահպանված երգերի մեջ, առհասարակ ավելի շատ են առանձին հնչյունների գրաֆոխություններով և կամ մեղեդիական ամբողջական պատկանների ընդհանուր ծավալի (տևողության) սեղմումներով, այլև ընդլայնումներով, կարճ՝ հանկարծաբանական արվեստին հատուկ ազատություններով բացատրելի կետերը: Ասվածը (նաև հիմնաձևերի վերաբերությամբ) ընդգծելի է. քնականաբար, դարդոլորումներով լեցուն «ծանր» ու «ստեղի» տիպի երգերում: Եվ սակայն, սրանցում էլ հնարավոր է լինում առանձնացնել տեղիներ, ուր բավականին հստակ զատորոշվում են, ասենք, «ծնկներ»+ոլորում²⁴, ոլորում+«ծնկներ»+ոլորում և նման դուրդություններ:

«Խոսուովային» Գծագրաձևի երկու տարբերակ ունի, որոնք ներկայացնում են դեպի վեր ուղղված ալիքավոր յուրատիպ «երկար»-ներ: Խաղաղրիս անվանակոչությանը անցյալում տրված բացատրությունը, թե «որպէս թէ նմանեալ սրոյ քաջին Խոսրովու մեծի՝ Հայոց արքային»²⁵, համողիչ չէ: Այդ անվանակոչությունը ծագում է պարսկերեն *xustav* (թագավոր) և հատկապես *xustavana* (թագավորական) բառից²⁶, որ հայկական շրջաններում կարող էր արտասանվել խուսեվանի ձևով²⁷: Երգչային նշանի վերաբերությամբ, այն՝ ըստ բոլոր տրվյալների՝ նշանակել է երկար վանկ ցուցանող մի քանի խաղաղրերի (այդ թվում՝ բուն «երկարի», «քաշի»-ի, «յարեշտ»-ի և «ձայնդարձ»-ի շարքում²³ գլխավորապես «տրոպ»-ների ընտանիքում էլ («առանձնատրոպ», «քմատրոպ», «ծանրատրոպ») ունենք՝ «թագատրոպ» և կամ ուղղակի «թագատրատրոպ» նշանը²⁹:

²² $\frac{127 \text{ ա}}{438}$ (այստեղ, հիշյալ վանկի վրա, ամբողջ մեղեդիի կառուցվածքով պայմանավորված

մի նախընթաց հավելում էլ կա՝ երկրորդ «փուշից» մինչև երկրորդ «վերնախաղ» կիսվար, որը, սակայն, չի մթազնում «ծնկներին» անմիջապես հաջորդող վարընթաց պատույթ՝ երկրորդ «բենկորձից» երկրորդ «փուշ»: Ի դեպ՝ ճիշտ նույն պատկերը նկատվում է նաև «Կամալ յանցն առեր» կտորի առաջին տան մեջ, «համբերեցեր» խոսքի երրորդ վանկի վրա, տե՛ս նույն տեղը):

²³ $\frac{213 \text{ ա}}{719}$:

²⁴ $\frac{238 \text{ բ}}{794}$ (խալի ութերորդ օրվա կանոնի Դկ ստեղի «Պարունակեալ պահէին» մանկոճքի

առաջին տան «ծառայն» խոսքի առաջին վանկը):

²⁵ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»:

²⁶ Հ. Անադյան, Հայերեն արձատական բառարան:

²⁷ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»:

²⁸ Առավել լայն իմաստով՝ երկարների դասակարգության տակ կարող են դրվել նաև ուրիշ խաղաղրեր: Բայց այդ դեպքում շնչվում են տարբեր նշանախմբերի շրջաններին հատուկ սահմանները: Հմմտ. Ի. Կյարեղյան, Լուսաբանություն խաղից և երգնցողություն շարականաց, «Թաղմավէպ», Վենետիկ, 1904, № 3, էջ 126—128:

²⁹ «Բաները Մատենադարանի», 1969, հատ. 2, էջ 121:

Այստեղ նոր (մեզ դրազեցնող միջին բարդության առաջին կարգի խաղափորումներին վերաբերող) նշաններ են միայն կետավոր «խոսքովայինն» ու «ստորագիրը»: «Խոսքովայինը» տեղադրված է գրական բնագրի (սկզբից հաշված) հինգերորդ վանկի վրա: Եվ, ինչպես հստակ երևում է, այդ վանկն ունի շափական երկու միավորի արժեք ու թեթևակի ալիքավորված «երկարն» հիշեցնող մեղեդիական գծագիր: Սա՛ «խոսքովայինի» կատարողական պարզ մեկնաբանություններից է, որ կախման մեջ է երգային տան կառուցվածքից ու երաժշտական ամբողջական կերպարից:

Յորդոր

Գրա - ցա - փառ ծը - նունդ ին ի սուրբ կու սեն
ալ սոր կու - ցալ ալ - գի մարդկան ա - նրս կրպ - նա
կից քանդ է - ա - կից հոր:

Հետևյալ օրինակում, որ է՝ նոր կիրակիի կանոնի Ակ միջակ մեծացուցիի առաջին տունը (մինչև դարձը)³³, «խոսքովայինը» ստացել է բոլորովին այլ կատարողական մեկնաբանություն (և կամ, որ նույնն է՝ «խոսքովայինով» նշանակվել է բոլորովին այլ մեղեդիական պտույտ) (տե՛ս էջ 56):

Քննարկվող խաղաղիրը այս շարականում տեղադրված է ոտանավորի առաջին վանկի վրա, որն և զուգորդվում է շափական վեց միավորի արժեքով մեղեդիական գեղակերպ պտույտի հետ: Ի դեպ, բերված երգի հեղինակն է Ներսես Լամբրոնացին, որ տվյալ սկզբնական պտույտը հղանալիս, ինչպես երևում է, օգտվել է Ներսես Շնորհալու «Հոյս, արարիչ լուսոյ» արևագալի երգից: Վերջինս նույնպես սկսվում է «խոսքովայինին» համապատասխանող նմանատիպ, բայց ավելի ճոխ մի պտույտով, որ պարզեցրել է Լամբրոնացին³⁴: Ավելի ճիշտ,

հետ, հասկապես այն դեպքերում, երբ նրա հորիզոնական գիրքի համար բավականաչափ տեղ չկա տվյալ վանկի վրա: Նման դեպքերից մեկն է, որ նկատվում է մեր օրինակում:

³³ $\frac{137 \text{ ա}}{469}$,

³⁴ Հմմտ.

Ծանր

Հոյս

վերցրել է հիշյալ պտույտի մեղեդիական առաջին բջիջը և ընդլայնելով՝ դրան հատկացրել ամբողջի ծավալը՝ շափական վեց միավոր:

Բայց «խոսքովայինը» կարող է և ավելի մեծ տևողություն թելադրել: Ստորև բերվող օրինակում «խոսքովայինին համապատասխանող երկարածիգ-զարդույթուն մեղեդիական պտույտն ընդգրկում է շափական ինը միավոր, և ընդհանրապես ներկայացնում է այն տիպական վանկերից մեկը, որոնք, էրզրումեցու խոսքերով՝ «ոլորաբար երկարացված» են (տե՛ս էջ 57):

Հարության երգաշարերից է շարականս. Գկ դարձվածք շափավոր-ծանր տեր երկնիցի առաջին տունը (դարձի հետ միասին)³⁵, որտեղ «խոսքովայինը» զուգորդված է ոտանավորի երկրորդ վանկի հետ: Ամբողջական այս խաղավորման մեջ «խոսքովայինը» միակ նշանն է, որ ենթադրում է մեղեդիական բավական բարդ մի պտույտ, բայց վերջինս օրգանապես մերվում է երգի ողջ տան երածշտական կառուցվածքին:



Աչքի առաջ ունենալով նույնիսկ լուր բերված օրինակները, դժվար չէ նկատել, որ «խոսքովայինի» մեղեդիական-գծային նշանակությունը գործնականում իրացվում է զգալիորեն լայն շրջանակների մեջ: Դա դարձանք պետք չէ առթի: Գործ ունենք երգչային նշանների այնպիսի համակարգի հետ, որի կառուցվածքում իսկ հաշվի են առնված նաև հանկարծաբանության միջնադարյան սկզբունքները: Ուստի մեր ուսումնասիրությունների խորացմանը զուգընթաց, որ նշանակում է, թե հետազոտության ոլորտը ներգրավելով ավելի ու ավելի բարդ (ընդգրկուն) խաղաղերը, օրինաչափորեն պիտի բախվենք դրանց մեկնաբանության սահմանների ընդարձակման երևույթին:

Այն, որ մասնավորապես «խոսքովայինը» ուղղակի վերաբերություն ունի միջնադարյան երգչային հանկարծաբանական արվեստին, ապացուցվում է հետևյալ փաստով էլ: Խաղաղիրս ունի մի երկրորդ անուն ևս՝ «քմազարդ», որ արձանագրված է հիմնախաղերի միջնադարյան երեք զլխավոր ցուցակներից

Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1576, էջ 279բ և «Երգք ձայնադրեալք ի ժամագրոց», Վաղարշապատ, 1877, էջ 400:

մեկում³⁶, և որի երաժշտական իմաստը կամ մեկնաբանությունն է՝ «բոտ հաճոյս և բոտ քիմս յօրինեալ»³⁷, հասկանալի է՝ երգեցողության ազգային տրվյալ դպրոցի, ճյուղի և որոշակի ձայնեղանակի շրջանակներում:

Անցնելով առաջ, պետք է ասել, որ շարադրվածով չեն սպառվում «խոսքովայինի» մեղեդիական-զծային նշանակությանը վերաբերող հարցերը: Գրանց կապված բննելի մի ասույթ ունի նաև հին տեսաբաններից Գրիգոր Գապասաբալյանը, որ «խոսքովայինը» բնութագրում է «ձայն բարձր և ցնթելի» արտահայտությամբ³⁸: Փամանակին հակիրճ նշել էինք, որ այս բացատրությունը յուրովի լրացնում է «խոսքովայինի» մասին էրդրումեցու ասածը³⁹: Այստեղ ասելն է հավաստելու, որ Գապասաբալյանի դիտարկվող բացատրությունը վերաբերում է «խոսքովայինի» մասնավոր մեկնաբանություններից մեկին: Վերջինս հանդիպում է գլխավորապես, Բկ ձայնեղանակում, որն առհասարակ բարձր հնչամասում է ծավալվում (C²-F²-ի ոլորտում): Ահա, օրինակ, ապաշխարության Բկ շորրորդ շարքի ողորմյան (մինչև դարձը)⁴⁰ (տես էջ 59):

«խոսքովայինն» այստեղ դուգորդված է երգի առաջին խոսքի հետ, որն և եղանակավորված է ալիքավոր «երկարի» ձևով, տվյալ դեպքում, բարձր հնչամասում: Սակայն խաղաղրիս համապատասխանող մեղեդիական պտույտի այս դիրքը (որից ավելի բարձր, ի դեպ, չի հանդիպում ողջ Շարակնոցում),

36 «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 114 և 121:

37 Մ. Փաշունի, Բաղիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, հատ. Ա. Վենետիկ, 1891:

38 Տե՛ս նրա՝ «Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803, հարց 90:

39 ՀՍՍՀ ԳԱ «Կրթեր», 1966, № 11, էջ 69:

40 Տե՛ս $\frac{72բ}{253}$ (ապաշխարության երրորդ շարքի վերջ բերված Բկ ողորմյային շատ մասիկ

մի եղանակով է սա էլ):

մյուս ձայնեղանակներում (Գձ, Ակ, Գկ) զնալով իջնում է. որով պարզ է, թե նրա բարձրությունը շատ հարաբերական է⁴¹:

Վերը բերված օրինակներից հստակ երևում է դա, ինչպես և այն, որ դրանցում «խոսքովայինին» համապատասխանող մեղեդիական պատույտները գտնվում են տվյալ յուրաքանչյուր ձայնեղանակի դիմող հնչյունի ոլորտում: Ճիշտ այս տեսակետով մանրակրկիտ զննելով «խոսքովայինի» կիրառման պայմանները շարականի բոլոր ձայնեղանակներում, եկանք համոզման, որ «խաղաղրիս» պատշաճող պատույտների բարձրության կախումը դիմող ձայնի դիրքից հնչյունաշարում՝ կարելի է համարել ընդհանուր կանոն⁴²: Իսկ այն

41 Գոպասարայանը «խոսքովայինի» մասին իր ասույթում չի արտահայտել նշված կարևորագույն պարագան: Չնայած դրան, արդի հայ երաժշտագիտության մեջ շափազանց մեծ նշանակություն արժեք Գոպասարայանի հիշյալ ասույթին, որն, ի վերջո, ապակողմնորոշող դեր խաղաց: Այսպես, Ռ. Աթայանը, «խոսքովայինի» մեղեդիական-զծային զորության մասին մի շարք մտորումներից հետո, եկավ այն եզրակացության թե՛ խաղաղրիս «մեղեդին փոխադրում է վերին սահմանը, ավելի հաճախ՝ դեպի լադի ֆունկցիոնալ տեսակետից որոշակի աստիճաններից մեկը, որտեղ, վերին և ստորին «օժանդակ» հնչյունների մասնակցությամբ, տեղի է ունենում որոշ հուպագում» (տե՛ս նրա՝ «Հայկական խաղային նոտագրությունը», Երևան, 1959, էջ 261): Բայց այս բացատրությունը հարմարվում է «խոսքովայինի» կատարողական այն մեկնաբանությունը, որ հանդիպում է Բկ ձայնեղանակում և, զլխավորապես, «միջակ» կամ «հորդոր» բննացրի երգերում, ուստի և միակողմանի է: Որպեսզի հատուկ շանդաղանանք տվյալ հնչյունաշարի բացարձակ բարձրությունը վերաբերող այս խնդրին, ասենք, որ երաժշտության տեսարանը «թուր» խաղաղրին էլ այդպիսի բարձրության հետ կապված զորություն է վերագրում (նույն տեղում, էջ 262), և որ դա նույնպես շոշափում է երևույթի փաստորեն մեկ, առանձին կողմը միայն:

42 Այս եզրակացությունն առայժմ վերաբերում ենք շարականի երգեցողությունը, ոչ միայն այն պատճառով, երաժշտածիսական մյուս մատյաններին՝ խաղաղրերին, զանձարաններին և այն դեռևս ըստ էության չենք անդրադարձել: Միջնադարյան երաժշտատեսական նյութեր կան, որոնց համաձայն «խոսքովայինը» կիրառելի է նաև առհասարակ երգչային ողջ ձայնածափայի ինչպես ամենալեբին, այնպես էլ ամենաստորին գոտիներում: Եկատի ունենք Յոթնաչորսյանրի («Նոթնագրեանք») նաև խաղաղրիական նշանակություն ունեցող այն հատվածը, ուր խոսվում է երգչային ձայնածափայի (ցածից-բարձր) «խոշակային», «լեզվային», «բմբային» և «զլխային» գոտիների մասին: Տարիներ առաջ օգտագործել էինք այդ հատվածը, ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 599 ձևագրի, անկախ նրա խաղաղրիական առումից (տե՛ս մեր հոդվածը՝ «Չայնի մասին ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում», «Բանբեր Մատենադարանի», 1962, հատ. 6, էջ 158—160): Այժմ էլ դեռևս հատվածիս խաղաղրերի մեղեդիական-զծային նշանակությունը չէ, որ կարող է գրադեցնել մեզ: Այլ՝ նրանցում «խոսքովայինի» ընդգրկման ընդհանուր տրամաբանությունը միայն: Բայց դրա համար ևս հարկ եղավ ի մոտո ծանոթանալ Յոթնաչորսյանրի տարրեր բնագրերի հետ, ըստ Մատենադարանում պահվող 20-ից ավելի գրչագիր ժողովածուների, ու հետազոտության ոլորտը ներթաշել մեզ հետաքրքրող հատվածը պարունակող ևս երեք ձևագիր, որով ձեռքի տակ արգեն ունենք շորս բնագիր (Ա, Բ, Գ, Դ): Գրանցում դիտարկվող հատվածն իր բոլոր մանրամասների մեջ թեև միատիպ չէ, բայց մեր ասելիքը հաստատելու հիմքերը տայիս է: Ա. բնագրի (Մատենադարան, ձև. № 7117, էջ 42ա—42բ), առանձնահատկությունն այն է, որ նրանում կրճատ են բերված երգչային ձայնածափայի նշված գոտիներին հատուկ եղանակների խաղաղրությունները: Այնպես, որ վերջիններից պարզապես դուրս են մնացել մի ամբողջ շարք խաղաղրեր: Այսուհանդերձ, «խոսքովայինը» դժվար չէ նկատել «խոշակային», այսինքն հիշյալ գոտիներից ամենաստորինին վերաբերող խաղաղրության մեջ: Բ. բնագրում (Մատենադարան, ձև. № 1903, էջ 275ա—275բ), որտեղ խաղաղրություններն արգեն իրենց բնական ծավալով են ներկայացված, նույն «խոշակային» գոտում, բացի «խոսքովայինից», երևում է «թուրը» ևս, որն, ի դեպ, երկու կետով հանդիպում է նաև «զլխային» հնչյունաշարում: Գ. բնագրում (Մատենադարան, ձև. № 599, էջ 37ա—37բ), բացի նշված կետերից, «խոսքովայինը» «խոշակային» գոտու խաղաղրությունում կիրառված է երկու անգամ: Իսկ Գ

հարցին, թե ինչն է միավորում տարրեր ձայնեղանակներում հնչող «խոսքովաչինի» մեղեդիական-գծային, վերջին հաշվով, այլադան պատկերները: պատասխանում է էրդրումեցին իր վերորերյալ բացատրությամբ («ոլորաբար երկարէ»): Այն կարող է բավականին ընդհանուր թվալ: Եվ դա ճիշտ այդպես էլ է, բայց գիտակցել հարկ է, որ պայմանավորված է՝ դարձյալ և դարձյալ՝ հայկական միջնադարյան երգեցողության մեջ հանկարծաբանական ազատությանը հատկացված դերով:

Զարիաւոք



Վերջապես իմանալի է, որ Վիլոտոն ևս⁴³, էրդրումեցուց անկախ, և նրանից ավելի բան հարյուր տարի վերջ, գրեթե նույն բանն է վկայում «խոսքովաչինի» մասին: «Այս նշանի կապակցությամբ մեղ համար երգված օրինակի համաձայն, — գրում է նա, հիշեցնելով Կահիրեի հայոց մայր տաճարի սար-

բնագրում (Մատենադարան, ձեռ. № 2618, էջ 255ա—255բ), այս ամենին գումարվում է «խոսքովաչինի» կիրառումը «զլխային» հնչամասում էլ: Ստորև բերում ենք հատվածիս համեմատված-հեղրաված բնագիրը, հիմք ընդունելով № 2618 ձեռագիրը, որտեղ այն առավել ամբողջական է: «Ըսկ եղանակ[ը] գոյացեալ այսորիկ են: [են] ի յեղանակս որ լեզուս շարժին, և են՝ որ ի բիման, և են՝ որ ի գլուխն, և են՝ որ ի խոշակն»:

Այս է Ղլխոյն որ ասէ: *ա՜ն րի / Բ) ԲԲԲ...*

Ձեպուիկն: *ա ԲԲ ԲԲ ԳՂՂՂՂ*

Բիման: *ժ ԾԾ Ծ Ծ ԾԾ Ծ*

Սուշակն: *է Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ*

Ինչպես երևում է, այստեղ կան նաև խաղեր, որոնք հատուկ են տվյալ հնչամասին (չեն կրկնվում մյուսներում): Առայժմ մի կողմ թողնելով դրանք, «խոսքովաչինի» (և «թուրի» էլ) մասին կարող ենք եզրակացնել, որ խաղազրկերս, իրոք, նույնիսկ երգչային ընդհանուր հնչունաշարի շրջանակներում (անկախ որոշակի ձայնեղանակից և դիմող ձայնից), զգալի շարժունակ են՝ կիրառելի լինելով, ինչպես «զլխային», նույնպես և «խոշակային» հնչամասերում ընթացող եղանակների (կամ ախպական պատւյանների) նշանագրության մեջ:

⁴³ Ի դեպ ասենք, որ վաղուց ընդհանրացած ավանդույթի համաձայն, Description de l'Égypte արժեքավոր երկասիրության մեղ հետաքրքրող հատվածները միշտ վկայակոչում ենք հրատարակչի՝ Վիլոտոյի անունով:

կազմագապեալի տված բացատրութիւններն ու համապատասխան կատարումները,— երևում է, որ այն ցույց է տալիս ձայնը ոլորելով երկարելու մի ձև»⁴⁴:

«Սուր». հայկական խոսք է: Համապատասխան նշանը երկարեցված «շեշտի» գծագրածնն ունի և մեղեդիական-գծային դորութեամբ էլ մտա է վերջինիս:

Ուշ միջնադարի ընթացքում «սուրը» դարմանալիորեն շփոթվել է «թուրի» (ու, այդ հանապարհով, նաև «երկարի» և անգամ «խոսրովայինի») հետ: Այս պարագան իր անդրադարձումն է գտել թե հայկական և թե եվրոպական մասնագիտական գրականութեան էջերում, սկսած XIX դարի երկրորդ կեսից⁴⁵:

Թվում է՝ շփոթն առաջացել է խաղաղրիս «սուր» անվանումը «սուսեր» իմաստով հասկանալու հիման վրա, որպիսի դեպքում այն իրոք «թուրին» շատ մոտիկ պետք է նկատվեր: Սակայն քննարկվող խոսքի երաժշտական նշանակութիւնն այլ է եղել միջնադարում: «Սուր—գրում են «Նոր բառգրքի» հմուտ հեղինակները— Օշոհ, Acutus. ըստ երաժշտաց՝ է մակդիր աղգոյ և նուրք ձայնի կամ լարի. որ և սոսկ, բարակ»⁴⁶:

«Սուրին», որպես խաղաղրի անվանակոչութեան, անդրադարձած հնագույն հեղինակներից են Շրլոդերը և Խաչատուր էրզրումեցին: Առաջինը ճիշտ «Acutus» է թարգմանել «սուրը»⁴⁷: Երկրորդն արձանագրել է «սուրի» կատարման կերպը բնութագրող մի խոստուն գիտում, ասելով, «Չվանդ բարակացուցանէ, սրէ և նրբացուցանէ»⁴⁸:

Ավելի ուշ վիլյոտան «շեշտի» հետ հարաբերեց «սուրը»⁴⁹, իսկ Պ. Վագներն ընդգծեց նրա կրկնակի տևողութիւնը⁵⁰: Վերջին երկու կետերի խելամիտ համատեղումը գտնում ենք Իգն. Կյուրեղյանի ձևակերպած բացատրութեանց մեջ:

⁴⁴ G. Villoteau, Description de l'Égypte, t. XIV, Paris, 1826, p. 330.

⁴⁵ Ե. Տնտեսյանն, օրինակ, հիմնախաղերի իր կազմած տախտակում «սուր և թուր» ասելով՝ երկու նշանները միասեղ էր առաջ բերում (տե՛ս նրա՝ «Տնտեսյան շարականի երգաց խաղերուն», «Ժամանակ», Կ. Պոլիս, 1864, № 45, Հավելված: Հիշեցնենք, որ դրա վրա հատուկ ուշադրութիւն է դարձրել Ռ. Աթայանը, որ արգարացված է համարում Տնտեսյանի մոտեցումը: Հմմտ. «Հայկական խաղային նոտագրութիւնը», Երևան, 1959, էջ 177): Եվրոպական հրատարակութիւններից նշենք թեկուզ է. Գալիդի և Մ. Լյուսի աշխատութիւնը, որտեղ «սուրն», ու «թուրը» մեկնաբանված են որպես կատարման բնույթով (ասենք՝ յուրաքանչեւ հատու նկարագրով) մոտիկ իրակութիւններ, որոնք տարբերվում են իրենց շարժման ուղղութեամբ (լինելով, համապատասխանաբար՝ վերընթաց և վարընթաց): Ernest David et Mathis Lussy, Histoire de la notation musicale depuis ses origines, Paris, 1882, p. 65.

⁴⁶ «Նոր բառգրք հայկազեան լեզուի», հատ. Բ.:

⁴⁷ Thesaurus Linguae Armenicae, էջ 244:

⁴⁸ «Խաչատուր էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտութեան տեսարան», ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր», 1966, № 11, էջ 71:

⁴⁹ G. Villoteau, նշվ. աշխ., էջ 330:

⁵⁰ Պետք է ասել, որ «շեշտը», որպես առօրեական նշան, «սուրի» հետ հարաբերվել է դեռևս միջին դարերում: Ահա թե ինչպես է մեկնաբանում առօրեական նշանները Վարդան Արևելցին «Արդ, ասի շեշտ՝ սուր, բութ՝ ձանք կամ խոնարհ, կամ մանր, պարույկ՝ շուրջառ, երկարն՝ երկայն, սուղ՝ կարճ կամ սոսկ, թու՝ խոշոր կամ թանձր, սոսկ՝ ոգորկ կամ լեռշկ, ապաթարց՝ առանց, ենթամնայ՝ ներքադրական, ստորապ՝ ներբևհատ»: Տե՛ս Վարդան Արևելցի. Մեկնութիւն բերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1972, էջ 157:

⁵⁰ P. Wagner, նշվ. աշխ., էջ 73

«Ունինք սառ ըսված խաղը,— դրում է նա,— հայանի կտեսնվի ձեռն՝ որ ուրիշ բան չէ, բայց եթե երկայն կամ կրկին շեշտ մը, որով բսել է թե՛ պետք է ձայնը շիտակ բարձրացունել, բայց կրկին ժամանակ երկայնելով բան զշեշտը»⁵¹: Եթե սրան ավելացնենք էրզրումեցու արձանագրած դիտումը ևս, ապա «սուրի» երգչային գորութեան լուսարանութիւնը առավել լրիվ կլինի (ինչքան էլ որ վերջինիս նշած կատարողական նրբութիւնները տեսողական ընկալման ենթակա պարագաներ չեն): Ստորև բերում ենք խաղափորման մեջ «սուր» նշանն ընդգրկող հատկորոշ մի օրինակ՝ աղաշխարհութեան «Ջանապական զհոգևոր զգանձն» Գձ ողորմյայի Բ. տունը⁵²:

Մեղակ

Զբանկ հոգ - տյ ի մոյ խակ - սե . ցի
և քի ղի ան բա . րու ևակ որբ
ալ առ լեզ մի այն պա - ղա - ին բա . ռն բար փոր - կիլ .
ևեա - յեա ի մե - դու - ցեալ ծա - ոայս

«Սուրն» այստեղ դուգորդված է դարձի երրորդ փանկի հետ («ալ առ Բեզ» և այլն): Հստակ ընկալելի են՝ նախորդ փանկերի համեմատութեամբ նրա («սուրը» կրողի) ավելի բարձր դիրքը, ինչպես և շափական երկու միափորի արժեքով տեսողութիւնը: Ինչ վերաբերում է դիտարկվող փանկի կատարողական առանձնահատկութիւններին, դրանց հաշվառումն էլ օգտակար կլինի առայժմ այն տեսակետով, որ զեթ տեսականորեն կարող ենք ըմբռնել թե ինչի հիման վրա են տարբերվել, ասենք՝ «սուրն» ու «երկարը» միջնադարում:

«Թուր». Այս նշանի գծագիրը կորածն «սուրի» տեսքն ունի: Խաղաղորութեան արվեստում հնուց ի վեր նկատի է առնվել նրա անվանակոչութեան բա-

51 Իգն. Կլաւեղյան, Լուսարանութիւն խաղից և Երգեցողութեան շարականաց, «Քաղմա-վէպ», Վենետիկ, 1904, էջ 126:

52 ՀճճՊ $\frac{50p}{281}$ (ուղղել ենք պարզագույն խաղաղրերին վերաբերող մի երկու դրափոխու-թիւն):

ուարանային իմաստը⁵³: Այստեղից պարզ է, որ այդ անվանակոչությունը նախապես կապված է եղել ձեռնավարական (խմբավարական) լայն, գորեղ և բնորոշ մի նշանի, որով պահանջվել է նաև ձայնի համապատասխան շարժում ու կատարման համապատշաճ նկարագիր: Ինչպես գրում է էրզրումեցին, «սա դայն վանգ նշանակէ, որ թրոյ նմանեցեալ է»⁵⁴:

«Սուրի» և «խոսրովայինի» կիրառության պայմաններն ու կերպերը պարզարանելուց, ինչպես և այն բանից հետո, երբ ցույց տվեցինք, որ «խոսրովայինի» նման՝ «թուրը» ևս ձայնեղանակի հնչյունաշարի վերին սահմանների հետ հաստատուն կապեր չունի բնավ, վերջինիս մեղեդիական դժային գորությունը հստակելու համար մնում է լուծել մի խնդիր. վերընթաց թե՛ վարընթաց շարժում է ենթադրում այն:

Հայտնի է, որ Վիլոտոն նշել է «թուրի»-ն համապատասխանող մեղեդիական պտույտի վարընթաց ուղղությունը: «Այս նշանը ցույց է տալիս, թե պետք է ձայնը ուժգին և շեշտակիորեն վերից վար իջեցնել»⁵⁵, գրել է նա, շոշափելով կատարման կերպը ևս:

Վազները մատնանշեց խաղազրիս վերընթաց նշանակությունը, և մեղեդիական «քայլ առ քայլ, portamento-ի կերպով»⁵⁶ շարժումը: Վերջին կետը «թուրի» գորությունը ենթադրվող մասնավոր պարագա է: Անկախ դրանից, «թուրի» մեղեդիական պտույտի շարժման ուղղությանը վերաբերող երկու գիտնականների դիտումները լրացնում են իրար:

Մեր հետազոտության տվյալներով այդ պտույտը կարող է ունենալ թե՛ վերընթաց, և թե՛ վարընթաց շարժում: Դա ժամանակին նկատել է նաև Իգն. Կյուրեղյանը ու նշել այն⁵⁷, սակայն, ինչպես այլ դեպքերում, այս առթիվ ևս, առանց մտահոգվելու համապատասխան օրինակների որոնման, բնորության և համեմատության հարցերով⁵⁸: Այժմ ուղղակի դրանց անգրադաոնալով կատարված մանրակրկիտ քննության արդյունքները ներկայացնելու ժամանակն է ճիշտ:

Մանոթանանք ամբողջական խաղափորումների երեք օրինակների հետ, որոնցում երգչային միակ նոր նշանը մեղ դբաղեցնող խաղազիրն է: Առաջնում, որ է՝ Աստվածածնի ավետյաց կանոնի Գկ շափավոր համբարձիի երրորդ տունը (մինչև դարձը)⁵⁹, «թուրը» հանդիպում է երկու անգամ. «Ամովսածնին»

53 Շրյոդերը «թուրը», որպես խաղազրի անուն, թարգմանել է «Acinaces» (նշվ. աշխ., էջ 244):

54 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 11, էջ 72:

55 G. Villoteau, նշվ. աշխ., էջ 330:

56 P. Wagner, նշվ. աշխ., էջ 74:

57 Տե՛ս նրա Լուսարանություն խաղից և երգեցողության շարականաց, «Թագմավեպ», 1904, էջ 126:

58 Դրա փոխարեն, հեղինակն բնոճանրապես, և «թուրի» քննարկման կապակցությամբ առավել ևս, կատարողական նրբությունների մի ամբողջ շարք այնպիսի մանրամասներ է ձգտում պարզարանել («թուրի» դժագրածևի գրչական տարբերակներին անդամ վերադրելով այլազան նշանակություններ), որ այդ ամենի մեջ զլխավոր հարցերի տարրալուծման վտանգ է ծագում: Այսուհանդերձ, Իգ. Կյուրեղյանի խաղաբանական գրվածքներն առհասարակ շահեկան են անկասկած:

և «բնութեան» խոսքերի առաջին վանկերի զուգորդությամբ: Երկու դեպքում էլ խաղափորս արտահայտում է վերընթաց շարժումով միևնույն պատույթը⁶⁰:

Զափաւոր

Այ սօր ի ինչ լըց նաւ Ա լույ ռաժ
 Գին ըսք ըսո որ ի քըր կու թեան
 հա սա ռա կաւց որ լեալ եր
 Ըան ընու թեան ալ Գի մարդ կան
 ա հա կոյս լղաւ ցի և ծըն ցի որ
 դի պնդ մնց յայտ նեալն Աս ռաժ

Երկրորդ նմուշը ապաշխարության Աձ շարքից «Զառաւօտու զօրհներգութիւնը» շափափոր մանկունքի առաջին տունն է⁶¹ (տե՛ս էջ 64):

Այստեղ «թուրին» համապատասխանում է վարընթաց շարժումով մի պատույթ (տե՛ս «բնկալ» խոսքի երկրորդ վանկը):

Վերջապես երրորդում, որտեղ «թուրը» դարձյալ երկու անգամ է կիրառված, հնչում են համապատասխան պատույթի թե վերընթաց, և թե վարընթաց տիպերը⁶² (տե՛ս էջ 64):

Մարտիրոսաց Դձ շարքի «Որք հաղորդեցան» շափափոր հարցի առաջին

⁶⁰ Նկատելու արժանի մանրամասն է հետևյալը. երկրորդ անգամ «թուրը» դժագրված է այնպես, որ նրա կորությունն ընկնում է ձախի վրա:

⁶¹ $\frac{59p}{205}$

⁶² $\frac{300m}{959}$

Զարիաւոր

Զա - րա - ւօ՛ սու՛ զօրհ՛ ներ՛ զու՛ թի՛ նքս՛

ժառք՛ զս՛ սի՛ իսու՛ թնա՛ ըրո՛ իս՛ թե՛ կա՛ իսա՛ - զա՛

նք՛ սիա՛ - ռայ[.] ի՛ կ՛ սիւսե՛ կուսե՛ Է՛ . կե՛ .

դեյ՛ - ւոյ՛ . իս՛ սիա՛ - հեա՛ Է՛ իսա՛ - զա՛ -

սիա՛ - թնա՛ն:

Զարիաւոր

Որ՛ հա՛ - զոր՛ դե՛ զան՛ շար՛ զս՛ - իսա՛ - նա՛

իսյ՛ թիս՛ սու՛ . սուսք՛ հայ՛ իսա՛ սիս[.]

Է՛ դե՛ - իսա՛ թե՛ կայ՛ սայ՛ ժա՛ . ռա՛ - զան՛ թե՛ սե՛

ժառք՛ սիս՛ զայ՛ սու՛ թե՛նե՛

տունն է սա (մինչև դարձը), որում «թուրը» զուգորդված է «սուրբ» խոսքի, ինչպես և գրական բնագրի վերջին վանկի հետ:

Չեռքի տակ ունենք «թուրի» կատարողական հետաքրքիր այլ մեկնաբանություններ ևս, որոնք հանդիպում են նաև «զարկ» խաղաղորդ պարունակող օրինակներում: Դրանք կտեսնենք իր տեղում: Այստեղ ևեթ նշենք սակայն, որ այդ, ինչպես և վերը բերված մեկնաբանությունները միացնող ընդհանուր, և առհասարակ «թուրի» նշանակության մեջ կայուն իրակությունը հանգում է՝ վերընթաց թե վարընթաց՝ ավելի ուղղաբերձ մի շարժման ու նրա հատու, շեշտակի կատարմանը:

«Ջարկ». նման մի հարթության վրա է գտնվում նաև «զարկին» հատուկ տարածե պտույտները միավորող կայուն հիմունքը: Բայց այն՝ ավելի լայնակի-հորիզոնական շարժում է ենթադրում (վեր-վար կամ հակառակ ընթացքի ալիքավորումով), այլև մեղեդիական պտույտի ձիգ, պրկված կատարում:

«Ջարկի» նշանը մի բաղադրյալ գծագրածև է, արտաքննապես բաղկացած «բուխից» և «փուշից»: Բայց, դրանց գումարը չէ, որ ներկայացնում է համապատասխան մեղեդիական պտույտը, ինչքան էլ նկատելու արժանի հանգամանք է հետևյալը, այն՝ տեսողությամբ իրոք մեծ վանկ է ցույց տալիս, որն, ըստ հարկին, կարող է փոխվել մեծագույնի: «Ջարկի» մեղեդիական պտույտն ինքնուրույն է, իսկ նշանը հայտնի է նաև «կուռ պրեհիկ» և «առուզիր» անվանակոչություններով⁶³, որոնց կանոնադրանքն իր տեղում: «Ջարկ» անվանումը, սակայն մյուսներից ավելի է տարածվել (թվում է՝ հատկապես ուշ միջնադարի ընթացքում), ուստի նախ խոսենք վերջինիս մասին: Նրա բառարանային իմաստն է՝ «զարկումն», «զարկումած»⁶⁴, զարկանեմ բայից, որի հիմքում հարկանեմ-ն է⁶⁵: Այս իմաստով, սակայն, «զարկ» խոսքը կապված է «փուշ» խաղաղորդին: Ինչպես պարզաբանել ենք վաղուց, «փուշի» պաշտոնն է ցույց տալ երգեցողության մեջ ուժային (դինամիկ) շեշտադրության ենթակա միջակ վանկը, և որ այն՝ որպես այդպիսին կոչվել է «հարուկ» (հիշյալ հարկանեմ-ից) ու «զարկ» ևս⁶⁶: Երկուսն էլ նույն արմատից, որով և նույնիմաստ խոսքեր, որոնք յուրովի փոխարինել են «փուշ» անվանակոչությանը: Կա նաև սրա օգտին խոսող մի այլ հանգամանք: Վերը տեսանք, որ օժանդակ նշանների մեջ, տառ-խաղերի համակարգում, «զ» տառը ևս «զարկ» է նշանակում: Արդ՝ այդ տառը գրչագիր շարակնոցներում առավել հաճախ «փուշ» կրող վանկի տակից է դրված լինում ճիշտ⁶⁷, որով իր բնական բացատրությունն է գտնում այն, թե ինչու⁶⁸ և ինչպես է «զարկը» դարձել «փուշի» երկրորդ անվանումը:

63 Տե՛ս մեր հոդվածը՝ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9, էջ 121:

64 Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հատ. Ա, Վենետիկ, 1836:

65 Ըր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, 1973:

66 Տե՛ս մեր հոդվածը՝ Պարզազույն խաղաղորդությունների վերծանության փորձ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1971, № 2, էջ 148—149:

67 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1576 (մեր հիմնական երկու աղբյուրներից մեկը՝ գրչագիր շարակնոցը), էջ 13ա, 14բ, 15ա, 19ա, 22բ, 30ա, 42ա, 46բ և այլուր (երբեմն շփոթվելով «զ.»-ի հետ):

68 Հարկ է ասել, որ «զ.» տառը հազվադեպ հանդիպում է նաև մի երկու այլ նշանի՝ «վեր-նախադի», «բենկորձի», «խոսքավայինի» տակ (տե՛ս նույն տեղը, էջ 15բ, 158բ, 178ա): Սա

Այս ամենից պարզ է, որ մեզ զբաղեցնող և մեծ, բայտ հարկին նաև մեծազույն վանկի զորութունն ունեցող խաղանշանի քննարկվող «զարկ» անվանումը պետք է այլ մեկնաբանություն ստանա: Մեր ձևերի տակ եղած տվյալների համաձայն՝ մեղեդիական-զծային բավականաչափ բարդ խաղազրի այդ անվանումն սկզբնապես սերված է եղել հրեական միջնադարյան պաշտամունքային երգեցողության նշաններից «Zarqa»-ի անունից և հետո ձուլվել հայկական «զարկ» խոսքի հետ. ու այդպես հարատևելով, տեղիք տվել, որ վերջինս, ուշ միջնադարի ընթացքում, վերաբերվի թե «զ.» օժանդակ նշանին, թե «փուշ» կոչվող պարզ խաղազրին, որպես նրա երկրորդ անվանումը, և թե (անդիտաբար) այստեղ վերլուծվող բարդ խաղին:

Անհրաժեշտ է նշել, որ հրեական միջնադարյան պաշտամունքային երգեցողությունը հայ մասնագիտացված երգաստեղծության մշակների լսողաշարից դուրս չի գանվել բնավ. այլ՝ իրավացիորեն համարվել է փոխադարձ կապերի մշակման արժանավորագույն ազդյուններից մեկը, բուն իսկ երուսաղեմում⁶⁹: Հրեական միջնադարյան երգչային նշանների՝ նեգինտանների համակարգում բավականին ուշադրով միավոր է Zarqa-ն՝ մեծազույն տեղություն մի յուրահատուկ շեշտ⁷⁰: Մի կողմ դնենք նշանիս գծագրածևի խնդիրը⁷¹: Համապատասխան մեղեդիական պատույտը երկարածիգ ոլորուն վարքնթաց մի կարագիծ է ներկայացնում, նախադաս վերքնթաց թռիչքով: Նրա անվանակոչությունը, որ, տվյալ դեպքում, ավելի է հետաքրքրում մեզ, բառացի նշանակում է «սերմանող»⁷²: Եվ այստեղից էլ պարզ է, որ այն՝ սկզբնապես եղել է ձեռնավարական-խմբավարական նշանի անվանում: Նշան, որն յուրովի նմանակել է սերմանողի ձևերի՝ տաղածության մեջ հուժկու կորագիծ պատկերող լայն շարժումը (պահանջելով համապատասխան բնույթի մեղեդիական պատույտ), և որն հետո մարմնավորվել է նաև որպես հատուկ գծագրածև:

Այս բոլոր պարագանների հաշվառումն ընդհանուր առմամբ ճիշտ հունի

նշանակում է, որ հիշյալ տեղիներում տվյալ խաղազրի զորության վրա պետք է գումարվի նաև «զարկի», որպես կատարողական հնարանների խմաստը:

Բայց այն, որ դիտարկվող տառ-խաղը առավել հաճախ վերաբերում է «փուշ» կոչված վանկին, անկասկած ցույց է տալիս վերջինիս շեշտադրական նշանակության խիստ մոտիկությունը «զարկի» հետ: Մոտիկություն, որի հիման վրա էլ, ի վերջո, գրեթե նույնացվել են այդ երկու, նախապես երանգային որոշ տարբերություններ ունեցած, երգչային նշանները:

69 Երուսաղեմը ծառայել է հայ երաժշտության հարաբերությունների խորացմանը նաև լատինական, բյուզանդական, զոպտական, հարենական ու արարական արվեստների հետ: Եվ առհասարակ, հայկական միջնադարյան մասնագիտացված երգ-երաժշտության, ինչպես և խաղազրության արվեստի զարգացման մեջ խաղացած դերի տեսակետից մեր գաղութների շարքում հնագույնն ու կարևորագույնը՝ Երուսաղեմի հայ վանական գաղութն է անկասկած, Մեծ Հայքի և Դիլիկյան հայկական պետության հետ ունեցած բազմապիսի կապերով (իրենց նշանակությամբ դրանից հետո են գալիս՝ Երանի ու Եզխատոսի, Արիմի և Քուրբիայի հայ մշակութային կենտրոնները):

70 Այն էլ նշենք, որ մնացած նեգինտանները եւ զլխավորապես մեղեդիական ամբողջական պատույտներ են ցույց տալիս, և որ դրանց միակցությունն առհասարակ կոչվում է «երաժշտական շեշտերի համակարգ»:

71 Արտաքին ձևով Zarqa-ն հիշեցնում է մեր «էկորճը»: Միջնադարյան երգչային նշանների ազդային տարրեր համակարգերը բազմաթիվ ժամանակ առավել շփոթեցնող պարագան ճիշտ այս կեան է: Այսինքն՝ տարրեր համակարգերում տարրեր զորություն ունեցող նշանների արտաքին ձևի նմանությունը:

⁷² Description de l'Egypte, t. XIV, Paris, 1826, p. 476.

մեջ է դնում հայկական «զարկի» քննության ընթացքը, այլև օգնում է ըմբռնելու խաղաղորիս մյուս երկու անվանակոչությունների իմաստը: Մեկն է՝ «կուռ զրեհիկ», ինչպես նշել ենք: Այն բաղկացնող խոսքերը փոխառություններ են, բայց վաղուց հայացված («կուռ»-ը՝ խալդերենից կամ կովկասյան լեզուներից, իսկ «զրեհիկը» պահլավերենից, ուր կան շրահ և շրեհ արմատները)⁷³: Բառագործության առարկայական նշանակությունն է՝ պինդ զրահավոր⁷⁴. որ և միջնադարյան երգչին կհուշեր, թե համապատասխան մեղեդիական պտույտին անհրաժեշտ է հաղորդել զորեղ, հավաք հնչողություն (կատարողական հնարանքների օգնությամբ):

Վերջապես, «զարկի» երրորդ անվանակոչությունը՝ «առուզիր», բաղկացած է «ու» շաղկապով միացած երկու բնիկ հայկական խոսքերից. «առ» և «զիր»: «Առ»-ը՝ «առումն», «գրաւումն», «յափշտակություն» իմաստներով⁷⁵, երգչային իրակությունների հարթության վրա մոտիկից հիշեցնում է իտալերեն Attaccare (բառացի՝ հարձակվել) խոսքի հրամայական ձևի՝ Attacca-ի օգտագործումը որպես ուրույն հասկացություն: Attacca երգչային արվեստում վաղուց ի վեր նշանակում է ձայնալարերի միակցության այն վիճակը, որն անհրաժեշտ է անմիջականորեն երգել սկսելու, տվյալ հնչյունը վերցնելու (մի տեսակ՝ «առնելու», «գրավելու») համար⁷⁶:

«Դիր»-ի բառարանային նշանակություններն են՝ «դրութիւն») (մէտու, positio, situs իմաստով), այնուհետև՝ «կերպ և ձև դրութեան», այլև «շափ» կամ «գաղափար» («կաղապար») ⁷⁷, բոլորն էլ այս կամ այն շափով մոտիկ առոգանական որոշ իրակությունների ու դրանով իսկ՝ նաև երգչային հասկացությունների: Ավելի մասնահատուկ մի հարթության վրա, «զիր» ասելով միջնադարում, առոգանության ու երգեցողության մեջ ևս, որպես ընդհանուր կանոն, «բութն» են հասկացել⁷⁸, ինչպես դա հետևում է XII դարի Կիլիկյան նշանավոր գիտնական, գրչության արվեստի հմուտ Արիստակես Գրչի տված բացատրություններից⁷⁹: «Առուզիր» բառակապակցության մեջ սակայն, «զիրի»

73 Շ. Անտոյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ:

74 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա:

75 Նույն տեղում, էջ 281:

76 Музыкальная энциклопедия, т. 1, М., 1973.

77 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա (նշվ. հրատ. ք):

78 Նույն տեղում: Տե՛ս նաև «Թանրեր Մատենադարանի», № 9, էջ 121:

79 Դրանք շարադրված են հեղինակի՝ «Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարագրութեամբ արարեալ զսա Արիստակեսի զրչի ի խնդրոյ բաղմաց յարհեստ գրչութեան» խորագրված երկում, որ հրատարակված է (տե՛ս Ա. Խաչեչյան, Գրչության արվեստի լեզվական-բերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 227—286), մեզ հետաքրքրող հատվածում՝ արհեստագիտական պատճառներով՝ առանց առոգանության նշանների և խաղաղորների: Վերջիններիս այտեղ անհրաժեշտ է զեթ հակիրճ անգրագանալ, որ կանենք՝ ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2373 ձեռագրի: Սակայն նախապես ծանոթանանք հիշյալ հատվածին, որն ըստ ամենայնի շահեկան է: Խոսքը մասնավորելով դրական բնագրի կառուցվածքը երևակող արոհության, առոգանության և այլ նշանների շուրջ, Արիստակես գրիչը հաստատում է հետևյալը.

«Մորաք պակաւ թէ որ արնէ, ստուգիւ իսկ ճանաչէ որիչ որիչ և զտեղեան պիտանին և զիրական գերալրութեամբն գերունակ զգիրսն զլիազիր, զանշնշտան և զշնշտաւորան, իսկ և զաէրունի շնշտաւորան, զհենգն և զհարցուկ, զբաշս և զոյժ, զզարկ և զզիր, զստոր և զկիսաստոր, որ է ներքնարութի, բացաս, զմիաստիք, զերկուտիք՝ որ ասի աճն, զպարոյկ, զենթամնայ, զգրաղարձան բովանդակ լրին՝ զսկսման տողիցն և զկատարածին, հանգերձ սեղհական և հմտական ննթ[ա]կապովքն...» (նշվ. հրատ. ք, էջ 229, նշվ. ձեռ. ք, էջ 161ա—161բ):

իմաստը մտտ է նրա բառարանային նշանակություններից վերն հիշատակված «շափ» ու «կաղապարին», և ահա թե ինչու :

Զարկի մեղեդիական պատույտը ինքնուրույն է, ասացինք, և չի ներկայացնում իր իսկ գծագրածեր գոյացնող «բուֆի» և «փուշի» գորությունների գումարը: Բայց եթե այդպես էլ չիներ, դարձյալ «դիրք», տվյալ դեպքում, չէր կարող լինել «զարկի» գծագրածերի մեջ մանող «բուֆը», թեևուզ այն պատճառով, որ վերջինս հիշյալ գծագրածերի բաղադրիչներից առաջինն է, այնինչ «առուդիր» կապակցության մեջ «դիրք» երկրորդ խոսքն է: Ըստ բոլոր տվյալների, «առուդիր» բառակապակցությամբ բանաձևված են «զարկի» մեղեդիական պատույտի սահմաններին՝ սկզբին ու վերջին վերաբերող կատարողական հանգամանքներ: Ընդ նմին, եթե «առ»-ը պատշաճում է այդ պատույտի սկզբին (ինչպես հետևցրինք վերը), ապա «դիրք» էլ հարմարվում է վերջին, որպես ամփոփող, ամբողջականացնող ազդակ: Որով երգչին հիշեցվել է, թե տվյալ պատույան անհրաժեշտ է հատկապես բոլորակել, նրա «շափն» ու «կաղապարը» լրացնել, ավարտել: Սույն եզրահանգման ճշտությունն ստուգվում է նրանով ևս, որ այն՝ գրեթե լրիվ համաձայնվում է «կուս դրեհիկ» պատկերավոր արտահայտության հետ, որով նույնպես հասկացվում է կենդանի հնչողությամբ մեղեդիական ինքն իր մեջ ամբողջական, հստակ սահմանագծված մի պատույտ:

Նախընթացից պարզ է ուրեմն, որ «զարկի» գծագրածեն դգալի պայմանական է: Իսկ նրա երեք անվանակոչություններում նշանիս գորությունը վերաբերող իմաստն հանգում է՝ համապատասխան մեղեդիական պատույտի կատարման կերպի, այդ ընթացքում երգչային ձայնի շարժման բնույթի (բայց ոչ ուղղություն), այլև հնչողության նկարագրի ծանուցմանը:

«Զարկի» մասին միջնադարյան մատենագիրների ասույթներ մեզ գրեթե չեն հասել: Ունենք վերոհիշյալ Արիստակես գրչի (XII դ.) և Հովհաննես գրչի

Իրական է, որ այստեղ Արիստակես գրիչը հաշվի է առնում ոչ միայն արձակ, այլև՝ միջնադարում միշտ երգի հետ կապված՝ շափածո խոսքը: Որով նա հաստիկ ընդգծում է՝ առղերն ու տներն իրարից բաժանող «բացատները» (իմա՝ դադարների) նշանակությունը: Միաժամանակ, ավելի լայն մի հարթության վրա, հեղինակը նշում է տրոհության դերը, հիշատակելով «ստորն» ու «կիսաստորը» և՛ ընդհանուր առմամբ՝ մյուս կետերով ենթադրվող «բացատները»: Այնուհետև, «հարցուկը» իրավացիորեն դիտելով որպես «պարույկի» գորությամբ ենթադրվող ելևէջային մասնավոր (առոգանական) մի արտահայտություն, առավել ընդհանուր դժերով առած՝ «պարույկ» ասելով հեղինակն հասկանում է տարբեր (բարձրության) հնչյուններ զոգող աղդակը, և նրա մի շարատեսակ զուգահեռ տեսնում «ենթամնայի» մեջ: Եվ վերջապես, որ առավել կարևորն է, դիտնականը շեշտի մի ամբողջ շարք տեսակներ է թվարկում, որոնք անհրաժեշտ է տարբերել առոգանության (ու, դրական բնագրի միջնորդությամբ, նաև երգեցողության) մեջ: Եվ նախ՝ առհասարակ «շեշտուտը» (վանկերն) ու «տերունական շեշտուտները», որոնք ընդհանրապես չառ ավելի ընդգծված խոսքերի են վերաբերում: Այս և՛ հետևյալ շեշտերը, իրենց համապատասխան նշաններով: «Հենգը» (իմա հեղնական ելևէջը), «ձայնդարձ» խողադիրք հիշեցնող նշանով. «հարցուկը» (հարցական ելևէջը), «պարույկ» նշանով. «բաշք»՝ «երկարի» նշանով. «ոյժը»՝ «շեշտի» նշանով. «զարկը»՝ «փուշի» նշանով և «դիրք»՝ «բուֆի» նշանով:

Մենք առիթ ունեցել ենք նշելու, որ մեր Մատենադարանի № 2373 ձեռագրում (XIV դ. և 1633 թ.) Արիստակեսի բնարկվող երկն արտագրած գրիչը այնքան էլ հմուտ մեկը չէ: Նկատենք, օրինակ, բնագրում «գրաշա» (այսինքն հոգնակիով) հիշատակվող խոսքին «երկարի» լսի մեկ նշան վերաբերելու փաստը (մինչդեռ հիշատակվել էր՝ «երկարների» գոնե մի քանի տեսակների նշանները գծագրելու: Այսուամենայնիվ, նրա (գրիչի) կատարած աշխատանքը, մեզ այստեղ գրողիցն ու հարցերի առումով ևս, ընդհանուր առմամբ բավարար կարող ենք համարել և օգտվել նրանից՝ մինչև ավելի ընտիր ձեռագրերի հայտնաբերումը:

(XIV—XV դդ.) համառոտ նշումները: Վերը տեսանք, որ դրանցից առաջինը «զարկ» ասելով «փուշի» նշանն է առաջ բերում: Նույն կերպ է վարվում նաև երկրորդը, 1407 թվականին իր գաղափարած Հայսմավուրբի հիշատակարանում⁸⁰: Պետք է ասել սակայն, որ երկու հեղինակներն էլ «զարկ»-«փուշ» հարաբերությունն անդրադառնալիս՝ պարզ նշանների մի փոքր խումբ են միայն ունեցել աչքի առաջ, և ոչ թե, ասենք, խազազրերի ողջ համակարգը:

Գիտենք, որ խաչատուր էրզրումեցին քննել է շարականի խազերի համակարգը, որում առկա են թե «փուշը» (պարզ նշաններից), և թե «զարկը» (բարդներից) ու վերջինիս անվանումը հայերենով բացատրելով՝ հաստատագրել... «սա նշանակէ. զվանգ, որ բաղխէ, հարկանէ»⁸¹: Բայց սա՝ միևնույնն է՝ «փուշին» է պատշաճում: Շատ ավելի հետաքրքրական է Շրջողերի պատկերացումը: Նա tactus⁸² է թարգմանել «զարկը», որով հասկացվում է մեղեդիական ընդգրկուն մի պտույտ: Նոր ժամանակների մեր եկեղեցական երգիչ-կատարողներից «զարկը» «փուշից» դանազանելու անհրաժեշտությունն զգացել է Կահրեի հայոց մայր տաճարի սարկավազապետը, որը ֆրանսիացի երաժշտագետին տվել է մի նոր բացատրություն: Ըստ այդմ՝ «զարկն ուրիշ բան չէ, բան կրկնապատկված «փուշը»: Ուստի և «նրանով նշանակված ձայնի (իմա վանկի—ն. թ.) արտաբերումն ավելի ուժեղ է, բան «փուշինը»... «եթե վերջինս «թաւ» շունենա»⁸³: Վերապահությունը կոչված է հարթելու մի կնճիս, որն այնպես էլ չի հարթվում: Խնդիրն այն է, որ ըստ հիշյալ երգչի, «փուշն» ինքը՝ «լերկ հագագի», այն է՝ ձայնի մեղմ արտաբերության նշանն է⁸⁴ եվ նախ՝ դա է, որ քնով համոզիչ չէ:

Շատ շերկարենք: Հայկական «զարկի» զորությունը լոկ նրա անունից հետեցնելու և այն էլ հայերենով մեկնաբանելու փորձերի անհեռանկար լինելն հասկացան երկու դիտնականներ՝ Իգն. Կյուրեղյանն ու Պ. Վազները: Բայց նրանք էլ զնացին՝ «զարկի» արտաքին ձևի նմանը գտնելու ճանապարհով՝ միջնադարյան երգչային նշանների այլ համակարգերում (որ առավել շփոթեցնող շավիղների մեջ է ներքաշում հետազոտողին): Եվ պատահական չէ, որ երկուսն ևս (առաջինը ծանր բայերով, մանր քննելով նշանն իր բաղադրիչներով⁸⁵, երկրորդը՝ բավական ուղղաձիգ շարժումով)⁸⁶, ի վերջո հայտնվեցին փակուղու առաջ. կանգ առնելով լատինական Scandicus-ի վրա, ու, նրա օրինակով, «զարկին» վերագրելով երեք բարձրացող ձայնաստիճաններից բաղկացած մեղեդիական դժագրի նշանակությունը: Մի ենթադրություն, որ չի ամրապնդվում վերծանության հետ գեթ որևէ շափով կապված փորձերի տվյալներով, և ոչ էլ համեմատական ուսումնասիրության արդյունքներով:

Նշված ուղղություններով այսօր կատարվող աշխատանքները բերում են

80 Լ. Խաչիկյան, ԺՅ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 67. և Մաշտոցի անվան Մասնագրարան, ձև. № 4684 էջ 530բ (որ տե՛ս հատվածում հիշատակվող խազազրերի դժագրական նշանները):

81 ՉՍՍՀ ԳԱ «Լրտեր», 1966, № 11, էջ 72:

82 Thesaurus Linguae Armenicae, էջ 244:

83 G. Villoteau, նշվ. աշխ. էջ 331.

84 Նույն տեղում:

85 Իգն. Կյուրեղյան, Լուսարանութիւն խազից և երգեցողութեան շարականաց, «Բազմավէպ», Վենետիկ, 1903, № 7, էջ 317:

86 P. Wagner, Neumenkunde, նշվ. հրատ.-ը էջ 74:

համոզման, որ «զարկը», որպես երգչային մեծ նշանի անվանում-հասկացություն՝ հին հրեական Zarqa-ի հայացված ձևն է: Նրա դիմաց հայ հոգևոր երաժշտության տարրեր ձայնեղանակներում ստացվող մեղեդիական պրտույանների հիմքը կազմում է ձայնի՝ գլխավորապես հորիզոնական, ալիքավոր մի շարժում, որն հնչողության բնույթով (ինչպես հուշում է անունը), պետք է լինի կուռ, հավաք, ամուր: Վերջինս ապահովվում է կատարողական հնարաններով՝ ուստի և բնականաբար, հնարավոր չէ անդրադարձնել ձայնագրություններում: Մի կողմ դնենք այն:

Ստորև «զարկը» պարունակող բազմաթիվ խաղավորումներից հատուկ բնորված և համեմատված մի քանի վստահելի օրինակներ ենք բերում: Դրանք պետք է օգնեն մի բնդհանուր գաղափար կազմելու խաղագրի, նրա զորության մասին և դիտելու մեղեդիական պտույտի լայնակի ընդգրկման կայունության պայմաններում, ներքին ալիքաձև շարժման ուղղության (վեր-վար, թև հակառակը) աղատությունը:

Առաջին նմուշը ներկայացնում է Մարտիրոսաց կանոնի Գձ շարքից միջակ-չափավոր «Երանելի սուրբ հայրապետք» տեր երկնիցի առաջին տունը⁸⁷:

Միզակ Զափաւոր

Ե - ր ա - ն ն ի սուրբ հայ ըս պն՛ս |
 որք կա մաւ շար շա բն պալ |
 յանչև ա ղիլ պհամ բն ըս ըսու |
 յար ծա ես տր յա դս ըսու շնր |
 ի շնս զիլ զան ի Երս մնր

Նրանում «զարկը» երևում է 2-րդ և 4-րդ տողերի վերջում, և երկու անգամ, մեղեդիական համանման կապակցության մեջ, ցույց է տալիս միևնույն

ձայնաստիճանի՝ երկրորդ «փուշի» շրջազարդումը վար-վեր սահուն, բայց պիրկ շարժումով, որն և բերում է հաջորդ վանկի երկրորդ «էկորձին»: Կայուն կեան ալյատեղ պիրկ-սահուն ընթացքն է և բուն իսկ շրջազարդումը, այսինքն կշռույթային տվյալ գծագրում շորս բաղադրիչներից մեկը հիմնական համարելով՝ մյուսները որպես անցիկ կամ օժանդակ դրան ենթարկելը: Փոփոխական է ոչ միայն շրջազարդվող ձայնաստիճանի բարձրությունը համաձայնույթային (լադային) հնչյունաշարում, այլև այն, թե կշռույթային գծագրի առաջին երկու բաղադրիչներից որն է գիտվելու որպես հիմնական⁸⁸: Բերված օրինակում հիմնական կամ շրջազարդվող հնչյունը գծագրի երկրորդ բաղադրիչն է. և դա մի հատուկ թեքություն է տալիս պտույտի մեղեդիական կորագծին:

Հաջորդ օրինակում, որ է Հոփսիմյանց կանոնի Գկ դարձվածք հայտնի օրհնություն 18-րդ տունը⁸⁹, շրջազարդվում է «զարկին» համապատասխանող

⁸⁸ Գրին վերադառնում է մեղեդին (պտույտի սահմաններում), այն մի անգամ շոշափելուց հետո:

⁸⁹ $\frac{204\text{ա}}{694}$

Այն առաջ ենք բերում մի քանի անհրաժեշտ ուղղումներով, որոնք վերաբերում են զնադուց պարզարանված կետերի: Այսպես, առաջին տողի վերջին խաղաղորը ձևագրում «փուշ» է, որ ակնհայտնի վրիպակ է: Երկրորդ և երրորդ տողերի նման, առաջինը ևս «բուխով» է ավարտվում, որ նշակ է նրա: Այնուհետև, դարձյալ առաջին տողի վերջում, որիչը մտառել է միջակետ դնել: Ավելացրել ենք այն (ուղիղ փակագծերի մեջ), մյուս տների օրինակով, որոնցում առաջին երեք տողերն, որպես բնդհանուր կանոն, միջակետով են ավարտվում: Գալով շարականիս եղանակի ձայնագրությանը, որ ն. Քաշճյանն է իրագործել, ապա այն, ընդհանուր առմամբ գոհացուցիչ լինելով, առանձին տեղերում նշգրտման կարիք է զգում: Մեզ դրազեցնող տան մեջ, օրինակ, առաջին ու երրորդ տողերի սկզբներում, Քաշճյանը պարզապես դանց է առել, համապատասխանաբար, «պարույկ» ու «սլորակ» խաղաղորերին հատուկ պտույտների ելևէջային կորագիծը, և արձանագրել գրեթե միայն դրանց երկար տևողությունները: Մենք վերականգնեցինք մեզ ըստ էության արդեն ծանոթ այդ խաղանշանների գործության նաև ելևէջային կողմը (ընտրելով մեղեդիական կապակցությունը պատշաճող պարզ ձևեր): Բերված տան մնացած տեղիներին, ինչպես և առհասարակ շարականիս հետաքրքիր կշռույթի հաստատագրման առումով, Քաշճյանի ձայնագրությունը հիմնականում բավարարում է մեզ: Ընդգծում ենք այս (վերջին) պարագան, հետևյալ պատճառով: Ասացինք, որ գիտարկվող շարականիս բառատող տների խաղաղորումն այնպիսին է, որ յուրաքանչյուր տան առաջին երեք տողերն ավարտվում են միջակետով: Անցյալում Ե. Տնտեսյանը, եկեղեցիներում դպիրների երգեցողությունը դյուրացնելու գործնական նկատառումներով, առաջարկում էր միջակետին ևս շափական մեկ մեղադրի տևողություն հատկացնել (տե՛ս նրա՝ «Տեսութիւն շարականի երգոց խաղերուն և նոցա դորութեան վերայ», «Ժամանակ», Կ. Պոլիս, 1864, № 45, հավելված): Բայց դա ձանձրալի համաշափույթուն կհաղորդեր շարականի տողերի եղանակի կշռույթին, որոնցում միապաղաղ կերպով երկարեցված կլինեին բանաստեղծական բոլոր (շորս) ստրերի շեշտված վանկերը: Եվ պատահական չէ, որ հայ հոգևոր երաժշտության կշռույթային կողմի արհեստական պարզեցման փորձերին իրավացիորեն ընդդիմացած Քաշճյանն այդպես չի վարվել այն ձայնագրելիս (Հոփսիմյանց «Անձինքի» երաժշտության կշռույթային կառուցվածքի մասին տե՛ս մեր աշխատությունը. «Теория музыки в древней Армении», Ереван, 1977, էջ 261): Մեր օրերում Թ. Աթայանը փաստարեն վերաբարձեց հարցը, բնադատելով Քաշճյանին՝ տողավերջերի հիշյալ միջակետերին շափական արժեք հատկացրած չլինելու համար (տե՛ս նրա «Հայկական խաղային նոտագրությունը», Երևան, 1959, էջ 209): Այս առթիվ նշենք, որ տեսականորեն ևս Քաշճյանը, ընդհանրապես ասած, նիշտ է, և առհասարակ դարձյալ անդրադառնալով հայաց լեզվի արտհայտության երեք նշանների դերին խաղաղորության արվեստում, հաստատենք հետևյալը: Այդ նշանները («ստորակէտ», «միջակէտ» և «վերջակէտ») խաղաղոր երգարաններում արտհայտում են նաև երաժշտական բնագիրը՝ հանկային ու ծորերգային պարզ հյուսվածքի երգերում՝ դրական խոսքի արտհայտությանը դուրսնաբաց, իսկ ավելի բարդ կտորներում, դրական բնագրից էլ անկախ, որպես յուրատիպ խաղաղոր: Այս վերջին դեպքում միջակետն ու վերջակետը, կրկին որպես լուր արտհայտության նշաններ, ըստ

պտույտի առաջին բաղադրիչը, և այս դեպքում էլ՝ դարձյալ վար-վեր սահուն շարժումը պահելով՝ մեղեդիական կորագիծը փոքր-ինչ այլ թեթևություն է ստանում: Ընդհանուր ուղղվածությունն է՝ դեպի հաջորդ վանկի երկրորդ «փուլը»:

Չափաւոր



Հնիփսիմյանց «Անձինքից» հատուկ քնարված այս տունը շահեկան է թե՛ «զարկի», և թե՛ «թուրի» կիրառության առումով: Կատարման տեսակետից մե-

տեղին ցույց են առնում նաև՝ համապատասխանաբար՝ կիսահանգած և վերջահանգած թուրը դեպքերում սակայն, երգեցողության խաղաղերի շարքում այդ կետերն, քստիներն, շափական արժեքներ չեն արտահայտում:

ղեղի շարժման գործող, երբեմն (երբ գրական-երաժշտական կերպարը առնա-
շունչ է և գրական խոսքի համապատասխան վանկն էլ՝ շեշտակիր) նույնիսկ
հուժկու բնույթով աչքի ընկնող հիշյալ երկու խաղաղների բաղմակի գործածու-
թյունը երգի մեկ տան մեջ, տվյալ դեպքում բացատրվում է դիտարկվող շա-
րականի եղանակի վիսպական և ուժական նկարագրով⁹⁰: «Թուրն» այստեղ
երևում է տան ըուր տողերի երրորդ ոտքերի շեշտված վանկերի զուգորդու-
թյամբ (ուստի՝ շորս անգամ), ջուլջ տալով ձայնի պիրկ, կորովի, վերընթաց
գրեթե նույն շարժումը, համաձայնության հնչյունաշարի տարբեր (մեջընդմեջ՝
«ձ» և «՛») աստիճաններից:

«Ձարկը» հանդիպում է երկու անգամ, երկրորդ և շորրորդ տողերի առա-
ջին ոտքերի շեշտված վանկերի վրա, և նորից՝ մեղեդիական համանման կա-
պակցության մեջ «ներքնախաղ» աստիճանի շրջադարձումով, որը ինչպես ա-
սացինք, կշռույթային գծագրի առաջին անգամն է:

Դժվար չէ նկատել, որ երկու օրինակներում «զարկի» մեկնաբանված
պտույտները մինևույն արմատից սերվող տարբերակներ են: «Ձարկին» համա-
պատասխանող պտույտի մի այլ տեսակ է հետևյալ նմուշում հանդիպողը:

Միջակ

հոգ-տ վրն զո լեր. պրն ծայր ալ ևօ լրն ժն-րու.

զին ա սն լով. տա է թա զա տրն ան մահ.

Սա Տեառնընդառաջի կանոնի Դձ միջակ «Աթոռ քրովբէական» մեծացուս-
ցելի երկրորդ տունն է, մինչև դարձը⁹¹: Նրանում «զարկը» երևում է գրական
խոսքի երկրորդ (շեշտակիր) վանկի զուգորդությամբ: Խաղանշանիս պատ-

⁹⁰ Ավելին: Հոփսիմյանց «Անձինքի» երաժշտական բաղադրիչը հայ հոգևոր երգարվեստում
հերոսական բնույթի շերտերից մեկը ներկայացնող շափանմուշ եղանակներից է. շափանմուշ,
որն իր տարբերակումն ու բնական զարգացումն է ստացել Հովհաննես Սարկավազ վարդապետի
«Անսկիզբն Բանն Աստուած» և Շնորհալու (Վարդանանց նվիրված) «Նորահրաշ պսակաւոր»
շարականներում: X. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической
музыки, Л., 1958, էջ 117 ու մեր աշխատությունները՝ «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ»,
Երևան, 1973, էջ 60. և «Հովհաննես Սարկավազ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական
մշակույթը», «Բաղմակէպ», Վենետիկ, 1978, № 3-4:

Ճիշտ է, «Անձինքի» գրական բաղադրիչը բովանդակությամբ ընդհանրապես քնարական է,
բայց այնպիսին, որ կույտերի նահատակությունը ներկայացվում է որպես հերոսական արարք:
Արդ, իմանալի է, որ նման, և նույնիսկ ողբերգական բովանդակության գրական խոսքեր եկե-
ղեցական երգարվեստում հաճախ առիթ են ծառայում արտահայտելու քրիստոնյա համայնքի
անօտան հավատն ու միասնական կամքը, որով եղանակավորվում են ուժական, առնական, այլև
հերոսական շեշտերով:

շաճեցված պտույտն այստեղ քիչ այլ է կշռույթով և բավական տարբեր՝ ելևէջով, նախորդ ձևի համեմատությամբ: Մի կողմ դնենք կշռույթային կողմը: Այն մեղ շատ պետք չէ զբաղեցնի բերված օրինակի կապակցությամբ, եթե մտաբերենք, որ նախահարուկներ և նման ձայնանիշեր հայ միաձայնային երաժրշտության մեջ կատարվում են զգալիորեն ավելի կշռական, քան արդի արվեստում. և որ, այս հաշվով, «զարկի» դիտարկվող պտույտում երկրորդ «էկորճ» նախահարուկը ոճի ճիշտ զգացողությամբ կատարելիս աղատորեն կարող է ստանալ մեկ ութերորդական տևողություն: Ելևէջն է բավականին տարբեր, ասացինք. և հիմնական տարբերությունն այն է, որ կշռույթային զծագրի 3-րդ և 4-րդ անդամների միջև քառյակային թռիչք է գոյանում: Պտույտի կատարման կերպն այնպիսին պիտի լինի սակայն, որ ընդգծվեն «b'-a'» և «d²-c²» երկյակային քայլերը, ստեղծելով երկու անգամ հնչող հորիզոնական շարժման տպավորություն⁹²:

«Զարկին» կապված մեղեդիական պտույտների բննարկված երկու ձևերը, հանկարծաբանական աղատությամբ պայմանավորված որոշ փոփոխություններով, կիրառվել են որպես հիմնական տարբերակներ, երբեմն անգամ միևնույն երգի միևնույն տան սահմաններում: Ահա, օրինակ.

Ա . բա բիշ և մար դա սեր օհր,
 որ վա սրն մեր ըզ ման ծա . լա .
 կն գնր. օհր Աս օղ ուած
 հար կրն մն բույր

Ննչեցելոց կանոնի Բկ շարքից «Արարիչ և մարդասէր» շափավոր հարցի առաջին տունն է սա⁹³, ուր պարզ երևում են վերը ցույց տրված երկու տիպի

⁹² Խաղաղության արվեստի բավականին զվարամատչելի թափումների մեջն ենք մտնում արդեն: Երգչային ձայնի նկարագրվող շարժումներում, կատարողական տարբեր հնարանքների գործադրմամբ, նույնիսկ անկախ ձայնամիջոցային կազմից, մեղեդիական պտույտի ընթացքը «թուրի» դեպքում ընկալվում է որպես ավելի վերատալանց կամ ներքնատալանց ուղղաձիգ բնույթի իրակություն, իսկ «զարկի» պարագային՝ լայնակի-հորիզոնական:

պտույտներն էլ, երգի առաջին ու երրորդ տողերում «զարկ» նշանը կրող վանկերի զուգորդությամբ (այստեղ երկրորդ պտույտի առաջին հնչյունը հնարավոր է կատարել նաև մի վերին նախահարուկով՝ երկրորդ «էկորճով»):

Ամփոփելով «զարկի» մասին մեր ասելիքը, երկու խոսքով անդրադառնանք նրա մեղեդիական զորության գրսևորումներին նաև ծանր երգերում: Դրանք առաջժամ բաժանում ենք երկու կարգի, ըստ արտաքին, բայց կարևոր մի հատկանիշի՝ տեղություն. ա) շափական երկու, և բ) երեք, շորս և ավելի միավորների արժեքով պտույտներ: Երկու տեսակներում ևս կշռույթը կոտորակված է, ելևէջն էլ ոլորուն (բայց, իհարկե, կառուցվածքային տիպի ծանր երգերում՝ որոշ կանոնների պահպանությամբ, իսկ հանկարծաբանական տիպի ծանր կտորներում՝ ավելի ազատ, կշռույթային երբեմն նույնիսկ քմահաճ գծագրերի կիրառումով): Եվ սակայն, առաջինների կառուցվածքի հիմնական գծերը՝ շրջազարդման առկայությունը, սահուն շարժումը, հնչողության եթե ոչ պիրկ, զորեղ, գոնե հավաք բնույթը մատնանշում են նրանց ծննդաբանական կապը «զարկի» վերը քննված հիմնական ձևերից մեկի կամ մյուսի հետ (տե՛ս, օրինակ, Մենդյան ութերորդ օրվա Դձ դարձվածք ծանր օրհնության երրորդ պատկերի սկիզբը՝ «Ըզզլուխ վիշապին փրկելին ջախջախեաց», ուր երրորդ խոսքի առաջին վանկը կրում է «զարկ» նշանը)⁹⁴: Երկրորդ կարգի պտույտները, առավելաբար հանդիպելով զարդոլորուն, հանկարծաբանական կտորներում, մեղեդիական բարդ հյուսվածքի շրջապատում, բնականաբար, զգալի հեռանում են «զարկի» նախնական ձևերից: Ավելի ճիշտ, այդ ձևերը կարծես տարրալուծվում են երկարածիգ վանկերի մեծագույն շրջանակներում, մեղեդիական գծի ավելի խոր ալիքավորման և շարժման ուղղության ազատ փոփոխության պայմաններում: Ընտիր օրինակներում, սակայն, մնում է գոնե շարժման՝ սահուն և հնչողության ներքնապես հաստատուն բնույթը (ինչպիսին է պարագան, ասենք, Ստեփանոս Նախավկայի Գկ դարձվածք ծանր օրհնության սկզբում՝ «Նահատակ բարի Քրիստոսի», ուր առաջին խոսքի երրորդ վանկի նշանը «զարկն» է)⁹⁵:

Այսպիսին են միջին բարդության առաջին կարգի խաղաղորումների գլխավոր առանձնահատկությունները: Ընդհանրացնելով կարող ենք հաստատել, որ դիտարկված նշանները կիրառելիս ու դրանք գործնականում մեկնաբանելիս, հայ միջնադարյան երգիչը մտնում էր՝ տարբերակումների ավելի լայն շրջանակներում կենցաղավարող, ինչպես և իրենց զորության կայուն, կրկնվող տարրերը (ասենք՝ շարժման տիպը, և ոչ անպայման՝ ուղղությունը) կատարողական այլազան կերպերի հետ (ձիգ, հատու, պիրկ, անուշ, նուրբ և այլն) զուգորդող բարդ իրակությունների ոլորտը: Իրակություններ, որոնք միշտ չէ, որ ենթակա են ձայնագրման - հաստատագրման, հետևաբար և՛ տեսողական ընկալման:

⁹⁴ $\frac{27բ}{106}$,

⁹⁵ $\frac{41բ}{136}$,

Н. К. ТАГМИЗЯН

РАСШИФРОВКА ХАЗОВЫХ ЗАПИСЕЙ ПЕРВОГО
РАЗРЯДА СРЕДНЕЙ СЛОЖНОСТИ

Резюме

Хазовые записи различных песнопений в средневековых рукописях отличаются самым различным количеством знаков от 3—4 до 30—40 и больше.

Количество знаков в этих песнопениях увеличивается, как показали наши наблюдения, по мере вовлечения в мелодию новых гласовых попевок, замедления темпа, дробления ритма и вообще возрастания формообразующей роли музыкального компонента.

В результате образуются различные типы фактуры хазового письма, изучение которых и позволяет выявить их функцию в целом, а исходя из этого—также значение каждого входящего в них знака.

В конце 60-х в начале 70-х годов нас занимала проблема расшифровки простейших хазовых записей. В середине 70-х мы обратились к простым хазовым записям. В данной статье мы рассматриваем хазовые записи первого разряда средней сложности.

В певческом значении изучаемых хазов не последнее место занимают требования относящиеся к формам звукоподачи, к способам исполнения.

Не менее важно, что при реализации мелодико-линейного содержания этих знаков, очевидно, допускался ряд вариантов (в пределах определенных границ), что связано с импровизационным началом, присущим армянскому средневековому искусству пения.

Опыт показывает, что по мере привлечения к исследованию все более сложных фактур хазового письма, мы будем сталкиваться с фактом дальнейшего расширения импровизационной свободы певческого истолкования тех или иных хазов.

К этим выводам мы приходим на основании изучения: некоторых грамматических положений, освещающих методы применения грамматико-музыкальных знаков просодии (охватываемых и системой хазов); определенного количества высказываний средневековых авторов, касающихся отдельных хазовых знаков; средневековых рядовых певческих рукописей (для выявления внутренних закономерностей системы хазов); результатов хазоведческих и невузовских изысканий ряда армянских и европейских музыковедов-медиевистов XIX—XX вв.; а также данных сравнительного анализа одних и тех же песнопений, записанных хазами и знаками новоармянской безлинейной нотации (изобретенной в начале XIX в.).

N. K. TAHMIZIAN

LE DECHIFFREMENT DES INSCRIPTIONS EN KHAZES DU
PREMIER GROUPE DE COMPLICATION MOYENNE

(Résumé)

Les inscriptions en khazes des chants liturgiques dans les manuscrits médiévaux se distinguent par une quantité variable de signes, de 3 à 4 jusqu'à 30 à 40 et plus.

Le nombre de khazes dans ces chants liturgiques augmente, comme nous l'avons observé, à mesure de l'introduction dans la mélodie de nouveaux motifs modaux, du ralentissement du tempo, du fractionnement du rythme et, en général, de l'accroissement du rôle formateur du composant musical.

En résultat, différents types de factures de la notation en khazes se constituent; leur étude permet de révéler leur fonction en général et, partant de là, la signification de chaque signe qui en fait partie.

A la fin des années 1960 et au début des années 1970 nous nous sommes occupés du déchiffrement des plus simples inscriptions en khazes, du premier groupe de complication moyenne.

Dans la signification des khazes étudiés une place importante revient aux formes d'émission des sons et aux procédés d'exécution.

Il n'est pas moins important de noter que lors de la réalisation du contenu mélodico-linéaire de ces signes, un certain nombre de variantes étaient probablement permises (dans des limites déterminées), ce qui se trouve en relation avec le principe d'improvisation propre à l'art du chant médiéval arménien.

L'expérience montre qu'à mesure de l'étude des factures plus compliquées de notation en khazes, nous nous heurterons au fait de l'extension ultérieure de la liberté d'improvisation dans l'interprétation de tels ou tels khazes.

Nous en venons à ces conclusions en étudiant: certaines thèses grammaticales éclairant les méthodes d'utilisation des signes grammatico-musicaux de la prosodie (également inclus dans le système de khazes); un certain nombre de témoignages d'auteurs médiévaux relatifs aux différents khazes; les manuscrits médiévaux ordinaires de chant (pour la découverte des règles intrinsèques du système des khazes); les résultats des recherches consacrées aux khazes et aux neumes de certains musiciens médiévistes arméniens et européens des XIX^e — XX^e siècles ainsi que les données de l'analyse comparative des mêmes chants liturgiques inscrits en khazes et en signes de la nouvelle notation sans lignes arménienne (inventée au XIX^e siècle).

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան»¹ աշխատությունն, ընդհանրապես, հայ պատմագրության կարևոր հուշարձաններից է. մեծ է հատկապես նրա աղբյուրագիտական նշանակությունը: Իբրև «տիեզերական պատմություն» այն անհրաժեշտաբար առնչվել է բազմաթիվ սկզբնաղբյուրների, և ըստ այդմ ստեղծվել է բնագրական այնպիսի մի համահավաք երկ, որի մեջ իրենց մասն ու բաժինն են ունեցել հայ պատմագրության գրեթե բոլոր նախընթաց արժեքավոր հուշարձանները:

Ընդհանուր առմամբ «Պատմութեան» աղբյուրները ճշտված են: Բանասերներին վաղուց է հայտնի, որ Վարդան Արևելցին օգտագործել է իրեն նախորդող «երիցագույն» պատմիչների աշխատությունները: Առանձին դեպքերում դրանք սոսկ թվարկվել են, երբեմն բավարար են համարվել տողատակերում կամ ծանոթագրությունների մեջ արված հղումները և միայն հազվադեպ հաստատվել բնագրական համառոտ զուգահեռներով²: Քննական բանասիրական խոսք ասելու որոշակի փորձեր են արվել՝ պատմական և աղբյուրագիտական ավելի սուույզ իրողություններ պարզելու և հաստատելու համար: Այս տեսանկյունից առավել ուշագրավ և օգտակար աշխատանքներ են կատարել մասնավորապես Մ. Բրոսեն և Փ.Միլդերմանսը³: Մասնակի առումով հետաքրքրական են նաև Տ. Գույումճյանի ջանքերը Մխիթար Անեցու աշխատությունից Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» մեջ պահպանված մի հատվածի առնչությունը⁴:

1 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:

2 Մանրամասն տե՛ս հատկապես Եվսեբիոս Կեսարացի, ժամանակականք երկմասնեայ, մասն Ա և Բ, Վենետիկ, 1818, տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

M. F. Brosset, Additions et éclaircissement à l'Histoire de la Géorgie depuis l'Antiquité jusqu'en 1469 de J.-C., St.-Petersbourg, 1857.

Analyse critique de la Всеобщая История de Vardan, par M. Brosset, St.-petersbourg, 1862, p. 2, 9, 13—24.

E. Dulaurier, Les Mougols d'après les historiens arméniens, extrait de l'Hisfoire universelle de Vardan. Journal Asiatique, 1860, Octobre, Novembre, p. 273—322.

«Всеобщая История Вардана Великого», перевод Н. Эмина (с примечаниями и приложениями), М., 1861. Առաջարանը՝ էջ XVI—XX, ծանոթագրությունները՝ 3—189:

«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսարանեայ, ի Վենետիկ, 1862, Առաջարանը՝ էջ է և տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

J. Muyltermans, La domination arabe en Arménie, Louvain-Paris, 1927, էջ 32—37 և տողատակի ծանոթագրությունները՝ բազմաթիվ էջերում:

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությունը Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Առաջարանը՝ էջ ԿԱ—ԿԵ:

D. K. Kouymjian, Mxit'ar (Mekhitar) of Ani on the rise of the Seljuqs, "Revue des études arméniennes, Nouvelle Série, T. VI, Paris, 1969. նույնի՝ Մխիթար Անեցին զաղնավյանների և սելջուկյանների մասին, «Լրաբեր» (հատ. գիտ.), № 4, Երևան, 1972, էջ 74—84:

3 Տե՛ս նրանց նշված աշխատությունները:

4 Տե՛ս նրա նշված հղվածները:

Այդուհանդերձ, պատմագրական նման մի աշխատության աղբյուրագիտական ավելի համակողմանի ու մանրադնին քննությունը մնում է անհրաժեշտություն, որովհետև՝ ա) ճշտված աղբյուրները լրացման ու կրկին ճշգրտման ենթակա են, բ) մի քանի աղբյուրների օգտագործված լինելու հարցը հարկ է վերանայել, գ) միայն հարևանցի ակնարկ է եղել (բացառությամբ Մխիթար Անեցու երկի նշված հատվածի վերաբերյալ դիտողությունների) այն աղբյուրների հնարավոր օգտագործման մասին, որոնք առ այսօր մեզ չեն հասել, դ) չեն դատորոշված ըստ իրենց մաշր հասցեի այն բոլոր հատվածներն ու տողերը, որոնք Վարդան Արևելցին անմիջաբար փոխառել կամ քաղել է բազմաթիվ աղբյուրներից: Բացի այդ, գրեթե ոչինչ չի ասված այն մասին, թե Վարդան Արևելցին ինչպե՞ս է վերաբերվել իր աղբյուրներին, օգտագործման ի՞նչ սկզբունք ու եղանակ է կիրառել, բնագրական ի՞նչ փոխադարձ լրացումներ կամ ճշտումներ հնարավոր կլինի կատարել նրա և աննշվող աղբյուրների մեջ, հայ և այլ ժողովուրդների մատենագրության համար աղբյուրագիտական ու պատմական ի՞նչ նշանակություն և արժեք կարող են ունենալ նրա մեծաքանակ բանաբաղությունները և այլն, և այլն. սրանք հարցեր են, որ գիտական լուրջ պատասխանի են կարոտ:

Հասկանալի է, նման բազմաթիվ ու բազմազան հարցերի համատեղ քննությունը մի հողվածի սահմաններում պարզապես անհնարին է: Ուստի շատ խորնդիրներ անհրաժեշտաբար թողնելով այլ առիթի, այստեղ ի մասնավորի, բնագրական առարկայական և շոշափելի փաստերի հիման վրա, կփորձենք ավելի հստակ և ստույգ հաստատել այն զուտ պատմագրական բնույթի աղբյուրները, որոնցից Վարդան Արևելցին նյութեր է քաղել անմիջականորեն⁵: Դեռևս անհայտ, այսպես կոչված «թաղված» բազմազան աղբյուրների բացահայտումը ևս թողնելով այլ առիթի, քննության նյութ ենք դարձրել արդեն Վարդան Արևելցու հիշյալ աշխատության և մեզ չհասած մի քանի հայերեն սկզբնաղբյուրների աննշության կարևոր հարցը⁶:

Միանգամայն որոշ է, որ Վարդան Արևելցին ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ ու տարատեսակ սկզբնաղբյուրներ:

Հիմնական աղբյուրներից մեկը, մանավանդ սկզբի էջերի համար, Աստվածաշունչն է եղել: Տվյալ դեպքում դանց ենք առնում նշել առկա աղբյուրագիտական աննշությունները այն պարզ պատճառով, որ դրանց գոյությունը առանց այդ էլ, տարակուսելի չէ և նկատվում է դյուրությամբ: Մնացած աղբյուրների մասին խոսք կլինի առանձին-առանձին, ըստ նրանց ժամանակագրական հաջորդականության:

Այս առումով Աստվածաշունչից հետո հնագույնը եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրություն»-ն է⁷: Թեև այն միջնորդաբար Մովսես Խորենացու, Ուխտանեսի, Ասողիկի պատմագրական համապատասխան երկերի միջոցով քանիցս

⁵ Մրադրել ենք մոտիկ սպագայում կազմել և հրատարակության հանձնել Վարդան Արևելցու հիշյալ աշխատության քննական բնագիրը: Բանասիրական-աղբյուրագիտական զգալի աշխատանք կատարել ենք արդեն, որը թույլ է տալիս ասելու, թե այդ առիթով ավելի լայն հնաբաղություններ կունենանք անդրադառնալու դիտականորեն կարևոր բոլոր հարցերին: Ըստ այսմ էլ այստեղ դանց ենք առնում նշելու այն աղբյուրագիտական-բնագրական աննշությունները, որոնք առկա են Վարդան Արևելցու սույն աշխատության և նրա այլ աղբյուրների միջև:

⁶ Տե՛ս Փ. Անրարյան, Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» կորած աղբյուրները, «Սիոն», Ա.-Բ., 1980, էջ 24—30:

⁷ Եսեբիոս Կեսարացի, ժամանակականք երկմասնեայ, մասն Ա.:

նյութ է մատակարարել Վարդան Արևելցուն, սակայն որոշ է դառնում, որ նա դրանից օգտվել է նաև անմիջաբար: Միջանկյալ ասենք, որ, անտարակույս, որոշակի դժվարություն է ներկայացնում ինչպես սույն, այնպես էլ մյուս մի քանի հիմնական սկզբնաղբյուրներից անմիջաբար արված քաղվածքները դատորոշելը՝ ըստ իրենց բուն պատկանելության, որովհետև դրանք երբեմն նույնաբար, բառացի փոխանցվել են հետագա մեկ կամ ավելի աղբյուրների: Ըստ այսմ, աղբյուրագիտական լայն ու մանրակրկիտ քննությունների կարիք է դրացվում նշտելու համար, թե «Հաւարումն պատմութեան» այսինչ հատվածը կամ համառոտ տեղեկությունը ուղղակի մայր աղբյուրի՞ց է առնված, թե՛ միջնորդաբար հետագա մեկ այլ աղբյուրից: Հաշվի առնելով այս հանգամանքի լրջությունը և գիտական կարևորությունը, յուրաքանչյուր դեպքում ջանացել ենք բժախնդիր լինել առավելագույն շահով:

Այս հիմքով էլ ընտրված են բոլոր այն մեծ ու փոքր հատվածները, որոնք ըստ անհրաժեշտության այստեղ բերվելու են զուգահեռ համեմատությունների համար: Այդպես ենք վարվել նվաբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան»՝ Վարդան Արևելցուն իբրև անմիջական աղբյուր ծառայելու առնչությամբ: Այսպես.

Նվաբիոս Կեսարացի

Կամիմ այսուհետև յայսցանէ փոխել ի փինիկեցոց մատեանսըն... Յորս գրեալ է՝ թէ տաճարն Երուսաղէմի շինեցաւ ի Սողոմոնէ արքայէ կանխագոյն ամօք Ճեթիւք (143), և ամսովք ութիւք՝ քան զշինել տիրացոց զԿարբեղոն... Զբոնացելոյն Երուսաղէմացոց զՍողոմոնէ ասեն առաքեալ առակս առ Իրովմայ... Յանձն առեալ Իրովմայ, և ոչ լեալ բաւական առեղծուլ զառակսն, բազում ինչ յընչից ի պատժոց տոյժս ծախեալ: Անդ դախր ոմն Արղամանոս անուն՝ այր կորովի, զարկեալ առասպելսն Սողոմոնի լուծանել. միանգամայն և այլ ևս առ նոյն արկանել. զորս շառեղծոյր Սողոմոն. և բազում ինչ Իրովմայ տուժէր: (էջ 173, 176—177):

Վարդան Արևելցի

Կայ ի գիրս փինիկեցոցն, եթէ տաճարն յԵրուսաղէմ շինեցաւ հարիւր քառասուն և երեք ամօք յառաջ քան զշինելն Տիրացոցն զԿարբեղոն. և գրեն առակս ինչ առ միմեանս Սողոմոն և Քիրամ. և ոչ կարէր Քիրամ լուծանել զՍողոմոնին. բայց գտաւ այր ոմն, Արղամանոս անուն ի Տիրոս՝ որ կարողանայր առեղծուլ, այլ և գրէր առ Սողոմոն, և տարակուսէր Սողոմոն: (էջ 23):

Նույնությունն ակներև է: Միայն թե Վարդան Արևելցու հատվածում Արղամանոսը դարձել է Արղամանոս, Իրովմը՝ Քիրամ: Պարզ է, որ առաջինը Դ և Գ տառերի գրչական շփոթության, իսկ երկրորդը՝ Իրովմին Աստվածաշնչի Քիրամի՞ հետ նույնացման արդյունք է:

Տ. Բ. Քաղատրուհեանց, ԳԼ. Բ., 11:

Պատկերը գրեթե միևնույնն է նաև հետևյալ դեպքում:

Եվսերիոս Կեսարացի

Քանզի է Մովսիսի յանապատին
 Խ ամ և Յասովայ Իէ, յետ որոյ դա-
 տաւորացն և ալլազգեացն նՄ. որ-
 պէս առաքեալ ասէ. և Դատաւորաց
 գիրք նմին դաւանեն. յետ որոց
 Սամուէլի և Սաւուղայ Խ ամ, ապա
 և Դաւթի Խ, և Սողոմոնի Դ. մինչ
 ի տաճարին կազմած. և միանգա-
 մայն ամենայն Ո (600): (էջ 164—
 165):

Վարդան Արևելցի

...քառասուն ամ Մովսեսին,
 քսան և եօթն ամ Յեսուայն, որ է
 վաթսուն և եօթն ամ. և շորեքհա-
 ռիւր և յիսուն ամ դատաւորացն,
 ծառայութեամբ ալլազգեաց՝ որ է
 հինգհարիւր և եօթնևտասն. յետ
 որոց Շամուէլ և Շաւուղ քառասուն
 ամ, և քառասուն ամ Դաւթի, լինի
 իննսուն և եօթն, և շորս ամ Սողո-
 մոնին, և լինին միանգամայն ամբ
 վեցհարիւր և մի: (էջ 23):

Բացահայտ է, որ Վարդան Արևելցին իր սկզբնաղբյուրից օգտվել է բա-
 րացի Տարրերությունն այն է լոկ, որ Վարդան Արևելցու մոտ «Շամուէլ և Շաւուղ»
 է, փոխանակ՝ «Սամուէլի և Սաւուղայ», իսկ տարեթվերի ընդհանուր դումա-
 րը՝ 601, փոխանակ՝ 600-ի: Շ-ի կիրառութիւնը Ս-ի փոխարենն ասորական ար-
 տասանութեան գրականութեան է, որը, թերևս, այս դեպքում վկայում է այն մասին,
 թե Վարդան Արևելցու ձեռքի տակ եղած օրինակում բնագիրն այդպիսին է եղել:
 Ինչ վերաբերում է տարեթվերի դումարին, ճշմարիտն այն է, որ Եվսերիոսի
 հատվածում 600 է գրված սխալմամբ, քանի որ այնտեղ նշված տարեթվերի գու-
 մարը ևս հավասար է 601-ի: Իսկ դա ըստ երևույթին, արդյունք է այն բանի, որ
 այնտեղ ևս նախապես գրված է եղել ՈԱ. (601) և հետագայում ընդօրինակու-
 թյունների ժամանակ Ա.-ն դուրս է բնկել⁹:

Մեր եզրակացութիւնը ավելի ամրապնդելու համար բերենք ևս մեկ զուգա-
 հեռ.

Եվսերիոս Կեսարացի

Արտաշէսի ամք ԽԱ: Առ սովաւ
 Եզր... Այդ և նեէմիա տակառա-
 պետ ճանաչէր, որ հրամանաւ թա-
 գաւորին էջեալ յերկիրն Հրէաստա-
 նի՝ շինէր զԵրուսաղէմ, և պատէր
 դրաղաքն պարսպօք... Դարեհ ամս
 ԺԹ: Արտաշէս ուշեղ ամս Խ: Ով-
 քրսոս ամս ԻԶ: Արսէս ամս Դ:
 Դարեհ ամս Զ: Յետ որոց Աղեք-

Վարդան Արևելցի

Արտաշէս երկայնաբազուկ քա-
 ռասուն և մի ամ, առ սովաւ Եզ-
 րաս և նոյնմի տակառապետ եկին
 յԵրուսաղէմ և շինեցին զպարիսպն:
 Դարեհ հարճորդի ամս իննևտասն.
 Արտաշէս, ամս քառասուն, առ
 սովաւ Իսթեր: Արտաշէս Ոքոս,
 ամս շորս. Դարեհ Արշամայ, ամս
 վեց. զոր սպան Աղեքսանդր, և

⁹ Եվսերիոսը 600 տարիները բաժանել է 5 ազգերի միջև, յուրաքանչյուրին՝ 120: Բայց տրված
 տարեթվերի դումարը, 1-ով ավելի է: Հնարավոր ենք համարում նաև այն, որ և՛ Եվսերիոսի, և՛
 Վարդան Արևելցու մոտ Սողոմոնի Դ տարին նախապես Եվսերիոսի բնագրում եղել է Գ տարի,
 հետագայում Գ և Դ տառերի շփոթութիւն է տեղի ունեցել:

սանդրոս Մակեդոնացի երարձ
զաէրութիւնն պարսից և թագաւորեաց
ամս Զ... ՃՂէ: Յետ Աղէք-
սանդրի վախճանելոյ՝ Եգիպտոսի
և Աղէքսանդրիայ քաղաքի թագա-
ւորեցին այսորիկ, ա. Պաղոմէոս
Ղազոսեայ ամս Խ. Բ. Պաղոմէոս
Փիղաղեղփոս ամս ԻԸ: Առ սովա
երբայեցոց զիրք սուրբք ի յոյն
լեզու թարգմանեցան, և յԱղէք-
սանդրիա քաղաքի և մատենից
տունս եղան: գ. Պաղոմէոս Եւեր-
զեաէս ամս ԻԴ: դ. Պաղոմէոս Փի-
ղապատովր ամս ԻԱ: Ե. Պաղո-
մէոս Եպիփանէս ամս ԻԲ: զ.
Պաղոմէոս Փիղոմնատր ամս ԼԴ:
Առ սովա թագաւորեաց ասորոց
Անախորոս... թէ զիարդ Անախ-
որոս զազգն հրէից ի հեթանոսու-
թիւն դարձուցանել բռնադատէր...
(էջ 190):

Ինչպես տեսնում ենք, անմիջական աանշուքյունն ակնհայտ է: Սոսկ տարե-
թվերի փոքր անհամապատասխանություն կա: Այս դեպքում զրշազրական հնա-
բավոր վրիպակներից բացի, կարծում ենք, ենթադրելի է նաև հետևյալը. սույն
հատվածը տարբեր խմբագրություններով առկա է նաև մի քանի այլ հեղինակնե-
րի երկերում¹⁰: Ընդհանրություններ ամենից ավելի նկատելի են Ասողիկի երկում
առկա հատվածի համեմատությամբ: Վարդան Արևելցին ձեռքի տակ ունենալով
նաև հիշյալ հեղինակների երկերը, հավանաբար, թվական փոփոխություններ է
կատարել իր բնագրում, գուցե և իր ու հիշյալ հեղինակների տրամագրության
տակ եղել է Եվսեբիոսի «Ժամանակագրութեան» մեկ այլ, քիչ տարբեր ընդօրի-
նակություն, ինչ որ նույնչափ հավանական ենք համարում¹¹:

Կարելի է վկայակոչել բնագրական այլ այսօրինակ բառացի նմանություն-
ներ ևս, սակայն այսքանը լիովին բավական է հաստատելու, որ Եվսեբիոսի
«Ժամանակագրութիւն»-ը Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» հա-
մար իրապես իբրև անմիջական սկզբնաղբյուր է ծառայել:

Հարկ ենք համարում միջանկյալ նշել հետևյալը: Վարդան Արևելցին տար-
բեր առիթներով հիշատակություններ է թողել այն մասին, որ ինքը այս կամ

¹⁰ Հմմտ. Մովսես Խալեպեցի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 14—20; Ա. Աբրահամ-
յան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1944, էջ 358—359, 365, 370 և այլն:
Խովհա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ի յոյս էած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ
6—9, 14—20 և այլն: Սամվել Անեցի, Հաւաքումնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ,
1893, էջ 5—32 և այլն:

¹¹ Մ. Ավգերյանի կարծիքով, Սամվել Անեցին օգտագործել է Եվսեբիոսի «Ժամանակագրու-
թեան» մեկ հասած ձեռագիր օրինակը (հատ. Բ, էջ 233): Մինչդեռ Սամվել և Վարդան
Արևելցու քաղած որոշ հատվածներում տարբերություններ կան, որոնք, կարծում ենք, նաև տար-
բեր ընդօրինակություններից բխած լինելու արդյունք են:

այն տեղեկությունը, միտքը հաղորդում կամ ճշտում է ըստ Արիստոտելի, Եսիրեմ Ասորու, Եսիփան Կիպրացու, Ենանոսի, Լուկիանոս ոմն փռանկի, Սոկրատ պատմիչի¹²: Սակայն այդ մանր տեղեկությունները, որոնք տվյալ դեպքում ավելի կրոնափիլիսոփայական, քան պատմական բնույթի են, հակառակ տրված անունների իսկ հիշատակության դժվար է հղել ստույգ հասցեի: Միջնադարյան բնագրերը, ինչպես հայտնի է, լի են նման հիշատակություններով, որոնք կարող էին մեկը մյուսին փոխանցվել միջնորդաբար և անպայման շրխել մայր սկզբնաղբյուրից: Այս դեպքում ևս կարող էր տեղի ունենալ նույնը, ուստի և առանց վերապահության շնք կարող ասել, որ Վարդան Արևելցին այս առիթով վերոհիշյալ հեղինակների և այլոց (որոնց անունները չի հիշում) երկերը ձեռքի տակ ունեցել է իրրև անմիջական աղբյուր, թեև չի բացատրվում նաև այդ հնարավորությունը:

Վարդան Արևելցին Հայաստանում քրիստոնեության տարածման, Գրիգոր Լուսավորչի վարքի ու գործունեության, առնչակից այլ խնդիրների վերաբերյալ իր նյութերը քաղել է ոչ թե Ագաթանգեղոսի, այլ Հովհան Մամիկոնյանի (Զենոբ Գլակ) աշխատությունից: Բեպետև նա Ագաթանգեղոսին հիշատակել է իրրև աղբյուր, սակայն պարզվում է, որ դա Սերենոսի երկից է գալիս¹³: Վարդան Արևելցու այս կապակցությամբ վկայակոչած մանրամասները, ըստ մեծի մասին, պակասում են մյուս հեղինակների մոտ, սակայն առկա են Հովհան Մամիկոնյանի երկում¹⁴: Միայն Ուխտանեսի աշխատության մեջ են պահպանված դրանց առնչվող որոշ տեղեկություններ, որոնք, անտարակույս, քաղված են նույնպես «Պատմութիւն Տարօնոյ» երկից¹⁵:

Վարդան Արևելցու երկում առկա որոշ տարբերություններ թեև միաժամանակ վկայում են, որ նա նաև բանավոր կամ գրավոր այլ աղբյուր էլ է ունեցել¹⁶, սակայն, տարակույս լինել չի կարող, որ անպայման Հովհան Մամիկոնյանի աշխատությունից է օգտվել ուղղակիորեն: մանավանդ, երբ վերոհիշյալ մանրամասներից բացի, նկատի ենք ունենում Գեմետրեի և Գիսանեի հայտնի դրույցը, որն այստեղ պարզապես համառոտաբար վերապատմված է ըստ այնմ: Կան և բառացի քաղվածքներ, ինչպես հետևյալը.

Հովհան Մամիկոնյան

...որ թէպէտ և բազում անգամ խնդրեաց սուրբ Գրիգոր զնշխարս սուրբ կարապետին, ոչ էառ յանձն (Ղևոնդ—Փ. Ա.) տալ մինչև հրաման ի տեսանէ հասանէր ի գիշե-

Վարդան Արևելցի

...Եւ հայցեաց սուրբն Գրիգոր (զնշխարս Կարապետին Յովհաննու-Փ. Ա.), և ոչ կամէր տալ, մինչև առ հրաման ի հրեշտակէն սրբոյ սուրբն Ղևոնդ, որ ետ ապա

12 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 4, 7, 24, 33, 44:

13 «Սերենոսի-եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 2:

14 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ. էջ 36—38: 2. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 68—74:

15 Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 78—79, 81—83:

16 Մեր համեմատությունները միաժամանակ ցույց են տալիս, որ Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» աշխատության և Գրիգոր Լուսավորչին նվիրված իր իսկ ներբողի միջև փաստագրական փոխադարձ առնչություններ կան: Ներբողը հորինված է ավելի վաղ, ուստի և հավանաբար, ծառայած է որպես աղբյուր: Հմմտ. «Սոփերք հայկականք», Ե., Վենետիկ 1885, էջ 39—48:

րին վերջնումն բաժանել զկէսն և տալ ցնա... Ետ նոցա զնշխարս Աթանագինէի վկայի... Տայր և սրբոյն Գրիգորի երկու լուսաւոր ահունս, զոր տուեալ էր նմա Հոսովմայ հայրապետն: ...Զի սեք էին և զիսաւորք... ...Զի կոոցն, որ յայսմ տեղոջ էին, պատճառ այս է. Գեմետր և Գիսանէ իշխանք էին Հրնդկաց և եղբարք ցեղով. և փախուցեալ ի թագաւորէն Հնդկաց, հալածեցան և եկին մինչև յաշխարհս յայս: Եւ իբրև եկին առ թագաւորն Հայոց Վաղարշակ, և նա ետ զերկիրն Տարաւնոյ յիշխանութեամբ նոցա...: Եւ յետ հնգետասան ամի ետպան թագաւորն զերկոսեանն և զտեղիսն իշխանութեամբ ետ որդոց նոցա... (էջ 76—78, 107—108):

Մնացածը, կարծում ենք, պարզ է:

Վարդան Արևելցու ամենահիմնական աղբյուրներից է Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը: Նրան է զիմել բազմաթիվ առիթներով, հաճախ ըստ պատշաճի համառոտելով ընդգրկվելիք պատմական նյութը, երբեմն էլ բառացի բազմաձևեր կատարելով: Քիչ չեն և այն դեպքերը, երբ հետագա պատմիչների երկերի միջոցով են նրանից նյութեր փոխանցվել Վարդան Արևելցու հիշյալ աշխատության մեջ: Մենք թեև հանդամանորեն ճշտել ու զատորոշել ենք այս երկու բնագրերի փոխադարձ բոլոր առնչությունները, բայց դրանց մասին ևս ավելի մանրամասն խոսք կլինի հետագայում: Այս նկատառումով էլ կփորձենք մատնանշել միայն ուղղակի առնչություններից՝ բառացի բազմաձևերից մի քանիսը, որպեսզի առավել ստույգ ու ակներև նկատվի, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը Վարդան Արևելցու սույն աշխատության իրոք անմիջական աղբյուրներից է:

Մովսես Խորենացի

Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան, և զնորին ուսար, զոր անուանեաց Արտաշէս... Եւ եղև այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց—միոյ որդոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլոց ուստե-

երկու լուսաւոր ահունս, զոր երտուեալ նմա հայրապետն Հոսովայ և զնշխարս սրբոյն Աթանագինեայ... Զոր բերեալ սերմանէր յերկիրս հայոց, զհասարակն յԱշտիշատ պահելով, ի տեղիս Գեմետրեայ և Գիսանեայ, երկուց եղբարց հնդկաց իշխանաց, որք եկին առ Վաղարշակ արքայ, և զկնի հնգետասան ամի սպանան ի տեղոջն, որոց որդիքն ժառանգեցին զՏարուն. և էին զիսաւորք և զեռև կերպարանին ոմանք՝ ծամս պահելով...: (էջ 39):

Վարդան Արևելցի

Արդ, կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ, պահէ առ ինքն զԱրշակ զորդի իւր և զԱրտաշէս որդի նորա, և զայլ արքայազունսն առաքէ ի Հաշտեան գաւառն: Եւ եղև այս ի կրօնս ամենայն թագաւորաց, զմի ոք ունել ընդ ինքեանս ժառանգ և զայլսն ի Հաշտէնս առաքել, զի կայցեն յազա-

րաց և դատերաց, գնալ ի կողմանս
Հաշտենից՝ յազգին ժառանգու-
թիւն:

Բայց Վաղարշակ յետ այսպի-
սեաց արութեանց և բարեկարգու-
թեանց մեռանի ի Մծբին, թագաւո-
րեալ ամս քսան և երկուս:

Արշակ որդի Վաղարշակայ թա-
գաւորէ ի վերայ Հայոց ամս երեք-
տասան... պատերազմելով ընդ
պոնտացիս, և նշանակ եթող յեզեր
ժովուն մեծի. զնիզակն իւր, ասին,
զբոլորատէգ, որ էր արեամբ զեռ-
նոց մխեալ, ձգեալ ի հետեակուց՝
խորագոյնս նստոյց յերկանաքար
արձանին, զոր կանգնեաց ի ծովե-
զերն: Չայս արձան բազում ժամա-
նակս պատուեցին պոնտացիք որ-
պէս զառ ի յաստուածոցն գործ:
(էջ 118—119):

տութեան: Թագաւորեալ Վաղար-
շակայ ամս քսան և երկու, մեռա-
նի ի Մծբին. և թագաւորեաց Ար-
շակ որդի նորա ամս քսան և երեք:
Սա կառոյց զնիզակն յորձաքարի
յեզերս ծովուն Պոնտոսի, մխեալ
արեամբ թիւնաւոր սողնոց, զոր
պաշտեցին պոնտացիք իբրև զգործ
աստուծոյ: (էջ 31—32):

Քիչ հետո շարունակելով իր Պատմութեանը, Վարդան Արևելցին վերստին
չիմժում է Մովսես Խորենացու աշխատութեանը և բառացի բաղում հետեյալը.

Մովսես Խորենացի

Վարդան Արևելցի

Քանզի էին Արշարի թագաւորի
որդիք երեք և դուստր մի...

Իսկ Արգարու համոզեալ զնոսս
խաղաղանալ, ի մէջ ամենեցուն
հաստատէ զայս ինչ սահմանելով.
Թագաւորել Արտաշիսի... դառնա
ոչ առողջ մարմնով, այլ շարաշար
ցաւովք ակտացեալ...

Իսկ Արգարու եկեալ ի քաղաքն
իւր յեզեսիայ... Մառինոս որդի
Ստորգեայ, առ որ առաքեաց Ար-
գար երկուս ի գլխաւորաց իւրոց,
զՄար Իհար րդեաշխն Աղձնեաց և
զՇամշազրամ նահապետ Ապա-
հունեաց տոհմին և զԱնան հաւա-
տարիմ իւր ի քաղաքն Բերբուրին,
զգացուցանել նմա զպատճառս եր-
թալոյն իւրոյ յարեւելս... որոց

...մեռաւ Արշաիր թագաւորն
պարսից, թողեալ երեք որդի և
դուստր մի, որք վիճէին ի վերայ
թագաւորութեանն, զորս խաղա-
ղացոյց հաշտութեամբ Արգար՝
անդ զնալով. զաւագ որդին Ար-
տաշէս՝ թագաւորեցուցանէ... և ի
դառնալն պատահէ նմա ցաւ ուր-
կութեան: Եւ եկեալ յեզեսիա՝ ա-
ռաքէ առ Մարինոս զօրավարն
Հոովմայ զՄարիահա րդեշխն Աղ-
ձնեաց և զՇամշազրամ նահա-
պետն Ապահունեաց, և զԱնանէ
հաւատարիմ իւր, զի մի՛ խորհուրդ
նենգութեան կարծեսցեն զերթն
նորա յարեւելս: Եւ պատահեալ Մա-
ռինեայ յեւթրապօլիս, լուան բա-
նքս բարիս և ելին յԵրուսաղէմ, և

եկեալ գտին զնա յԵլեթերոյաօ-
լիս...

Եւ նոցա դարձեալ անտի՝ ելին
յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր
Քրիստոս վասն լրոյ համբաւաց
սքանչելագործութեանցն, որում և
ականատես եղեալ պատմեցին Ար-
գարու... (էջ 146, 147—148):

տեսին զՏէրն զի առնէր նշանս մե-
ծամեծս, և հաւատացին ի նա, և
բերին զտեսեալ նշանսն Արգա-
րու... (էջ 34):

Նկատել տանք այստեղ, որ Վարդան Արեւելցին միշտ շէ, որ անվերապահ
ու միատարր է ընդօրինակում իր աղբյուրները, այլ միաժամանակ համեմա-
տում է համախոս մի քանի աղբյուրներ ու ըստ այդմ լրացնում անմիջական
աղբյուրի հաղորդումները: Նման շատ փաստեր կարելի է վկայակոչել: Մասամբ
այդպիսին են նաև մեր կողմից այստեղ ներկայացված հատվածները:

Վարդան Արեւելցին իրեն աղբյուր օգտագործել է նաև Փափստոս Բուզանդի
«Հայոց պատմութիւն»-ը, սակայն ավելի շատ Մովսես Խորենացու աշխա-
տութեան միջոցով: Այստեղ մենք կանգ կառնենք միայն մի քանի փաստի վրա,
ցույց տալու համար Փափստոս Բուզանդի երկի մասնավորաբար անմիջական
աղբյուր հանդիսանալը: Թրինակ, Վաչե Մամիկոնյան սպարապետի մահվան
և նրա հիշատակը եկեղեցական կարգով նշելու վերաբերյալ Վրթանես կաթո-
ղիկոսի կարգադրության մասին տեղեկությունը Վարդան Արեւելցին քաղել է
ուղղակի Փափստոս Բուզանդի երկից ու զետեղել այն նյութերի մեջ, որոնք նա
վերցրել է Մովսես Խորենացու աշխատությունից, նկատելով, որ վերջինիս մեջ
այդ մասին նշում չկա¹⁷: Տիրան թագավորի դեմ պարսից կազմակերպած դա-
վադրությունը թեև համառոտ, բայց ստուգապես պատմում է ըստ Փափստոս
Բուզանդի¹⁸: Հիմնականում այդպիսին են նաև Հուսիկ կաթողիկոսի ու նրա Պապ
և Աթանազիոսի որդիների վերաբերյալ պատմածները¹⁹: Այնուհետև
ևս Վարդան Արեւելցին նախապես ըստ Փափստոս Բուզանդի է շարունակում
պատմել ներսես Մեծի մասին, հատկապես, երբ թվարկում է նրա ծագումը,
Կեսարիա գնալը, վանքերի, հիվանդանոցների, ուրկանոցների, հյուրանոցների
հիմնարկումն ու այլ միջոցառումները, Բյուզանդիոն մեկնելն ու արքայվելը²⁰:
Ինչ վերաբերում է ներսես Մեծի և Արշակի ու Պապի հարաբերություններին և
հակամարտությանը, տվյալ դեպքում Վարդան Արեւելցին արդեն նախապատ-
վությունը տալիս է Մովսես Խորենացու երկին²¹, թեպետ մեջ ընդ մեջ կրկին
գիմում է Փափստոս Բուզանդի աշխատությանը: Պապի կողմից ներսես Մեծի
թունավորվելը ակներևաբար բառացի պատմում է ըստ Մովսես Խորենացու²²:
Սակայն երբ անմիջապես նշում է, որ ներսեսի փոխարեն Պապը կաթողիկոսա-
կան աթոռին բարձրացնում է «զԶունակ ոմն», որի վերաբերյալ Մովսես Խո-

17 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 45: Փափստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, Վաղարշապատ, 1933, էջ 37—38:

18 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 46: Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 62—63:

19 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 46, Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 23, 58—59:

20 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 46—47, Փափստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 78—85:

21 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 47, Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 278—

280, 291—292:

22 Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ. էջ 48, Մովսես Խորենացի, նշվ. աշխ. էջ 305—306:

բննացին ահատարակ ոչ մի հիշատակութիւն շունի (ոչ էլ Ասողիկը, որի երկից նա բառացի քաղել է 3 տող Շահակի կաթողիկոսանայու մասին²³), նա որոշակի հիմնվում է Փալատոս Բուզանդի հաղորդումների վրա²⁴:

Այսպիսով, ավելի քան որոշ է, որ Վարդան Արևելցին Փալատոս Բուզանդի «Հայոց պատմութիւն»-ը օգտագործել է նաև անմիջաբար:

Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոց»-ը Վարդան Արևելցու համար նույնպէս հանդիսացել է անմիջական սկզբնաղբյուր: Վարդան Արևելցին Վահան Մամիկոնյանի կյանքի և ազատագրական գործունեութեան մասին՝ մանկութիւնից մինչև Հայաստանի մարզպանութեան պաշտոնն ստանձնելը, պատմում է պարզապէս խիստ համառոտելով Ղազար Փարպեցու մանրամասն տեղեկութիւնները²⁵: Մինչ այդ նա խոսելով Վարդանանց, ավելի որոշակի՝ Միհրնէրսէ՝ հազարապետի, Վարազվաղանի, վերջինիս՝ Վասակ Սյունու փեսան լինելու հանգամանքի, փեսայի, աղջկա և աներ միջև ստեղծված հակառակութեան, Վարդանանց 1232 (?) զինվորների և հոգևորականութեան նահատակութեան մասին, դարձյալ օգտվում է Ղազար Փարպեցու երկից, և ոչ՝ Եղիշեի²⁶: Նա, ամենայն հավանականութեամբ, ձեռքի տակ չի ունեցել Եղիշեի «Յաղագս Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատութիւնը, թեկուզև Վարդանանց նահատակութեան՝ իր կողմից նշված վայրն ու ամսաթիվը համապատասխան են Եղիշեի հաղորդմանն այդ մասին²⁷: Ըստ երևույթին, նա մեզ անհայտ մի այլ գրավոր աղբյուրի, կամ էլ՝ բանավոր պատումների հիման վրա է այդ նշել: Այլ կերպ, մի՞թե նա ուրիշ ոչինչ չէր քաղի Եղիշեի աշխատութիւնից: Մեզ սույն հետևութեան է բերում նաև հետևյալը: Ինչպէս տեսանք, նա և միայն նա Վարդանանց նահատակների թիվը հասցնում է 1232-ի 1036-ի փոխարեն, ինչպէս հաղորդում են և՛ Եղիշեն, և՛ Ղազար Փարպեցին²⁸: Ո՛չ «Յայսմաւուրք»-ի մեջ և ո՛չ էլ այլուր շահնդիպեցիներ նման հաշվարկի: Չենք կարծում, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել զրշազրական սխալ, որովհետև ՌԼԶ և ՌՄԼԲ տառերի խմբերը, որոնցով արտահայտված են եղել 1036 և 1232 թվերը, հազիվ թե կարող էին երբևէ շփոթել մեկը մյուսի հետ:

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աշխատութեան անմիջական աղբյուրներից է Սեբեոսի «Պատմութիւն»-ը²⁹: Վերջինիս Պետերբուրգի հրատարակութեանը (1879 թ.) կից հավելվածաբար տրված են Վարդան Արևելցու աշխատութիւնից երկու հատվածներ, հաշվի առնելով դրանց ուղղակի առնչութիւնը հրատարակվող երկին³⁰: Կան և այլ հատվածներ, որոնք նույնն են հաստատում: Բերենք դրանցից մի երկուսը՝ ավելի հստակ եզրակացութիւն գոյացնելու համար:

23 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 48, Ասողիկ, նշվ. աշխ., էջ 73:

24 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 48, Փալատոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 132:

25 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 56—57, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., հատկապէս էջ 234, 239, 342—343, 259, 346—347, 290—291, 293—296, 298, 308—310:

26 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 79, 161:

27 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Եղիշէ, Վասակ Վարդանայ և հայոց պատմութեան, Երևան, 1957, էջ 182:

28 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54, Եղիշէ, նշվ. աշխ., էջ 120, Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 155:

29 Սեբեոսի Եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939:

30 Սեբեոս, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 49—57:

Սերեոս

...և ի ժամ վախճանին... հաւատաց ի Քրիստոս... և կոչեալ զեպիսկոպոսապետն, որ Երան կաթողիկոս անուանի, մկրտեցաւ ի նմանէ... և հաղորդեցաւ... Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրց նրնջեաց ի բարուք ծերութեան իւրում, և բարձեալ զմարմին նորա քրիստոնէիցն՝ տարեալ եդին ի շիրիմս թագաւորացն: Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա յետ նորա: (էջ 29):

Վարդան Արեւելցի

Իսկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ ի վախճանն հաւատաց ի Քրիստոս, և կոչեցեալ առ ինքն զԵրան կաթողիկոսն՝ զոր տէր Գիւտ էր ձեռնադրեալ հանդերձ ալօք եպիսկոպոսօք, ի զնալն իւրում առ Պերոզ արքայ... ցանկանալով մահու, մկրտեցաւ յԵրանայ և հաղորդեցաւ և զկնի տոկոսաց կատարեցաւ, և թաղեցին զնա քրիստոնեայքս յարքունական զերեզմանս: Եւ առ զթագ նորա որդի նորա Որմիզդ... (էջ 58—59):

Սույնի անմիջական շարունակութիւնը, որտեղ պատմվում է, թե ինչպես Որմիզդին սպանեցին իր դահլիճում, նրա որդին՝ Խոսրովը հաջորդեց նրան և հալածվեց Վահրամից, դարձյալ բառացի քաղված է Սերեոսի երկից³¹: Հետևյալը նույն կարգի քաղվածք է.

Սերեոս

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունու յաշս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն երկրին Վրկանայ... Կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ... զլեզու իւրեանց մոռացան և դպրութիւն նուագեալք... և հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէցոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Արէլ... և հրամայէ երթալ տեսանել զերկիր իւր... և նստուցին զԱրքահամ զմշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան: Ապա սկսան արկանել հիմն եկեղեցոյն. ժողովեաց ճարտարպետս քարի... Եւ գրեալ զիր ամբաստանութեան բերդակալին և մարզպանին առ արքայ, եթէ «կա-

Վարդան Արեւելցի

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն թշնամիս նորա և նորա պատուասիրեալ նմա տայ զմարզպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ և բնակեալ ի թուրքաստան անպատին մեծի՝ որ Սագաստանն կոչի, մոռացեալ զլեզու և զդպրութիւն որք տեսեալ զՍմբատ խրախրինէին և նորոգէին զլեզու և զգիր, և զերէց մի նոցա Հարէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի հայրապետին Մովսիսի, հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, և առեալ հրաման յարքայէ՝ զայ տեսանել զերկիր իւր: Եւ եկեալ ի Դուին՝ սկսաւ շինել զփայտաշէն Սուրբ Գրիգորն ի Վարդանայ սրբ-

³¹ Հմմտ. Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 59, Սերեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 35—36:

րի մերձ է առ բերդն, և վնասակար է ի թշնամույն»։ Տրաման հասեալ յարքայէ, եթէ «բերդն քակեսցի և եկեղեցին անդրէն ի նմին տեղուոյն շինեսցի»։ (էջ 61, 65)։

րոյ. և պահնակ բերդին բողոքէ ի Դուռն թէ վնասակար է բերդիս. և ելանէ Տրաման քակել զբերդն և հեռագոյն շինել և խնդացեալ Սմբատ ի փառս Քրիստոսի շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, և տայ ձեռնադրել պատրիարք զաէր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց... (էջ 59—60)։

Այսքանը այս կապակցութեամբ, կարծում ենք, լիովին բավարար է։

Վարդան Արևելցին տեղեկութիւն է քաղել նաև Մ. Կաղանկատվացու աշխատութիւնից, թեկուզ ընդամենը մի քանի տող³²։

Ղևոնդի «Պատմութիւն»-ը, թեև համեմատաբար քիչ, ուղղակիորեն առնչվում է Վարդան Արևելցու աշխատութեանը։ Միաժամանակ միջնորդաբար, հետագա այլ հեղինակների երկերի միջոցով ևս, այն փաստագրական նյութ հայթայթել է Վարդան Արևելցու համար։ Բայց մենք այստեղ կփորձենք ցույց տալ երկու երկերի միայն անմիջական կապը, ինչպես որ մտադրվել ենք վարվել մեր սույն հոդվածում նաև մյուս բոլոր աղբյուրների կապակցութեամբ։ Դարձյալ զիմենք քննադրական համեմատական զուգահեռների հավաստի եղանակին, թեկուզև մեկ օրինակով։

Ղևոնդ

Վարդան Արևելցի

... զի զԻ (20) ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետ՝ մեռանի։ Յետ է այնորիկ փոխանորդէ զիշխանութիւնն Մահմետի Աբու Բարը և Ամր և Օթման։

... Հասանէին ի վերայ արքային Պարսից, որում անուն էր Յազկերտ... հարեալ սատակէին։ Եւ յայնմհետէ բարձեալ կործանէր թագաւորութիւնն Պարսից, որոց եղև թիւ իշխանութեան նոցա ամք նՁԱ (481)։ (էջ 3, 6—7, 12—13, 14)։

Բայց Մահմէտ քսան ամ կալեալ զիշխանութիւնն... (բաղմակեաները ըստ տպագրի են—Փ. Ա.) և զկնի նորա առին զիշխանութիւնն Օմար և Ամր և Բուրաքր... և սպանին զՅազկերտ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւնն պարսից, որ տեևաց ամս շորեքհարիւր ութսուն և մի։ (էջ 68)։

Վարդան Արևելցին այնուհետև էլ օգտվել է իր սույն աղբյուրից, խիստ համառոտելով նրա հաղորդումները հատկապես Աշոտ Պատրիկի՝ արաբների դեմ կազմակերպած ապստամբության, իշխանների հետ անմիաբանության, Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների կողմից կուրացվելու, Հեշմի որդիներ Աբդլլանների իշխանության գլուխ անցնելու Մուշեղ Մամիկոնյանի, Սմբատ

32 Մովսէս Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին, Քիֆլիս, 1912, էջ 267—269։

Բաղրատունու ապստամբության և այլ դեպքերի վերաբերյալ³³, երբեմն միայն միջանկյալ դիմել է այլ ազդեցությունների, մասնավորապես Ասողիկի աշխատությանը³⁴:

Հովհաննես Գրասխանակերտցու «Պատմութիւն»-ը³⁵ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» առավել կարևոր սկզբնաղբյուրներից է, որին նա դիմել է հաճախ և ընդարձակ բառացի քաղվածքներ վերցրել նրանից: Վարդան Արևելցին նաև մանր տեղեկությունների համար էլ ուղղակի օգտվել է նրանից՝ մյուս աղբյուրներից իր քաղած նյութերը կապակցելու, լրացնելու կամ հիմնավորելու համար, ինչպես վարվել է նաև մի քանի այլ հիմնական աղբյուրներից օգտվելիս: Սակայն այս մասին ևս՝ այլ առիթով: Այժմ փորձենք բնագրական մի քանի զուգահեռներով ցույց տալ, որ իրոք Հովհաննես Գրասխանակերտցու հիշյալ աշխատությունը Վարդան Արևելցու անմիջական և հիմնական աղբյուրներից է, որին նա միաժամանակ մեծ վստահություն է ընծայել:

Հովհաննես Գրասխանակերտցի

Եւ զկնի սորա (Քրիստափորի — Փ. Ա.) զՂևոնդ, որ էր ի փոքր եւ աատայ կացուցանեն յաթոս սրբութեան: Իսկ Ղևոնդի կալեալ զաթոս հայրապետութեան զամս երիս՝ վախճանի: Եւ զկնի սորա զՆերսէս ի զաւառէն Բաղրեանդայ ի զեղջէ Աշտարակայ...: Ի ժամանակի աստ խոսրով արքայ պարսից զօր բազում զումարեալ առաքէ հրոստկս Վարդանայ, և լինի պատերազմ սաստիկ ի զաշտին խաղամախայ. և ի մշտաջան աղօթից սրբոյն Ներսեսի անհնարին հարուածովք մաշեն զօրքն Վարդանայ զպարսիկան: Յաւուրս սորա Մախոժ... ի մկրտութեան Յիզաբուզիտ անուանեալ, որ թարգմանի «աստուած ապրեցոյց», բազում շարշարանս կրեալ ի մարդպանէ Վշնասն Վահրամայ՝ ի Դվին քաղաքի սյսակի մարտիրոսական մահուամբ ի Քրիստոսէ: Զոր բարձեալ զսուրբ մար-

Վարդան Արևելցի

Այլ զտէր Քրիստափոր յաշորդէ տէր Ղևոնդ ամս երկու, և ապա տէր Ներսէս ամս ինն: Ի ժամանակս նորա առաքեաց խոսրով թագաւորն Պարսից հրոսակս, զի կալցեն զՎարդ. և եղև մեծ պատերազմ ի զաշտին խաղամախայ և կոտորեն զզօրսն պարսից աղօթիւք սուրբ հայրապետին Ներսիսի: Եւ յայն ժամանակս կատարեցաւ սուրբ Յիզաբուզիտ, որ է աստուած ապրեցոյց. կատարեցաւ ի Դուին՝ ի մարդպանէն Վարհամայ, զի զկնի Վարդայ՝ պարսիկք իշխէին մարդպանք, և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ Հայրապետին Ներսիսի առնթեր կաթուղիկոսարանին, շինեալ վկայարան կոփածոյ ի վերայ նորա:

Ի սոյն աւուրս Եզրաս Անգեղացի զղասս ճարտասանաց բաղմացոյց: Զկնի Ներսիսի՝ տէր Յոհանէս ամս հնգետասան. և յետ

33 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 74—75, Ղևոնդ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 112—114, 121—124, 136, 140—143, 145—157:

34 Հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 74—75, Ասողիկ, նշվ. աշխ., էջ 130—131: Տողատակ նոտրագրով բերված պարբերությունը ևս բառացի անվամբ է Ասողիկի երկից, ուստի այն պիտի դրվի բնագրի մեջ, ինչպես հին ձեռագիր օրինակում էլ եղել է:

35 Հ. Գրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912:

մինն սրբոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսիսի ... եղին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբբ: Սորա կալեալ զհայրապետական աթոռն զամս ինն՝ վախճանի: Եւ զկնի սորա զոմն Յոհաննէս ի Քարեղենից... որ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս ժէ՝ վախճանի: Յետ սորա ապա զՄովսէս զայրն Աստուծոյ, որ յնդիվարդ գեղջէ...:

Յամի տասներորդի հայրապետութեան սորա և երեսներորդի առաջներորդի ամին Խոսրովայ՝ որդոյ Կաւատայ արքայի պարսից՝ լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երկու ամաց... (էջ 63—65):

Մեր եզրակացութիւնը ավելի ամրապնդելու համար բերենք մի **տրինակ** ևս: Մինչ այդ ասենք, որ ներկայացվող հատվածների միջև ընկած էջերում նրա աշխատությունից առնված շատ այլ բաղվածքներ էլ կան, որոնք միանգամայն վկայում են, որ Վարդան Արևելցին այն ձևովի տակ պահել է տեղանորին և օգտագործել ամեն մի անհրաժեշտ առիթով:

Հովհաննէս Գրասխանակերացի

Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկական սոմարի... առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ, որ բանիրուն այն արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: ... Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք... հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր... կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Յետ այսորիկ Իսրայէլ յՈղմսոյ յաջորդէ զաթոռ հայրապետութեան: Յաւուրս սորա զԲառարայ ոմն զօրագլուխ զօրուն տաճկաց որ ի Հայք՝ վանեալ վատնէ կոտոր-

նորա տէր Մովսէս յնդիվարդայ ամս երեսուն: Սա ի տասներորդ ամի հայրապետութեանն իւրոյ, և յերեսներորդ առաջներորդ ամին Խոսրովու, որդոյ Կաւատայ, և ի շորեքտասաներորդն Յուստիանոսի, որ զսուրբն Մովի շինեաց, եղիր Բուական հայոց և տոմար յորում ժամանակի լցեալ էր շրջանն հինգհարիւր երեսուն և երկուց...: (էջ 57):

Վարդան Արևելցի

Յայնմ ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրաման յԱնաստասայ՝ յօրինէ տոմար հանապաղորդ, որ մինչ խորհէր պատրիարզն ժողովով հաստատել՝ կատարի, և յաջորդէ զնա Իսրայէլ՝ զկնի վեց ամ պաշտելոյն Անաստասայ: Յաւուրս սորա զԲառարայ ոմն զօրագլուխ տաճկաց՝ որ ի Հայս, վանեալ հալածէ ներսե՛հ իշխանն Վրաց: Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն՝ վախճանի, և առնու զքօղն սուրբն Սահակ, որ ի Չորոփոր յԱրքունեացն: Ի յեօթն ամին սորա՝ արշաւեցին Խաղիբբ ի Հայս, և սպա-

Ճամբ սաստիւ ներսե՛հ իշխան
Վրաց՝ փախստեայ զնա արա-
րեալ: Իսկ Իսրայէլ կացեալ յա-
թոս հայրապետութեան ամս
տասն՝ վախճանի: Եւ զկնի նորա
Սահակ կայ յաթոս հայրապետու-
թեանն, որ հայրենօք էր ի Չորա-
փորոյ յարքունաշէն զեղջէ...: Իսկ
ապա յեօթներորդ ամի աթոռա-
կայութեան սորա պատերազմ
սաստիկ յայնմ ճարգէ Խաղրաց ի
վերայ սաստկացեալ լինէր մեծ
իշխանին Գրիգոր, որ և սպանաւ
իսկ՝ և եղաւ բնդ հարս իւր: Զկնի
սորա պաշազատէ զիշխանութիւ-
նըս Հայոց Սմբատ Բագրատունի՝
որդի Սմբատայ: (էջ 90—93):

նին զԳրիգոր իշխանն. և զերեցին
զհնարաւորն իւրեանց: Եւ առնու
զիշխանութիւնս Աշոտ Բագրա-
տունի՝ որդի Սմբատայ: (էջ 70):

Այս կապակցութեամբ այսքանը, կարծում ենք, լիովին բավարար է:

Ուխտանեսի «Պատմութեան» Վարդան Արեւելցու համար անմիջական աղ-
բչութիւն հանդիսանալու մասին անուղղակի վկայում է ինքը՝ Վարդան Արեւելցին³⁶:
Այդ որոշակի հաստատում է նաև բնագրական համեմատական բնութեամբ,
ինչպես, օրինակ.

Ուխտանես

Իսկ զԿիւրիոնէ...: Սա էր աշխար-
հաւ և ազգաւ ի Վրաց՝ ի գաւառէ
Զաւախաց՝ ի զեղջէ որ կոչի Ար-
կուտրի. և ունէր զգալրութիւն
վասն վրաց և հայոց: Եւ երթեալ
չերկիրն Հոռմոց բնակեցաւ անդ
ամս հնգետասան՝ ի գաւառին՝
որ կոչի Կողոնիայ. և բնակի անդ
մեծ քաղաքագեղն՝ Նիկոսպոլիս
կոչեցեալ՝ յեզր գետոյն, որ կոչի
Գալլ: Եւ վարժեալ և ուսեալ
զգալրութիւն նոցա... զնաց ի Հայս
առ Մովսէս կաթողիկոսն Հայոց,
և բնակէ առ նա ի սուրբ կաթու-
ղիկէին որ ի Գուին... Եւ նա կա-
ցուցանէ զնա վանաց երէց սրբոյ
կաթողիկէին, այլ և բորեպիսկո-
պոս՝ տալով նմա զվիճակ զգա-

Վարդան Արեւելցի

... որ և զԿիւրիոն, որ էր ազգաւ
ի Վրաց, ի գաւառէն Զաւախայ ի
զեղջէ Սկուտրի, և գիտէր դպրու-
թիւն հայ և վրացի, ձեռնադրեաց
վրաց կաթողիկոս, որ եղև յետոյ
քաղկեդոնիկ: Քանզի ի տղայու-
թեանն զնացեալ էր ի Յոյնս, ի
Կողոնիա գաւառ, և բնակեալ ի
գեօղն Նիկոսպոլիս յեզր Գալլ գե-
տոյ, որ և վարժեցաւ յոյն դպրու-
թեամբ. և յետ հնգետասան ա-
մին, եկն առ Մովսէս ի Գուին, և
կացուց զնա Վանաց երէց սրբոյ
կաթողիկէին, այլ և բորեպիսկո-
պոս Այրարատեան գաւառին, ամս
եօթն. և յորժամ մեռաւ կաթողի-
կոսն վրաց, առաքեցին իշխանք
աշխարհին առ տէր Մովսէս, ըստ

³⁶ Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 42:

ւան Այրարատեան: Եւ կացեալ ի նմին ամս հինգ. ապա ընդ այն ժամանակս մեռանի կաթողիկոսն Վրաց: Եւ առաքեն իշխանք աշխարհին և նախարարքն հանդերձ եպիսկոպոսօքն առ Մովսէս կաթողիկոսն Հայոց՝ խնդրել իւրեանց առաջնորդ: Իսկ նա խորհուրդ արարեալ՝ զի ի տանէ իւրմէ տացէ նոցա Առաջնորդ... ձեռնադրէ զԿիրոն... Իսկ յորժամ եհաս Կիրոն ի վիճակ իւրոյ... և նուաճէ նորօք. հանդերձ առհասարակ զամենայն աշխարհն ընդ իւրով իշխանութեամբ: ...ձեռնադրէ եպիսկոպոս մի խուժիկ նեստորական, որում անուն Կիսկոշիւր, որ է խստութիւն: Քանզի և էր իսկ խիստ...: Սա եկեալ առ նա յաշխարհէն Հոռոմոց՝ ի գաւառէն Կողոնեայ՝ բնակութեամբ ի գեղջէն՝ որ կոչի Զուտարիմայ, մերձ ի նիկոպոլիս... գաւառակից միմեանց լեալ կամ գեղակից, այլև աղանդակիցք և ուսումնակիցք...: (Հատված Բ, էջ 3—5):

առաջին կարգին, զի տացէ նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս ի տանէ իւրմէ. և երթեալ նուաճեաց զամենայն երկիրն. և ապա եկն առ նա խուժիկ մի նեստորական, որ Կիսկոշիւր, այսինքն խստութիւն, որպէս եղևն, որ էր ի Կողոնիոյ, ի գեղջէն Զուտարիմայ, մօտ նիկոպոլիս. որ լեալ էին միմեանց ուսումնակիցք և աղանդակիցք: (էջ 58):

Որպէսզի որեւէ երկրնորանքի առիթ շմնա, ստորև կրէրենք Քառասուն մանկանց նահատակութեան վերարեւոյալ հեռեւյալ համեմատելի բնագրական զուգահեռք.

Ուխտանես

Մոռացումն եղև մեզ՝ յիշատակել զնահատակութիւնն սրբոց քառասնիցն՝ որ եղև յամբարիշտն լեկիանէ. զոր եհարց երանելի սուրբ թագաւորն Կոստանդիանոս՝ զՄաքսիմիանոս և զՄաքսինդես, և զՄաքսիմոս, և զամբարիշտն լեկիանէս... և հանեալ զհարիւրապետ ոմն հանդերձ զնդաւն իւրով ի գաւառն որ կոչի Կապուտակէք, և ի թեմն Թելախունէք, և Անատալիկէք, և Խարտանայք, և Արմենակէք, և Դաղիմոն, զի զորս գտցեն ի բրիստոնէից զօր՝ մա-

Վարդան Արեւելցի

Իսկ սուրբն Կոստանդիանոս երարձ զՄաքսիմիանոս ամպարիշտն և զՄաքսինտէս, և զՄաքսիմոս, և զլիկիանոս անօրէն, որ եհան հարիւրապետ զոմն իւրով զնդաւն ի գաւառն Կապուտակէք, և ի թեմն Թելախունէք և Անատալիկեայք, և Խարտանէք և Արամենակէք և Դաղիմոն, շարշարել զորս գտցէ բրիստոնեայս: Յորմէ խրտուցեալք փախեան ի կողմանս Սերաստիոյ, ոմանք ի Մելեսիտն, որ է ամբոց ի լեռնակողմն, և այլք ի Տախալասոն լե-

տուսցեն ի պաշտօն կոսցն, և կամ սպանցեն շարշարանօր: ... և եկեալ հասին ի սահմանս Սեբաստիոյ. դիմեն ըստ իւրաքանչիւր յաջողութեան՝ ոմանք ի Մելեսիան, որ է ամրոց և լեռնակողմ, իսկ այլք ի Տախալասուն ... սոր ի վերայ եղեալ կոտորեցին զբազումս... Իսկ ի տեղի սպանելոցն... կոչի Եկեղեցաձոր, և սակս այնորիկ տեղիք նահատակութեան նոցա պատուին և փառասորին ի բնակչաց աշխարհին: Իսկ սուրբ քառասունքն... երթեալ բնակէին յայրի մի յեզր գետոյն՝ որ կոչի Ալիս՝ ի տեղի մի ամրոցին... որ կոչի Քաշ-Վահանայ, որ զեռես տակաւին կայ տեղիք կայարանաց սրբոցն և գիր իւրաքանչիւր անուանցն գրեալ ի տախտակս քարանցն...: Իսկ ապա յետոյ երթեալ պատմէին Լիկիանէ(ի) վասն սրբոցն...: Եւ նորա հրաման տուեալ... գտին զնոսա ի տեղւոջն... տասն և հինգ Արեգ ամսոյ... և վասն այնորիկ կարգեցար մեք զօրն զայն տօն սրբոց Քառասնիցն...: Իսկ կատարումն նահատակութեան նոցա եղև ի մարտի ինն... (Հատված Ա, էջ 85—87):

անն, որք բռնութեամբ արտաքսածեալ կոտորեցան յԵկեղեցաձորն կոչեցեալ, որ և պատուի մինչև ցայսօր: Իսկ սուրբ քառասունքն երթեալ Թաքեան յայրին՝ որ կայ ի վերայ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քաշ Վահանայ, ուր կառուցին խաչ, և գրեցին զիւրաքանչիւր անուանս ի քարին. զոր գիտացեալ պատմեցին Լիկիանեալ և հրամանաւ նորա եկեալ հանին յայրէանտի, ի հնգետասան արեգ ամսոյ. զոր Ուխթանէս տօն կարգեաց՝ որ է սկիզբն հանդիսի նոցա և կատարումն ի մարտի ինն: (էջ 41—42):

Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Տիեզերական պատմութիւն»-ը³⁷ և Վարդան Արեւելցու կողմից լայնորեն օգտագործված սկզբնաղբյուրներից է: Տվյալ իրողությունը ըստ երևույթին բացատրելի է նաև նրանով, որ այն նույնպես «տիեզերական պատմություն» է, ինչպես և Վարդան Արեւելցու աշխատությունը, ընդգրկում է լայնածավալ ժամանակաշրջան և պարունակում առատ փաստագրական նյութ: Միաժամանակ նկատելի է, որ Վարդան Արեւելցու համար այն առավել վստահելի աղբյուրներից է: Այս երկից Վարդան Արեւելցու արած քաղվածները համեմատաբար ավելի հարազատ են իրենց մայր աղբյուրին և ավելի նվազ են ենթարկված լրացումների ու այլ միջամտությունների: Եղած տարբերությունները հիմնականում Վարդան Արեւելցու կողմից կատարված համառոտագրության, երբեմն էլ քաղվածք բուն սկզբնաղբյուրի կամ

37 Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1855:

համախոս այլ աղբյուրի հետ համեմատելու և ըստ այդմ՝ փոքր լրացումներ կատարելու արդյունք են: Խոսենք բնագրական օրինակներով:

Ասողիկ

Սա (Արշակ—Փ. Ա.) սպանանէ զԳնէլ եղբորորդի իւր վասն նախանձու Փառանձեմայ կնոջ նորա ի քսութենէ Տիրիթայ... նզովեալ սրբոյն ներսիսի զԱրշակ... շոգալ յաշխարհն Յունաց, փոխանակ իւր թողեալ զԽաղ եպիսկոպոս Բագրևանդայ... որոյ շտեմարանք աղբիւրացն ըստ նմանութեան մեծին Եղիայի:

Ընդ այն ժամանակս եկեալ Շապ-հոյ Պարսից արքայի յԱտրպատական՝ առ ինքն կոչէ զԱրշակ: Եւ կալեալ կապեաց* զնա և ետ տանել ի Խորասան: (էջ: 70):

Այսպիսին է նաև հետևյալ օրինակը.

Ասողիկ

Իսկ յետ մահուանն Սանատրկոյ թագաւորէ Հայոց Երուանդ... և սատակէ զամենայն որդիսն Սանատրկոյ, բայց միայն մնաց Արտաշէս մանուկ, զոր առեալ սանտուի նորա և Սմբատ զաշեկի նորա՝ անցանեն առ Դարեհ արքայ Պարսից սնուցանել զմանուկն: Յայսմ կասկածէ երկուցեալ Երուանդ... ի թագաւորութեանն Վեսպասիանոսի և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետքս: ...

Յաւորս սորա փոխին արքունիքն յԱրմաւրայ... ի քարակտուր մի բլուր... որ այժմ ասի Երուանդաբար: ...Հեռագոյն ըստ հիւսիսոյ քաղաք փոքր շինեալ ի վերայ

Վարդան Արևելցի

Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբորորդի իւր վասն Փառանձեմայ կնոջ նորա ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն ներսէս, և ինքն զնայ ի Յոյնս, փոխանորդ իւր թողեալ զԽաղ եպիսկոպոս Բագրևանդայ, որոյ շտեմարանքն աղբերացան որպէս Եղիայի՝ կնոջն այրոյ:

Ընդ այն ժամանակս Շապուհ արքայն Պարսից զայ յԱտրպատական և առ ինքն կոչէ զԱրշակ, կապէ զնա և տայ տանել յԱնուշն կոչեցեալ զղեակ: (էջ 48):

Վարդան Արևելցի

...Եւ առնու զթագն Երուանդ... և կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ, զերծեալ մանուկ մի Արտաշէս անուն, զոր առեալ Սմբատայ՝ անկանի ի Պարսս, առ Դարեհ արքայ վերջին: Եւ Երուանդ թողու զՄիջագետս ի Տիտոս և առնէ զնա յոյժ. և շինեալ զԵրուանդաբար, անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ, և ի նմանէ հեռագոյն շինէ զԹագարան տուն կոոց ի վերայ Ախուրանայ գետոյ, և բուրմն զնէ զԵրուանդ եղբայր իւր: (էջ 35):

* Տաղտակում ունի տարբերակը՝ կապէ, ինչպես Վ. Արևելցու հատվածում է:

Ախուրեան գետոյն և անուանեաց
Բագարան, և անդ զբազինսն և-
դեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրո-
մապետ կացուցանէ: (էջ 47—48):

Հաշորդ զուգահեռ համեմատութիւնը կարող է լիովին ամրապնդել վե-
րոնշյալ եղբակացութիւնը.

Ասողիկ

Եւ Արղւմէլիք վախճանեալ՝ տի-
րէ տաճկաց Վլիթ որդի նորա ամս
Ժ: Սա յառաջնում ամի իշխանու-
թեան իւրոյ խորհեցաւ բառնալ
յաշխարհէս զազատագունդն Հա-
յոց, և հրամայէ Մահմետի զօրա-
վարին զայս առնել: Եւ նա հրա-
մայէ Կասմայ ումեմն, որ էր
հրամանատար ի կողմանս նախ-
ճաւան քաղաքին՝ կոչել առ ինքն
զնախարարսն Հայոց...: Եւ հրա-
մայեցին յերկուս բաժանել զնո-
սա, զոմանս յեկեղեցին նախճա-
ւանայ, և զկէսն յեկեղեցին Խրա-
մայ, և հրով վառեալ զեկեղե-
ցիսն՝ այնպէս այրեցին զամենե-
սեան ի ՃՄԳ (113 551=664)
թուականին և զգլխաւոր նախա-
րարսն զփայտէ կախեալ դատա-
պարտէին...

Եւ զկանայս և զորդիս նոցա ի
գերութիւն վարեալ, որ և զՎար-
դան որդի Խոսրովու Գողթան
տեառն... զվճիռ մարտիրոսու-
թեան ընկալաւ: (էջ 124—125):

Վարդան Արևելցի

Մեռաւ Արղրլ մէլիք, և առ ըզ-
տեղին Վլիթ որդի նորա, որ հրա-
մայէ Մահմետի բառնալ զա-
զատան Հայոց ի Կասմայ ումե-
մընէ, որ էր հրամանատար նախ-
ճաւանի, որ խարէութեամբ հա-
ւարեալ զնոսա, զոմանս յեկեղե-
ցին Խրամայ, և զկէսոն յեկեղե-
ցին նախճաւանի, այրէ զնոսա ի
ՃՄԳ (113 551=664) թուակա-
նին, և զգլխաւոր նախարարսն
ըզփայտէ կախեալ շարշարէին և
զկանայս և զորդիս նոցա՝ ի գե-
րութիւն վարեցին, ընդ որս և
զՎահան՝ որդի Գողթան տեառն,
որ և մարտիրոսացաւ: (էջ 72):

Բնական է, որ Ասողիկը նույնպէս իր նյութերը հավաքել է իրեն նախոր-
դած պատմիչների երկերից, երբեմն նաև բառացի, ու զետեղել իր աշխատու-
թյան մեջ: Այստեղից էլ վերոբերյալ հատվածների որոշ բնդհանրութիւնները
Մովսէս Խորենացու և Ղևոնդի երկերի համապատասխան հատվածների հետ³⁸,
որոնք առաջին հայացքից նույնիսկ կարող էին առիթ առնել հնթադրելու, թե
Վարդան Արևելցին նրանցից է օգտվել անմիջաբար: Սակայն այդպէս չէ, որով-
հետև Ասողիկի և Վարդան Արևելցու բերված ու չբերված հատվածների բառացի
նմանութիւններն ավելի շատ են ու ակնհայտ: Բացի այդ, նշված գեղարքերի
անմիջական հաշորդականութիւնը, որն, ասենք, առկա է Ղևոնդի երկում,

³⁸ Հմմտ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 162—166, 283—285, 295, 299—300: Ղևոնդ,
նշվ. աշխ., էջ 31—36, Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 72:

Աստղիկի կողմից խմբագրարար փոփոխված է և ստեղծված նույն դեպքերի հաջորդական նոր շղթա, որը և տվյալ դեպքում նկատվում է Վարդան Արևելցու աշխատության մեջ: Վերջապես Վարդան Արևելցին անձամբ հաստատում է, որ ինքը ուղղակի օգտվել է Աստղիկից: Այս առնչությամբ նա գրում է. «Աստղիկն ասէ, թէ ստուգեցաք՝ զվեշտասաներորդ Յազկերտի՝ երրորդում Մարկիանոսի»³⁹: Իրապես էլ Աստղիկի երկում կա նման բառացի հիշատակություն⁴⁰, Ուստի, ավելի քան պարզ է, որ Աստղիկի «Տիեզերական պատմութիւն»-ը Վարդան Արևելցու անմիջական և կարևոր աղբյուրներից մեկն է:

Վարդան Արևելցուն ամենից առավել փաստական նյութ հայթայթեղ սկզբնաղբյուրը, թերևս, Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ն է՝ Առատ և բազմաբնույթ են հատկապես 1080—1140-ական թվականների ընթացքում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների, հայ-բյուզանդական հարաբերությունների, խաչակրաց արշավանքների, խաչակիրների՝ Կիլիկյան հայկական պետության տարածքի վրա ծավալած գործունեության, ազգային-եկեղեցական խնդիրների և պատմական անձնավորությունների վերաբերյալ հաղորդված տեղեկությունները: Շատ են քաղվածաբար վերաշարադրված փոքր ու մեծ հատվածները, սակայն սակավ չեն ևս ուղղակի բառացի առնված մասերը:

Ծանոթանանք բազմաթիվ հատվածներից մի քանիսին, որոնք միանգամայն որոշակի կհաստատեն այս իրողությունը և միաժամանակ որոշ պատկերացում կտան Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» Վարդան Արևելցու աշխատության համար ունեցած աղբյուրագիտական և բնագրագիտական կշռի ու նշանակության մասին:

Մատթեոս Ուռհայեցի

Յայսմ ժամանակի (ՇԻԾ—Ա. Փ.) սպանաւ Վասակ իշխանն հայոց որդի Գրիգորի Մագիստրոսին և եղբայր տէր Գրիգորիսի. սա էր տուկի յԱնտիոք քաղաքին. սա սպանաւ ի շուկայ փողոցին Անտիոքայ ի ձեռն նենգաւոր ազգին հոռոմոց... և ժողովեցան զօրք նորա ի Կլայն Անտիոքու, և յայնժամ ազատագունդն Վասակայ կոչեցին զՓիլաոտոս և տան զԱնտիոք ի ձեռս նորա: ...Եւ յայնժամ բռնակալեցաւ Փիլաոտոսն ի վերայ Անտիոքայ և առեալ վրէժ արեան մեծին Վասակայ Պալհաւունոյ: (էջ 213—214)

Վարդան Արևելցի

Ի հինգ հարիւր քսան և հինգ թուին սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթողիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, ի նմին քաղաքի նենգութեամբ. և զօրք նորա ամրացեալ ի Կլայն, ետուն զքաղաքն ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յայնժամ ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ, որոյ առեալ զքաղաքն, խնդրեաց զվրեժ արեան նորա: (էջ 104):

39 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 54:

40 Աստղիկ, նշվ. աշխ., էջ 79:

41 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Ահա մեկ ուրիշը.

Մատթեոս Ուռհայեցի

Իսկ ի թուականութեանն Հայոց ի յամի Շե՛՛՛ արար ժողով հեծելոց Սուգման որդի Արդուխին և ամիրայն Սամուսատայ Պալտուխն որդի Ամիրխաղէ և յաուրս հնձոցն գան ի վերայ Ուռհայոյ: Եւ թորոս կուրապաղատն տէրն Ուռհայոյ եղև լցեալ ամենայն իմաստութեամբ... և այնու ոչ կարացին յաղթել քաղաքին: (էջ 250):

Ուշագրավ է նաև հետևյալը.

Մատթեոս Ուռհայեցի

Յայսմ ժամանակի կատարեցաւ մարգարէութիւն սրբոյն ներսեսի հայոց կաթողիկոսին, զորս վասն Հոռմայեցւոց ելիցն խօսեցաւ... և բարձրագահ իշխանութեամբ ելեալ գային իշխանք ազգին փռանգաց... որոց էին անուանքն այսորիկ. Կոնդոփրէ, այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն հոռմայեցւոց, և նորին եղբայրն Պաղտինն: Այս Կոնդոփրէ էր, որ ունէր զթուրն և զթագն ի հետ իւր Վեսպիանոսի թագաւորին, որ կոտորեաց զԵրուսաղէմ. էր և մեծ կոմսըն որ ասէին Պեմունդ, և Տանգրի քուրորդի նորա, և կոմսն՝ որ ասի Զնճիլ, այր ահարկու և փառաւոր, և Ռոպերդն նորմնդաց կոմսըն, և միւս այլ Պաղտինըն, գայր և յետոյ կոմսն՝ որ ասի Ծօսլին, այր հզօր և քաջ: Արդ այսքան արք հզօրք և պատերազմողք... (էջ 253—254):

Վարդան Արևելցի

Ի հինգ հարիւր քառասուն և չորս թուին Սուքման որդի Արդուխին, և ամիրայն Սամուսատայ Պալտուխն՝ որդին Ամիր-Ղաղէ՝ գան ի վերայ Ուռհայոյ. և դարձան լի ամօթով, զի կիրապաղատն Թէոդորոս իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն:... (էջ 109):

Վարդան Արևելցի

Յայսմ ժամանակի լնու բան մարգարէութեան սուրբ հայրապետին ներսիսի՝ որ վասն ելից փռանդացն... Եւ ելանէին արք փառաւորք զլուխք զօրաց բազմաց, որոց անուանք էին այս. Կոնդոփր, և Պաղտոյն՝ եղբայր նորա՝ յազգէ թագաւորաց. զոր ասեն ունել զթագն Վեսպիանոս՝ որ աւերեաց զԵրուսաղէմ և մեծ կոմսն Պայմունդ, և Տանկրի քուրորդի իւր, և կոմսն Զնճիլ և Ռոպերտն՝ Որմնաց կոմսն և միւս Պաղտոյնն, և Զօսլին կոմսն՝ արք յաղթողք և բազմազօրք: (էջ—110):

Այս կապակցութեամբ հարկ է նշել հետևյալ առանձնահատկութիւնը: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից առնված նյութերը ոչ միայն պատմում են պատմական ընդարձակ ժամանակաշրջանի մասին, ոչ միայն

շատ են ու մեծ տեղ են բռնում, այլև քիչ են ընդմիջված այլուստ քաղված պատմական տեղեկություններով և ժամանակագրական միասնական հաջորդականության մեջ են մաշր աղբյուրին համապատասխանաբար: Միջարկված նյութերը ուշագրավ են հատկապես նրանով, որ շատ քիչ են առնչվում մեղ ծանոթ գրավոր աղբյուրներին և խորհելու առիթ են տալիս: Այս մասին առանձին խոսք կլինի ստորև:

Այսպիսով, կարող ենք համոզված եղբակացնել, որ Վարդան Արևելցին իր «Հաւաքումն պատմութեան» մի բավականին ընդարձակ մասը (մասնավորապես՝ 104—118 էջերը) շարադրել է գերազանցապես Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հիման վրա, հաճախ կատարելով բառացի քաղվածքներ:

Ասորի բարձրաստիճան հասարակական-եկեղեցական գործիչ և անվանի մատենագիր Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն»-ը⁴² հայ մատենագրութեանն առնչվում է սերտորեն: Հեղինակն ինքը ծանոթ է հայ ժողովրդի, մասնավորաբար Կիլիկյան հայ իրականության, պատմաքաղաքական իրավիճակին, հոգևոր-եկեղեցական և մշակութային կյանքին: Բարեկամական մերձավոր կապերի մեջ է եղել հայ եկեղեցական բարձր շրջանակների, հատկապես Ներսես Շնորհալու հետ, նրա նման նախանձախնդիր լինելով բյուզանդական եկեղեցա-քաղաքական ճնշումների դեմ աղգային եկեղեցու ինքնուրույնութունը պահպանելու դժվարին պայքարում: Այսպիսի հեղինակի երկը, որտեղ բավականին շատ է խոսվում հայ ժողովրդի ու Հայաստանի մասին, չէր կարող շարժանանալ հայերի հատուկ ուշադրությանը: Այդպես էլ եղել է: Իսկ Վարդան Արևելցին հենց այն անձնավորությունն է, որը Միխայիլ Ասորու հիշյալ երկին առնչվել է բոլորից առավել: Նա գործուն մասնակցություն է ունեցել դրա հայերեն թարգմանությանը. ըստ երևույթին կամ՝ հիմնովին մշակել ու խմբագրել է Իշոխ քահանայի կողմից նախապես կատարված հայերեն թարգմանությունը, կամ էլ՝ Իշոխ քահանան է աշակցել Վարդան Արևելցուն սույն թարգմանությունն իրագործելու համար: Ահա այս նույն երկը կարելի է առանց երկմտության ասել, որ նույնպես «Հաւաքումն պատմութեան» ամենահիմնական աղբյուրներից մեկն է: Վարդան Արևելցին տեղ-տեղ նախապատվությունը տվել է նրան նույնիսկ այն դեպքերում, երբ ձեռքի տակ ունեցել է հայ հեղինակների երկերը: Նրանից առնված նյութերը զետեղված են սկզբի էջերում՝ 5—30 և վերաբերում են ըստ մեծի մասին Աստվածաշնչի թեմաներին:

Ինչպես հայտնի է, մեղ են հասել Միխայիլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանության երկու խմբագրություն, որոնք մեկը մյուսի համեմատությամբ ունեն նկատելի տարբերություններ: Մեր համեմատություններից պարզվում է, որ Վարդան Արևելցին, թեև հիմնականում օգտվել է Ա* խմբագրությունից, բայց թերևս նաև Բ խմբագրությունից, որովհետև նրա կողմից կատարված քաղվածքները մերթ նման են մեկ՝ այս, մեկ այն խմբագրությանը: Կարելի է ըստ այսմ ենթադրել, որ Վարդան Արևելցին ձեռքի տակ է ունեցել հավանաբար իր անմիջական գործակցությամբ թարգմանված բնագ-

⁴² Միխայիլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, նաև Երուսաղէմի 1871 թ. հրատարակությունը:

* Ա-ով պայմանականորեն նշում ենք Երուսաղէմի 1870 թ., իսկ Բ-ով 1871 թ. հրատարակությունները, միաժամանակ դրանք համապատասխանաբար համարելով Ա և Բ խմբագրություններ:

րի սկզբնական օրինակը, որից հետո իր և մեկ ուրիշի ձեռքով ստեղծվել են հիշյալ երկու խմբագրությունները: Այս և հարակից հարցերին նույնպես անդրադառնալու ենք այլ առիթով: Այժմ փորձենք բնագրական կոնկրետ դուզահաններով ավելի հավաստի դարձնել նաև սույն աշխատության անմիջական աղբյուր հանդիսանալը:

Միխայիլ Ասուրի

Եւ Մադիդիմոս պատրիարքի ասէ. յետ երեսուն ամի ելիցն ի դրախտէն՝ Ադամ ծնաւ զԿայէն և զԿիմայ քոյր իւր. և երեսուն ամաւ զկնի ծնաւ զԱբէլ և զԱբելուհի՝ քոյր իւր, և յետ հարիւր երեսուն ամի՝ սպանաւ Աբէլ... (Ա. էջ 6):

Որ Վարդան Արևելցին սույն հատվածը կարող էր քաղել միայն Միխայիլ Ասուրու այս երկից, հաստատվում է ոչ միայն նկատվող բառացի բացահայտ նմանությունը: Մադիդիմոս Պատրիարքին, որի խոսքերը մեջ են բերված վերոնշյալ հատվածում, ինչքան մեղ հայտնի է, հայ մատենագրության մեջ գոնե այս կապակցությամբ չի հիշատակված: Այս նույն հատվածի բովանդակությունը ծանոթանում ենք միայն այս երկի շնորհիվ. ինչպես մանավանդ Կայենի՝ Կիմա կամ Կիմաս, իսկ Աբելի, Աբելուհի անունով քոյր ունենալու մասին: Մնացածը՝ սխալ է:

Իերենք այս կարգի մեկ այլ համեմատություն:

Միխայիլ Ասուրի

Յայնմ ժամանակի Եթովպացիքն որ լեալ էին հարկատուք Եգիպտացոցն, և գտին զնոսա. և ապա ապստամբեցին, և եկին ի վերայ Եգիպտացոց և գտին զնոսա անպատրաստս, և գերեցին և առին դանուանեալ մայրն Մովսէսի, և տարան: Եւ Մովսէս լեալ զօրավար Եգիպտոսի՝ կռուեցաւ ընդ Եթովպիայ զտասն ամ... և առ զթագուհի նոցա զՔեսրաս և զՄառի մայր իւր, և դարձաւ յԵգիպտոս քաջ և արի անուամբ: Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ և կամէր

Վարդան Արևելցի

Ուստի զամս երեսուն ողբացեալ Ադամայ Եւայի... և ծնան զԿայէն... քերք միով Կիմաս կոչեցեալ, և զկնի երեսուն ամաց ծնան զԱբէլ և զԱբելուհի քոյր նորա: Եւ զկնի այլ ևս երեսուն ամի սպան Կայէն զԱբէլ... (էջ 5):

Վարդան Արևելցի

Իսկ Եթովպացոցն՝ որ էին հարկատուք Եգիպտացոցն՝ ապրտամբեալ ասպատակեցին և գերեցին զԵգիպտոս, և զմայրագիրն Մովսէսի. և զնացեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ. և առ զթագուհի նոցա զՔեսրաս. և զմայր իւր. և դարձաւ յԵգիպտոս. և նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ, որ է Քերմոթիս. և ի մեռանելն Մառեայ, թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այր նորա զՔսանթիս շարշարիչն Իսրայէլի սպանանել զՄովսէս, և սպան զնա

սպանանել զնա, բայց պատկառէր
ի կնոջէ իւրմէ:

Եւ մեռաւ Մառի, և թաղեաց զնա
Մովսէս, և առաքեաց այրն Մա-
ռեայ զՔսանթիս շարշարիչն Իս-
րայելի սպանանել զՄովսէս՝ և յա-
ռաջեաց Մովսէս և սպան զնա և
ինքն փախեաւ ի Մադիամ: (Ա. էջ
42—43):

Մովսէս և փախեաւ ի Մադիամ...:
(էջ 18—19):

Բառացի նմանութիւնն, ինչպէս տեսնում ենք, բացահայտ է: Այս կա-
պակցութեամբ զոհանանք հետեւյալ վերջին օրինակով, որը ավելի հաստատուն
և հստակ կդարձնի մեր համոզումն ու պատկերացումը հիշյալ երկու երկերի
աննշութիւնների մասին:

Միխայիլ Ասորի

Վարդան Արևելցի

Մովսէս լեալ հարիւր քսան ա-
մաց կատարի...: Եւ առ Յեսու
որդի նաւեայ զգաւազանն և զիշ-
խանութիւն Մովսիսի, և առաջնոր-
դեաց ժողովրդեանն Իսրայելի ա-
մբս քսան և եթն: Ի վեցերորդ ա-
մի իշխանութեանն Յեսուայ Դանա-
տս եղբայր Եգիպտոսի թագաւորի
չիսուն դստերօք զչիսուն որդիս
եղբօր իւրոյ կոտորեաց. բաց ի
լինկեայ՝ որ յետ նորա թագաւո-
րեաց՝ սա է յամենայն կողմանց
աշացեալն:

Ի տասն և ութերորդ ամին Յե-
սուայ Փիւնիկս և Կաղմոս ի Թե-
բացոց Եգիպտոսէ յԱսորիս եկեալ՝
թագաւորեցին Տիւրոսի և Սիդոնի.
և անուամբ նոցա կոչեցաւ երկիրն
Փիւնիկէ և տուն Կաղմեայ: (Ա,
էջ 51—53):

Աստուածանօթն Մովսէս կա-
տարեցաւ հարիւր և քսան ամաց,
և առ զգաւազան նորա Յեսու նա-
ւեայ ամս քսան և եօթն: Ի վեցե-
րորդի ամին Յեսուայ Դանաւոս
եղբայր Եգիպտոսի թագաւորի
Եգիպտացոց չիսուն դստերօք զչի-
սուն որդիս եղբօր իւրոյ կոտո-
րեաց, և լինոցս զերծեալ թագաւո-
րեաց, զոր ասեն ամենայն ուստեք
աշացեալ. զի իմաստուն էր: Յու-
թևտասն ամին Յեսուայ Փիւնիկս և
Կաղմոս ի թեբացոց յԱսորիս ե-
կեալ թագաւորեցին, և աշխարհն
կոչեցաւ Փիւնիկէ, և տուն Կաղ-
մեայ: (էջ 20):

Որ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ը Վարդան Արևելցու աշ-
խատութեան համար հանդիսացել է անմիջական աղբյուր, հայտնի է: Առավել
համոզիչ ու մանրամասն այդ ցույց է տվել հատկապէս Կ. Մելիք-Օհանջան-
յանը⁴³: Նշենք նաև, որ Վարդան Արևելցին ինքը այդ մասին անուղղակի վկա-
յութիւն էլ է թողել⁴⁴: Ուստի կրկին հաստատելով սույն ճշմարտութիւնը կու-

43 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, աշխատասիրութեամբ Կ. Մե-
լիք-Օհանջանյանի, Առաջաբան, էջ 4-4Ծ:

44 Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 147:

դենայինք պարզապես ավելացնել, որ նկատվածներից բացի, կան և այլ փոխառություններ: Իսկ մի շարք էջերում առկա փոխադարձ ընդհանրությունները⁴⁵, ըստ երևույթին, իրապես կապվում են մի այլ աղբյուրի երկու հեղինակներին էլ ծանոթ լինելու փաստի հետ: Այս կապակցությամբ ունենք որոշ դիտողություններ, որոնց մասին խոսք կլինի այլ առիթով:

Մինչ այդ մի քանի խոսք անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալի մասին:

Բանասիրության մեջ այն տեսակեան է հայտնված, թե իբր Վարդան Արևելցին օգտագործել է նաև Ագաթանգեղոսի, Անանիա Շիրակացու, Քովմա Արծրունու, Սամվել Անեցու, Մխիթար Գոշի համապատասխան պատմագրական երկերը, ինչպես նաև վրաց ժամանակագրությունները: Մեր կարծիքով, նման որոշակի եղրակացության համար բավարար հիմքեր չկան: Թեև հիշյալ երկերի և Վարդան Արևելցու աշխատության մեջ նկատելի են որոշ բնագրական ընդհանրություններ, սակայն աղբյուրագիտական մեր որոնումները ցույց են տալիս, որ դրանք ավելի շուտ բխում են հիշյալ երկերին և միաժամանակ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան»-ը աղբյուր ծառայած այլ պատմագրական հուշարձաններից:

Ագաթանգեղոսի երկի վերաբերյալ արդեն եղրակացրել ենք, որ Վարդան Արևելցին ոչ թե նրանից, այլ Հովհան Մամիկոնյանի (Զենոբ Գլակ) աշխատությունից է օգտվել: Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրութեան», Քովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի և Մխիթար Գոշի «Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ժի դարու» պարագային էլ կարող ենք ավելացնել, որ հիշյալ երկերի միևնույն նյութի մասին պատմելը դեռևս դրանց միջև ուղղակի առնչության գոյության ապացույց չէ: Տվյալ դեպքում բանն այն է, որ այն տողերը, որոնք, ըստ երևույթին, առիթ են տվել ենթադրելու, թե իբր դրանք Վարդան Արևելցու աշխատությանն են փոխանցվել հիշյալ երկերի միջոցով, գալիս են նախորդ հեղինակների՝ Եվսեբիոսի, Մովսես Խորենացու, Սերեոսի, Ղևոնդի և մեզ չհասած երկերից: Այնպես որ, կարծում ենք, հիշյալ երկերը Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աղբյուրների շարքը դասելու բավարար հիմքեր իրոք որ չկան:

Ինչ վերաբերում է Սամվել Անեցու «Ժամանակագրութեան»-ը, պետք է ասել, որ այն նաև իր ընդգրկած ժամանակաշրջանով և մասամբ կառուցվածքային բնույթով, բավարար ընդհանրություններ ունի Վարդան Արևելցու երկի հետ: Մի շարք դեպքերում, ինչպես ասենք Աստվածաշնչյան սերունդների, հայ և այլ ժողովուրդների թագավորների, կայսրերի, եկեղեցական պետերի վերաբերյալ ժամանակագրական ցուցակների, սասունցիների, Ապուսեթի սպանության, Բուղաչի շարագործությունների, Աշոտ Երկաթի 8 տարվա թագավորության, Վահան Բաղացեցու կաթողիկոսության, ապա «Վրաց դաշնադիր» լինելու պատճառով՝ գահից զրկվելու, փոխարենը Ստեփանոսին գահ բարձրացնելու, Գիոգենես և Միքայել կայսրերի, Մանազկերտի կովի ու այլ իրադարձությունների վերաբերյալ հատվածներում դրանք, թվում է, տարակուսելի չեն: Սակայն մանրամասն քննությունից ավելի հավանական է դառնում, որ այդ ընդհանրությունները պայմանավորված են ոչ թե երկու երկերի ուղղակի

45 Հմմտ. Կիրակոս Գանձակեցի. Եջվ. աշխ., էջ 71, 76, 85—87, 89 և այլն, Վարդան Արևելցի. Եջվ. աշխ., էջ 88—89, 90—91 և այլն:

առնչությամբ: Դարձյալ իրողությունն այն է, ըստ մեզ, որ Սամվել Անեցին տվյալ հատվածների համար օգտվել է Աստվածաշնչից, Եվսերիոսի, Մովսես Խորենացու, Սերետսի, Ղևոնդի, Հովհաննես Գրասխանակերտցու և այլ մեզ հայտնի գրավոր աղբյուրներից, Կիրակոս Գանձակեցին՝ Սամվել Անեցու աշխատությունից, իսկ Վարդան Արևելցին՝ այս բոլորից, բայց ոչ՝ Սամվել Անեցու երկից: Համենայն դեպս, լիովին հավաստի հիմք չկա պնդելու, թե Վարդան Արևելցին օգտագործել է Սամվել Անեցու «Ժամանակագրություն»-ը:

Վարդան Արևելցու «Հաւարումն պատմութեան» մեջ բավականին առատ փաստագրական տեղեկություններ են պահպանված Վրաստանի քաղաքական պատմության, մանավանդ XII—XIII դարերի ընթացքում Վրաստանի ռազմաքաղաքական հզորացման, տնտեսական և հոգևոր-մշակութային վերելքի տարիներին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ: Այս իրողությունը ևս վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: Մ. Բրոսսեն իր վերոնշյալ ֆրանսերեն աշխատության մեջ ներգրավել է այդ բոլոր տեղեկությունները⁴⁶: Հարկ է այս կապակցությամբ հիշել նաև Լ. Մելիքսեթ-բեկի աշխատանքը⁴⁷: Հ. Մանանդյանը և ուրիշներ ևս դրանք օգտագործել, մեկնաբանել ու գնահատել են: Այնպես որ, դրանց պատմաճանաչողական արժեքի մասին որոշակի պատկերացում գոյություն ունի, սակայն բանասիրության և աղբյուրագիտության տեսանկյունից դեռևս չեն հետադոստված:

Պարզ է, որ այդպիսով Վարդան Արևելցու սույն երկը վրաց XII—XIII դարերի ժամանակագրություններին բովանդակությամբ հաճախ է առնչվում, բայց և այնպես առ այսօր դեռ չի ճշտված, թե այդ աղբյուրը անմիջակա՞ն է, արդյոք, թե միջնորդաբար է ստեղծված, կամ, պարզապես, բովանդակության ընդհանրության արդյունք է: Դժվար է որոշակի պատասխանելը, առկա նմանությունները ստույգ եզրակացության համար բավարար չեն: Բացի այդ, նա օգտագործել է նաև այն հայ աղբյուրները, որոնք պարունակել են հարուստ տեղեկություններ վրաց և Վրաստանի, հայ-վրացական սերտ առնչությունների մասին: Հիշենք նաև, որ նա ապրել և գործել է այնպիսի մի ժամանակաշրջանում ու երբեմն Վրաստանին մերձակա վայրերում, որ կարող էր ականատես ու ականջալուր լինել հասարակական շատ իրադարձությունների: Այնպես որ, Վարդան Արևելցին հիշյալ հայ աղբյուրներից տեղեկություններ փոխ առնելով և մասամբ ուրույնաբար իր լսած ու տեսած համապատասխան իրողությունները դրանց միահյուսելով վրաց ժամանակագրության հետ ստեղծել է այն աղբյուրը, որը առիթ է տվել ենթադրելու, որ նա իբր ուղղակի օգտվել է վրաց ժամանակագրություններից: Բայց այդ, ինչպես արդեն ասացինք, հավաստի հիմքեր չունի, և մեզ ավելի հավանական է թվում, թե նա վերոնշյալ միջոցով է միայն հնարավորություն ունեցել պատմելու վրաց և Վրաստանի մասին:

Այսքանը Վարդան Արևելցու կողմից օգտագործված պատմագրական բնույթի մեզ հասած աղբյուրների կապակցությամբ: Այլ բնույթի ու բովանդակության մեծ ու փոքր աղբյուրներին կանդրադառնանք առանձին, ինչպես սկզբում նշել ենք, այս կարգի մի շարք հարցերի հետ միաժամանակ:

⁴⁶ M. F. Brosset, Additions et éclaircissements..., բազմաթիվ էջերում:

⁴⁷ Մելիքսեթ-բեկ, վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա., Երևան, 1934, էջ 130—131, 196, 211, 220 և այլն, հատ. Բ., Երևան, 1936, էջ 25—28, 31, 32 և այլն:

ПАЙЛАК АНТАБЯН

ИСТОЧНИКИ «ИСТОРИИ» ВАРДАНА АРЕВЕЛЦИ

(Резюме)

Результаты, достигнутые по сей день в филологии, неудовлетворительны с точки зрения сколько-нибудь убедительного источниковедческого анализа «Истории» Вардана Аревелци (XIII в.). В этой связи специальная исследовательская работа еще не проводилась, за исключением отдельных высказываний по частным вопросам.

Указанное историческое сочинение, имеющее широкий хронологический и географический охват, естественно связано с большим числом источников. Этим еще больше подчеркивается необходимость и полезность источниковедческого исследования. Чрезвычайно трудно дать определенный ответ на все вопросы, связанные с проблемой источников памятника, и поэтому в данной статье автор ограничился лишь изучением вопроса непосредственного или опосредованного использования первоисточников Варданом Аревелци.

На основе скрупулезного источниковедческого анализа в статье установлены и уточнены все те первоисточники, которыми пользовался Вардан Аревелци. Выясняется, что для последнего источником служили соответствующие сочинения почти всех предшествующих армянских историков. Непосредственно были использованы историографические сочинения Мовсеса Хоренаци, Лазара Парпеци, Павстоса Бузанда, Себеоса, Мовсеса Каланкатуаци, Левонда, Ованнеса Драсханакертци, Ухтанэса, Степаноса Таронаци (Асохика), Матэоса Урхаеци, Михаила Сирийца, Киракоса Гандзакеци. В числе непосредственных первоисточников Вардана Аревелци Библия, а также «Хронология» Евсевия Кесарийского.

Не имеют фактической основы или еще нуждаются в дополнительной аргументации предположения об использовании Варданом Аревелци исторических сочинений Елише, Агатангелоса, Самвела Анеци, а также «Грузинской хронологии». Хотя и имеется определенная общность в сообщениях на одну и ту же тему между ними и «Собранием истории» Вардана Аревелци, но эта общность является следствием связей с другими источниками.

P. P. ANTABIAN

LES SOURCES DE L'«HISTOIRE» DE VARDAN AREVELTSI

(Résumé)

Les recherches philologiques accomplies jusqu'à présent ne sont point satisfaisantes du point de vue d'une analyse tant soit peu convaincante des sources de l'«Histoire» de Vardan Aréveltzi (XIII^e siècle).

Outre quelques jugements relatifs à un certain nombre de questions particulières, aucune recherche spéciale n'a été consacrée à ce sujet.

L'oeuvre historique en question, sa chronologie et sa géographie supposent naturellement un grand nombre de sources. Cela souligne une fois de plus la nécessité et l'utilité d'une recherche sur ces sources. Il est extrêmement difficile de donner une réponse précise à toutes les questions liées au problème des sources de cette oeuvre, c'est pourquoi l'auteur de l'article se limite seulement à l'étude de la question de l'utilisation directe ou indirecte des sources par Vardan Aréveltzi.

Une analyse scrupuleuse des sources a permis d'établir et de préciser toutes les sources utilisées par Vardan. Il apparaît que ce dernier s'est servi des oeuvres de presque tous les historiens arméniens qui lui sont antérieurs. Il a eu directement recours aux oeuvres de Movses Khorénatsi, de Ghazar Parbétsi, de Faust de Byzance, de Sébéos, de Movses Kalankatvatsi, de Ghévond, de Hovhannes Draskhanakertsi, d'Oukhtanes, de Stépanos Taronatsi (Assoghik), de Mathévos Ourhaétsi, de Michel le Syrien, de Kirakos Gandzakétsi. Parmi les sources directes de Vardan Aréveltzi on peut citer aussi la Bible et la "Chronique" d'Eusèbe de Césarée.

La supposition concernant l'utilisation par Vardan Aréveltzi des oeuvres historiographiques d'Eghiché, d'Agathange, de Samvel Anétsi, ainsi que de la "Chronologie géorgienne", n'est pas fondée ou doit être encore argumentée. Bien que l'on observe des points communs entre les témoignages de ces auteurs et le "Recueil d'Histoire" de Vardan Aréveltzi quand ils touchent les mêmes sujets, cette communauté est le résultat de la communauté leurs sources.

ՆՇՄԱՐՆԵՐ ԱՆԻ ԲԱՂԱՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 6288 ձեռագիրը «Հաղրատի Ավետարան» է կոչվում Հաղրատի վանքում գրվելու պատճառով: Բանասիրությանը հայտնի է նաև որպես «Գետաշենի Ավետարան», Արցախի Գետաշեն գյուղի անունից, որտեղից 1920-ական թվականներին Գ. Հովսեփյանը բերում է էջմիածնի Մատենադարան և, շուտով, նրա մասին հրատարակում հմտալից մի ուսումնասիրություն «Հաղրատի դպրոցի մի գլուխգործոց («Գետաշենի Ավետարանը»)՝ վերտառությամբ: Հոգվածում առաջին անգամ ըստ արժանվույն գնահատվում է ձեռագիրը, որը ընդհանուր ճանաչում է բերում և պատճառ դառնում նրան հաճախակի անդրադառնալուն¹:

Ուսումնասիրության մեջ Գ. Հովսեփյանը մանրամասնորեն նկարագրում է ձեռագիրը, քննության ենթարկում գրչությունն ու հիշատակարանները և, մասնավորապես, ծանրանում ձեռագրի ստեղծման միջավայրի և մանրանկարչության վրա: «Հաղրատը մեկն է Հայոց ամենանշանավոր վանքերից և հոգևոր կենտրոններից, — գրում է նա, — ծագմամբ ունինք շատ ավելի հնագույն վանքեր, բայց բերքը դրանցից կատարել են այնպիսի երկարատև և կարևոր դեր, ինչպես Հաղրատն է: Նա նշանավոր է նաև իբրև ճարտարապետական արվեստի մի թանգարան...²: Նշանավոր է իբրև հոգևոր կենտրոն... որ ժԲ դարից կարեվոր դեր է կատարել մեր եկեղեցական պատմության մեջ... Բայց ոչ պակաս նշանավոր է նաև իբրև մատենագրության³ և գրչության արվեստի⁴ գլխավոր կենտրոն Արևելյան Հայաստանի մեջ... Արևելյան Հայաստանի ժԲ դարի և ժԳ դարի առաջին կեսի նշանավոր հեղինակների մեծագույն մասը Հաղրատից են կամ Հաղրատի հետ կապված»⁵: Մշակութային այս կենտրոնում 1211 թվականին ավարտվել է Հաղրատի Ավետարանը: Գրիչը Հակոբն է, սրբագրիչը կամ ուղղողը՝ Մխիթար Քորայրեցին, նկարիչը Մարգարեն, իսկ կազմողը՝ Աբրահամը, որը կազմել է «ի վանքս Հոռոմոսի, հրամանաւ հար Մխիթարայ»: Հաղրատի Ավետարանի ստացողն է «Սահակ կրանաւոր և յետին քահանան»,

1 Գ. Հովսեփյան, Հաղրատի դպրոցի մի գլուխ գործոց («Գետաշենի Ավետարանը»), Նիսիսի և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակոյթի պատմության, պր. Ա, Երուսաղեմ, 1935, էջ 41—75:

2 «Էին հայկական մանրանկարչություն», Երևան, 1952, տախտակ 14—17: «Հայկական մանրանկարչություն», Երևան, 1967, էջ 204:
Մ. Ա. Դյրնովո, Краткая история Армянской живописи, Ереван, 1957, էջ 30—31;
Նայնի Օчерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, էջ 240, 254—255: Վ. Մարեալյան, նկարիչ Մարգարեի արվեստը, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 77—90:

3 Կ. Ղաֆաղաբյան, Սանահնի և Հաղրատի վանքերը, «էջմիածին» 1968, № 6, էջ 6—20:

4 Ա. Մնացականյան, Սանահնի և Հաղրատի մենաստանների մշակութային կյանքի պատմությունից, «էջմիածին» 1968, № 6, էջ 21—30:

5 Ա. Մարեալյան, Հաղրատի գրչության կենտրոնը, «էջմիածին», 1971, № 5, էջ 46—56:

6 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 41, 68:

որ եղել է «աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ, ազգաւ ի տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնուշ»: Չեռագիրը գրել է տվել ի հիշատակ ծնողներ՝ Ռիմանոսի և Կատայի, եղբայրներ՝ Իպատոսի և Առաքելի, քույրեր՝ Զարհայի և Հոռոմտիկնոց, նրանց զավակների, «և ազգայնոցն ամենից՝ կենդանեաց և մեռելոց», ապա՝ նվիրել Արջուառձի իրենց կառուցած եկեղեցուն:

«Ստացողի գլխավոր հիշատակարանից իմանում ենք,— գրում է Գ. Հովսեփյանը,— որ Ավետարանը նվիրված է Արջուառձի սուրբ ուխտին, որ շինված է հենց նվիրատուի և նրա հարազատների ծախքով... կարծում ենք այս ուխտի առաջնորդն է հայր Եղբայրիկը ...որովհետև Հաղբատի առաջնորդն էր «Տէր Յոհաննէս» իսկ Հոռոմոսինը՝ հայր Մխիթար, ուրեմն և Եղբայրիկը այս վանքերի հետ կապ չունենր»⁷:

Նկատենք, սակայն, որ Արջուառձի ուխտը չէ, որ շինել են նվիրատուները, այլ այդ ուխտում, որ արդեն գոյություն ուներ՝ մի եկեղեցի, որին էլ նվիրել են Ավետարանը. «և աւանդեցաք սուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արջուառձի»⁸: Մանավանդ, որ ինքը Գ. Հովսեփյանը վկայակոչում է Ն. Սարգսյանին, որ Արջուառձի շինությունների վրա կարդացել է 1207 թվականի ոչ շինարարական, այլ հետազայի արձանագրություն⁹: Վիճելի է նաև հայր Եղբայրիկի Արջուառձի առաջնորդ լինելու հանգամանքը, ինչպես նաև Մարգարե նկարչի Հաղբատի միարան լինելու և Հաղբատի Ավետարանը՝ Հաղբատում նկարագարողելու պարագաները:

Վկայակոչելով ձեռագրի գրությունից քառասուն տարի հետո 1255 թվականին Հակոբի և Մարգարեի կողմից Հաղբատում կանգնեցրած Սուրբ Սարգիս կոչված խաչքարը¹⁰, որը կառուցված է որպես բարեխոս իրենց և Մխիթար վարդապետ Քորայրեցու և հայր Բարսեղի, հեղինակը, առաջիններին նույնացնելով ձեռագրի գրչի և նկարչի հետ, եզրակացնում է, որ «ոչ միայն ձեռագիրն է Հաղբատում գրված, այլև նկարված է նույն տեղում և նույն ուխտի միարանի կողմից»¹¹: Այնուհետև Մարգարեն ոչ միայն դառնում է Հաղբատեցի, այլև հեղինակ Հաղբատի Ավետարանի բոլոր նկարների՝ խորանների, ավետարանիչների, կիսախորանների, լուսանցազարդերի և զարդագրերի: Իհարկե, Մարգարեն կարող էր լինել հաղբատեցի և Հաղբատի Ավետարանի հետ կատարել այն ամենը, ինչ վերագրում են նրան, և նույնիսկ գրել, որովհետև ինչպես երկվում է նրա գրած որոշ էջերից և հիշատակապատկանություններից, նաև հմուտ գրիչ էր, որ հավասարապես գրում էր և՛ երկաթագրով, և՛ գրչագրով և՛ բոլորգրով:

7 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 60—61:

8 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 358 ր: Ընդգծումը մերն է. Ա. Մ.:

9 Ն. Սարգսյան, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 190. Հմմտ.

Ղ. Այիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 121:

10 «Ծնորդին Աստուծոյ ևս Յակոբ ևս Մարգարէս, յառաջնորդութեան տեառն Համազասպայ կանգնեցաք զՍուրբ Սարգիսս բարեխոսս մեզ ևս Մխիթար վարդապետի Քորայրեցու և հար Բարսեղի և ննչեցելոց մերոց... ի թվիս 2Գ (1255)» (Ս. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 240—241): Կ. Ղաֆաղարյանի կարծիքով, Ս. Սարգիս խաչքարը «կանգնեցվել է մի խումբ մարդկանց՝ Հակոբի, Մարգարեի, Մխիթար վարդապետ Քորայրեցու, հայր Բարսեղի և այլ ննչեցյալների հիշատակին»: Սակայն խաչքար կանգնեցնողները ննչեցյալ չէին, այլ ողջ էին և՛ Հակոբը և՛ Մարգարեն, ինչպես նաև Մխիթար վարդապետը և հայր Բարսեղը: Այնուհետև, այս արձանագրությունից չի երևում, որ Հակոբն ու Մարգարեն եղբայրներ են, ինչպես կարծում է

4. Ղաֆաղարյանը (Անդ, էջ 280, 281):

11 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 63:

Բայց այս ամենը նա կարող էր անել նաև Հաղբատից դուրս, ասենք Հոսումոսի վանքում կամ Անիում:

Ճշմարտությունը բացահայտելու համար առավել մանրախույզ քննության պետք է ենթարկել ձեռագիրը, ուշադրության արժանացնելով ամեն մի թվացող մանրույթ, մանրանկարչությունն ուսումնասիրելիս շանտեսել դիրք, դրչությունն ուսումնասիրելիս՝ մանրանկարն ու կազմը, սրահպանակն ու հիշատակարանը... որովհետև այս բոլորը միասին են ձեռագիր կոչվում, մի բարդ ու բազմակողմանի պատմական հուշարձան, ստեղծման որոշակի հանգամանքներով:

Ձեռագրի հետ կապված հարցերի ճիշտ լուծումից կշահի դրչության արվեստի ողջ բնագավառը, և հայ մշակույթի անցյալի պատմությունը: Այս առումով բավականին հետաքրքիր նյութ է տալիս Հաղբատի Ավետարանի հանգամանակից քննությունը, ճշգրտումներ մտցնում վերը շոշափվող համարյա բոլոր հարցերում և բավարարում առաջադրվող հարցադրումներին:

Հաղբատի Ավետարանն այսօր $29,5 \times 22,5$ սմ մեծության 360 մագաղաթյա դեղնավուն թերթերից կազմված ձեռագիր է, գրված երկաթագրով՝ $19,5 \times 6,3$ սմ մեծության 19 տողանոց երկու սյունակներում: 1—5 թերթերը պահպանակներ են, նույնաչափ, նույնագիր Ավետարանի մասեր: 6—15 թերթերի հանդիպակաց էջերում, մեկընդմեջ նկարված են համարարրառի խորաններ¹², իսկ հաջորդ՝ 16 և 17 թերթերի հանդիպակաց էջերում՝ «Մուտք յնրուսաղէմ» տերունական նկարն է և «Ընծայականը»՝ Քրիստոսը ստացող Սահակ և Առաքիլ եղբայրների հետ: 18-րդ թերթից սկսվում են չորս Ավետարանները՝ ավետարանիչների և ավետարանառաջների նկարներով¹³, ընդ որում, բոլոր ավետարանիչների նկարները կաշվեթելով կարված են համապատասխան ավետարանառաջներին (Ավետարանների սկզբնաթերթերին), որոնց պատճառով այդ ութ թերթանի պրակները դարձել են ինն թերթանի¹⁴: Ձեռագրի մեջ խախտումներ և փոփոխություններ են կատարվել դեռ այն շավարտված:

Մաթևոսի Ավետարանի սկիզբը կրել է Բ. պրականիշը, ուրեմն սկզբի խորանները զբաղեցնող տասը թերթերը կազմել են Ա. պրակը: Ինչպես համարյա բոլոր պրակները, Բ պրակը ևս ունեցել է 8 թերթ, որոնցից առաջինը կտրված և փոխարինված է երկու թերթերով, ընդ որում ավելացված թերթի ա էջը

¹² 6բ—7ա խորաններում եվսեբիոսի նամակը, 8բ—9ա, 10բ—11ա, 12բ—13ա, 14բ—15ա խորաններում տեղավորված են կանոնները:

¹³ Համապատասխանաբար՝ Մաթևոս ավետարանիչի և ավետարանառաջի նկարները՝ 18բ—19ա, Մարկոսինը՝ 112բ—113ա, Ղուկասինը՝ 174բ—175ա, Հովհաննեսինը՝ 268բ—269բ (ընդ որում երկուսն էլ գտնվում են երկրորդ) էջերում:

¹⁴ Բացառությամբ Մ (20-րդ)—9, (Մարկոսի Ավետարանի ավարտին մնում էր մի էջ. գրիչը պրակի 8-ին ավելացրել է մի թերթ և այդ էջը լրացրել, որպեսզի հաջորդ Ավետարանը սկսվի նոր պրակով) 2-(24-րդ)-7 և Ը-(40-րդ)-12 թերթանի պրակներին: Այժմ այն խախտված է: Ձեռագրի կազմը հետազայի է: 1211 թվականից հետո, պահպանվել է ևս երեք անգամ կազմվելու հիշատակարաններ. 1325 թ. Տեր Վանականը կազմել է տալիս Ստեփանոս կազմիչի ձեռքով («գոթի հնացեալ և աւերեալ», 351բ), 1388 թ. Մովսես քահանան նորոգում և կազմել է տալիս Մարգիս կազմարարին (112ա), իսկ 1497 թ. պարոն Ուլուխաթունը նորոգել է տալիս, որովհետև «սյոյժ հնացեալ էր սուրբ Աւետարանս» (173բ): Մրանցից մեկի ժամանակ շիթի էլ են 2 և Բ պրակների տեղը, և զլխավոր հիշատակարանի զույգ-թերթերի միջև են տեղավորել 1223 թ. հիշատակարանը:

նկարագարդ ավետարանառաջն է (19ա), մյուս էջը և երկրորդ թերթի երկու էջերը (19բ, 20ա,բ) բնագիրը, գրված համեմատաբար մեծ երկաթագրով (նկ. 1): Հաջորդ Դ թերթից (21ա) մինչև Ժ պրակի վերջը (91բ, նկ. 2) գրված է նախորդի համեմատությամբ մի քիչ փոքր, դեղեցիկ երկաթագրով: Այդ հատվածի գրիչը, որի անունը չի պահպանվել, զարդագիր չի օգտագործել, ոչ էլ նրանց համար տեղ թողել: Զունի նաև լուսանցազարդեր: Ընթերցվածների գրչխազրերը չեն զանազանվում սովորական հատվածների գլխազրերից: Կետագրական միայն մի նշան է օգտագործում, որը գրվում է տողի վերևում, տառի վերին մասին հավասար, հազվադեպ նկատվում է ստորակետ: Ն նախորդի վրա փոքր գծիկ է դնում: Լուսանցքներում համաբարբառը դեղեցիկ, մանր գրչազիր է: Պրականիշերը գրված են ստորին լուսանցքի աջ կողմում: Այս գրչի ձեռքով գրված են Բ-Ժ պրակները:

Ն պրակից (92ա, նկ. 2) մինչև ձեռագրի վերջը գրել է Հակովբ գրիչը, ինչպես հիշում է ինքը՝ Մարկոսի վերջում՝ «Յակովբ գրիչ յիշեցէք ի Տէր»¹⁵ և հավաստում գլխավոր հիշատակարանը, «Ի սուրբ ուխտս Հաղբատու դժագրեցաւ ձեռամբ Յակովբայ...»¹⁶:


Ձեռագրի գլխավոր հիշատակարանում հիշված բոլոր անձնավորությունները հայտնի են. դրանք են ստացող Սահակը, իր ծնողները, եղբայրները, բույրերը: Հիշվում է ուխտի առաջնորդ Հովհաննեսը, վերջում՝ կազմող Աբրահամն ու նկարիչ Մարգարեն: Սահակը հիշում է նաև «զՍարգիս հոգևոր ծնաւոյն իմ, զՅակովբոսն և զՎարդան»: Քանի որ Սահակը իր մասին գրում է «որ էի աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ... սնեալ ի սրբարան ուխտիս ի Հաղբատ», նշանակում է նրա հոգևոր հայր Սարգիսը իր ուսուցիչն էր Հաղբատում և այնտեղի միաբաններից էր: Ուրեմն նրա հետ միասին հիշվող Հակովբոսն ու Վարդը նույնպես Հաղբատի միաբաններից են, կամ նրա դասընկերները, կամ մարդիկ, որոնք մասնակցել են ձեռագրի գրչությանը: Մենք հակված ենք նրանց հիշատակվելու առիթը երկրորդ պարագայի մեջ տեսնելու, այսինքն՝ ձեռագրի պատրաստմանը մասնակցելու մեջ, մանավանդ որ նրանք երկուսով միասին հիշվում են նաև Մարգարե նկարչի կողմից, որը երբևէ չի հիշում ոչ Հաղբատի առաջնորդ Հովհաննեսին, ոչ էլ Սահակի ուսուցիչ Սարգսին: Բայց Մարգարեն հիշում է նախ Վարդին, հետո Հակոբոսին՝ Սահակի բոլոր հարազատներին հիշելուց հետո, երկրորդ սյունակում, առանձին՝ «նա[և] զՎարդան և զՅակովբոսն և զծնողսն նոցա և զամենայն բնտանիսն»: «Յակովբոսը» ամենայն հավանականությամբ Հակոբ գրիչն է. եթե այս ճիշտ լինի, Վարդը առաջին գրիչը պետք է լինի: Սահակը առաջինը հիշում է Հակոբ գրչին, որն ավարտել է Ավետարանը, իսկ Մարգարեն պահում է ձեռագիրը գրելու հերթականությունը և նախ հիշում է Վարդին, ապա՝ Հակոբին:

Հակոբը ձեռագիրը շարունակել է գրել նույն մեծության երկաթագրով, բայց պակաս կանոնավոր ու գեղեցիկ: Ընթերցվածներն սկսում է զարդագրերով, ապա մեկ կամ երկու տող կարմիր տառերով, ոսկեպատելու համար: Զարդագրերի մոտ ունի լուսանցազարդեր՝ շաբաթների ու օրերի նշումով: Մաթևոսի Ավետարանի սկզբից ավելացրած երկու թերթերի վրա տեղավորված տառերի քանակը համեմատեցի՞նք առաջին գրչի մի թերթի վրա գրված տառե-

15 Մատենագարան, ձեռ. № 6288, էջ 173բ:

16 Նույն տեղում, էջ 359ա:

րի քանակի հետ, պարզվեց, որ նրանք հավասար են: Նշանակում է Մաթևոսի Ավետարանի առաջին թերթի երկու երեսն էլ լրիվ զբաղված են եղել բնագրով, և որ այն գլխազարդ չի ունեցել, այլ միայն սովորական գրությամբ՝ «Ավետարան ըստ Մաթևոսի» խորագիրը:



Նկ. 3. (էջ 5ա)

Գեղարվեստական դարդարվածության բացակայությունը պատճառ է դառնում, որ Մահակը առաջին գրչից վերջնի ձեռագիրը և հանձնի մի այլ գրչի, որը գրելու հետ նաև պետք է ծաղկեր, այլապես գրչին փոխելը իմաստ չուներ, եթե նա չէր վախճանվել կամ դժբախտության շեր հանդիպել: Ինչպես կհամոզվենք քիչ հետո, երկրորդը՝ Հակոբ գրիչը, իսկապես նաև ծաղկող էր: Գրչության պատմության մեջ այսպիսի դեպքեր շատ են եղել: Երբ գրիչը կամ ծաղկողը չէր բավարարում ստացողի պահանջները, նրանց փոխում էին: Բավարարվենք մի օրինակով: Ստացող Վարդան քահանան գրում է, որ Կիպրոսում «հանդիպեցայ քահանայի միոջ և ետու գրել Ավետարան: Եւ ոչ հաւանեաց վասն անվարժ գրելոյն և նիւթոյն թանձրութեան և ծաղկին անպատեհութեան»:

Վերադառնում է Կիլիկիա, լսում է համբավավոր Քորոս Հոռմկլայեցի գրչի մասին, որ բնակվում էր Գերմաղբյուրում: «Եւ յոյժ աղաչեցի զնա յանձն առնուլ և գրել զնոր Կտակարանքն ... և նա յանձն էառ» — գրում է նա¹⁷:

Այստեղ նույնպես առաջին գրիչը չի բավարարել ստացողի պահանջները, և նա նոր գրիչ է բնորել, որի առավելությունը ծաղկել կարողանալն էր:



Նկ. 4 (էջ 114ա)

Ձեռագրի և պրակը, որի ութ թերթերից շորսը Մաթևոսի և շորսը՝ Մարկոսի ավետարաններից է, վերջինիս կիսախորանով, դարձյալ այլ գրությամբ է գրված: Սույն թերթերի գրության և կիսախորանի համեմատությունը Մաթևոսի սկզբի երկու թերթի հետ, ինչպես նաև պահպանված հիշատակարանը ցույց են տալիս, որ այս բոլոր 10 թերթերը Մարգարեի ձեռքի գործն է:

Մարգարեի գրած և պրակի և ձեռագրի սկզբում տեղադրված հինգ թերթ պրակների համեմատությունից պարզվեց, որ վերջիններս ունեն նշված

¹⁷ Մատենադարան, ձև. № 154, էջ 298բ:

պրակի հինգ թերթերի բովանդակությունը, համապատասխան են յուրաքանչյուր թերթի սկսվածքն ու ավարտը. տառանիշերի շարքն ու քանակը, նույնիսկ լուսանցազարդերի ձևն ու մեծությունը: Պահպանակների գրությունն և լուսանցազարդերի ու զարդագրերի համեմատությունը ձեռագրի Հակոբ գրչի գրած թերթերի գրչության, չգունավորած լուսանցազարդերի և զարդագրերի հետ, մեզ այն համոզման բերեց, որ, նախ՝ պահպանակների գրիչը Հակոբն է, և որ այդ պահպանակները մասն են եղել Հաղբատի Ավետարանի, գտնվել են նրա մեջ այն տեղում, որտեղ այժմ Մարգարեի գրած թերթերն են գետնադրված¹⁸, և ապա՝ որ Հակոբ գրիչը նաև ծաղկող է, որի անառարկելի ապացույցն են այդ պահպանակների շորս տարբեր ընթերցվածների սկզբի զարդագրերն ու լուսանցազարդերը¹⁹ (շորս ընթերցվածներից մեկը զարդագիր շունի, մյուսը՝ լուսանցազարդ), որոնք գունազարդված չեն: Ի դեպ գունազարդված չեն նաև Ավետարանի բնագրում մի շարք զարդագրեր²⁰:

Այս ցույց է տալիս, որ Հակոբ գրիչը նկարել է զարդագրեր և լուսանցազարդերը, բայց չի ներկել: Հետագայում Մարգարե ծաղկողը ներկել է, և այդ ընթացքում, տեղ-տեղ խախտել է Հակոբի գծագրությունը և նրանց սահմաններում գծել նոր լուսանցազարդեր, որոնց մոտ երևում է Հակոբի գծագրության մնացորդները, հատկապես օրերի շրջանակները²¹: Մարգարեն նկարել է նաև նոր լուսանցազարդեր և զարդագրեր, ինչպես իր ավելացրած թերթերի վրա, այնպես էլ այլ տեղերում, որոնք բոլորովին չեն տարբերվում մյուս զարդագրերից և լուսանցազարդերից:

Մրանցից բացի Հակոբ գրիչը նկարել է Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի ավետարանառաջները, որոնցից վերջին երկուսը պահպանվել են և, ի տարբերություն լուսանցազարդերի և զարդագրերի, գունավորված են:

¹⁸ Ահա Հակոբի գրած պահպանակների և Մարգարեի գրած համապատասխան թերթերի սկսվածքներն ու վերջավորությունները (բերում ենք բնագրի հաջորդականությամբ, քանի որ պահպանակները ետ և առաջ են գրված).

Պահպանակներ (Հակոբ)	Բնագիր (Մարգարե)	
Յա Եւ վաղվադակի ընթացա...	108ա (Մաթևոս)	
Յբ Փորձեաց ի վիմի...	108բ	(նկ. 5,6)
Չա Եղեն իբրև զմեռեալս...	110ա (Մաթևոս)	
Չբ Եւ ել համբաւ եւ...	110բ	
Տա նորաւ Եւ մկրտեցի զՅեզ...	114ա (Մարկոս) (նկ. 3,4)	
Տբ Եւ զնոսա ի նախն...	114բ	
Թա Մինչ կազմէին զուղանս...	115ա (Մարկոս)	
Թբ Եւ եթող զնա տննդն...	115ա	
Կա ...զն ևւ պաշտէր զնոսա...	116ա (Մարկոս)	
Կբ Քարոզել յոյժ...	116բ	


Հակոբի գրածից բացակայում են 109, 111 և 113 թերթերը. վերջինս 111ա էջը Մարկոսի ավետարանառաջն է եղել՝ նկարված Հակոբի ձեռքով:

¹⁹ Առաջինը Մաթևոսի Ավետարանի Յեթ թվից սկսվող «Եւ իբրև երեկո եղև» ընթերցվածն է (էջ 3բ), որտեղ կարմիրով զարդարված է «Ե»-ն և մի տող կարմիրով երկաթազրած՝ ոսկեպատելու համար: Հաջորդ երեքը Մարկոսի Ավետարանից են. առաջինը ունի գլխագիր «Ե», կարմիրով երկու տող և լուսանցազարդ՝ օրերի նշումով (էջ 5ա), երկրորդը զարդագծված «Ե», երկու տող, լուսանցազարդ, օրը (Գ-1ա) և երկրորդը՝ «Ե», մի տող կարմիրով լուսանցազարդ, օրը (Գ-4ա):

²⁰ Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 164ա (Ա), 238ա(Ե), 311ա(Ա), 333ա (Զ) և այլն:

²¹ Նույն տեղում, էջ 215ա, 255ա և այլն:

Հակոբ գրիչը յուրովի մտտեցում է ունեցել առաջին գրչի (Բ-Ժ պրակ) կատարած աշխատանքին: Թե ինչ է նա արել գլխազարդ և զարդագիր շունեցող առաջին էջի հետ շենք կարող ասել, որովհետև նրանք փոխել է Մարգարի գրիչը, բայց մյուս էջերը ներդաշնակել է Ավետարանի իր գրած մասի հետ, օժտելով նոր զարդագրերով և լուսանցազարդերով:



Նկ. 5 (էջ 3 ր)

Սկզբում որոշել է ընթերցվածների գլխազրերը դարձնել զարդագիր, մաքրել է դրանք և տեղը զարդագիր հարմարեցրել: Այդպես են 21ա, 22ա, 24ա էջերի զարդագրերը (նկ. 7): Բայց որովհետև այս ձևնառու չէր, ջնջումների և կրկին նկարելու պատճառով, այլ եղանակ է գործադրում, մզացնում է ընթերցվածի գլխազիրը և ոսկում առաջին տողը (27ա, նկ. 8): Այս ևս չի բավարարում Հակոբ գրչին (ԹԵ՝ ստացողին), նա որոշում է ընթերցվածների դիմաց լուսանցքներում նկարել միայն լուսանցազարդ: Այդպես էլ արվում է: 28բ-ից մինչև 89ա էջերի ընթերցվածների դիմաց, լուսանցքներում Հակոբը նկարում է երեսունինն լուսանցազարդ, առանց զարդագրերի:

Հակոբ գրիչը նկարել է նաև խորանները և գրել համարաբարձը, որովհետև կողքի լուսանցքներում թվերը և ստորին լուսանցքներում համարաբարձները գրված են, ուրեմն նրանք գրված պետք է լինեն նաև խորանների մեջ, որոնք սովորաբար գրվում են միասին և նույն գրությունը: Ամենայն հավանականությամբ խորանները գծված են եղել միայն կարմիրով, ինչպես զարդագրերն ու լուսանցազարդերը (այդ բանը մեզ հուշում են պահպանակները), որոնք էլ պատճառ են դարձել նրանց նորերով փոխարինելուն: Պատճառ շունենք կասկածելու ձեռագրում խորանների առկայության վրա, որովհետև այդ դարում առանց նրանց գոյության ձեռագրի կազմելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Մանավանդ, որ այն բերել էին Հոռոմոսի վանք կազմելու համար: Այսպիսով, Հակոբը ձեռագիրն ավարտել էր, այսինքն՝ գրել էր բնագիրը, գծել էր լուսանցազարդերը, զարդագրերը, խորանները, իսկ կիսախորանները նաև ներկել էր: Ձեռագիրը սրբագրել էր Մխիթար Քորայրեցին:

Այս բանը հաստատում է նաև հիշատակարանի վկայությունը. «Ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ»²²:

Ուրեմն Ավետարանն ավարտվում է Հաղբատում և ապա նոր միայն տարվում Հոռոմոսի վանք՝ կազմելու:

«Անիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից ավելի դեր է կատարել մանրանկարչության և գրչության արվեստների կողմից...»: Այդ ժամանակ այստեղ աշխատում էր նշանավոր գրիչ և նկարիչ Իգնատիոսը²³: Բայց Ավետարանը Հաղբատից Հոռոմոս էին տանում ոչ Իգնատիոսի, այլ հռչակավոր կազմող Աբրահամի մոտ: Մինչ այդ Աբրահամը ի թիվս այլ ձեռագրերի, կազմել էր նաև Հոռոմոսի վանքի համար Իգնատիոսի գրած Ավետարանը՝ ոսկե կազմով²⁴: Հաղբատի Ավետարանը Հոռոմոսում անմիջապես չի կազմվում, այլ մինչև կազմվելը անցնում է Մարգարե գրչի և նկարչի ձեռքը, որը, մեր կարծիքով, կատարվել է Աբրահամ կազմողի խորհրդով: Հռչականուն կազմարարը, ըստ երևույթին, չի կամեցել այդքան աղքատ զարդարված ձեռագիրը շքեղ կազմել և առաջարկել է օգտվել իր ճանաչած և մոտակա վանքում գտնվող Մարգարեի շնորհներից: Մահակը լսել է փորձված կազմողի խորհուրդը, իսկ Մարգարեն սիրով հանձն է առել կատարելու Աբրահամ կազմողի ցանկությունը, և նույնիսկ նրան նկարել է ձեռագրի լուսանցքներից մեկում:

Սակայն մինչև Հաղբատի Ավետարանի հետ Մարգարեի կատարած գործողություններին ծանոթանալը, փորձենք գտնել այն ուխտը, որտեղ աշխատել է նկարիչը:


Ո՛չ Հաղբատի Ավետարանի գլխավոր հիշատակարանում, ո՛չ էլ Մարգարեի հիշատակագրություններում ակնարկ չկա նրա Հաղբատում գտնվելու մասին, իսկ ձեռագրի քննությունը ցույց տվեց, որ նա չէր կարող Հաղբատում լինել

²² Մատենադարն, ձեռ. № 6288, էջ 358բ:

²³ Հանձին որի «ունինք մի կարող մանրանկարիչ Հոռոմոսի և Անիի շրջանից, որ պետք է իր արժանավոր տեղը գրավի Արևելյան Հայաստանի մանրանկարչության պատմության մեջ»: Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 15—28, «Իգնատիոս մանրանկարիչ և Շոթոկանց տոհմը»:

²⁴ 1214 թվականին Հավուց թառում Իգնատիոսի գրած և նկարազարդած Ավետարանի վերջում, որն այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, այսպիսի մի մակագրություն կա. «Հոռոմոսի վանացն ոսկետուփ Ավետարանն և այս՝ մին գրչի է գրած»: Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ.Ա, Վենետիկ, 1914, էջ 594: Հմմտ. Կ. Ա. Մարևոսյան, Գրիչ և նկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Համալսարանի», Երևան, 1982, № 1:


ձեռագրի հետ փոփոխություններ կատարելու ժամանակ: Նախ այդ դեպքում ևս պրակը չէին անշատի, իսկ եթե անշատին՝ նորից Հակոբին կտային ընդօրինակելու կամ Հակոբն ինքը կըրացներ իր իսկ վրիպած հատվածը՝ 42-րդ պրակում: Գ. Հովսեփյանի Ս. Սարգիս խաչքարի արձանագրության փաստարկը, համոզիչ չէ: Սարգարեն միշտ էլ կարող էր խաչքար կանգնեցնել Հաղբատում, նույնիսկ այնտեղ շարելով, ինչպես մինչև 1211 թվականը, այնպես էլ նրանից հետո, քառասունչորս տարիներից ցանկացած տարվա ցանկացած օրը:



Նկ. 6 (էջ 108բ)

Հաղբատի Ավետարանի Կանոնների երկրորդ խորանի արտաքին լուսանցքի ստորին և միջին գերանների վրա ամբողջ հասակով կանգած են երկու վեղարավորներ: Վերևի վեղարավորը, որը կանգնած է միջին գերանի վրա, հազած է մինչև ոտները հասնող կապույտ կապա, իսկ վրայից՝ շերտավոր փիլոն: Աջ ձեռքին ունի պարզ հովվական գավազան, ձախ ձեռքում թաշկինակով բռնել է կարմիր և պարզ կազմով Ավետարանը: Լուսանցքում կողքից զըր-

ված է. «Հայ Եղբայրիկ առաջնորդ սուրբ ուխտիս, յիշեսցիք»²⁵: Ստորին գերանի վրա կանգնած վեղարավորը, համարյա հազած է այնպես, ինչպես հայր Եղբայրիկը, միայն գավազանի փոխարեն ունի երկարակոթ խաչ՝ աջ ձեռքում, իսկ ձախում, նախորդի նման, դարձյալ թաշկինակով բռնած, կարմիր կազմով Ավետարան: Լուսանցքում կողքից գրված գրության սկզբի մասը այսօր շատ



Նկ. 7 (էջ 22ա)

դավար է կարդացվում, իսկ կես դար առաջ Գ. Լուսնեփյանը կարդացել է. «Կազմիչ սորին եւ հայր...ի սմին յիշեսցիք»²⁶: Վերջին բառերից առաջ կարդացվում է եւ շորս տառ «ջորդ» որտեղ, ամենայն հավանականությամբ, մոռացվել է ջ-ից հետո եկող «ն» տառը «ջնորդ» որը «միջնորդ» բառի վերջին կեսն է: Գլխավոր հիշատակարանից մենք պետենք, որ ձեռագրի կազմիչը Աբրահամն է: Անընթեռնելի մասում որոշակի նկատվում են այդ անվան մի քանի տառեր, հատկապես «հ»-ն: Երբ համադրում ենք հիշյալ երկու վեղա-

²⁵ Մատենադարան, ձև. № 6288, էջ 9ա:

²⁶ Գ. Լուսնեփյան, Նշվ. աշխ., էջ 48:

թափորների նկարների մոտ եղած մակագրութիւնները. ստացւում է այսպես:

Վերևում «Հայր Եղբայրիկ առաջնորդ սբ ուխտիս յիշեսչիք».

Ներքևում՝ «Կաղմիշ սորին եւ հայր [Աբրահամ մի]ջնորդ ի սմին յիշեսչիք»:

Չեռագրում երկրորդ մակագրութիւնը ավելի երկար տեղ է զբաղեցնում, քան առաջինը, և ավելի խիտ է գրված:

Ուրեմն հայր Աբրահամը ոչ միայն Հաղբատի Ավետարանի կաղմիշն է, ինչպես հավաստում է գլխավոր հիշատակարանը, այլև Մարգարեի գործի միջնորդը, ինչպես վկայում է նկարի մակագրութիւնը:

Հայր Եղբայրիկին Գ. Հովսեփյանը համարում է Արշուառնի առաջնորդ: Փաստ շունենք: Հաղբատի Ավետարանը Մարգարեի նկարազարդելուց, Աբրահամի կաղմելուց և Արշուառնի վանքին նվիրելուց հետո միայն գրվել է գլխավոր հիշատակարանը, ուր երկու անգամ հիշվում է Արշուառնը, «...Վասն զի խնդիր էաւ սրբութիւնդ ձեր մատուցանել մաղթանս ողբհեծ պաղատանաւք, ով լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արշուառնի, առ որ զյոյս հաւատոյ մեր հղեալ զբովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց ծախեցաք և շինեցաք զաստուածարնակ սուրբ եկեղեցիս, և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արշուառնի»²⁷: Միաբաններից ոչ մեկին չեն հիշել հիշատակարանում: Բայց եթէ առաջնորդը լինէր Եղբայրիկը՝ կհիշեին: Աբրահամին նկարել էին և հիշատակարանում հիշել, կհիշեին նաև Արշուառնի առաջնորդին: Այդպիսին, հավանաբար, չկար:

Չեռագրում հիշվում են գրչութիւն վայր Հաղբատի առաջնորդ Հովհաննեսը, կաղմելու վայր Հոռոմոսի առաջնորդ Մխիթարը, մնում է ձեռագրի ծաղկելու ուխտի առաջնորդը, որը և պետք է լինէր հայր Եղբայրիկը: Մարգարեն, որ նկարել էր ձեռագրի կաղմող և գործի միջնորդ հայր Աբրահամին. իր սեփական ուխտի առաջնորդին, որտեղ ինքը ծաղկել էր ձեռագիրը, շնկարել չէր կարող: Եվ նա նկարել է իր ուխտի առաջնորդ հայ Եղբայրիկին:

Փնտրենք հայր Եղբայրիկի ուխտը:


Մաշտոցի անվան Մատենադարանի № 5554 ձեռագիրը Ավետարան է: Համառոտ նկարագրութիւնը. «ԺԲ դար: Զարեհանի ուխտ: Կաղմող՝ Վանական (ԺԲ դ.): Ստացող՝ Գրիգոր: Թերթ՝ 278: Մագաղաթ, 25×18: Երկսյուն: Բոլորգիր: Տող՝ 20: Մանրանկար՝ խորան՝ 9, կիսախորան, լուսանցազարդ: Կաղմ՝ կաշեպատ տախտակ՝ զրոշմազարդ...»²⁸: Չեռագիրը գլխավոր հիշատակարան չունի: Գիրը սովորական բոլորգիր չէ. ավելի շուտ գրչագիր՝ բոլորգրախառն: Թվագրելի է ԺԲ դարի վերջ և ԺԳ դարի սկիզբ:

Գրչից երկու հիշատակագրութիւն կա. Մաթևոսի Ավետարանի վերջում. «Այս կտակ աստուածախաւ սուրբ ուխտին է. Զարեհանի, Տէր Աստուած ուղորմեսցի ստացողին, ամէն»²⁹, և գլխավոր հիշատակարանի սկզբի «Փառք»-ը: Որպես սրա շարունակութիւն, անմիջապէս, ստացող-նվիրատուի հիշատակարանն է՝ այլ գրութիւն. «Գրիգոր ստացող սուրբ Աւետարանիս և ամուսիննորին, և որդիս նոցին յիշեսչիք ի Քրիստոս: Ընդ նոսին և զՄիմէնս կրաւ[նա]-

²⁷ Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 360ա:

²⁸ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, կաղմեցին Օ. Եղանյան, Կ. Չեչիճոնյան, Փ. Անթարյան, Երևան, 1670, էջ 132:

²⁹ Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 85ա:



Նկ. 8 (էջ 27ա)

ւոր պատճառ դործոյս, և դառաջնորդը սուրբ ուխտիս Զար<ե> ևհանի զծղիսէ հայր, և զվարդան փակակալ, և զծաշայտուր դործակից, զՍտեփաննոս և զՂուկաս, զվարոս միայնատր, և զայլ համարէն միարանք Սուրբ Նշանիս, որում սուրբ Աւետարանս է խայրի և ընծայ աւանդեալ ի վերագրելոցս»³⁰: Այնուհետև նվիրող Գրիգորի շղագիր ընծայականն է³¹:

Այսպիսով, այս ձեռագիրը գրված է ոչ թե Զարեհանի Սուրբ Նշան նւխտում, ինչպես նշված է Յուդակում, այլ նվիրված է նրան որպես «խայրի և ընծայ»:

Զարեհանը գտնվում է Արշարունիքում և շփոթվել է Զարեհափանի հետ³²:

³⁰ Նույն տեղում, էջ 278ա:

³¹ Նույն տեղում:

³² «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 98: Սուկավետ լեռնապարի, այժմյան Հայկական պարի հյուսիսային փեղերին էր փոխում Զարեհափան գավառ՝ նամանուն ափանով (հին Հայկական Զարեհափան քաղաքի տեղում) (ընդգծումը իմն է—Ա. Մ.): Զարեհափանը Սաղկոտան գավառում է, Սմբատ Զարեհափանցու ծննդավայրը, և կրում է Արտաշեսի Զա-

Զարեհանը գտնվում է Կաղզվանից Արաքսի հոսանքն ի վեր քսանհինգ կիլոմետր հեռավորության վրա: Իրա տեղում այժմ Զարաբխանա գյուղն է³³:

Իսկ որտեղ էր գրված և նկարազարդված Զարեհանի սուրբ Նշան ուխտի Ավետարանը:

Չեռագրի վերը բերված հիշատակարաններից բացի բազմաթիվ հիշատակագրություններ կան խորանների գերանների, սյուների վրա և նույնիսկ գլխադարձերի վարդյակներում, որոնց մեջ մեզ ամենից առաջ հետաքրքրում է «Եղբայրիկ» անունը:

Եվսերիոսի նամակի առաջին խորանի ստորին գերանի վրա գրված հիշատակագրությունից (որը շարունակվում էր նաև հաջորդ խորանի համապատասխան գերանի վրա) պահպանվել է միայն առաջին բառը՝ «Եղբայրիկն»³⁴:

Տր էջում խորանի գլխադարձի վարդյակում ութաթև դարդի մեջ, շուրջանակի գրված է ներկով «Եղբա[յրիկ]», իսկ միջին գերանի վրա, դարձյալ ներկով՝ «Եղբայրիկ զհայր Բեխենց վանից յիշեցէք յաղաթս»³⁵ (նկ. 9): Կարծես դռանը հայր Եղբայրիկի ուխտը: Այդ Բեխենց վանքն է: Ուրեմն հայր Եղբայրիկը Բեխենց վանքի առաջնորդն է, և ոչ Արշուառնի: Զարեհանի վանքը՝ Բեխենց անունը չունի, այն կրում էր Սուրբ Նշան անունը և նրա հայրը կամ առաջնորդը Եղիսեն էր: Ուրեմն նրանք տարբեր վանքեր են: Փնտրենք Բեխենց վանքը:

Անի քաղաքի արձանագրություններից երկուսում հանդիպում ենք «Բեխենց» տեղանվանը: Առաջինը Աբղղարիպ Պահլավունու եկեղեցու վրա Արուճեցի Տրդատ քահանայի Ոեթ (1193) թվականին գրած արձանագրության մեջ է, և արտի անունն է «եւ տուն եկեղեցւոյն դիմաց, մեծ արտ Բեխենցն: Ճ Կապճո մին ի միքեսն ի շոողան Բեխենցն այս է ի Պղպղիկ»³⁶: Մյուսը՝ Տիգրան Հոնենցի Անիի նորակառույց Սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքի վրա է, արձանագրված ՈԿԳ (1215) թվականին: Կառուցելով իր հոյակապ տաճարը, Տիգրան Հոնենցը վանքն ապահովում է ամեն ինչով, ապա պատվիրում «եւ զվանքն Բեխենց կոչեցեալ, զոր ես շինեցի և նորոգեցի, ընծայաւք փարթամացուցի ամէնովն, Սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս հոգայ զորպիսութիւն»³⁷: Բեխենց

թե՛ որդու անունը: Այդ անունից է ծագում նաև Զարիշատ և Զարեհան անունները, որոնք պետք է պահպանվեն նույնությամբ: Զարեհանը հիշվում է VI դարից, հետագայում այն դառել է Զարաբխան:

33 Ղ. Այլջան, Այրարատ, Վենետիկ, 1901, էջ 41, 517: Հմմտ. Գ. Ս. Հակոբյան, Ներքին Բասնի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 15:

34 Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 1բ—2ա:

35 Նույն տեղում, էջ 8բ: Ահա և մյուս հիշատակագրությունները.

4ա Միջին գերանի վրա հունարեն ծածկագիր, առայժմ անվերծանելի:

4ա Աջ սյան վրա, վերից վար Տիրացու [գրիչ]:

6ա Խորանի գլխադարձի վարդյակի մեջ «Սիմեոն Բե»:

Ստորին գերանի վրա. [«Յիշեալ»] զի վերստին նորոգեց Աետարան[ս] ի ձե[ս]ն Տ[ի]-րաց[ուի]:

7ա ստորին գերանի վրա, գաղտնագրությամբ. «Զմիակեցն զՍիմեոն, որ բնակէր յանաղատի, յողոմիս յիշեցէ՛ք, ամէն»:

Տր Ստորին գերանի վրա. [խա]չ[այ]տուր եղբայր մեր յիշեցէ՛ք ի սուրբ յաղարս ձեր, [աղ]աչեմ»:

36 «Գիվան հայ վիմագրության», սրակ Ա, Անի քաղաք. կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 47, № 134:

37 Նույն տեղում, էջ 63, № 188:

վանքը Քորամանյանի վկայութեամբ Տիգրան Հոնեցի Սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքի մոտ էր³⁸:

Ուրեմն Տիգրան Հոնեց մեծահարուստ Անեցին, մինչև Սուրբ Գրիգոր տաճարի կառուցումը Անիում ունեւր Բեխենց վանքը (հավանաբար Բեխենց տոհմի տերիտորիայում, որտեղից էլ՝ անունը), իսկ Ս. Գրիգորի կառուցելուց հետո նորոգել և փարթամացրել էր այն: Ահա այս Բեխենց վանքի առաջնորդն էր Եղբայրիկը: Արձանագրութիւններում ևս հանդիպում ենք Տիգրան Հոնեցի Եղբայրիկ անունով սպասավորին: «Ի ՈՂՍ. (1222) թիւն, շնորհիւն Քրիստոսի, ի տէրութեանս աստուածատէր Աթաբակ Բանէի եւ Շահնշահի եւ Առաջին, եւ Եղբայրիկս, ծառայ տեառն իմոյ Տիգրանա, նորին ողորմութեամբն շինեցի զարձանս յիշատակ մեզ եւ ծնողաց եւ զաւակաց մերոց»³⁹: Ամենայն հավանականութեամբ սա նույն հայր Եղբայրիկն է, որ իր ծառայութիւնների համար իր տիրոջից արժանացել է քաղաքի պարիսպն քուրդերից մեկը հիշատակ-արձան շինելու պատվին:

Ինչևէ, 1215 թվականից առաջ, այսինքն 1211 թվականին, հայր Եղբայրիկը Տիգրան Հոնեցի Բեխենց վանքի առաջնորդն էր, որտեղ Մարգարե ծաղկողը նկարագարում է Հաղբատի Ավետարանը: Ուրեմն Մարգարե ծաղկողը այդ ժամանակ արդէն Անեցի էր: «Մարգարե նկարչի Ավետարանը,— գրում է Գ. Հովսեփյանը,— Անեցի Սահակ կրօնավորի պատվերով ընդհանրացած ձևերից (շարուն) զատ, իր մի քանի անհատական, կենցաղական մանրանկարներով, ժամանակակից Անի քաղաքացու, հողեպահականի, բարձր և ստորին խավերի երկու սեռի ներկայացուցիչների տարադններով, հայ արվեստի և մշակույթի պատմութեան համար թանկագին աղթեր է բերում»⁴⁰:

Բեխենց վանքը գտնվում էր Ախուրջանի ափին, Անիի հյուսիս-արևելյան կողմում, որտեղից հանապարհն անցնում էր դեպի Հոռոմոս, և նրանք կապված էին իրար հետ: Ք. Քորամանյանի վկայութեամբ, Անի քաղաքն հասնում էր մինչև Հոռոմոս⁴¹, այսինքն՝ Հոռոմոսը և Բեխենց վանքը մի քաղաքում էին գտնվում:

Փորձենք ավելի որոշակի դարձնել քաղաքում Բեխենց վանքի տեղը⁴²: Անի քաղաքի հատակագծում ն. Մառը նշել է հայտնի և նոր հայտնաբերված շենքերը և առանձին կետեր՝ պարիսպներ, աշտարակներ, դարսյասներ, դռներ և այլն: Հ. Օրբելին Անիի ավերակների Ուղեցույցի վերջում կցել է ն. Մառի կազմած վերը նշված հատակագիծը և բերել այնտեղ նշված կետերի համարներին համապատասխան անունները⁴³: Ք. Քորամանյանի ուսումնասիրութեան մեջ մեզ հետաքրքրող տեղեկութիւնների մեջ հիշատակված շենքերն ու առանձին կետերը հատակագծում կրում են հետևյալ համարները (բերում ենք

38 Ք. Քորամանյան, Նյութեր հայկական հարտարապետութեան պատմութեան, Առաջին ժողովածու, Երևան, 1942, էջ 219:


39 «Գիվան հայ վիճադրութեան», Ա, էջ 7, № 20:

40 Գ. Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 12:

41 Ք. Քորամանյան, Եղվ. աշխ., Առաջին ժողովածու, էջ 327—328:

42 Н. Я. Марр, Ани, 1934, էջ 56—57-ում՝ ներդիրներ:

43 Н. Орбели, Путеводитель по городищу Ани, У. Պետերբուրգ, 1910, էջ I—VI, հատակագիծ:



Նկ. 9, (էջ 8ր)

հուշարձանը և համարը). Ախուրջանի կամուրջը՝ 9, Սարգիս Միլենցի դուռը՝ XIII, որը եղել է Բագրատ արքայունու դարպասը: Այս դարպասի արևմտյան՝ 67 և արևելյան՝ 69 բուրգերը: Տիգրան Հոնենցի կառուցած Կուսանաց վանքը՝ 92, նրա դուռը՝ XI և դարպասը՝ XII: Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած Գրիգոր Լուսավորչի տաճարը՝ 82: Վերջինիս և Կուսանաց վանքի մեջտեղում ընկած բարձունքը՝ ավերակով՝ 90:

Ճանապարհները նշանակված են գծիկներով, քարձուները և գետի ափերը՝ աղեղնաձև գծախմբերով:

Այժմ Քորոս Քորամանյանի առաջնորդությամբ հետևենք Մառի հատակագծին. Ախուրյան գետի «կամուրջեն(9) քաղաք բարձրանալու ճանապարհը ոլորապատույտ կբարձրանա (սկսելով կամուրջեն դալով դեպի արևելք) կհասնի մինչև Ծիլենց Սարգսի դուռը (XIII), որը կգտնվի Բեխենց վանքեն արևմուտք... Այս ճանապարհը կհասնի մինչև Բեխենց վանքի բարձրությունը (90), պետք է ասել, որ գետափի ճանապարհն ալ ոլորապատույտով կապված է այս ճանապարհի հետ»:

Հիրավի, կամուրջից դուրս եկող ճանապարհը հասնում է Ծիլենց Սարգսի դուռը, և շարունակվում դեպի արևելք, բարձունքը, որի վրա գտնվում են Բեխենց վանքի ավերակները (նկ. 10):

Ծիլենց դռնից՝ գետեզերքով դեպի արևելք, հինգ հարյուր մետրի վրա է գտնվում Կուսանաց վանքը, որից նույնքան մետրի վրա՝ դեպի հյուսիս-արևելք՝ Բեխենց վանքը: Սրանից ութ հարյուր մետր դեպի արևելք Գրիգոր Լուսավորչի վանքն է, երեքն էլ Տիգրան Հոնենցի կառույցները: Վերջինիս դիմաց, պարսպի վրա՝ Եղբայրիկ բուրգն է⁴⁴:

Ի դեմս Բեխենց վանքի մեզ հայտնի է դառնում Անի մայրաքաղաքի զբոսայգույն և մանրանկարչության մի կենտրոն, Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցի իշխանության և հովանավորության և հայր Եղբայրիկի առաջնորդության ներքո:

Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն Անին, ուր ծաղկում էին արհեստներն ու արվեստները, շէր կարող զբոսայգույն արվեստանոց շունենալ: 1199 թ. Զաքարյանները ազատագրում են Անին և առավել զարգանալու հնարավորություն ստեղծում: Քաղաքում կային բազմաթիվ արհեստավորական շարքեր, արտադրական և առևտրական հաստատություններ: Աճող քաղաքի շուրջ առաջացել էին արվարձաններ: Հյուսիսային ուղղությամբ սարսպից քաղաքը ձգվում էր մեկուկես կիլոմետր, արևելքից, փոքր-ինչ ընդհատումներով, հասնում էր մինչև Հոռոմոսի վանքը...

Անին արհեստագործության, երկրագործական արտադրանքի վերամշակման և առևտրի խոշոր կենտրոն էր: Բարգավաճ և բարեկեցիկ քաղաքի «բնակչությունն աչքի էր ընկնում ազատարար կենցաղով, աշխարհիկ բարքերով՝ հակված դեպի թատերական խաղերը, երգն ու սպորը, հանդեսները, երաժշտությունն ու արվեստը:


Քաղաքի վերնախավը սիրում էր շքեղությունը, արծաթն ու ոսկին, ցոպ ու զեխ կյանքը:

Իր զարգացած արհեստագործության բազմաթիվ ճյուղերով... առատ շուկաներով... զգալի շահով զբաղեալ արվեստասեր բնակչությամբ Անին ապրում էր ծաղկուն քաղաքային կյանքի եռուզեռով...»⁴⁵:

Ահա այս Անիում, բուն քաղաքում և ծայրամասերում, Հոռոմոսի վանքում և այլուր, ծաղկում է նաև զբոսայգույն և մանրանկարչության արվեստը և տևում մինչև մոնղոլների արշավանքները: Այնտեղ ձևագրեր էին գրում և վաճառում,

⁴⁴ Բեխենց վանքը Գրիգոր Լուսավորչի վանքից և Ծիլենց դռնից հավասար հեռավորության վրա է բնակված և վեցհարյուր մետրի վրա է Ախուրյան գետից, որտեղից «Շիրանիկը ձուկն էր բերում» Բեխենց վանք:

⁴⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 571—572:



24 10 Անի բաղաժի գրչության և ժանրանկարչության

պատվերներ ստանում ու կատարում: Գրչուիցյան արվեստի հետ կապված առարկաներ արտադրում, սեփական արտադրանքի կամ դրսից բերված նյութեր վաճառում և այլն: XII դարի վերջերին Սաղմոսավանքում գրված մի ձեռագրի կազմի համար հիշվում է «Ձեղքայրն մեր Քառսունքն... որ զնիթ կաղմութեան սորա երեր ի Տիխեաց և զաղն և կոճակ՝ յԱնոյ»⁴⁶:

Տիգրան Հոնեցի Բեխենց վանքից մեզ հասած Մատենադարանի № 5554 ձեռագիրը ապացուցում է վերը ասվածը: Ձեռագրի հիշատակարանը չի գրվել, որպեսզի այն վաճառելուց հետո շարադրվի՝ կատարված գործարքի համապատասխան: Բազմաթիվ հիշատակագրությունների, ինչպես նաև ձեռագրի վիճակի քննությունից պարզվում է, որ ձեռագիրը գրվել և ավարտվել է առանց համարարրանների գունազարդման, միայն գծանկարով: Գունազարդված են միայն շորս կիսախորանները:

Բեխենց վանքի ձեռագրի խորանները գունազարդվում են վաճառելիս, պայմանավորվածությամբ համաձայն, որի մեջ մեծ դեր էին կատարում միջնորդները: Զարեհանի Ավետարանում Սիմեոնը հիշվում է որպես «պատճառ գործոյս» այսինքն՝ միջնորդ, իսկ Խաչատուրը՝ նրան գործակից (որոնց անունները գրված են խորանների գերանների վրա) այնպես, ինչպես Աբրահամը՝ Մարգարեի համար: Սյուններից մեկի վրա կարդացվում է «Տիրացու գրիչ» անունը⁴⁷, մի ուրիշի վրա «...զի վերստին նորոգեց Աւետարան[ս] ի ձեռն Տիրացուի» (մաշված է): Նույն խորանի վերևում, վարդյակի մեջ գրված է. «Սիմեոն քահանա»: Մեզ թվում է հիշատակարանը պետք է կարդալ «Սիմեոն քահանա [յիշեա] զի վերստին նորոգեց Աւետարան[ս] ի ձեռն Տիրացուի»: Սիմեոնը, գործի միջնորդը, պահանջել է գունազարդումը (անշուշտ՝ զնի համապատասխան հավելումով) և Տիրացուն կատարել է այն: Ձեռագիրը առանց կազմելու տարվում է Զարեհան, որտեղ և կազմում է դրսից եկած վանական կազմարարը⁴⁸:

Մեր կարծիքով նույնպիսի նպատակով և սկզբունքներով է գրված նաև Մատենադարանի № 7635 ձեռագիր Ավետարանը: Մագաղաթյա այս ձեռագրի միայն կիսախորաններն են գունազարդված: Համարարրանի խորանները կարմիրով են գծված, որոնց վերջինի գերանի վրա գրված է. «Ձմեղապարտ և զանարժան գրիչ Սոսթէնէս յիշեսցիք ի Տէր»⁴⁹: Հիշատակարան չի գրված, շնայած բավականին տեղ կա վերջում: Այդ վիճակում էլ այն անցնում է Ավետեացի ձեռքը, որը ձեռագիրը նվիրում է Հռոմոսի վանքին⁵⁰:

Այս և Բեխենց վանքում գրված ձեռագրի կիսախորանները ունեն որոշ նրժանություն, բայց Բեխենց վանքի Ավետարանում արտակարգ ցայտուն է արտահայտված լուսանցազարդերի՝ ավանդական ձևերից շեղումը (նկ. 12): Այստեղ լուսանցազարդերի մեծ մասը եռատերև ծաղիկներ են, շատերը ծաղկա-

46 Մատենադարան, ձեռ. № 3777, էջ 192բ:

47 Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 6ա:

48 «Յիշեսցիք և զվանական կաղմոզ» (2ա) գրված է խորանի գերանից ներքև: Նույն գրով (2բ) «Յիշեա Քրիստոս Աստուած զբնակիչը սուրբ ուխտիս Զարեհանի, որ հանգուցին զկեանս իմ՝ լի զանութեամբ» (ձեռ. № 5554):

49 Մատենադարան, ձեռ. № 7635, էջ 6բ:

50 «Աւետարանս Հռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ձերոյս յԱւետեացս, որդոյ Խաչեղրատրն. աշաշէ յիշիլ յազաթս ի ՈՂԸ (1249) թվ[ին], Ով զմեզ լիշէ բարի մտաբ, ինքն յիշեալ էղիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց, ամէն»:

մաններում, իսկ մի մասն էլ ազատ ճյուղերով: Զեռագրերում հանդիպում ենք Հաղբատի Ավետարանում նկարված Շերանիկի ձկանը, առանց Շերպնիկի (Նկ. 11):

Կուսանցադարձերի ծաղիկների բնականության այս ոգին եղել է Բեխենց վանքի մանրանկարչական դպրոցի գերիշխող ոգին, որը առավել ցայտունությամբ դրսևորվել է Հաղբատի Ավետարանում, Բեխենց վանքի գրչության կենտ-



Նկ. 11 (էջ 27 դա)

րոնի մի այլ արվեստագետի, գրիչ և նկարիչ Մարգարեի ստեղծագործություններում:

Այժմ տեսնենք թե ո՞վ էր Մարգարեն և ինչ է արել Բեխենց վանքի գրչության կենտրոնում Հաղբատի Ավետարանի հետ:

Մատենադարանի № 1886 պատասիկը մագաղաթյա երկաթագիր Ավետարանի վերջին թերթն է, որի առաջին սյունակում վերջանում է Հովհաննու Ավետարանը, իսկ երկրորդում սկսվում և հաջորդ էջի վերջում ավարտվում է հիշատակարանը: Այն գրված է 1209 թ. Հովասափ կրոնաւորի անունից, որ էր «ազ-

գաւ եւ տոհմիւ ի մեծ գեաղաքազարէն Կումիրոյ»⁵¹ և առաջացած տարիքում իր «արդար ընչից», որպէս «փրկանք հոգւոյ» ազատում է գերողներից Ավետարանը, և քանի որ «էր կարի զեղծեալ» տալիս է «զարձեալ նշանագրել ծաղկով եւ արծաթով փառազարդեալ», որը կատարվում է Հառիճում: Հիշատակարանը գրում է կազմող Մարգարեն, որը, ամենայն հավանականութեամբ, նաև ծաղկով նշանագրողն էր, որի տակ հասկացվում է լուսանցազարդեր նկարելը: Բանն այն է, որ ձեռագիրը գրված է եղել XI դարում կամ դրանից առաջ և նշանագրերը նշվել են բաժանարար գծիկով, իսկ XI դարի երկրորդ կեսից արդեն օգտագործվում էին զարդագիրն ու լուսանցազարդը: Այդ թերին լրացնել է տվել Հովասափը Մարգարեին, որը նաև կազմել է և արծաթով փառազարդել, վերջում էլ հիշատակարանը գրել: Հիշատակարանի գրութունը համեմատեցինք Հաղբատի Ավետարանի Մարգարեի գրչագիր հիշատակագրութունների հետ. նույնութունը ակնհայտ է:



Նկ. 12 (էջ 146բ)

Ուրեմն Մարգարե արվեստավորը՝ գրիչը, ծաղկողը, կազմողը 1209 թ. Հառիճում էր, 1211, թ.Անիում: Թերևս սույն Ավետարանի ծաղկելու և արծաթով փառազարդելու համբավն է Կումիրիից. (Կումայրիից) հասել Հոռոմոս ու Բե-

51 Համեմատելի՝ Հաղբատի Ավետարանի հիշատակարանի «ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ...» հետ:

խենց վանք, որի միաբանն է դարձել Մարգարեն: Եվ Անի քաղաքային կյանքը, կենցաղը և ճարտարապետությունը այնպիսի ուժեղ տպավորություն են թողել Հառիճեցու վրա, որ նա նրանցից դրվագներ է մարմանավորել Ավետարանի համարարբառի խորանների գերանների վրա և «Մուտք լերուսաղէմ» տերուսանական նկարում⁵²:

Առաջին անգամ Հաղբատի Ավետարանում ենք տեսնում հիշատակագրություններ ու մակագրություններ Համարարբառի խորանների կամարների, սյուների և գերանների վրա, և Բեխենց վանքում գրված մյուս՝ Զարեհանի Ավետարանում՝ նաև վարդյակների մեջ: Այս գալիս է անշուշտ Անիի եկեղեցիներ, պալատների, պարիսպների, աշտարակների, դարպասների, հուշարձանների կամարների վրա գրված արձանագրությունների նմանողությունից, և նրանց տպավորության տակ է Մարգարեն գրել: Տեղին է այս առիթով հիշել անգլիացի նշանավոր նկարիչ և հնագետ Ռոբերտ Կեր Փոքտրի տպավորությունը Անիից, որ ստացել է 1817 թ. այնտեղ կատարած այցելության ժամանակ, «Տները, եկեղեցիները, աշտարակները, պարիսպները, ամեն մեկ շենքը, ցածր կամ բարձր, ունի ընդհանուր ճաշակ և բոլորի վրա տեսնում ենք սև քարի մեջ քանդակված սուրբ նշանը (խաչը—Ա.Մ.): Բացի այս նշաններից, ես գտա հին հայկական տառերով փորագրված երկար արձանագրություններ, եկեղեցիների գլխավոր մուտքերի վրա»⁵³:

Այս ամենը տեսել է Մարգարեն: Եվ նրա ձեռքում Հաղբատում նկարադարձված Ավետարանը կերպարանափոխվում է, վերաշնչավորվում:

Հաղբատի Ավետարանի սկզբից անշատած խորանների փոխարեն Մարգարեն նկարել է տաս խորաններ՝ հանդիսակած էջերի վրա, մեկընդմեջ: Առաջին երկու խորանները, որոնք տարբերվում են մյուսներից, պարունակում են եվսեբիոսի նամակը՝ Կարպիանոսին: Դրանցից յուրաքանչյուրը իրար կցված երեք կիսաշրջանակներ են, որոնք շրջափակված են քառանկյունիով: Սրանց միջի սարածությունը ծածկված է կանաչ և կարմիր ազյուսանման դարդերով, որոնք իրարից բաժանվում են ոսկեգծերով: Քառանկյունին շրջանակված է ավելի մեծ քառանկյունի եզրադարձով, որի մոտիվներն են եռատերևի և հնգատերևի իրար հաջորդող շարքերը⁵⁴:

Հաջորդ խորաններում արդեն գրված են կանոնները: Խորաններն ունեն երեքական սյուներ, որոնց և ստորին և միջին գերանների գլուխները դուրս են գալիս դեպի արտաքին լուսանցքները:

Առաջին խորանի միջին գերանի վրա կանգած է մի պատանի, անմորուս, երկար մազերով, գլխին երկարավուն գլխարկ և հագին երկար պարեպտ: Զախ ձեռքում ունի դարդարուն սրբիչ, աչով բռնել է մի կանթով ջրաման:

Ստորին լուսանցքում նույնպիսի մի պատանի, աչ ձեռքով ուսին է դրել մի կեռազլուխ մահակ, որի կեռից մի ձուկ է կախված: Գլխի մոտ գրված է.

52 Կ. Ա. Մաքսույան, Անի-Հոռոմոս ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1982, № 1, էջ 143—149:

53 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, ԺՊ դ., Երևան, 1934, էջ 747: Այնուհետև նա գրում է. «Նրանից (եկեղեցիների գլխավոր մուտքերի վրա) եղած արձանագրություններից Ա. Մ.) մի քանիսը ես պիտի ընդօրինակեի թղթի վրա, եթե օրը առաջացած լինեի և այնքան ցուրտ լինեի, որ կարողանայի բռնել մատիտը» (անդ):

54 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 6բ—7ա:

«Շերանիկ քանի դաս ձուկն բեր»⁵⁵:

Հանդիպակաց խորանը արդեն մեզ ծանոթ է: Միջին գերանի վրա կանգնած է Բեիենց վանքի առաջնորդ հայր Եղբայրիկը, իսկ ստորին գերանի վրա միջնորդ և ձեռագրի կազմող հայր Աբրահամը⁵⁶:

Դժվար չէ նկատել, որ Մարգարեն այստեղ նկարել է ձեռագրի հետ կատարած իր աշխատանքային միջավայրի ներկայացուցիչներին: Ուխտի առաջնորդին և կազմարարին՝ ձեռագիրը ձեռքերում և ուխտի սպասավորների ներկայացուցիչներին. նրանց հաց և ջուր, թե գինի տվող պատանիներին: Վերջին խորանի վերջն գերանի վրա—մի նունենի է նկարված՝ վրան թռչուն: Մտնի տակ ծուպավոր գորգի և զարդարուն բարձի վրա նստած պատանին սաղ է նվագում⁵⁷: Ուրեմն առաջին պատանու ձեռքի անոթը ոչ թե ջրաման է, այլ Անիում պատրաստած գինու սափոր:

Մարգարեն այս խորանների գերանների վրա բազմաթիվ հիշատակագրություններ ունի որոնցում հիշվում են ստացողը, ծնողները, եղբայրները⁵⁸: Հայր Եղբայրիկի, հայր Աբրահամի և Շերանիկի մասին վկայությունները լուսանցքներում են գրված, իսկ վերջին խորանի գերանի ներքևում Մարգարեն թողնում է իր մասին առաջին հիշատակագրությունը. «Տէր Աստուած ողորմեա Մարգարէին՝ գրչի և նկարչի եւ Սահակայ ստացողի և ծնողաց իւրեանց, ամէն»⁵⁹: Մարգարեի գիրը՝ խորաններից դուրս, լուսանցքներում և համարարբառներում գրչագիր է, իսկ գերանների վրա տարբեր գույնի ներկով գրված՝ երկաթագիր:

Խորաններից հետո, հաջորդ թերթի երկրորդ էջով մեկ նկարել է հռչակաւոր «Մուտք յԵրուսաղէմ» նկարը, կատարված «ոչ շարլոնական ձեակերպությամբ, այլ ինքնուրույն ստեղծագործությամբ»⁶⁰: Հաջորդ «Ընծայականը», խմբանկարի կենտրոնում կանգած է Քրիստոսը, իսկ կողքերից Ավետարանն ընծայաբերող Սահակ Անեցին և իր եղբայր Առաքելը: Այստեղ ավարտվում է Մարգարեի կողմից ձեռագրի սկզբում գրված տասներկու թերթերի նկարազարդումը:

Նրա հաջորդ գործը Մաթևոսի Ավետարանի առաջին թերթի անջատումն է, որ ինչպես նշել ենք, գրված էր առաջին գրչի կողմից, և նրա փոխարեն երկու թերթերի մուծումը, որոնցից առաջինի վրա նկարում է կիսախորանը՝ գլխազարդով, զարդագրով, լուսանցազարդ և զարդագիր տողերով: Հաջորդ երեք էջի վրա, խոշոր երկաթագրով տեղավորում է անջատված թերթի պարունակած բնագիրը:

Մարգարեին չի բավարարում նաև Մարկոսի ավետարանառաջը, և քանի որ այն գտնվում էր մի պրակի մեջտեղում, որի շորս թերթի վրա Մաթևոսի Ավետարանի վերջին մասն էր գրված, իսկ մյուս շորսին՝ Մարկոսի սկիզբը:

55 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 8բ:

56 Նույն տեղում, էջ 9ա:

57 Նույն տեղում, էջ 15ա:

58 Նույն տեղում, էջ 10բ:

«Քրիստոս Աստուած ողորմեա Առաքէլին, ամէն»:

«Տէր Աստուած գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի բո, ամէն»:

«Հոգի սուրբ Աստուած, գթայ ի հոգին Իպատոսի ծառայի բո, ամէն»:

11ա «Տեր Յիսուս ողորմեա Սահակայ, ամէն»:

59 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 15ա:

60 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 50:

անջատում է ամբողջ պրակը և նորից գրում ու նկարազարդում է: Եթե Մաթև-
 փոսի Ավետարանի սկզբում իր ավելացրած թերթերի վրա բնագիրը գրում էր
 ավելի լայն տողերի վրա և համեմատաբար մեծ երկաթագրով, ազատ էջամաս
 շմնալու համար, ապա այստեղ պահպանում է տողերի տառանիշերի շափն ու
 քանակը. նույնիսկ լուսանցազարդերի ձևն ու մեծությունը: Անջատված թերթե-
 րից հինգը տեղադրվում է ձեռագրի սկզբում որպես պահպանակ, իսկ երեքը,
 հավանաբար վերջում՝ որպես պահպանակ, վելփինները այժմ չկան: Մաթևոսի
 Ավետարանը վերջանում է 111 ա էջում: Հաջորդ ազատ մնացած էջը օգտագոր-
 ծում է հիշատակարանի համար⁶¹:

Խորանների մեջ համարարբառների, խորանների գերանների վրա և լու-
 սանցքների մեջ հիշատակագրությունների, լրացված թերթերի վրա բնագրային
 գրությունները, որ Մարգարեն կատարել է մանր և մեծ, ուղիղ և թեք գրչագրով,
 գեղեցիկ երկաթագրով և բոլորաբարձ, ցույց են Տալիս, որ Մարգարե արեղան
 ոչ միայն վարպետ նկարիչ է, այլև վարժ և հմուտ գրիչ, ինչպես իրեն համար-
 րում է մի հիշատակագրության մեջ⁶²:

Մարգարեն այնուհետև գունազարդում է զարդագրերն ու լուսանցազար-
 դերը, որոնք միայն գծված էին և անգույն էին: Նրա լրացրած պրակի լուսան-
 ցազարդերը ամբողջովին պատկանում են իրեն: Ինչպես ասացինք, դրանք
 գծելիս նկարիչը պահպանել է Հակոբի նկարած լուսանցազարդերի շափը և ձևը:
 Մարգարեի և Հակոբի լուսանցազարդերի համեմատությունը ցույց է տալիս,
 որ նա ոչ միայն գունազարդել է անգույն զարդերը, այլև տեղ-տեղ միջամտել է
 Հակոբի նկարազարդածներին, պահպանելու համար ձեռագրի զարդարվածու-
 թյան միօրինակությունն ու ներդաշնակությունը: Մարգարեն մանրանկարչա-
 կան սրբագրություններ է կատարում ձեռագրում, երբեմն-երբեմն գլխագրերի
 վրա ավելացնելով մի տերև կամ մի այլ դարդ:

Մարգարեի վերջին գործը Հաղբատի Ավետարանի հետ, Հովհաննեսի Ավե-
 տարանից Հակոբ գրչի վրիպած հատվածի լրացումն է: Նա ձեռագրի մեջ ավե-
 լացնում է մի թերթ և վրան գրում ձԻԹ հատվածից մի քանի տուն («Այդ յոր-
 ժամ ծնիցի գմանուկն» բառերից մինչև «զուրախութիւնն»)⁶³:

Այս բոլորից հետո Հաղբատի Ավետարանը տարվում է Հոռոմոսի վանք,
 որտեղ Աբրահամը կազմում է ձեռագիրը և հանձնում տիրոջը:

Ձեռագրի հիշատակարանը կարող էր գրվել այստեղ, կազմելուց առաջ,
 որովհետև կազմելուց հետո գծվար է լինում գրելը: Բայց որովհետև այն գրը-
 վել է ոչ երկաթագիր, ոչ էլ գրչագիր գրությամբ, որ ավելի գծվար է, այլ ավե-
 լի գյուրագիծ, շղագրին մոտեցող գրությամբ, ենթադրում ենք, որ այն գրվել է
 կազմելուց հետո, Անիում, կամ հենց Արշուառձում, որտեղ գրվել է ձեռագիրը,
 բայց ոչ Մարգարեի ձեռքով, ոչ էլ Աբրահամի, այլ Հովհաննեսի ձեռքով.
 «...և զողոթմութիւն խնդրող զՅովհաննէս յիշեսջիք յաղաթս վասն Տեառն, աղա-
 շեմ»⁶⁴ ավարտում է հիշատակագիրը:

61 «Սուրբ Աստուած և անտարանիչ բանին հաւր, ի բոյոյ ապավինեալ բարեխաւսութիւն
 աղբատս և մեղաւոր արեղայս Մարգարէս՝ նկարող սորին, որպէսզի ողորմեսցիս ինձ, նաև Սա-
 հակայ ստացողի և եղբար իւրում Իպատսին, որ կիսարեա ել յաշխարհէս: Ինձ զմեզ աղաթիւք
 յիշէ, Աստուած զինքն յիշէ»: (էջ 111բ):

62 «Տեր Աստուած ողորմես Մարգարէին՝ Գրչի և նկարչի...» (էջ 15ա):

63 Մատենադարան, ձեռ. N° 6288, թերթ 338:

64 Մատենադարան, ձեռ. N° 6288, թերթ 360բ:

Չորս ավետարանիչների նկարները Հաղբատի Ավետարան են մուծվում կազմելուց հետո, որովհետև կաշվե բարակ թելերով կարված են համապատասխան ավետարանաաչներին:

Ձեռագիրը Արջուառճի վանքում մի տասնամյակ է մնում: 1223 թ. Ավետարանը Անիի գավառում վաճառվում և տարվում է Արցախ:

Այն ամենը, ինչ բացահայտվեց սույն հոդվածում, ավելի որոշակի են դարձնում Հաղբատի Ավետարանի տեղը հայ ձեռագրական մշակույթի մեջ, որպես շատ արժեքավոր մի հուշարձանի՝ իր գրիչներով, նկարիչներով ու կազմողով, գրչության այն դպրոցներով, որոնցում ստեղծվել է: Իսկ նկարիչ Մարգարեն ամուր կանգնում է մայրաքաղաքում, որպես Անիի մեզ հայտնի առաջին խոշոր մանրանկարիչը, որը Անիի հուշարձանների, որմնանկարների ու քաղաքային աշխարհիկ կյանքի կենսասխինդ միջավայրը մարմնավորել է ավետարանական խորաններում և նկարներում:

Գ. Հովսեփյանի կարծիքը նրա մասին ավելի շոշափելի հող է ստանում. «Մարգարեի արվեստի առավելությունն է և գնահատելի կողմը,— գրում է նա,— որ նա չի հեռուում մեքենական կերպով միայն սովորական, բնդունված ձևերին, այլ ստեղծագործում է ուրույն, անհատական և կենցաղական գծերով և արտահայտություններով, և դրանով բարձրացնում յուր նկարների զեղարվեստականի հետ և պատմական-ազգադրական մեծ արժեքը: Բայց նույնիսկ բնդհանուր հետևողություն և բնույթ կրող մանրանկարների մեջ ...արտացոլում են նկարչի անհատական կարողությունն ու շնորհքը: ...Չուկ բերող Շերանիկի, անանուն սպասավորի, ինչպես և երկու վանականների պատկերները, գաղափար է տալիս մեզ ժամանակակից հասարակ դասակարգի երիտասարդ քաղաքացու և վանականների զգեստավորության մասին, աշուղի նկարով՝ տարազի հետ սաղի, փովածքի կամ կապերտի, բանաստեղծական մտայնության մասին, անկախ ավանդությունից, յուր ազատ կամքով: ...»

Բայց ամենից ավելի ուշագրավը Հիսուսի մուտքն է նրուսաղեմ, որ ամենին չի նմանվում ավանդական պատկերացումներին, այլ ամբողջապես նկարիչի մի նոր հղացումն է անկախ ձևակերպությամբ... Հիսուսի բնդունելությունը նկարիչը տվել է տեղական կենցաղական բնույթ, նմանեցնելով մի բարձրաստիճան անձի կամ թագավորի բնդունելություն: Ժողովրդի այլևայլ դասերի և սեռերի ներկայացուցիչները հասնելով պատշգամբներն ու կտուրները, ծառերի վրա... զգեստավորել է համապատասխան իրական կյանքին...

Նկարչի տեխնիկական բարձր է և յուրատեսակ, գույները նուրբ են...»⁶⁵: Եվ ո՞վ գիտե, Մարգարե նկարիչը չի աշխատել Անի քաղաքի հոյակապ սլալատների և տաճարների որմնանկարների վրա:

65 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 71—74:

A. S. МАТЕВОСЯН

ПАМЯТНИКИ ПИСЬМЕННОСТИ И МИНИАТЮРЫ ГОРОДА АНИ

(Резюме)

Хранящаяся в Матенадаране им. М. Маштоца рукопись под номером 6288, известная как «Ахлатское Евангелие», была написана в 1211 г. двумя писцами по заказу монаха Саака из Ани.

Писцом II—X тетрадей был, по-видимому, Вард, а остальной части—Акоп, который не только написал эту часть, но и украсил миниатюрами всю рукопись, начиная с хоранов и заставок и кончая маргиналами и орнаментальными инициалами, которые он, однако, не раскрасил, за исключением заставок. Рукопись была отвезена в Оромосский монастырь к известному переплетчику Аврааму. Однако перед тем, как ее переплести, рукопись с целью иллюстрации, была послана в анийский монастырь Бехенц, настоятелем которого был Ехбайрик, а известным писцом и миниатюристом—Маргаре. Маргаре отделяет начальные хораны, и помещает хораны, нарисованные им самим, на следующих листах рисует «Въезд Христа в Иерусалим» и «Дарственную»,—Христос с заказчиками братьями Сааком и Аракелом. Заменяет первый лист евангелия от Матфея двумя новыми листами, на первом из которых он рисует заставку, на другом пишет текст. Полностью меняет X тетрадь, в которой была заставка евангелия от Марка. Пять из написанных Акопом листов сейчас находятся в начале рукописи в качестве защитных листов. И наконец, он добавляет еще один лист, на котором пишет пропущенный Акопом отрывок. Он также раскрашивает все маргиналы и орнаментальные инициалы.

Рукопись была переплетена переплетчиком Авраамом, затем принесена в дар новой церкви Аруджарического монастыря, которая была построена на средства отца и родственников Саака.

Анийский монастырь Бехенц, принадлежавший Тиграну Оненцу и возглавлявшийся отцом Ехбайриком, в конце XII и в начале XIII вв. был скрипторием, в котором была написана и иллюстрирована также рукопись Матенадарана № 5554 (писец и художник Тирацу). По-видимому, в этом центре иллюстрирована также рукопись № 7635, подаренная в 1249 г. монастырю Оромос.

Монастырь Бехенц является первым из известных нам центров письменности и миниатюры в городе Ани.

A. S. MATHEVOSSIAN

LES RELIQUES DES SCRIPTORIA DE LA VILLE D'ANI

(Résumé)

Le manuscrit no. 6288 du Maténadaran Machtotz, connu sous le nom d'Évangile de Haghpat, a été écrit en 1211 par deux scribes sur la commande du moine Sahak d'Ani.

Le scribe des II^e-X^e cahiers fut probablement Vard, celui du reste, Hacoփ qui a aussi enluminé tout le manuscrit, exécutant les canons de concordance, les vignettes, les ornements marginaux et les majuscules que, cependant, il n'a pas coloriés, sauf les vignettes. Le manuscrit fut ensuite emporté au monastère de Horomos chez le célèbre relieur Abraham, mais avant d'être relié, le manuscrit fut envoyé, pour y être illustré, au monastère Békhentz d'Ani, dont le prieur était Eghbaïrik et où travaillait le célèbre scribe et miniaturiste Margaré. Margaré sépare les canons de concordance du début et les remplace par d'autres qu'il avait exécutés lui-même, dessine sur les pages suivantes "L'Entrée du Christ à Jérusalem", et une miniature représentant le Christ entouré des frères Sahak et Arakel, commanditaires du manuscrit. Il remplace le feuillet initial de l'évangile selon Matthieu par deux nouveaux feuillets, sur l'un desquels il exécute une vignette, sur l'autre il écrit le texte. Il change complètement le X^e cahier, où se trouvait la vignette de l'évangile selon Marc. Cinq des feuillets écrits par Hacoփ ont été utilisés comme feuilles de garde au début du manuscrit. Enfin, Margaré ajoute encore un feuillet où il écrit le fragment oublié par Hacoփ. Il peint également tous les ornements marginaux et les majuscules. Le manuscrit est relié par le relieur Abraham, puis offert en don à la nouvelle église du monastère d'Aroudjarik construite aux frais du père et des parents de Sahak.

A la fin du XII^e et au début du XIII^e siècle, le monastère Békhentz d'Ani, appartenant à Tigrane Honentz et dirigé par le prieur Eghbaïrik, possédait un scriptoria où fut également écrit et enluminé le manuscrit no. 5554 du Maténadaran (scribe et peintre Tiratzou). Selon toute probabilité, c'est ici aussi que fut enluminé le manuscrit no. 7635, offert en don au monastère Horomos en 1249.

Le monastère Békhentz est le premier des scriptoria connus de nous de la ville d'Ani.

ԱՐՅԱՆՈ-ՈՒՏԻՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ ՄԻ ԽՈՒՄԻ
ՉԵՌԱԳՐԵՐ

Դեռևս 60-ական թվականների սկզբներին, Վասպուրականի ձեռագրերի հետ ծանոթանալիս, մեր ուշադրությունը գրավեց միտոճ մանրանկարներ ունեցող երեք ձեռագիր ավեստարան (Մատ. № 316, 6303 և 4820): Դրանցից և ոչ մեկում հիշատակարան չի պահպանվել. ընդօրինակման ժամանակի և վայրի մասին ևս որոշակի տեղեկություններ չկան: Մատենադարանի համապատասխան քարտերում և «Յուցակ ձեռագրաց»-ում ժամանակը նշված է XIII—XIV դդ.: Մնում էր պարզել ընդօրինակման տեղի հարցը: Մանրանկարների ոճական ընդհանուր առանձնահատկություններից (նկարների՝ սկզբի թերթերում հավաքված լինելը, մաքուր խորքի պահպանում, դեկորատիվ գրաֆիկ ձևեր, գծի դերի շեշտում, ոճավորման հակում...) ելնելով, ենթադրեցինք, որ այդ ձեռագրերն ամենայն հավանականությամբ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի արգասիք են: Հետագայում դրանք այդպես էլ մտան դիտական շրջանառության մեջ¹:

Վերջին տարիներին «Վասպուրականի մանրանկարչությունը» ալբոմը կազմելու ժամանակ հարկ զգացվեց ավելի մոտիկից զբաղվել հիշյալ ձեռագրերով: Արդյունքը մեզ համար անսպասելի եղավ. ի հայտ եկան որոշ պարագաներ, որոնք տարակուսելու առիթ տվեցին դրանց Վասպուրականի պատկանելիության վերաբերյալ²:

Ընդհանուր բնութսյան և որոշ ճշգրտումների նպատակով որոշեցինք մեկ անգամ ևս աչքի անցկացնել Մատենադարանում պահպանվող XIII—XIV դդ. նկարադարդ մատյանները: Հայտնաբերվեցին մի քանի ուշադրավ ձեռագրեր, որոնցից հատկապես երկուսը (№ 4023 և 6319) անմիջականորեն ու սերտորեն կապվում են վերոհիշյալ երեք ձեռագրերի հետ: Դրանք, անտարակույս, նույն արհեստանոցի կամ կենտրոնի աշխատանք են: Այսպիսով, մեզ հետաքրքրող

1 Մ. Դ. Захарян, О двух группах рукописей с лицевыми миниатюрами XIII—XIV веков из скрипт. Веспуракана (авт.). М., 1969: նույնի «Датировка и локализация трех неизвестных армянских рукописей («Вестник общест. наук», Ереван, 1969, № 2): Հր. Հակոբյան, Ավեստարանական պատկերադրության առանձնահատկությունները Վասպուրականում, «Էջմիածին» 1971, № 7 էջ 52—58: Հր. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչության դպրոցի մասին «Հայկական արվեստ», հ. 1, Երևան, 1974, էջ 82—86: S. Der-Nersesian, Lart Armenian, Paris, 1977, pe. 188, pl 174: B. Brentjes, Drei Jahrtausende Armenien Leipzig, 1973, № 76 Minatyren aus einem Evandelter van Waspurakan (խոսքը Մատենադարանի № 316 ձեռագրին է վերաբերում): Իսկ 1980-ին հրատարակվեց Կրիթ Զարարյանի «Վասպուրականի մանրանկարչության պատմությունից» գիրքը, որտեղ հիշյալ ձեռագրերը դիտվում են որպես երկուսի շրջանից դուրս եկած (էջ 36—65):

2 Հենց այդ նկատառումով էլ մենք հիշյալ ձեռագրերից և ոչ մի մանրանկար չմուծեցինք «Հայկական Մանրանկարչություն, Վասպուրական» ալբոմ (Երևան, 1978):

ձեռագրերի թիվը հասավ հինգի³: Զարմանալիորեն, սակայն, այդ երկու ձեռագրերում ևս, ինչպես նախորդ երեքում, բացակայում են տեղեկություններ ընդօրինակման ժամանակի ու վայրի մասին: Ուստի հիշյալ հինգ ձեռագրերի տեղի հարցը որոշելու համար մնում էր դիմել միակ հնարավոր միջոցին՝ մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկությունների և հետագա հիշատակագրական փաստերի մանրազննին քննությանը:

Սույն հոգվածը հիմնականում վերաբերում է հետագա հիշատակագրական փաստերին. սակայն հարկ ենք համարում մի քանի խոսքով ներկայացնել մանրանկարների նաև պատկերագրական-ոճական գծերը: Փաստորեն, վերջիններիս առիթով տարակուսանք ծագեց դրանց Վասպուրականի պատկանելության վերաբերյալ:

Ներկայացվող խմբի ձեռագրերում առաջին հերթին ի հայտ է գալիս նկարների թեմատիկ ցանկի յուրակերպ ընտրությունը: Այն չի նմանվում հայկական մանրանկարչության մյուս դպրոցներում ընդունված պատկերային շարքին: Զանազանություններն որոշակի են նաև Վասպուրականի հետ համեմատելիս: Օրինակ, Վասպուրականում գրեթե պարտադիր դարձած «Հիսուսը փառքի աթոռին», հինկտակարանային «Աբրահամի զոհարություն», «Ալլակերպության», հրաշագործությունների ընդարձակ շարք՝ «Հարսանիքը Կանայում», «Հիվանդների բուժումը», «Այրու մահամերձ որդու փրկությունը», «Պետրոսի թերահավատությունը ծովում», ապա՝ «Նկանակի բաշխման», «Պատարագի մատուցման», «Հաղորդության», «Աստվածամոր վերափոխման» ու մի քանի միջանկյալ թեմաներ այստեղ բացակայում են: Բոլորովին շեն հանդիպում Վասպուրականի մանրանկարչության համար այնքան բնութագրական աշխարհիկ-կենցաղային մոտիվները. նաև՝ գրիչների, ծաղկողների ու պատվիրատուների խիստ հետաքրքրական դիմանկարները:

Մինչդեռ այդ հինգ ձեռագրերում տեսնում ենք Վասպուրականի XIV—XV դդ. արվեստին ոչ հատկանշական Հիսուսի մանկության, առակների ու մեղսագործության ցիկլը⁴: Պատկերվում են «Փախուստը դեպի Եգիպտոս», «Մանուկ Հիսուսի քարոզը տաճարում», «Իմաստուն և հիմար կույսերը», «Մեղսագործությունը» (Ադամն ու Եվան իմաստության ծառի տակ), «Խորհրդավոր ընթրիքը» և այլն⁵ (ստորև համեմատական ցանկը տե՛ս էջ 137):

Նույնիսկ պարտադիր համարվող կանոնական թեմաներում, ինչպիսին «Ավետումն» է, «Ծնունդը», «Տյառնընդառաջը», «Ղազարոսի հարությունը», «Ոտնալվան» այդ ձեռագրերում չկան Վասպուրականին բնորոշ պատկերագրական ձևեր: Հիշյալ ձեռագրերի և Վասպուրականի մանրանկարներում դրսևորվող արվեստարանական պատկերաշարի հիմնական-ծրագրային այդպիսի զանազանությունները, կարծում ենք, տարբեր միջավայրերի, ծիսադադափարական տարբեր նախասիրությունների ու սովորույթների հետևանք են: Մեզ շեն համո-

³ Լ. Զարբյանի գրքում հիշյալ խումբը («Лицевые рукописи из района Хизана») ներկայացված է վերը նշված երեք ձեռագրով:

⁴ Վասպուրականում շեշտվում են «Ծնունդ-Հայտնություն-հրաշագործություններ» և գրանց հետ անընթաց Փրկության գաղափարները:

⁵ «Մանուկ Հիսուսի քարոզը տաճարում» թեման այստեղ միավորված է Զերեզեայի որդիների մոր պատմության հետ: «Խորհրդավոր ընթրիք» թեման Վասպուրականի XIII—XVI դդ. արվեստում հանդիպում է միայն Հովսեփան Բերկրեցու մոտ (ձեռ. Մատ. № 4806, 4818): Ընդ որում, այդտեղ օգտագործված սխեման ոչ մի կապ չունի № 316 ձեռագրի պատկերի հետ:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Վասպուրականի և առանձին խումբ կազմող հինգ ձեռագրերի բեմատիկ պատկերների (XIV—XV դդ.)

Ընդգծումները ցույց են տալիս պատկերագրական սկզբունքային տարբերությունները

№	Տերունական թեմաներ	Վասպուրական	Հինգ ձեռագրեր	Մանրագրություններ
1	Հիսուսը փառքի աթոռին	կա	չիք	
2	Աբրահամի զոհաբերությունը	կա	չիք	
3	Ավետում	կա	կա	
4	Մուննդ	կա	կա	
5	Մոգերի երկրպագումը	կա	չիք	
6	Տյառնընդառաջ	կա	կա	
7	Կոտորումն մանկանց	կա	կա	
8	Փախուստ դեպի Եգիպտոս	չիք	կա	
9	Մանուկ հիսուսի քարոզը տաճարում	չիք	կա	
10	Մկրտություն	կա	կա	
11	Մուսք Երուսաղեմ	կա	կա	
12	Այլակերպություն	կա	չիք	
13	Ղազարոսի հարությունը	կա	կա	
14	Հարսանիքը Կանայում	կա	չիք	
15	Նկանակի բաշխումը	կա	չիք	
16	Պետրոսի թերահավատությունը	կա	չիք	
17	Հիվանդների և կույրի բուժումը	կա	չիք	
18	Իմաստուն և հիմար կույսեր	չիք	կա	
19	Մեղսագործություն	չիք	կա	
20	Պատարագի մատուցումը	կա	չիք	
21	Հաղորդություն	կա	չիք	
22	Ոտնլվա	կա	կա	
23	Խորհրդավոր ընթրիք	չիք	կա	բացառությամբ Հովսիան Բերկրացու երկու աշխատանքի
24	Մատնություն	կա	կա	
25	Պիղատոսի դատաստանը	կա	կա	
26	Խաչելություն	կա	կա	
27	Դժոզքի ավերումը	կա	կա	
28	Թաղումն Հիսուսի	կա	կա	
29	Հարություն	կա	կա	
30	Համբարձում	կա	կա	
31	Հոգեգալուստ	կա	կա	
32	Վերափոխումն Աստվածամոր	կա	չիք	
33	Ավետարանիչներ	կա	կա	
34	Ասվանաթերթեր	կա	կա	
35	Մտացողների, գրիչների և նկարիչների պատկերներ ⁶	կա	չիք	

զում այդ ձեռագրերը Վասպուրականին վերագրելու և Չաքարյանի բերած պատկերագրական բնույթի փաստարկները: Այսպես, Ադամի ու Եվայի մեղսագործության հինկտակարանային թեման, որը տեղ է գտել հիշյալ ձեռագրերում, նա ընդհանրապես բնորոշ է համարում Վասպուրականին⁷: Սակայն պետք

⁶ Համադրված 35 թեմաներից միայն վեցում կան ընդհանրություններ:

⁷ Ի միջիայլոց, և Չաքարյանի գրքի 44—52 էջերում կատարված մանրանկարների պատկերագրության բնույթունը շահեկանորեն տարբերվում է 37—39 էջերում բերված օրինակներից ու երակացությունից: Այդտեղ ձեռագրերը Վասպուրականին վերագրելու տրամադրվածությունը կարծես խանգարել է հեղինակին անկողմնակալ մնալու որոշ փաստերի նկատմամբ:

է ասել, որ Վասպուրականի XIII—XV դդ. մանրանկարներում մեղսագործության թեման գրեթե բացակայում է: Գա պատկերվում է XVI և XVII դարերում: Մինչդեռ նույն ժամանակամիջոցին «մեղսագործությունը» շատ կանոնավոր կերպով իր գոյությունը պահպանում է Սյունիքի և Կիլիկյան մանրանկարիչների մոտ⁸: Ավելին, հինկտակարանային այդ թեման փորագրված է պատմական Արցախ նահանգի Գանձասարի եկեղեցու (1216—1238 թթ.) արևմտյան ճակատի կենտրոնական մասում:

Լ. Զաքարյանը վասպուրականամետ եզրակացություն է հանգել նաև «Մենդում» մոզաց թագավորների ծնկաշոր դիրքի կապակցությամբ. «... ևս մեկ, Վասպուրականի համար բնորոշ պատկերազրական մանրամասն, — գրում է նա, — № 4820 ձեռագրի «Մենդում» նվերները ձեռքներին ծնկաշոր մոզերի դուզորգությունը գտնում ենք միայն Մոկսում XV դ. բնորոշնակված Մատ. № 4922 ձեռագրում»⁹: Պե՞տք է արդյոք նման դուզորգության համար շուրջ երկու դարի տարածություն կտրել, երբ հեղինակը կարող էր ավելի հարմար օրինակներ բերել, այն էլ մոտ ժամանակամիջոցում՝ առաջին հերթին Կիլիկիայում¹⁰, ապա Սյունիքում¹¹ և նոր միայն Վասպուրականում¹²: Ի դեպ, քրիստոնեական պատկերազրության խոշորագույն գիտակ Գ. Շիլլերը ծնկաշոր մոզերի տարբերակը համարում է արևմտյան երևույթը, որը մուտք է գործել պատկերազրության մեջ IX դ.: նա նշում է, որ արևելքում մեծությունների կամ սրբությունների առջև խոնարհվել են, իսկ արևմտյան սովորույթը ծնկի գալն էր պաշտոններում¹³: Այն էլ ասենք (և դա կարևոր է), որ № 316 ձեռագրում մոզաց թագավորներն ընդհանրապես բացակայում են, իսկ № 6303 ձեռագրում՝ կանգնած են: Ուրեմն, մոզերի ծնկաշոր դիրքը ձեռագրերի այս խմբում պատկերազրական մեկ ամբողջական սկզբունք չի ներկայացնում (երեք ձեռագիր, երեք տարբերակ):

Հակառակը կարող ենք պնդել մեկ այլ «վասպուրականամետ» թեմայի՝ «Խորհրդավոր ընթրիքի» կապակցությամբ ևս: Այդ թեման, ինչպես քիչ առաջ նշեցինք, բացառությամբ Հովսիան Բերկրեցու ձեռագրերի, տեղ չի գտել Վասպուրականի XIII—XV դդ. վարպետների աշխատանքներում: Վասպուրականում սովորաբար «Խորհրդավոր ընթրիքին» փոխարինում է «Ոսնալվան»¹⁴: Ինչ վե-

⁸ Տե՛ս Թ. Տարոնացու նկարազարդած 1318 թ. Աստվածաշունչը (Մատ. № 206), այնուհետև՝ Սարգիս Պիժակի 1338 թ. նկարազարդած Աստվածաշունչը (Մատ. № 2627) և այլն:

⁹ Լ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 38:

¹⁰ Տե՛ս Երուսաղեմի № 2563 (1262 թ.), 2568 (1266 թ.) և, ի՞նչպե՛ս, Սարգիս Պիժակի պատկերազարդած ձեռագրերը՝ Մատ. № 5786, Բ. 17ա, Երուսաղեմի № 1972 և այլն:

¹¹ Անգամ եսայի նշեցու Աստվածաշնչում «Մենդյան» ժամանակ մոզերից ավագը ծնկաշոր է:

¹² Օրինակները շատ են նաև այստեղ. առաջիններից մեկը Զաքարիա Աղթամարցու 1357 թ. ձեռագրում է (Մատ. № 5332), որն, ի դեպ, Սարգիս Պիժակի Մատ. № 5786 ձեռագրից կատարված բնորոշնակություն է:

¹³ Gertrud Schiller, Iconography of Christian Art, v. 1, London p. 111 (որպես բացառություն միայն Մոնցի յուզաշչերն են): Հանուն հշմարտության պետք է ասել, որ Գ. Միլլեն միանգամայն այլ կարծիք է հայտնում այս առթիվ (Recherchissur L'Iconographie de evangile aux XIV-e, XV-e et XVI-e siecles, Paris, 1916, p. 150), որը և մեջբերված է Լ. Զաքարյանի դրքում:

¹⁴ Տե՛ս Լ. Զաքարյան, Ավետարանական պատկերազրության առանձնահատկությունները Վասպուրականում, «էջմիածին», 1971, Գ, էջ 54—55: Նույնիսկ Աղթամարի եկեղեցու որմնանկարներում տեղական կրոնածիսական սովորույթներից էլնելով «Խորհրդավոր ընթրիքը» փո-



Նկ. 1

բարերում է N 316 և N 6319 ձեռագրերի ինքնատիպ պատկերներին, ապա դրանց մոտավոր աղբյուր ճիշտ կլինեն փնտրել Սյունիքում, մասնավորապես Բորոս Տարոնացու վրձնած «Եսայի նշեցու Աստվածաշնչում» (Մատ. N 206, 1318 թ.)¹⁵։

Խարինձի է Բեթանիայում «Հիսուսի օժման» տեսարանով. իսկ վերջինս իր հերթին ներառել է առարյալների ոտքերի լվացման պահը (տե՛ս S. Der-Nersessian, Aghtamar Church of the Holy cross, Cambridge, 1965, p. 108)։

¹⁵ Տե՛ս նաև Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլավորի դպրոցը, Երևան, 1971, էջ 114—115։

Հիշյալ հինգ ձեռագրերում Վասպուրականի XIII—XV դդ. մանրանկարչության համեմատությամբ օգտագործված են պատկերագրական ուրույն սխեմաներ. նկ. 1՝ «Ավետում» (ձեռ. № 316), 2. «Ծնունդ» (ձեռ. № 316), 3. «Տյառնընդառաջ» (ձեռ. № 4820), 4. «Մանուկ Հիսուսի քարոզը տաճարում» (ձեռ. № 6319), 5. «Փախուստ դեպի Եգիպտոս» (ձեռ. № 6319) և այլն:

Դժվար է գտնել XIII—XV դդ. հայկական ձեռագրերի մի այլ խումբ, որի մանրանկարներն այդքան ինքնատիպ լինեն և՛ իրենց թեմատիկ շարով, և թե՛ պատկերագրությամբ: Ծիշտ է, Վասպուրականի XIII—XVI դդ. մանրանկարչությունը, ընդհանրությամբ հանդերձ, իր ներսում տրոհվել է առանձին կենտրոնների ու ճյուղավորումների, սակայն դրանցում դանազանությունները չեն հասել սկզբունքային աստիճանի¹⁶:

Բավական ինքնատիպ են այդ մանրանկարների ոճական առանձնահատկությունները: Դրանք մասամբ հիշեցնում են Վասպուրականի մանրանկարների տիպապատկերային ձևերը, բայց մանրաքնին մոտեցման դեպքում դրսևվորում են որոշակի դանազանություններ: Վասպուրականի ձեռագրերում թեթև ուրվագծված կամ առանց շրջանակների մանրանկարները ֆրիզային եղանակով ծավալվում են սկզբի թերթերի վրա՝ մի ամբողջություն կազմելով իրենց բաց, հաջորդական-շարունակական բնույթով: Ամեն մի առանձին պատկեր ընդհանուր թեմայի անքակտելի մի դրվագն է, որտեղ մեկը բացահայտվում և պայմանավորվում է մյուսով: Այդ նպատակամիտումից ելնելով Վասպուրականի ծաղկողները ստեղծում են հորինվածքների իրենց հատուկ ձևերը՝ կերպարների արտակարգ աշխույժ արտահայտություններով ու շարժումներով¹⁷:

Այլ է պատկերը հիշյալ հինգ ձեռագրերում: Այդտեղ ամեն մի մանրանկար կարծես ունի հորինվածքային ինքնակա բնույթ, դրանք մի տեսակ իրենց մեջ փակված են թվում (նկ. 6): Ֆիգուրների և զարդերի հարուստ համակարգը ամփոփված է լայն, հյուսադարձ շրջանակների մեջ, որոնք կերպարների հետ միավորվում են ֆունկցիոնալ ամբողջականությամբ: «Փակ բնույթ» են կրում նաև ֆիգուրների շարժումները: Դրանք ասես կաշկանդված լինեն, դարձումները դանդաղ են ու ծանր: Անշտապ և ոչ միշտ սահուն գծանկարում բացակայում են Վասպուրականի մանրանկարչության համար այնքան բնութագրական դինամիկան ու ռիթմը¹⁸: Միատիպ են պատկերվում դեմքերն ու առաջ պարզած

16 Մեզանում այն թյուր տպավորությունը կա, ըստ որի, փոքր-ինչ պարզունակ, հարթապատկերային-գրաֆիկ ձևերով կատարված մանրանկարները (հիշատակարանի բացակայության պայմաններում) մեծ մասամբ վերագրում են Վասպուրականի դպրոցին: Նման մոտեցումը արհեստականորեն նեղացնում է հայկական մանրանկարչության բազմաճյուղ և բազմաբնույթ երկվայթի շրջանակները: Պետք է ասել, որ այդ ոճի աշխատանքներ (և պարզունակ բացատրություններով) հանդիպում են մանրանկարչության նաև մյուս կենտրոններում ու դպրոցներում. օրինակ, Սյունիքում (Մատ., ձեռ. № 6292, 1293 ք., 2930, 1315 ք. և այլն), Նախիչև՝ զանում (Մատ., ձեռ. № 3722, 1304 ք.), Բարձր Հայքում (Մատ., ձեռ. № 1379, 1334 ք.), Արցախում, Գեղարքունիքում և այլուր:

17 Մանրամասն տե՛ս «Վասպուրականի մանրանկարչությունը», Ա, Երևան, 1976, Բ, 1982. «Վասպուրական» այբում, Երևան, 1978:

18 Վասպուրականում շատ հաճախ գիծը նպատակամիտված է լինում շարժման, երբեմն նույնիսկ ձևի արտահայտմանը:

ձեռքերը, որոնք ասես քարացած լինեն: Ամբողջության մեջ այդ ֆիգուրները շրջանակազարդերի հետ դեկորատիվ մանրատված հարթություններ են հիշեցնում (գորգի նմանվող), ինչպես ձևափոխումների (դեֆորմացիա) ու ոճավորումների, այնպես էլ դրանց հետ ներհյուսված զարդամոտիվների դաշն համաչափությամբ¹⁹:



Նկ. 2

Առավել ինքնատիպ է ու գրավիչ գունաշարը՝ այդ մանրանկարների ոճական համակարգի հիմքերից մեկը: Վասպուրականի մանրանկարների հավասարապես մաքուր և ուժեղ, երբեմն էլ շրաներկային թափանցիկության շափ

¹⁹ Դրանք թերևս այնքան ոճավորումներ չեն այդ հասկացության ընդհանուր իմաստով, որքան ժողովրդական արվեստի, նրա ֆուլչորային, զարդադեկորատիվ յուրահատկություններն ջմրոնելու և վերարտադրելու յուրօրինակ ձգտում, դա գուցե և ներհայեցողաբար:

Թեթև դրված գույների փոխարեն, այստեղ հիմնականում հագեցված, նույնիսկ փոքր-ինչ խուլ տոներ են: Դրանք չունեն սիմվոլի հասնող նյարդային հակադրությունների լարում կամ աշխույժ անցումների ու պայծառ երանգների շահեկանությունը, որը կրկին Վասպուրականին է հատուկ: Այդ հինգ ձեռագրում կան նրբերանգ մի տոն, որն ասես մարրում, լուսավորում է մարդու հոգին: Սպիտակի առատությունը խառնուրդներում և դրա նուրբ սահուն ընթացքը եզրագծերին կից որոշիչ դեր են կատարում: Այն թուլացնում է առանձին վերցրած գույների սրությունը և այդ նրբհնչեղության մեջ մեղմում ընդհանուր լարվածությունը: Նույնիսկ խիստ արտահայտված դրամատիկ պահերը (օրինակ «Խորհրդավոր ընթրիք», «Մատնություն») ձեռք են բերում մտերմիկ շեշտա-



գրումներ: Այդ մանրանկարները ասես պարուրված լինեն արծաթյա-վարդագույն երանգի թափանցիկ քողով, որի տակից վայելչորեն շողում են զմրուխտյա թավ կանաչը, երկնագույնն ու նարնջամանիշակագույնը: Ամբողջությամբ վերցրած այդտեղ գունաշարն ունի ազնիվ մի փայլ, ուր ամեն ինչ թվում է հանգիստ ու բանաստեղծական:

Հիշյալ մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկությունների քննությունն առանձին նյութ է լինելու մեզ համար²⁰: Սակայն դրանց ընդօրինակման վայրի թեկուզ և մոտավոր կողմնորոշման համար, շահեկան է լինելու մի քանի խոսք ասել հայկական մանրանկարչության մեջ այդ ձեռագրերի հետ կապը առավել սերտ զուգորդությունների մասին: Այդտեղ արդեն, առաջին հերթին ուշադրություն է գրավում Արցախ նահանգի Խորանաշատ վանքում 1224 թ. ընդօրինակված Ավետարանը (Մատ. № 4823, նկ. 7)²¹. XIII դ. վերագրվող Վախտանգ իշխանի նոր կտակարանի մասունքը (Մատ. ձեռ. № 155), Վախտանգ Տանգիկի և նրա կնոջ՝ Խորիշահի պատվերով ընդօրինակված Ավետարանը (Մատ. ձեռ. № 378, նկ. 8)²²: Կարևորություն ենք տալիս Մատ. № 5569 ձեռագիր-Ավետարանին (XIII—XIV դդ.): Այդտեղ նվաճելիս ողջունի բնագրի, համարաբառների աղյուսակների (նկ. 9) և անվանաթերթերի պատկերման ինքնատիպ ձևերը՝ զարդարուն լայն շրջանակների մեջ, ու գունային բնորոշ շարք՝ սպիտակի խառնուրդով ստեղծված բաց կանաչը, կապույտն ու վարդագույնը, ցույց են տալիս վերը նշված հինգ ձեռագրերի հետ ունեցած ոճաձևարանական սերտ կապը (համեմատել նկ. 10): Խորանների հարդարանքի նման կերպ Վասպուրականում բոլորովին չի հանդիպում:

Մասնակի վերապահություններով այստեղ կարելի է հիշատակել Մատ. № 4185 Ավետարանը (XIII դ.), Խաչնոս երկրում 1326 թ. ընդօրինակված (Երուսաղ. № 1794) Ավետարանը²³, Հալլեյում (ԳԴՀ) գտնվող 1224 թ. Ավետարանը²⁴ և այլն:

²⁰ Մասնավորապես տեղին չի թվում, երբ է. Զաքարյանը (նշվ. աշխ.) հիշյալ ձեռագրերի դիմապատկերները համեմատելով Աղթամարի եկեղեցու արևելյան որթագալարակի XIII—XVI դդ. լրացում հանդիսացող հեծյալի պատկերի հետ, գրում է. «Երկու դեպքերում էլ շեղված այտուսկներով լայն գեմքերն ու երկարավուն աչքերը կատարված են մոնղոլական էթնիկական տիպի բաշ գիտությունը ու ազդեցությունը» (էջ 41): Գուցե այդ խոսքերը համապատասխանում են նշված քանդակին (և դա նկատել են ուսումնասիրողները), բայց ոչ բոլորովին հիշյալ ձեռագրերի կերպարներին, որտեղ դյուրին չէ նման ազդեցության գտնելը: Ասենք, որ մոնղոլական կամ արարական էթնիկական գծերը միայն Վասպուրականի արվեստում չեն դրսևորվում: Դա կարելի է տեսնել Հայաստանի մի շարք այլ վայրերում ևս. օրինակ, Երզնկայում ընդօրինակված 1449 թ. Ավետարանի նկարները (Հ. Քյուրտչյան, Փրիստոնի համալսարանի թիվ 18 հայ. ավետարանը, «Բազմավեպ», 1974, էջ 169—174): Թալինի շրջանի Արեգ գյուղում Ա. Մանուկյանի սևիականությունը հանդիսացող XIV—XV դ. Ավետարանը: Նույնիսկ Ավագի աշխատանքներից մի քանիստ կերպարները կրում են արևելյան էթնիկական գծի կներք:

²¹ Տվյալ դեպքում նկատի ունենք ֆիգուրների ոճական նույնաձև մեկնարանությունը (համեմատել № 316 ձեռագրի հետ). գունային նման շարք՝ սպիտակի խառնուրդով ստացված մանիշակագույնը, արծաթակապույտը, բաց, տաք կանաչը. նկարների լայն երիզաշրջանակները՝ ներսի զարդամոտիվներով:

²² Այդ ձեռագրի ժամանակը սովորաբար նշվում է 1269 թ. առաջ: Բ. Ուլուքարյանը հիմնավոր կերպով գտնում է, որ այն ընդօրինակվել է 1212 թվականին («Խաչենի իշխանությունը I—XVI դարերում», Երևան, 1975, էջ 143—144):

²³ Ն. Պ. Պաղաբյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, 2, Երուսաղեմ, 1972, էջ 140—144:

²⁴ B. Brentjes, Das Armenische manuskript w 1, in Halle. "Armenische Handsch-



Նկ. 4

Ոճական աղերսների առիթ էն տալիս Սյունիքում բնօրինակված ձեռագրերը²⁵: Այսպես, քննարկվող հինգ ավետարաններում հանդիպող տղամարդ-

rifen in der DDR, II. Berlin, 1973.

²⁵ Նկատի ունենք նաև Քորոս Տարոնացու մանրանկարների տիպապատկերագրական մի քանի գծերը, մանավանդ ավետարանիչների դիմապատկերներն ու անվանաթերթերը, Աստվածամոր մանկան հետ պատկերը՝ Ղուկասի անվանաթերթում, մեղսագործության թեման, խորհրդավոր ընթերցում բարձրակ սեղանի ձևը և այլն (տե՛ս Եսայի նշեցու 1318 թ. աստվածաշունչը, Մատ.

կանց տիպերը՝ ետ գնացող գանգամասերի ընդգծմամբ ու աչքերի սովորական բացվածքով (նկ. 11) հիշեցնում են Գլաձուրցի ծաղկող Մատթևոսի (Մատ., ձեռ. № 6292), Մոմիկ նկարչի (Մատ., ձեռ. № 6792 նկ. 12) և նույնիսկ Քորոս Տարոնացու պատկերած կերպարները: Երբեմն, այդ ձեռագրերում լինում են պատկերազրական այնպիսի ինքնատիպ մանրամասներ, որոնց միակ դուզորդությունը կրկին Սյունիք-Արցախի շրջանում է հանդիպում: Նկատի ունենանք թեկուզ հանդիսավոր լուր ազդարարելու ծամանակ փող հնչեցնելու հետաքրքրական մոտիվը՝ «Ավետում», «Հարություն» (ձեռ. № 316, 6319, 6303): Այդ ձեռագրերից բացի, դա հանդիպում է նաև Խաչենում ընդօրինակված 1237 թ. (Զիկագոյի համալսարան²⁶), Սյունիքում ընդօրինակված 1315 թ. (Մատ., ձեռ. № 2930) և Տաթևում ընդօրինակված XIII դ. վերջ և 1378 թ. (Մատ. ձեռ. № 7482) Ավետարաններում:

Առանձին նշանակութուն են ստանում հիշյալ ձեռագրերի և նույն միջավայրում գտնվող նյութական մշակույթի հուշարձանների (որմնանկարչություն, քանդակագործություն և ճարտարապետական զարդադեկորատիվ տարրեր) միջև ի հայտ եկող ընդհանրությունները: Այսպես, Դադի կամ Խութա վանքից փրկված մեկ-երկու որմնանկարներում կրկին տեսնում ենք տղամարդու (Հիսուսի պատկերը) գլխի փոքր-ինչ ետ ձգված գանգամասն ու սուրուլիկ զեմքը, որը հիշեցնում է նշված ձեռագրերի մեզ արդեն ծանոթ տիպերը:

Զափազանց հետաքրքրական են Այրիվանքի ս. Աստվածածնի մատուռաբայրի որմնանկարները (1257 թ.): Բացարձակ անուշադրության հետևանքով այդ հուշարձանը այսօր գրեթե լրիվ ավերված վիճակում է: Շնորհիվ Գարեգին Հովսեփյանի մոտ պահպանված մեկ հատիկ լուսանկարի²⁷ և քարայրի դունագրունտի որոշ բեկորների, հնարավոր է դառնում գաղափար կազմել այդ որմնանկարի գունաոճային առանձնահատկությունների մասին. ավելին, այդտեղ նկատելի է հատկապես Մատենադարանի № 378 ձեռագրի մանրանկարների հետ ունեցած ընդհանրությունը:

Վերևում, «Մեղսագործության» առիթով խոսք եղավ Գանձասարի վանքի Աղամի ու Եվայի պատկերի մասին: Նույն եկեղեցուց կարող ենք հիշատակել նաև «Աստվածամայրը մանկան հետ» և «Խաչելության» որմնաքանդակները: Ուշագրավ է նաև Նոր Վարազա ս. Նշան եկեղեցու (Կառուցված 1231 թ., Շամշադինի շրջան) կենտրոնական մուտքի քարավորի «Խաչելությունը», որն իր այսպես ասած «կամերային» մեկնաբանությամբ մոտենում է մեր ձեռագրերի (№ 316 և 4820), պատկերներին:

Ի տարբերություն հայկական մանրանկարչության մյուս կենտրոնների²⁸, հիշյալ խմբի ձեռագրերում ամուր կապ է նկատվում նույն միջավայրի ճարտարապետական կառույցների զարդադեկորատիվ հարդարանքի հետ: Դրա լավագույն վկայությունը Վարազա ս. Նշան եկեղեցու զարդային մեկ-երկու դե-

Ձ 206), ԱՄՆ-ում գտնվող XIV դ. սկզբի ավետարանը (S. Der-Nersessian, Etudes Byzantines et arméniennes, Louvain, 1973, I, p. 631—632 t. II, pl. 1390).

26 Տե՛ս Գ. Հովսեփյան, Մի ձեռագիր Ավետարան, «Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակույթի պատմութեան», Բ, Նիւ-Եորք, 1943, էջ 47—48:

27 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խազրակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մեջ, Ա, Վաղ-պատ, 1928, էջ 99—100, նկ. 31:

28 Կարելի է նույնիսկ վկայակոչել ամբողջական դպրոցներ՝ Կիլիկիա, Բարձր Հայք, Վաս-պուրական...

կորների համեմատությունն է Մատ. N 4820 (ի դեպ, նույն եկեղեցուց բերված) ձեռագրի հետ: Այսպես, եկեղեցու հարավային պատուհանի ուղղահայաց շրջանակների երկհյուս ոճավորված տեղադարձերը, որոնց ներսում լատոսի ծաղիկը հիշեցնող փոքրիկ մոտիվներն են տեղադրված, գրեթե կրկնվում են նշված ձեռագրի «Իմաստուն և հիմար կույսեր» և մի քանի այլ պատկերների շրջանակներում: «Մկրտություն» շրջանակի կիսատերևների հյուսվածքամու-



նկ. 5

տիվները նույնությամբ հանդիպում են եկեղեցու արտաքին խորաններից մեկի եզրային քանդակազարդերում: Լատոսի ծաղիկը հիշեցնող զարդամոտիվները հանդիպում են ինչպես եկեղեցու պատուհանի հորիզոնական շրջանակներում,

աչնպես էլ ձեռագրերի «Կոտորումն մանկանց» ու «Տյառնընդառաջ» նկարներում:

Լաչն, զարդարուն շրջանակների պատկերման սովորվածը և ընդհանրապես զարդաչին հակումը ավելի հատկանշական է Սյունիքի և Արցախի նկարազարդ ձեռագրերին ու ճարտարապետական հուշարձաններին: Այդ վայրերից մեզ հասած մի քանի ձեռագրեր ուղղակի զարդերի հավաքածու են ներկայացնում: Ահա Մատ. N° 7482 Ավետարանը (Տաթև): Այդտեղ նույնիսկ նկարների խորքը ծածկված է տարբեր ձևերի զարդամոտիվներով: Եվ ինչն է հետաքրքրականը. այս դեպքում էլ Մատ. N° 6303, 4820 և 316 ձեռագրերում հանդիպող քառանկյան շրջանակների մեջ խաչաձևվող հյուսվածքները, ոտմբաձև եռանկյունազարդերը և ոճավորված լաչն տերևամոտիվները մասնակի ձևափոխումներով կամ նույնությամբ տեղ են գտնում Տաթևի վերոհիշյալ ձեռագրում:



Նման օրինակներ կարելի է բերել Գաղի վանքի, Խորանաշատի, Գանձասարի և Գոշավանքի թմբուկների կամարածև դարդահայտավածքներից, ճակատամասերից, բարավորների, պատուհանների կամարների ու խոյակների «ասեղնագործ» քանդակազարդերից, որոնց անմիջական զուգորդությունները (հայկական խաչքարերի հետ մեկտեղ) գտնում ենք հիշյալ վայրերում բնագործական ված ձևագրերի մեջ²⁹: Ի դեպ, նկատենք, որ Վասպուրականի ճարտարապետական հուշարձանները, և առաջին հերթին Աղթամարի հուշակալոր տաճարը, իրենց դարդադեկորատիվ հարգարանքով սկզբունքորեն տարբերվում են Սյունիք-Արցախի շրջաններում բնգունված ձևերից: Վասպուրականում տիրապետող կերպարային ու իմաստասիմվոլիկ տարրերն են, Սյունիք-Արցախում՝ հարուստ ու նուրբ դարդահայտավածքները:

Հիշատակության արժանի են այդ վայրերում կանգնեցված փոքր ծավալի կոթողները ևս, օրինակ, Գյումյուրում Մխիթարի և Արևիկի կողմից 1263 թ. կառուցված եռանկյունաձավ քանդակազարդ մատուռը բնահանուր տեսքով³⁰: հիշեցնում է № 316, 4820 և 6303 ձևագրերի «Տյանընդառաջի» տաճարներն:

Համեմատությունների հարուստ նյութ են տալիս Խաչենի XII—XIII դդ. գերեզմանաքարերի պատկերները³¹, Արցախի և Սյունիքի շրջանների խաչքարերը, ինչպես նաև դեկորատիվ-կիրառական արվեստի պահպանված զանազան այլ նմուշները³²:

Այսպիսով, Մասենադարանի վերահիշյալ ձևագրերի մանրանկարչության ոճապատկերազարդական սույն համառոտ քննությունն ու կատարված համեմատությունները մեզ նախապես կողմնորոշում են Հայաստանի հյուսիսային շրջանները՝ պատմական Արցախ, Ուտիք, Սյունիք, Գեղարձունիք:

Այժմ հետևենք, թե ինչ են հազորդում այդ ձևագրերում պահպանված հետագա հիշատակագրությունները, որքանով են դրանք հավաստում ու վավերացնում մեր ենթադրությունը:

Նշված հինգ ձևագրերից հիշատակագրական փաստերով ամենից ազդատիկը № 316 Ավետարանն է³³: Նրա 128 բերթում կա զրչի կցկաուր երկտողը. «Եւ զիս զտառապեալ ոգի զծողս և զծնողսն իմ յիշեցէք առ Քրիստոս, և յիշողդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ ամէն»:

Որոշակի բան չի ասում նաև հազորդ հիշատակագրությունը, որը XVI դարից է. «Յիշեցէք տէր Թումէն, որ ետ իւր հալալ բնչիցն և արդար վաստակոցն,

29 Այդ տեսակներից շափազանց ուշադրով է 1315 թ. եղեգիսում նկարազարդված Ավետարանը (Մատ. № 9721, նկարիչ Բարդուղ): Դա ուղղակի զարգամտիվներ պարունակող հարուստ մի շանձարան է, որը գալիս է խաչքարերի արվեստի ու ճարտարապետական դեկորների ձևերից:

30 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաչքարային և Պոռչյանք... Ա, էջ 45: Ի դեպ, միջնադարյան եվրոպայում ճարտարապետական նման քանդակազարդ կամար-շրջանակների ներսում տեղադրվել են պատկերներ (Andre Grabar, Sculptures Byzantines du Moyen Age, XIe -XIVe siècle, Paris 1976), ինչպես մեր ձևագրերում է:

31 Տե՛ս Ն. Ա. Օրբելի, Бытовые рельефы на Хаценских крестных камнях XII—XIII вв., «Избранные Труды», Ереван, 1963, стр. 196—204.

32 Այդ տարածքի հուշարձաններին բնորոշ են հատկապես նուրբ հյուսվածքազարդերի օգտագործումը, քանդակազարդ կամար շրջանակների ձևը, բնահանրապես զարդը, օրնամենար, մի բան, որ դժվար է ասել նույնիսկ Աղթամարի համար:

33 Մեջ շեն բերվի այն հիշատակագրությունները, որ բացակայում է սրևէ տեղեկություն վայրի, ժամանակի կամ անձնավորությունների մասին:

և ետ նորոգել և կազմել անշինջ չիշատակ իւր հոգւոյն, և իւր ծնաւդաց հոգւոյն՝ հարն խուտապաշխին, մարն Շահրիստանին...» (261ա): Այնուհետև «Զեաշատուր կազմողս չիշեցէք և դիմ ծնաւդս ամեն...» (261բ):

Խաշատուր անունով մի կազմող մեկ հայտնի է Գողթան գավառի Բուտի անապատից: 1489 թ. կատարած նրա մեկ աշխատանքը գտնվում է Մատենադարանում (ձեռ. № 6531): Այդ կազմերի համեմատությունները սակայն քիչ քան են ատում, մանավանդ որ դրանք հետագայում կրկին վերանորոգվել են:



№ 316 ձեռագիրը վաղուց ի վեր գտնվել է էջմիածնի մատենադարանում և կրել Կարինյան ցուցակի 300 համարը:

Երկրորդը՝ Մատենադարանի № 6303 Ավետարանն է: Գրիչը միայն մեկ տող է թողել. «Քրիստոս Աստուած ազն հասանի Գրիգորիսի, որ կոկեաց զբարտեղս» (թ. 268բ): Սույն ձեռագրում, սակայն, պահպանված են որոշ ենթադրությունների առիթ տվող հետազա մի քանի հիշատակագրություններ: Գրանցից ամենավաղը 1356 թվականից է և, ամենայն հավանականությամբ, պատկանում է ձեռագրի առաջին տնօրենին (պատվիրատու) կամ նրա մերձավոր հարազատներին. «Յանուն Աստուծոյ էս (sic!) Յովաննես կրէց Պետանց արեղայս ու Բրտանց Սարգիս մեր սրտի աւծարութեամբ սուրբ ավետարանս ծախե-



ցաք վարդանայ ու առաք ի նրանէ. Ա. կով. Բ կապիճ հաց ... վկայութեամբ ի մարդկան Բուդին, վկայութեամբ ծարեցի Չարմանին որդին Խատապատայ, վկայութեամբ Նաճպատին որդին վահրամայ, վկայութեամբ իմ Տույսիկ իրիցոյ վկայութեամբ, որ զգիրս գրեցի: Թվ. Պե քաղոց Գ գրեցաւ» (թ. 107բ):

Այնուհետև նույն ձեռագրով ավելացված է. «գաւետարանս թագվորայրեր (իմա երեք-Չ.Չ.), ու զգինն առ ու տարաւ»:

Այդ գործարքը փաստորեն կատարվել է ձեռագրի ընդօրինակությունից շուրջ 30—40 տարի անց Հայաստանի հյուսիսային շրջաններում: Ուշագրավ է Արցախի Մար գավառի (ծարեցի Չարման) և Գեղարքունիքի Բրտենիք գյուղի հոլովումը:

Այդ դեպքերից տասնութ տարի անց (1372 թ.) ձեռագիրը հանձնվում է կաղմելու. «...Ես Կարապետ արեղա առաջնորդ եղի սուրբ և կենսաբեր աւետարանիս կաղմելո, հրամանաւ տէր Գրիգորո և իշխանութեամբ... վասն յիշատակի Ղազար քահանայ և Շահրիալամ արքին...»

...Ես զաւսացե[ա]լ և ի պտղո հատե[ա]լ Մելքիսե[ղե]կ սուտանուն քահանա կաղմեցի սոցա հրամանաւ զեաին կաղմա...»

...զկաղմող Մելքիսեղեկ և զվարդապետն իմ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ ամեն: ...կաղմեցավ Պեկ թուիս...» (թ. 108ա):

«Հրամանաւ տէր Գրիգորո և իշխանութեամբ» բառերը այդ ժամանակամիջոցում կարելի է վերագրել թերևս միայն Գրիգոր Գեառքարեցուն, ծարա իշխանության հոգևոր կենտրոնի առաջնորդին, որի նստավայրը Խաթրա վանքին էր³⁴:

Ինչ վերաբերում է կաղմող Մելքիսեղեկին, ապա XIV դ. մեզ հայտնի են երկու նույնանուն կաղմող. առաջինը դործել է դարի 30-ական թվականներին (այստեղ ժամանակի տարածությունը փոքր ինչ մեծ է), իսկ երկրորդ Մելքիսեղեկը ապրել է Կաֆայում (Ղրիմ) 1357 թ.: Պարզ է, որ այս Մելքիսեղեկը համանուն մի այլ անձնավորություն է:

Հաջորդ հիշատակագրությունը 1672 թվականից է: Այստեղ ակնարկվում են բարեմիա և աստվածասեր Սարգիսը, նրա կին Հոռոմսիմը՝ դուստրը Եղիսարեթը, որոնք Ավետարանը տվել են վերանորոգման: Հիշատակագրությունը ավարտվում է հետևյալ տողերով. «...Դարձեալ կաղմեցաւ թվին հայոց ՌՃԻԱ ամին. ձեռամբ Ղափանցի Թումային և իմ որդի Սողոմոնին... յիշեցէք տէր Յեսային, որ եղև պատճառ կաղմելոցն» (թ. 269ա): Այսպես ուրեմն, Մարա և Բրտենիք տեղանուններից հետո այժմ ակնարկվում է Ղափանը³⁵:

Ինչ վերաբերում է վերջին ստացողներ Սարգսին, նրա կին Հոռոմսիմին՝ Եղիսարեթի դստերը, ապա այդ անձնավորությունները մեզ հայտնի են դառնում Քաշթաղաց գավառում (Գորիս)³⁶, 1488 թ. ընդօրինակված մի այլ ձեռագրից: Այդ ձեռագրի³⁷ հետագա հիշատակագրության (1631 թ.) մեջ հանդիպում ենք զեռևս երիտասարդ Եղիսարեթին, նրա ամուսին Հովհաննեսին և սրանց փոքրիկ դստեր Հոռոմսիմին, որը հետագայում պետք է ամուսնանար «բարե-

34 Բ. Ա. Ուլարսյան, Խաչենի իշխանութունը X—XVI դարերում, էջ 305:

35 Ձեռագրի 326բ թերթում կա նաև մեկ այլ կաղմողի՝ Ոսկան երեցի Քոզմա տղերը, որոնք նրա մասին տեղեկություն չեն պարունակում:

36 Քաշթաղաց ... զլխաւոր տեղի գաւառիս է աւան Գորէս» (Ղ. Ալիշան, Տեղագիր հայոց մեծաց, էջ 86 (170):

37 Մատենագրան, ձեռ. № 6358:

միտ ու աստվածասեր» Սարգսի հետ³⁸։ Այդ տեղեկությունից պարզվում է, որ Մատ. № 6303 ձեռագիրը XVII դ. հանդիսացել է Գորիսարևականեր Հոռոմսիմի և Սարգսի սեփականությունը, որոնք այն հանձնել են զափանցի Թումային կազմելու։

Ձեռագրի մասին վերջին տեղեկությունը հաղորդում է Մ. Եպ. Բարխուդարյանը։ 1895 թ. նա այդ ձեռագիրը տեսել է Արցախի Գետաշեն գյուղի եկեղեցում և նկարագրել այն³⁹։ Ձեռագիրը Մատենադարան է մուծվել Գարեգին Հովսեփյանի հավաքածուից, որը, ինչպես հայտնի է, կազմված է եղել Զանգեզուրից և Ղարաբաղից բերված նյութերից։ Այսպես, ուրեմն, հիշյալ ձեռագրի մեկ հայտնի բոլոր դեգերումները կատարվել են Սյունիքի և Արցախի սահմաններում։

Երրորդ ձեռագիր—Ավետարանը կրում է Մատենադարանի 4820 համարը։ 252ա թերթի վրա կազմողի և ծաղկողի հիշատակարանն է. «Զկաղմող և ծաղկող սուրբ և լուսատու աւետարանիս զՈվաննէս, և զԾնողան իմ և զամենիսեան, որք աշխատել են ի սմա։ Ով Աստուածասէր ընթերձողք որք հանդիպիք այսմ լուսատրչիս յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր և դուք յիշեալ լիջիք լիջիք ի Քրիստոս Յիսուս...»։ Տեղի որոշման առումով ոչինչ չասող «հեղինակային» այս հիշատակարանից հետո ուշագրավ են 1511 և 1537 թթ. ոմն Արիստակես քահանայի թողած տեղեկությունները. «Ի թվին հայոց ԶԿ ես Առիստակէսս զնեցի զաւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հարն իմոյ էտգարին, մայրն իմոյ Ճհանբախտին...» (թ. 6բ)։

«...ի հրամանաւ տէր Առիստակէս քահանային և եղբարցն Տէրունին, ի ժամանակս տաճկաց թագաւորին Շահ-Քահամարի որդոյ Շահ-Իսմայելին, որ և յայսմ ժամանակի եղև մահտարայծամ առ ամենայն աշխարհիս Հայոց և առաւել երկիրս Գերարքունոյ ոչ շատոց դուռն փակեցաւ որ ոչ մնաց յիշատակ» (նկ. 13ա)։

Խոսքն այստեղ վերաբերում է Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև ծավալված պատերազմական գործողությունների ժամանակամիջոցին⁴⁰, երբ անընդհատ կրկնվող այդ ասպատակությունների ու ավերածությունների թատերաբեմ զարձալ նաև Գեղարքունիքը (հավանաբար այստեղ էր բնակվում Արիստակես քահանան)։ Ընդ որում, ժողովուրդը տուժում էր ոչ միայն այդ ասպատակություններից, այլև երբեմն մոլիզնող մահտարածամներից։

Հիսուն տարի անց՝ 1586 թ., որպես ձեռագրի սեփականատեր, հանդես է գալիս մի այլ անձնավորություն՝ խոջա Պարեքը. «...զվերջին ստացող սուրբ աւետարանիս զխաւջա Պարեաք ... յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ հարն իմոյ Մասեհի և մարն էվդային»։


... Գարձեալ յիշեցէք զԹաշատուր քահանայն, որ կամակից եղաւ ի սուրբ աւետարանիս զնելու... և ես խօջա Պարեաքս իմ սրտի օժարութեամբս առի սուրբ աւետարանս, տվի ի դուռն Սուրբ Աստուածածնի և սուրբ Ովաննիս Մկրտչին, ... ի թագաւորութեան Շահ Խուտարանդային, ի հայրապետութեան էջմիածնոյ տէր Առաքել կաթողիկոսին...

Յիշեցէք ... և զիս Ոհանէս սուտանուն, որ սակաւ յիշատակս գրեցի թվ-

38 Տե՛ս «ԺԸ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1621—1640 թթ.) Բ, կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 440—441։

39 Մ. Եպ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 261—262։

40 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 83—88։



Նկ. 9

Կամուս. Ե. յորս Բ.			Կամուս. Ե. յորս Բ.		
Երկուս	Տասրե	Նաս	Երկուս	Տասրե	Նաս
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31	32	33	34	35	36
37	38	39	40	41	42
43	44	45	46	47	48
49	50	51	52	53	54
55	56	57	58	59	60

նկ. 10

ՌԼԵ (1586) (թ. 5ա): Այդ հիշատակագրությունը ևս գրվել է Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ հավանաբար կրկին Գեղարքունիքի կողմերում⁴¹:

Իրա վկայությունն է նաև էջմիածնի Առաքել կաթողիկոսի հայրապետության ակնարկումը (նա կաթողիկոս է եղել 1577—1586 թթ.): Մինչդեռ հայանի է, որ Վասպուրականի կողմերում ընդօրինակված ձեռագրերի մեջ որպես կա-

⁴¹ XVI դ. վերջի և XVII դ. սկզբներին Գեղամա երկրում (Գեղարքունիք) ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում հաճախ են հիշվում պարսիկ շահերի անունները. երկիրը մասամբ գտնվելիս է եղել շահ Խուսրոանդաշի իշխանության տակ (ԺԸ դարի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1601—1620), Ա. կաղմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 217): Խուսրոանդաշի մասին տե՛ս էջ 259, 331, 360 և այլն:

նոն հիշատակվում է Աղթամարի հոգևոր առաջնորդությունն ու կաթողիկոսությունը⁴²։ Ի դեպ, Խոջա Պարեքի անունը ակնարկվում է Գեղարունիքում գտնվող XVI դ. վերջի մի արձանագրության մեջ. «Ես... պարեք շինել տվի խաչս որդոյ իմ Մելքումին. Ուսէպ կազմող. ես շեմ արժան»⁴³։ Ս. Բարխուդարյանը այդ Պարեքի տոհմի պատմությունը կապում է Գանձակի հետ։ Նրանք հետագայում տեղափոխվել են Նորադուզ գյուղ։

Ձեռագրում հանդիպող վերջին հիշատակագրությունը պատկանում է Սարգիս քահանային. «Ես՝ Սարգիս քահանա ծառա Աստուծոյ ստացա զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանցն իմոց. յիշատակ ինձ և ամուսնոյն իմո Քամարի և Բ. որդեկացն իմոց Ստեփաննոս քահանայի և Յովաննիսի» (թ. 159բ)։

Նման բնույթի հիշատակագրություններ Սարգիս քահանան և իր կինը թողել են նաև 103բ, 253բ, 158բ և մի քանի այլ թերթերում։ Այս Սարգսի և նրա կին Քամարի պատվերով են լրացվել ձեռագրի ավետարանիչների դիմանկարները, որոնք և՛ ոճով և՛ տիպա-պատկերագրական գծերով ոչ մի կապ չունեն սկզբնական նկարազարդումների հետ։ Սարգսի և Քամարի թողած հիշատակագրությունները ավետարանիչների դիմանկարների ցածի մասում են և բացարձակապես նույն ներկերով կատարված։ Ահա այն հանդամանքը (ոչ պակաս կարևոր), որ Սարգսի և Քամարի ժամանակ կատարված հետագա այդ մանրանկարներն իրենց ոճով ու պատկերագրությամբ բոլորովին չեն առնչվում Վասպուրականի հետ (դրանք բնորշ են Արցախի և Սյունիքի XV—XVI դդ. արվեստին), ինքնին վկայում են և հուշում վերահիշյալ անձնավորությունների (նաև ձեռագրի) այդ ժամանակներում Վասպուրականից դուրս գտնվելու մասին։

Ուշադրություն են գրավում նաև հիշյալ ավետարանի խորաններից մեկի մոտ թորոս քահանայի թողած տողերը. «Ձանարժան թորոս յիշեա ի տէր Յիսուս...»։ Կարծում ենք դա շատ վարժ գրիչ և նկարիչ է եղել⁴⁴։ № 4820 ձեռագիրը Մատենադարան է բերվել Արցախի Վարազա սուրբ Նշան եկեղեցուց⁴⁵։

Չորրորդ ձեռագիրը Մատ. № 6319 ավետարանն է։ Այն ընդօրինակվել է 1477 թ. Բասենի շրջանի էգեպատ գյուղում⁴⁶։ Այստեղ մեղ հետաքրքրողը հետագայում ձեռագրի սկզբին ամրացված հինգ թերթերն են՝ իրենց մանրանկարներով։ Բնականաբար անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե որտեղ է ձեռագիրը վերանորոգման ենթարկվել որին և ավելացվել են XIII—XIV դդ. պատկանող այդ հինգ թերթերը⁴⁷։

42 ...ի հայրապետութեան մերոյ կաթողիկոսութեան Աղթամարայ Տէր Գրիգորիսի...» և այլն։ Ի դեպ, այդ շրջանի Վասպուրականի ձեռագրերում ավելի շատ նշվում են Օսմանյան Թուրքիայի զորավարների, ինչպես նաև տեղական ամիրաների անունները (տե՛ս Ե. Ն. Ալիևյան, Գաղանազիրը կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 129—130)։

43 Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի Մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի սիաստաթղթի («Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 191—227)։

44 Ամենայն հավանականությամբ այս թորոսն է գծանկարիչ ավետարանի խորանները։

45 Այն գտնվում է Քուստի գավառում. կառուցվել է 1231 թ. «ձեռամբ Յովհաննէս վարդապետի, հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց իշխանի Վատակայ...» (Մ. Եպ. Բարխուդարյան, Արցախ, էջ 336)։

46 «Յամի յինն հարիւր քսան և վեցերորդի թուականութեանս հայոց (1477) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան և անարհեստ գրչի Մելքիսէթ ստատանուն իրիցու... ընդ հովանեաւ սուրբ Փրկչի, ի գաւառն Բասենայ, ի գիւղս, որ կոչի էգեպատ...» (թ. 247ա)։

47 Ձեռագիրը սկզբնապես թեմատիկ մանրանկարներ չի ունեցել։



Նկ. 11

Չեռագրի հետագա մի հիշատակագրություն (XVI դ.) կարծես վճռական նշանակություն է ձեռք բերում խնդրի լուսարանման համար: «Զվերջին նորոգել տվող սուրբ աւետարանիս, հեզ, հանդարտ, նսև բազմաց գովելի արդունական և քաջարի Յոհան արհեսպիսկոպոսն, որ է ըսպասատր սուրբ ուխտին խորանայշատոյ. վերջստին նորոգել ետուր սուրբ աւետարանս յիշատակ իւրն և



Նկ. 12

ծնադասն, հայրն Գալթի քահանային, որ[ի] Քրիստոսէ հանկուցեալ, աստուած իրեանն արքայութիւն շնորհէ: Գարձեալ կրկին անգամ չիշել... Յոհան պարոնտէրն և պատուական եղբայրն իր պարոնտէրն Ակորն...

Նորոգեցաւ սուրբ աւետարանս ի դադն և ի նեղ ժամնակին, ի դրան սուրբ նորակնունք Աստուածածնիս. թվիս Ռ29 (1627), ձեռամբ սուտանուն Յոհանէս իրիցոյ Շատախեցի...» (Քերթ 250ա). Պետք է նկատի ունենայ Գանձակի մաս զտնվոց նշանավոր Շատախ հայկական գչուղը:

Այսպես ուրեմն, ձեռագրի ընդօրինակությունից ուղիղ հարյուր հիսուն տարի հետո⁴⁸, այն հասել է պատմական Արցախի սահմանները և հորանաշատի ուխտի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից հանձնարարվել հիմնական վերանորոգման: Ենթադրում ենք, որ հենց այստեղ էլ այդ մատյանին միացվել են մեզ հետաքրքրող հինգ թերթերը:

Վերջին հիշատակագրությունը 1741 թվականից է. «կազմեցաւ յաւետարանս ձեռամբ (այսպես—Շ. Հ.) արեցաւ յիշատակս Քարթմանկեցի Արիստակէս իրիցու որդի Վարդան քահանայի թվ. ՌՃԾ (1731) ի ձորս Ղարաղի, գեղն որ կոչի Դուրիգեղ, տանուտէրն պարոն Աթապէկն, ամեն, Հայր մեր» (թ. 250բ):

Կազմող Արիստակէս Քարթմանկեցին հայտնի դեմք է: Նա ապրել և ստեղծագործել է XVIII դ. առաջին կեսում Արցախի Գարդման գավառում (այստեղ կար նաև Քարթմանիկ գյուղ): Բացի մեզ հետաքրքրող վերոհիշյալ (№ 6319) ձեռագրից, նրա ձեռքով 1749 թ. պատրաստվել է նաև պատմական Արցախի հաշնաձոր գավառում գրիչ Սարգսի կողմից 1492 թ. ընդօրինակված ավետարանի կազմը. «Կազմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Քարթմանկեցի (Գարդմանցի) Արիստակէս երիցու, որդի Վարդան քահանային ՌՃՂԸ»⁴⁹:

Ինչ վերաբերում է Ղարաղի ձորին կամ Ղարաղի երկրին, որտեղ վերջին անգամ կազմվել է սույն ձեռագիրը, ապա դա գտնվում է հորանաշատից արևելք՝ Արցախի ու Ուտիքի սահմանամիջին, Զակամի շրջանի մոտերքը⁵⁰: Ինչպես տեսնում ենք, 1627 թ. հետո էլ ընդհուպ մինչև 1741 թ., ձեռագիրը դուրս չի եկել Հայաստանի հյուսիսային շրջաններից և վերջում միայն տեղափոխվել է Երևանի ս. Հովհաննես եկեղեցին:

Վերջապես այս խմբի հինգերորդ ձեռագիրը կրում է Մատ. 4023 համարը: Գրչի թողած միակ տողը իր մասին չէ. «Յիշեցէք և զՎարդան կրանաւոր, յայսմ ատեն եկն առ մեզ և շնորհնաց մեզ գրչի հարթիչ» (թ. 490):

Ձեռագրի հետագա հիշատակագրություններում հոլովվում են տարբեր ժամանակներում ապրած երեք ստացողների անուններ՝ Ըսքանդար (XV դ.) Մովսես երեց (XVI դ.) և Աբան մելիք (XVII—XVIII դդ.), բայց որևէ տեղանվան ակնարկություն չկա:

«...Սուրբ աւետարանս է յիշատակ մայր լուսոյ Աստուածածնին, որ բարեխաւս է յամենայն արարածոցս հաւատացելոց ի Քրիստոս, որք հաւատով խոստովանին զորդին միածնին ած արարիչ ոմի: Արդ ես Ըսքանդարս, որդի խոճա Ղարիպշին դբարին մտաւ ածի և յիշեցի ... ետու կազմել զկենսունակ սուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց...» (թ. 630):

Մեզ չհաջողվեց սլարդել Սքանդարի ով և որտեղացի լինելը: Նույնը պետք է ասենք նաև ձեռագրի հաջորդ ստացողի՝ Մովսես երեցի մասին». «Ես Մովսես երէցս ըստացայ սուրբ աւետարանս յիշատակ ինձ և հոգոյս փրկութիւն ... իմ

48 Ձեռագրի 248բ—249ա թերթերի անթվական հիշատակարանը վկայում է, թե ինչ ծանր դեպքերումների է ենթարկվել այն մինչև հորանաշատ հասնելը: Ձեռագրի սեփականատերը չի զօհարել ավետարանը նույնիսկ իր տղաներին գերությունից փրկելու պայմանով. «...ես ելի պրծայ ու տղերս կորան: Եկի մոտ իՅովանէս էրեցն ու ասի թէ զաւետարանս տանիմ ու զիմ գերդիքն ազատիմ: Նայել ի մտք արի թե ո՞ր մարդ է ինքն զիր գլուխ կտրել, որ ես զիմ գլուխս կտրեմ ու կամ զիմ ծնօղաց վարձգնու զի յիշատակն կորցեմ. ելի չկարացի խմիչ անել...»:

49 Մ. եպ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 246—247:

50 Ղ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 84 («Տեղեկագիր Հայոց մեծաց», Գանձակ-Գարդման):

կողակցին Անայ խաթունին և իւր գաւերներին և Շոտոմսին և Եղիսափեթին...» (թ. 188):

Ձեռագրում ամենից շատ հանդիպում ենք վերջին ստացող Արանմելիքի հիշատակագրութիւններին. «Յիշատակ է աւետարանս Արանմելիքին և իւր կենակցին Տոհարին ի վանքս ի մայր լուսոյ Աստուածածինն ոչ հայրապետ և ոչ արեղայ և ոչ այլ սպասաւոր շունի իշխանութիւն հանել կամ ծախել...» (թ. 187ա):

Նման բովանդակութեան հիշատակագրութիւններ կան նաև մյուս էջերում: Նախ նկատենք, որ ինչպես XV դարում, այնպես էլ XVII—XVIII դդ. ձեռագրի ստացողները հիշատակում են միևնույն եկեղեցին՝ «ի վանքս մայր լուսոյ Աստուածածին»⁵¹, մի բան, որ վկայում է ձեռագրի երկար ժամանակ նույն վայրում գտնվելու մասին:

Ինչ վերաբերում է անձնանուններին, ապա առավել ուշագրաւք թերևս Արանմելիք անվան հոլովումն է, որի բացահայտման ուղղութեամբ մեր պրպատումները, ցավոք, որևէ արդյունքի չհասցրին: Եթև նույնիսկ Արանմելիք անունը նույնացնենք Մելիք-Աբա անվան հետ, դուցի և որոշ զուգորդութիւնների և նմանութիւնների առիթ ստեղծվի⁵². բայց բոլր դեպքերում մեզ հետաքրքրող անձնավորութեան կոնկրետ. ով լինելը չի սրոշվում: Մի բան միայն կարելի է արձանագրել, որ Արանմելիք կամ Մելիք-Աբա անձնանունը մեզանում ավելի հաճախ հանդիպում է Սյունիք-Արցախի շրջաններում:

Սույն ձեռագիրը Մատենադարան է մուծվել Սեանի հավաքածուից, որտեղ ընդգրկված էին Հայաստանի հյուսիսային շրջաններից բերված գույքերը:

Ամփոփենք. ա) նշված հինգ ձեռագրերում ամբողջութեամբ վերցրած կա հետագայի շուրջ քսան հիշատակագրութիւն: Ամենավաղը՝ 1356 թվականից է, վերջինը՝ XVIII դարից:

բ) Այդ հիշատակագրութիւններում ուղղակի կամ կողմնակիորեն նշված սեղանունները կապվում են միայն Հայաստանի հյուսիսային գավառների հետ:

51 «...Արդ ևս Ըսրանդարս, որդի խոճա Ղարխային... սուրբ աւետարանս է յիշատակ մայր լուսոյ Աստուածածինն...» (թերթ 631):

«Յիշատակ է աւետարանս Արանմելիքին և իւր կենակցին Տոհ . . ին (Գոհարին) ի վանքս մայր լուսոյ Աստուածածինն...» (թ. 187): Ի դեպ, «մայր լուսոյ Աստուածածին» վանքը հիշատակվում է նաև այս նույն խմբի մեկ այլ՝ № 4829 ձեռագրում. էջ 5ա—6բ:

52 Գանձասարի վանքի հյուսիսային պատի արձանագրութիւնը «ի ՌՄՂԹ Թուխ (1790) կանան Աստուծոյ ձեռամբ տեառն Յովհաննու կաթողիկոսին ևս Ապառ (Մելիք-Աբով) ուզբաշի որդի Մելիք Յովսեփա Թալիշու և իմ կենակից Հերիբնազ և որդի Մելիք-Պէկլար և Մելիք-Ապառմեր հալալ արդեանց շինեցար...» (Մ. եպ. Բարխուդաբեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 178):

Մելիք-Աբովների մասին տե՛ս նաև Ե. Լալայան, Գանձակի գաւառ (Նյութեր աղագա ուսումնասիրութեան համար), «Ազգագրական հանդէս», Ե, 1899, էջ էջ 220—228, 246 և այլն:

Մ. Ամբաստանցը գրում է, որ Գեղամա երկրում իշխող աներից մեկը Աբովներին է եղել («Տեղեկագիր Գեղարբունի ձովազարդ գաւառի», (Վաղարշապատ, 1895, էջ 371):

Մտեղիցի կաղարչանների տոհմում ևս հանդիպում են Արա-Մելիքներ (տե՛ս Неопубликованные письма академика П. К. Коконцева С. С. Абамян—Лазареву», ՊԲՀ, 1978, № 1, էջ 171—175):

Մելիք-Աբով անունը հանդիպում է նաև Փոքր Բոլնիս պուղի եկեղեցու պարսպի մոտ դրված խաչքարի վրա 1648 թվից (Ս. Չալալյանց, Ծանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, Բ, Քիֆլիս, 1858, 84): Կա նաև Մելիք-Աբով Արցախեցի (Ս. Չալալյանց, նշվ. աշխ., էջ 103):

Մելիք-Աբովներ հայտնի են նաև Քանաչեռի նշանավոր ընտանիքների մեջ. բոլոր դեպքերում, ինչպես վերևում ասացինք, այս անունը հոլովվում է Հայաստանի հյուսիսային շրջաններում:

Գրանք են պատմական Արցախի Մար դավառը, Գետաշեն գյուղը, Գարդմանը, Խորանաշատը, Բրդենիքը, Ուտիքը (Ղարաղի երկիր), Գանձասարը, Շատախ գյուղը (Գանձակի մոտ), Վարազա Սուրբ Նշան վանքը՝ Քուսաի գավառում, այնուհետև Արցախին հարևան՝ Գեղարքունիքը, Ղափանը և այլն:

գ) Ոչ մի տեղ նույնիսկ հարևանցի ակնարկություն չկա Վասպուրականի որևէ վայրի մասին: Բոլորովին չի հիշատակվում Աղթամարի կաթողիկոսությունը. մի բան, որ գրեթե պարտադիր է Վասպուրականում բնօրինակված ձեռագրերի համար: Մինչդեռ այստեղ մեկ անգամ հիշվում է էջմիածնի կաթողիկոսությունը, մեկ անգամ՝ Խաթրավանքի առաջնորդությունը և մեկ անգամ էլ Խորանաշատի հոգևոր կենտրոնը: Ինչ վերաբերում է ձեռագրերում մի բանի անգամ հիշատակվող Սուրբ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի և Գրիգոր Լուսավորչի ուխտին, ապա կարող ենք միայն ենթադրել, որ դրանք աննշվում են Արցախի համընդհանուր կամ Ղարամուրատի վանքին. «ի գեղս որ կոչի Պապճան, բնդ հովանեա Ջուխտակ եկեղեցեացս հնոյն սուրբ Աստուածածնի և նորոյս սուրբ Գրիգորի Լուսավորչիս և սուրբ Յովանէսի և այլ սրբոցն»⁵³:

Արցախի Հավապտիկի վանքում ևս եղել են «Սուրբ Աստուածածնի և Գրիգոր Լուսավորչի անվամբ եկեղեցիներ»⁵⁴:

Գոշավանքի եկեղեցիներից մեկը նույնպես կոչվել է Սուրբ Աստուածածնի, մյուսը՝ Գրիգոր Լուսավորչի անվամբ⁵⁵: Հաղարծինում ևս այդ երկուսը կան և այլն⁵⁶:

դ) Այդ ձեռագրերը Մատենադարան են մուծվել այնպիսի հավաքածուներից-Կարինյան (ձեռ. № 316), Գարեգին Հովսեփյանի (ձեռ. № 6303), Սեանի (ձեռ. № 4024), Երևանի ս. Հովհաննես եկեղեցու (ձեռ. № 6319), նոր Վարազա ս. Նշան եկեղեցու (ձեռ. № 4820), որոնցում եղել են հիմնականում Հայաստանի հյուսիսային շրջաններից բերված գույքերը:

ե) Չկա փաստ, որ այդ ձեռագրերից որևէ մեկը, ինչ-որ ժամանակ կամ ինչ-որ ձևով կապված լինի Վասպուրականի հետ (թեկուզ շատ ուշ շրջանի մեկ հատիկ հիշատակագրություն): Հասկանալիորեն այդ ձեռագրերից և ոչ մեկը չի արտացոլվել Ն. Լալայանի «Տուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» հատորում (Թիֆլիս, 1915 թ.):

Արանք են գրավոր փաստերը, որից բխող հետևությունը մեկն է. այդ հինգ ձեռագրերը իրենց «կյանքի» գրեթե ողջ շրջանը (շուրջ 600 տարի) անց են կացրել Հայաստանի հյուսիսային գավառներում՝ պատմական Արցախ, Ուտիք և Գեղարքունիք: Դա իր հերթին (և թվում է հիմնովին) հաստատում է մանրանկարների ոճաձևաբանական առանձնահատկությունների՝ Արցախի և Սյունիքի արվեստի սովորույթների հետ կապված լինելու մեր տեսակետը: Փաստորեն մանրանկարների ոճապատկերագրական առանձնահատկություններն ու հետագա հիշատակագրական տվյալները համերաշխորեն լրացնում են միմյանց:

Խնդրի հնարավոր այդպիսի լուծումը, մանավանդ եթե նկատի ունենանք Արցախ-Ուտիքից մեզ հայտնի մանրանկարչական մի շարք առաջնակարգ

53 Հ. Համազասպ Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 147:

54 Ս. Զարայան, Զամբ, Բ, էջ 216—217:

55 Հ. Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 183—184:

56 Հ. Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 220—225:

ձեռագրերի անկառնությունը—№ 4823 (1224 թ.), № 155 (ԺԳ դար), № 378 (ԺԳ դար, 1261 թ. առաջ), Զիկագոյի համալսարանում գտնվող 1237 թ., 1232 թ. Գեոկա վանքում ընդօրինակված, Երուսաղեմի մատ. № 1794 (1326 թ.), Մատ. № 5669 (1279 թ.), նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի № 47 (XIII—XIV դ.), Մատ. № 379 (XII—XIII դ.) և այլն, նախադրյալներ են ստեղծում խոսելու հայկական գեղանկարչության խիստ ինքնատիպ ու պայծառ մի նոր երևույթի՝ պատմական Արցախ-Ուտիքի մանրանկարչության դպրոցի մասին:

Г. АКОПЯН

ГРУППА РУКОПИСЕЙ, ОТНОСЯЩИХСЯ К ШКОЛЕ МИНИАТЮРИСТОВ ИСТОРИЧЕСКОГО АРЦАХА—УТИКА

(Резюме)

В результате изысканий, выполненных в последние годы в Матенадаране им. Маштоца, автор столкнулся с весьма интересным фактом. Группировка ряда известных и вновь обнаруженных рукописей дала возможность говорить о неизвестном до сих пор явлении в средневековой армянской живописи—школе миниатюры исторического Арцаха-Утика.

В основном рукописи этой школы были разделены на 2 группы. Предметом исследования являются рукописи II группы. Эти рукописи удостоились внимания специалистов в 1960-ых гг.; прежде высказывалось мнение (поскольку в них отсутствовали памятные записи, сделанные во время копирования), что эти манускрипты относятся к васпураканской школе миниатюры.

На основании стилистико-изобразительных материалов миниатюр, так же как на основе сохранившихся в рукописях позднейших памятных записей (древнейшая—от 1345 г.), сделана попытка посредством подробного анализа показать, что эти рукописи были переписаны и зарисованы в культурной среде исторического Арцаха-Утика.

Н. Н. НАСОPIAN

UN GROUPE DE MANUSCRITS DE L'ECOLE DE MINIATURE DE LA REGION HISTORIQUE DE L'ARTZAKH ET DE L'OUTIK

(Résumé)

Les recherches effectuées par l'auteur au cours des dernières années au Maténadaran Machtotz l'ont mis en présence d'un fait fort intéressant. Le groupement d'un certain nombre de manuscrits connus ou nouvellement découverts a donné la possibilité de parler d'un phénomène, inconnu jusqu'à présent, de la peinture arménienne médiévale: l'école de miniature de la région historique de l'Artzakh et de l'Outik.

D'une manière générale, les manuscrits de cette école ont été partagés en deux groupes. Ce sont les manuscrits du II^e groupe qui font l'objet de cette recherche. Ces manuscrits ont attiré l'attention des spécialistes aux années 1960 et certains ont exprimé l'opinion (étant donné que les colophons des scribes y manquent) que ces manuscrits appartenaient à l'école de miniature du Vaspourakan.

Prenant à l'appui le matériel stylistique et pictural, ainsi que les colophons plus tardifs conservés dans les manuscrits (le plus ancien remonte à 1354), l'auteur s'est efforcé de montrer par une analyse détaillée que ces manuscrits avaient été écrits et enluminés dans les centres culturels de la région historique de l'Artzakh et de l'Outik.

X—XIV դարերի ԹՂԹՅԱ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ
ՖԻԶԻԿԱԲԻՄԻԱԿԱՆ ՎԵՐՂՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Մերոպ Մաշտոցի անվան մատենադարանի X—XIV դարերի թղթյա ձեռագրերի և պատառիկների թղթի և թանաքի քիմիական բաղադրությունը ստուգելու նպատակով ֆիզիկաքիմիական անալիզի են ենթարկվել մի քանի նմուշներ, պարզելու համար, թե ինչ հումքից են պատրաստվել թուղթն ու թանաքը և ժամանակի ընթացքում ինչ փոփոխությունների են ենթարկվել¹:

Հայտնի է, որ թղթի պատրաստման ամենահին կենտրոնները գտնվել են Արևելքում (Առաջավոր Ասիա, Միջին Ասիա, Չինաստան), որտեղ թուղթը պատրաստել են կղեգնից, թթի ծառի կեղևային հյուսվածքից, հին լաթերից, բամբակից²: Ընդունված կարծիք է, որ Հայաստան թուղթ բերվել է Արևելքից: Ստորև կտեսնենք, որ ֆիզիկաքիմիական անալիզի արդյունքները հիմք են տալիս ենթադրելու, որ նշված դարերում թուղթ է պատրաստվել նաև Հայաստանում:

Ուսումնասիրվել են թղթի 11 և թանաքի 3 նմուշներ: Տվյալները բերված են № 1, 2, 3, աղյուսակներում: Չափումների և ստացված տվյալների քննարկման ու գնահատման ժամանակ մենք հանդիպել ենք որոշ դժվարությունների, որոնք ավելի զգալի էին դառնում մանավանդ այն պատճառով, որ մեր ձեռքի տակ չկար նախօրոք կատարված որևէ ուսումնասիրություն, որում քննարկված լինեին նույնչափ հին պատառիկների ֆիզիկաքիմիական անալիզի արդյունքները: Մեզ ծանոթ է միայն այն, որ 1889 թ. նևապոլիտանական արքեպիսկոպոս Բարոնեն պրոֆեսոր Ջիովանի Ֆրեդին ուղարկում է ձեռագրի մի կտոր, որը գրանցված է կղել որպես 1284 թ. բամբակից: Մանրադիտակի տակ ուսումնասիրելուց հետո Ֆրեդը պարզում է, որ դա բամբակից չէ: Իսկ սա նշանակում է, որ թուղթը բամբակից չի պատրաստված կղել: Բայց Ֆրեդի աշխատանքը վերաբերում է միայն թղթի մազմզուկների ֆիզիկական և ոչ քիմիական կառույցին:

Մեր կատարած ֆիզիկաքիմիական անալիզին դժվարություններ էր հարուցում նաև այն հանգամանքը, որ անցած հազարամյակի ընթացքում փոշին, շուրքը

¹ Հայերեն հնագույն ձեռագիրը (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2679) իր հազարամյակը բոլորելու առիթով (գրված է 981 թ.) հրատարակվելու է լուսատիպ նմանահանությամբ, վերձանությամբ և ուսումնասիրությամբ: Հարյուրամյակների ընթացքում թանաքը աստիճանաբար քայքայել է թուղթը: Նրանից առաջացած փոշին կուտակվել էր թերթերի թիկնամասում: Ավագ գիտաշխատող, ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը հրատարակության նախապատրաստելու համար ձեռագիրը քանդելիս, հավաքված թանաքափոշին և քայքայված թղթի մասուկները, ինչպես նաև XI—XIII դարերի և Հաղբաթի քարայրներում վերչերս հայտնաբերված XII—XIV դարերի թղթյա ձեռագրերի պատառիկներից նմուշներ տրամադրեց մեզ, որոնց ֆիզիկաքիմիական անալիզի արդյունքները ներկայացվում են սույն հոդվածում:

² Բրիկեն (C. M. Briquet, Neue Quellen zur Papiergeschichte, Wien, 1888) պնդում է, որ թուղթը երբեք բամբակից չին պատրաստելու նա նույնիսկ առաջարկում է թուղթ բառը գործածությունից հանել բոլոր այն լեզուներից, որոնցում թուղթ բառի արմատը վերցված է բամբակ բառից:

և ուրիշ աղտոտություններ ներծծվել էին անալիզի ենթարկվող նմուշների մազմրզուկների մեջ և ոչ մի կերպ հնարավոր չէր ազատվել դրանցից: Փորձեցինք լվանալ տարբեր բնեռացում ունեցող լուծիչներով (ջուր, ացեառոն, էթանոլ, բրոմֆորմ, դիքլորէթան, բենզոլ, քսիլոլ), բայց արդյունքները բոլոր դեպքերում չէ, որ զուհացուցիչ եղան: Նմուշներից մեկը բենզոլով լվանալուց հետո թողեց յուղի հետքեր: Մի քանի նմուշներ, որոնք ամենից շատ են վնասվել, կեղտոտա էին այնքան, որ սպեկտրների մեջ կլանման տիրույթները հնարավոր չէր հշտությամբ որոշել:

Քանի որ ուսումնասիրված նմուշների մեծ մասը մալր ձեռագրերից անջատված պատատիկներ են, դարերի ընթացքում ավելի են տուժել, քան կարող էին տուժել գրքերի կազմում համեմատաբար ավելի անփնաս տեսքով մեզ հասած թերթերը: Քանաքի նմուշները քայքայված և խառնված են թղթի փոշիով: Չոր թանաքի հեռ խառնվել են թղթի մազմզուկներ, որոնք մանրակրկիտ մաքրելուց հետո էլ ինչ-որ շափով մնացին թանաքի նմուշի մեջ: Այս ամենով հանդերձ՝ մի քանի նմուշներ, որոնց անալիզի արդյունքները բերում ենք ստորև, հնարավոր եղավ այնքան մաքրել, որ ստացված արդյունքները կարելի է հուսալի համարել:

1. Քանաքի անալիզի տվյալները:

Չորացած, գորշ գույնի փոշի: Ուսումնասիրված են երեք նմուշ. ա) 981 թվականից, բ) 1000 թվականից, գ) XII դարից:

էլեմենտար անալիզի արդյունքներն են.

Առանց մնացորդի		Մնացորդով	
Ածխածին	41,6%	Ածխածին	11,18%
Ջրածին	8,9%	Ջրածին	2,38%
Ազոտ	2,1%	Ազոտ	1,88%
Մծումբ	0,4%		
Անօրգանական մնացորդ 74,2%			

Աղյուսակ № 1

Առաքման սպեկտրով անալիզի արդյունքները

էլեմենտ	% նմուշ N. 1		էլեմենտ	% նմուշ N. 2		էլեմենտ	% նմուշ N. 1		% նմուշ N. 2	
	% նմուշ N. 1	% նմուշ N. 2		% նմուշ N. 1	% նմուշ N. 2		% նմուշ N. 1	% նմուշ N. 2		
Si>	10(32)>	10 (21,6)	Nb	0,0038	0,0024	Yb	0,00075	0,0076		
Al	7,5	9,0	Cu	0,048	0,085	La	0,008	0,0056		
Mg	2,0	1,5	Pb	0,11	0,10	Ce	0,01	0,0065		
Ca	4,5	5,5	Ag	0,0034	0,0035	Sr	0,03	0,033		
Fe	2,4	2,5	Sb	0,009	0,015	Ba	0,15	0,13		
Na	3,6	2,0	Bi	0,00044	0,06032	Li	0,01	0,0052		
Mn	0,12	0,083	As	—	0,8	P	0,34	0,25		
Ni	0,03	0,0031	Zn	0,034	0,026	Au	—	0,0043		
Co	0,02	0,0018	Cd	0,0024	0,0015	Bce	0,0007	0,0008		
Ti	0,18	0,3	Tl	0,003	0,0015	Sc	0,0025	0,0026		
V	0,0068	0,0051	Sn	0,013	0,009	B	0,0052	0,0038		
Cr	0,0086	0,01	Ge	0,00026	0,00047	Th	0,0056	0,0042		
Mo	0,00044	0,0006	Ga	0,0019	0,0014	U	0,0005	0,0018		
W	0,0036	0,002	In	—	0,00037					
Zr	0,026	0,036	Hq	0,032	0,0018					
			Yt	0,0044	0,0028					

Ինֆրակարմիր սպեկտրալ անալիզի տվյալները:

Նյութերն ուսումնասիրված են մածուկի ձևով, վազելինի յուղում:

Ուսումնասիրության տիրույթը 700—3700 սմ

Կլանման տիրույթները՝ սմ -ով 725, 782, 805, 880, 1045 (շատ ուժեղ լայն կլանում), 1095, 1115, 1170, 1200, 1310, 1530, 1620—60 (լայն կլանում) 1735, 2630, 3180, 3000—3600 (լայն կլանում 3350 սմ —1 մաքսիմումով):

Այս կլանումները ապացույց են հետևյալ խմբերի

Հալանաբերված խմբեր	Ապացույց
հիդրոքսիլ (OH) հնարավոր է թթվի—OH խումբը	3600—3000 սմ ⁻¹ տիրույթի լայն կլանում
երկրորդային ամիդ $\begin{array}{c} \\ -N-C- \\ \\ O \end{array}$	3180 սմ ⁻¹ առոցված «ցիս» դրուժյան N—H, 1620—60 սմ ⁻¹ տիրույթի լայն կլանումը կրկնակի կլանում է 1660 (ամիդ II) և 1620 սմ ⁻¹ (կրկնակի կապ) 1530 սմ և 1310 սմ ⁻¹ կլանումները նույնպես ապացուցում են երկրորդային ամիդի ներկայությունը:
կարբոնիլ C=O հալանական է թթվի C=O խումբը	1735 սմ ⁻¹
սիլիցիումի օքսիդ (SiO)	Շատ ուժեղ կլանումը 1045 սմ ⁻¹ SiO-ի կլանումն է: 782, 880, 1115 սմ ⁻¹ տիրույթի կլանումները ապացուցում են, որ SiO խումբը մտնում է կալային սիլիկատների մեջ ³ :

Քանաքի բաղադրիչ մասերից մեկը կալային սիլիկատներն են, որոնք, ինչպես հայտնի է, իսկական լուծույթներ չեն տալիս, այլ առաջացնում են կոլոիդ կախվածքներ (սուսակնդիա): Հավանական է այդ նյութերը թանաքին տվել են շփվելու, շտարածվելու հատկություն, ինչպես նաև դարձրել են ավելի մածուցիկ: Բայց այդպիսի լուծույթում կալային խումբը շատ շուտ կնստեր հատակին: Այդ երևույթը կարելի էր կանխել, եթե լուծույթին ավելացվեր սպիտակուցներ, սապոնիներ կամ այլ մակերեսային ակտիվ նյութեր: Հենց այդ նյութերն են, որ մոտ 25% ավելացվել են թանաքին: Այդ օրգանական նյութերի մեջ էլ կարող են եղած լինել ներկանյութերը:

Դժբախտաբար հիմա դժվար է որոշել, թե ինչ ծագում են ունեցել այդ նյութերը՝ կենդանական, թե՞ բուսական, քանի որ թե՛ երկրորդային ամիդը, թե՛ օրգանական թթուն, թե՛ կրկնակի կապերը, որոնք հայտնաբերվել են այդ թանաքում, հանդիպում են թե՛ մեկի, թե՛ մյուսի մեջ: Պետք է նկատի ունենալ նաև, որ անցած հազարամյակում սկզբնանյութերը կարող էին շատ փոփոխվել և դառնալ անձանաչելի:

3 И. И. Плюсина, Инфракрасные спектры силикатов. Изд-во МГУ 1967, стр. 92.

Սակայն քանի որ Հայկական գրավոր աղբյուրներում (ձեռագիր դեղագրքերում, Թանաք պատրաստելու դեղատոմսերում, ձեռագրերի հիշատակարաններում, հիշատակագրություններում և այլուր) վկայում են, որ Թանաքի պատրաստման հիմնական հումքը ստացվում էր տարբեր բույսերից, կարելի է պնդել, որ այդ նյութերը ոչ թէ կենդանական, այլ բուսական ծագում ունեն:

2. Թղթի անալիզի արդյունքներ:

Թղթի բույր նմուշները՝ դեղնամոխրագույն երանգով, մակերեսը՝ մի փոքր անհարթ, էլաստիկ, 3—4 մմ երկարությամբ մազմզուկներով: Էլեմենտար անալիզի արդյունքները՝ միայն առաջին նմուշի համար (981 թ.):

Ածխածին	44,5%
Ջրածին	5,9%
Ազոտ	1,45%
Մծումք	3,7%
Հալոգեններ չկան	
Անօրգանական մնացորդ	15,6%

Աղյուսակ № 2

Առարման սպեկտրալ անալիզի արդյունքները միայն առաջին նմուշի համար (981 թ.)

էլեմենտ	%	էլեմ.	%	էլեմ.	%	էլեմ.	%	էլեմ.	%
Si>	10(21)	Mo	0,0023	Cd	—	La	0,032	B	0,0096
Al	10,2	W	0,018	Te	—	Ce	—	Th	—
Mg	11,2	Zs	0,077	Tl	—	Sr	0,12	u	—
Ca	13,6	Nb	0,013	Sn	0,009	Ba	0,24		
Fe	5,4	Ta	—	Ge	—	Li	0,044		
Na	4,2	Cu	0,048	Ga	0,0028	P	2,6		
Mn	0,42	Pb	0,11	In	—	Au	0,0013		
Ni	0,0053	Ag	0,0072	Hg	—	Pt	—		
Ca	0,005	Sb	0,029	Yt	0,01	Be	0,0018		
Ti	0,36	Bi	0,0015	Yb	0,0018	Sc	0,0056		
V	0,0097	As	—						
Cs	0,025	Zn	0,0039						

Թղթի գույնը, մազմուկների երկարությունը, մակերեսի որոշ անհարթությունները, կալցիումի մեծ քանակությունը ապացուցում են, որ նմուշները պատրաստված են մինչև XIII դարը, քանի որ՝

Մինչև XIII դար	XIII դարից հետո
1. Թղթի հումքը չի մշակվել մեքենաներով, այլ պատրաստվել է ձեռքով, որից էլ մազմզուկները մնացել են համեմատաբար երկար, 3—4 մմ ⁴	Հումքը մշակվում է մետաղյա մեքենաներով, որից մազմզուկները կարճանում են մինչև 0,1—1 մմ:
2. 3—4 մմ երկարություն ունեցող մազմզուկներից ստացված քղթի մակերեսն անհարթ է:	Ամենահարմար մազմզուկները 0,1—1 մմ երկարություն ունեն, որից ստացված Թուղթը լինում է շատ հարթ:

⁴ Ընդգրկված են այն հատկությունները, որոնք ունեն ստամբասիրված նմուշները:

Քղթի դեղնավուն գույնը բացատրվում է կարբոնիլ խմբերի առկայությամբ⁵, թեպետ՝ թղթի ստացման հնագույն մեթոդներով, երբ թղթի մասսան երկար ժամանակ եռացրել են բաց ամաններում, թուղթը կարող էր ստանալ դեղնավուն երանգ:

Աղյուսակ N 3-ում բերված են պատառիկների ինֆրակարմիր տիրույթի սպեկտրալ անալիզի արդյունքները: Բոլոր սպեկտրներում կարբոնիլ, հիդրօքսիլ խմբերից, կրկնակի կապից, C-H դեֆորմացիոն տատանումներից բացի 1, ԺԱ, Թ և Ե նմուշները (1-ին խումբ) ունեն 1050 սմ⁻¹, 980 սմ⁻¹ և 730 սմ⁻¹ տիրույթում կլանումներ, որոնք բացակայում են կամ թույլ են արտահայտված 2 և Է (2-րդ խումբ) պատառիկների սպեկտրներում, իսկ վերջինների մոտ ուժեղ կլանումները գտնվում են 1120 սմ⁻¹ և 1170 սմ⁻¹ տիրույթում:

Ինֆրակարմիր սպեկտրալ անալիզի տվյալներ ստացել ենք նաև կազմի կտորից հանված բամբակե թելից, որի կլանումները համընկնում են առաջին խմբի թղթի սպեկտրներին: Այսպիսով, թղթի նմուշների անալիզը ապացուցում է, որ գոյություն են ունեցել առնվազն 2 տեսակ թղթեր, որոնք իրարից տարբերվում են կլանման որոշ տիրույթներով:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թե՛ թանաքի (981 թ.), և թե՛ N 1 նմուշի պատառիկի (981 թ.) առաքման սպեկտրներում կապարի քանակը նույնն է—0,10 և 0,11%: Դա նշանակում է, որ երկուսն էլ պատրաստված են եղել աշխարհագրական նույն շրջանում: Եթե ընդունենք, որ թուղթը բերել են գրչի մոտ ուրիշ տեղերից, պետք է ընդունենք, նույնպես, որ թանաքն էլ բերել են թղթի հետ, բայց թանաքի ներմուծումը ոչ միայն անհարմար է, այլև, երեւի, անիմաստ (չորանալուց հետո թանաքը վերականգնելը դժվար է): Թանաքը պետք է պատրաստվի գրչի մոտ, եթե ոչ՝ անմիջապես գրչի ձեռքով: Այստեղից՝ թե՛ թուղթը, թե՛ թանաքը պատրաստել են այնտեղ, որտեղ աշխատել է գրիչը:

Ինչպես վերևում ասացինք, առաջին խմբի սպեկտրները համընկնում են կազմի կտորից հանված բամբակե թելի սպեկտրին⁶: Թեպետ Բրիկեն մերժել է այն կարծիքը, որ առաջներում թուղթ պատրաստել են նաև բամբակից, բայց մեր տվյալները թույլ են տալիս վերապահումով մոտենալ Բրիկեի կարծիքին և ենթադրել, որ առաջին խմբի պատառիկները կարող էին պատրաստված լինել բամբակից: Այդ կարծիքն, իհարկե, դեռ ճշտման կարիք ունի:

Եզրակացություն.

1. Պատառիկների առաջին խումբը, գրքի կազմից հանված բամբակե թելը, թանաքը պատրաստվել են աշխարհագրական նույն շրջանում:

2. Քանի որ գրիչը աշխատել է Հայաստանում, հեռաբար թանաքը, բամբակե թելը և թղթերի առաջին խումբը հավանաբար նույնպես պատրաստված են Հայաստանում: Այս կարծիքը հաստատվում է նաև համեմատելով էլե-

⁵ H. W. Grietz, and Mc. Person, J. Svensk, Papperstiding, 59, 1956, 93 L. Chadej r on Bull. Assoc. Tech. Ind. papier 1, 1954, 28—30.

⁶ Որ թղթի սպեկտրը նման է բամբակե սպեկտրին, բավական է համեմատել ստացված արդյունքները գրականության մեջ հայտնի օրինակի հետ՝ Տե՛ս P. Г. Жбанов, Инфракрасные спектры целлюлозы и его производных. Минск, 1964, изд-во АН БССР, стр. 225, спектрограмма № 54.

Ն, մ, ս, է, շ	Կլանման տիրույթները առ-1-ով*									
1.	3500 3000	1720	1640	1465	1310	1115 բ.	1060 ու.ժ.	1030	980 ու.ժ.	730
b	3500 3000	1715	1640	1465	1310	1160	1060 ու.ժ.	1030	985 ու.ժ.	730
2.	3500 3000	1720	1640	1470	1315	1160	1060 բ.	1025 ու.ժ.		735
Է	3500 3000	1715	1640	1465	1310	1160	1060 բ.	1025 ու.ժ.	990	730
Թ	3500 3000		1645	1470	1310	1160	1060 ու.ժ.	1025	985 ու.ժ.	735
ժԱ.			1645	1470	1310	1160	1055 ու.ժ.	1025	985 ու.ժ.	730
Թեղ հանված «Թ» նմուշի կազմի կառքից	3600 3000	1720	1645	1470	1310	1160	1060	1025	985 ու.ժ.	730

* Մե քանի կլանումների համար ինտենսիվությունները բերված են՝ ու.ժ-ու.ժեղ, Թ-Թու.ժ.Մ.
Մեղակ ինտենսիվությունը չի նշանակված:

մենտների հարաբերական քանակությունները, որ բերված են № 1 և 2 աղյուսակներում, թղթի և թանաքի համար: Հարաբերությունը մոտավորապես համընկնում է էլեմենտների տարածվածությանը Հայաստանում: Կասկածելի է միայն անագի մի փոքր ավել քանակությունը, թեպետ հնարավոր է, որ աշխարհագրական համեմատարար փոքր տարածքում, որտեղից վերցրել են թղթի և թանաքի հումքը, էլեմենտներից որևէ մեկի հարաբերական քանակը լինի ավել կձմ պակաս, քան հարևան շրջաններում:

3. Պատառիկների 2-րդ խումբը, որի քիմիական կառույցը չի համընկնում օժանդակ նյութերի (թանաք, կազմի կտոր) կառույցին, հավանական է բերված է ուրիշ երկրներից⁷:

Ինֆրակարմիր սպեկտրներն ստացվել են Յեսյ Ֆիրմայի UR-20 սպեկտրոֆորոմետրով, նմուշները պատրաստվել են քսուկի ձևով, վաղելինի յուղում, ներքին լրիվ անդրադարձման և կալիումի բրոմիդի հետ ճնշման տակ թերթիկներ ստանալու մեթոդներով:

Զափումները կատարվել են՝

առաջման սպեկտրները—ՀՍՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտի սպեկտրալ լաբորատորիայում, ղեկավար երկրաբանական գիտ. թեկնածու Գևորգ Մկրտչյան:

Օրգանական անալիզ—ՀՍՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի անալիտիկ լաբորատորիայում, ղեկավար Ադրինե Գրիգորյան:

Ինֆրակարմիր սպեկտրներ—ՀՍՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ֆիզիկական քիմիայի բաժին, ղեկավար քիմ.գիտ. թեկնածու Լևոն Խաժակյան:

Վերջում մեր պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել Մատենադարանի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Արզարյանին հողվածի մտահղացման, մանրամասն քննման և ճշտման համար:

Л. ХАЖАКЯН

РЕЗУЛЬТАТЫ ФИЗИКО-ХИМИЧЕСКОГО АНАЛИЗА ФРАГМЕНТОВ РУКОПИСЕЙ X—XIV ВВ.

(Резюме)

В статье представлены результаты физико-химического анализа фрагментов древнейших армянских бумажных рукописей, хранящихся в Матенадаране им. Маштоца, в частности остатков и чернильного порошка рукописи № 2679, написанной в 981 г. Физико-химич. анализ показывает, что как чернила, так и бумага (X—XII вв.), были изготовлены в одном и том же географическом регионе, вероятно в Армении. Это мнение подтверждается также изучением относительной распро-

⁷ Մեզ տրամադրված նմուշները համարակալված էին 1,Ա-ԺԱ-հերթականությամբ, առանց ժամանակը նշանակելու:

Անալիզի արդյունքները ներկայացնելիս, պարզվեց, որ առաջին խմբի մեջ ընդգրկված պատառիկները X—XIII դարերից են, երկրորդ խմբինը՝ XIV դարից:

странности элементов, приведенных в табл. № 1 и 2 для бумаги и чернил, и тем, что данные фрагменты могли были быть изготовленными из хлопка.

L. KHAJAKIAN

RESULTATS DE L'ANALYSE PHYSICO-CHIMIQUE
DE FRAGMENTS DE MANUSCRITS EN PAPIER DES
X^e-XIV^e SIECLES

(R é s u m é)

L'article expose les résultats de l'analyse physico-chimique de fragments des plus anciens manuscrits en papier conservés au Maténadaran Machtotz, en particulier de restes et de la poudre d'encre du manuscrit no. 2679, écrit en 981.

Les analyses ont montré que l'encre et le papier (X^e-XII^e siècles) ont été préparés dans une même région géographique, probablement en Arménie. Cette opinion est confirmée également par l'étude de l'extension relative des éléments donnés dans les tables nos. 1 et 2 pour le papier et l'encre et par le fait que ces fragments ont pu être fabriqués à partir de coton.

НИКОЛАЙ ГЕВОРГЯН

УНИКАЛЬНАЯ РУКОПИСЬ «ХУМАЙУН-НАМЕ» В МАТЕНАДАРАНЕ

Среди персидских рукописей в собрании Матенадарана одна под номером 561 привлекает внимание архаичностью палеографических данных. Заслуга первооткрывателя этой рукописи принадлежит А. Д. Папазяну, который впервые ввел ее в научный обиход, сделав о ней доклад на I Конференции советских востоковедов в Ташкенте¹, а в 1958 году рукопись упоминалась в его статье в «Вестнике Матенадарана»².

Զօխ¹⁸ շօխ սալամ օլսուն մանում իայրըմայ,
 Ղու բանդամըզ ազատ էլայ էրմանի,
 Ագար ավհալըմըզ սօրան, իմանում,
 Գօզըմըզ իաշիլան էթտի թար մանի:
 Սանի ելան եղրար վէրտում բիր դաման,
 Եղրարընդան դօնան օլուր բէիման,
 Սանի գօզտան սալմայ գէնայ մանամ ման,
 Իօխսայ բէլայ օլսայ՝ եխար դահր մանի:
 Դիայր բուաղուպ պղայ խարար գօնդարմիշ,
 Դէզի սէվդիշակուն սանդան արլմիշ,
 Շօլ խուրի աթիլան գէնդի իայր օլմիշ,
 Պու դանայ սօզլարի էթի դար¹⁹ մանի:
 Յէշխուն շարապինին տօլու իշմիշամ,
 Բութայ քիմի սինամըզի աշմիշամ,
 Աղլում պաշտան շխտի, սարտան գէշմիշամ,
 Դիվանայ գէզարամ, իօխտուր դարմանի:
 Քէշիշ օզլի դէր իաշլար իախարամ:
 Շէզայ բլրուպ քիմի գուլայ պախարամ,
 Ղըզիլ գուլան թիքանլարին եխարամ,
 Ղօռխարամ բի դաֆըլ սանշայ խրմանի:

11.

Երի, է նազլու դիլպար,
 Օզուայ դուլ[լ]ար օլդիկում,
 Գարդանուն տալ, բօհուն սալվար,
 Օզուայ դուլ[լ]ար օլդիկում:
 Յէթիկշայ սան ալըշուրսան,
 Յար դամ գէլուփ բուլըշուրսան,
 Յար գէշանդայ սօլաշուրսան,
 Սօզու դուլ[լ]ար օլդիկում:
 Յաշուն բէլուայ թախարսան,
 Մանի աթաշայ ախարսան,
 Ղիայ-ղիայ խօշ պախարսան,
 Գօզուայ դուլ[լ]ար օլդիկում:

¹⁸ Չասաղբում՝ Շախ:

¹⁹ Զուազիմա՝ դար:

Մանի սէվան սայնայ դուլտուր,
 Գուլ սէվան շէդայ բլբուլտուր,
 Մահ ջամալուն խօշգուլ գուլտուր,
 Ուզուայ դուլլար օլդիկում:
 Քեչիչ Օղլի դէր՝ լագումտուր,
 Էլբմտայ տութան սաղումտուր,
 Սառլանուփ գէլան նաղումտուր,
 Նաղուայ դուլլար օլդիկում:

12.

Խէլլի վախտուր դար Ֆրդան աղլարամ,
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէշտի,
 Գօնդուլիլան ջանում ջանա բաղլատում,
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէշտի:
 Բաղվան օլտում գուլ բասլայնուփ դէրբլտի,
 Զօխ շաքմադի՝ խազալ²⁰ վուրտի սարալտի²¹,
 Շէդայ բլբուլ բաղտան ուշտի արբլտի,
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէլ[տ]ի:
 Փարալուամ, յէշ գօրբնմաղ իարասի,
 Գօղլում աղլար, իշարա տուր աղբրսի,
 Քարիբրմտան օլմաղ մայայ շարասի,
 Զան ուզուլդի, ումր աղալտի, գուն գէշտի:
 Զունքի²² բէլայ օլուրիտուն բաֆայսըզ,
 Նիշուն բանի իայրսըզ էթտուն սաֆայսըզ,
 Գէջայ գունդուլ դան աղլարամ դվայսըզ,
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէշտի:
 Վարախ տուշիմ, սանդան ֆարեղ օլայիմ,
 Զունքի դաղբրմ բիլմաղ օլդուն, նէլայիմ,
 23
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէշտի:
 Էլայիմ սէվդիկում լախտան բուլասան,
 Մանի աղլատասան, օղուն գուլասան,
 Սանտայ մանում քիմի գառթլու օլսան,
 Զան ուզուլդի, ումր աղալտի, գուն գէշտի:
 Քեչիչ Օղլի, գօզալ սէվմակ հաւաստուր,
 Դարտսարին շաքմաք գէնայ հարաստուր,
 Զան բլբուլտուր, պու դուռու բան դաֆաստուր,
 Զան ուզուլտի, ումր աղալտի, գուն գէշտի:

13.

Գէլ ուզուն դօնդարմայ, դիլպար,
 Մէվարամ ջանի գօնդուլտան,

20 Զեռուլում՝ խազալ:

21 Զեռուլում՝ սարալտալի:

22 Զեռուլում՝ Բունքի:

23 Զեռուլում՝ լիբ:

Աղ ուզուայ դարայ խալլար,
 Սէվարամ ջանի գօնգուլտան:
 Յէ գէղարսան մանդան իրախ,
 Գէջայ գունդուզ էդարամ ախ,
 Պիր ֆըքըր էլայ, ալահա պախ,
 Սէվարամ ջանի գօնգուլտան:
 Հէշ պիր դամ ուզում գուլմատի,
 Իայամ շաւալուկ բուլմադի²⁴,
 Դայայ Թաղաթում դալմադի,
 Սէվարամ ջանի գօնգուլտան:
 Աբէդայ մանի իայդ էլայ,
 Սալու գօնլըմըղ շատ էլայ,
 Սան բիր խօշշայ մօհրաթ էլայ,
 Սէվարամ ջանի գօնգուլտան:
 Բիր ֆադիր Քէշիշ Օղլիամ,
 Դըգիլ գուլուն բլբուլիամ
 Շընդի նազլըմուն դուլիամ,
 Սէվարամ ջանի գօնգուլտան:

14.

Ան պիրայ դան աղլար պիրայտան օթրու
 Բադրի դարայ օլմիշ վարի բլբուլուն,
 Աղաշտան աղաշայ, սիշրար տօլաշուր,
 Բաֆայսըղ գուլ օլմազ իայրի բլբուլուն:
 Ուլ իւզ ալթմիշքէշ գուն շարար ջաֆասին,
 Գէլտիքշայ Թէդի դալխար, իօխտուր բաֆասի[ն]
 Գէնայ պիր նէշայ գուն սուրար սաֆասին,
 Դայայ բէթար առթար զարի բլբուլուն:
 Իստար քի յամիշայ անընտայ տուրսայ,
 Օպիրայ գուլինուն սաֆասին սուրսայ,
 Դօնշայ աշլլանդայ գօղիլան գօրսայ,
 Նէ հման ինջիտուր խարի բլբուլուն:
 [Ի]աղիլար անընդայ մասկան դուրալար,
 Իախընայ գէլմիշ դարշու տուրալար,
 Յամիշայ անինդայ սաֆայ սուրալար,
 Յար գօրանդայ առթար դահրի բլբուլուն:
 Քէշիշ Օղլի դէր՝ յըշխընդայ դալդում,
 Յէշխուն սավդասին օղ պաշըմտայ բուլտում,
 Գէնա ման ալահայ դվասին դը[լ]տում,
 Բիրդայ շաղ [օլասայ բադրի բլբուլուն]²⁵:

24 Ձեռագրում՝ բուլմադի:

25 14-րդ կողմ գրչագրի վերջին կողմ է, որի վերջին տողը մնացել է թերի, շնայած որ էջը դեռևս նոր է սկսվում և դրանից հետո մնացել է չգրված սպիտակ վիճակում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Իրանահայ բանասեր Լ. Մինասյանի հայտնաբերած Երգիչ Քեչիչ Օղլի Ջուղայեցուն ներկայացնելով մասնագետներին և ընթերցողներին, կարծում ենք, որ դա կօգնի Քեչիչ Օղլի մականունով հայտնի երգիչների և նրանց երգերի տարբերակման ու հետազոտման գործին: Եթե նորահայտ Քեչիչ Օղլու ստեղծագործություններն անտիպ են, ապա մյուսների զգալի մասը հայտնի են Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» (Թիֆլիս, 1903), Գ. Թարվերդյանի «Հայ աշուղներ» (Երևան, 1937) ժողովածուներից, «Արձագանք» պարբերականից (1886, № 7) և այլ տպագիր աղբյուրներից: Այդ երգիչների առանձին գործեր էլ պահպանված են ձեռագրերի էջերում, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 2842, 3055, 3751, 5954, 8099, 8741, 9003 ձեռագրերում:

Հարկ է նշել, որ Լ. Մինասյանի տպագրության ներկայացրած երգերից 5-րդը ոչ թե Քեչիչ Օղլի Ջուղայեցու ստեղծագործություններից է, այլ՝ հանրահայտ հայրենների 3 նմուշներից կազմված մի փոքրիկ շարք: Եթե շապացուցվի, որ դա պատահարար է ընդօրինակվել Քեչիչ Օղլի Ջուղայեցու երգաշարքում, կմնա մտածել, որ այս երգիչը ևս ժամանակին երգել ու տարածել է նաև հայրեններ: Ըստ այդմ, Քեչիչ Օղլու հայրեն երգերի թիվը հավասար է ոչ թե 5-ի, այլ 4-ի, իսկ բոլոր երգերինը՝ ոչ թե 14-ի, այլ 13-ի:

Л. МИНАСЯН

АШУГ КЕЧИШ-ОГЛИ ДЖУГАЕЦИ

(Резюме)

Публикация содержит 14 песен ранее неизвестного армянского ашуга XVII века из города Джуга. 5 из них написаны на армянском языке, 9—на тюркском. Кешиш-огли, по-видимому, владел также персидским, так как в его песнях встречаются строки на этом языке. Публикация осуществлена на основе армянской рукописи XVII века, хранящейся в частной коллекции жителя города Новая Джуга (Джюльфа, близ Исфагана) Манасера Лазаряна.

L. MINASSIAN

ACHOUGH KECHICH-OGHI DJOUGHAËTSI

(Résumé)

Publication de 14 chants d'un ménestrel arménien du XVIIe siècle, inconnu jusqu'à présent, de la ville de Julfa. Cinq de ces chants sont écrits en langue arménienne, neuf en turc. Kechich-oghli savait probablement le persan aussi, car des vers en cette langue se rencontrent dans ses chants. La publication se fait d'après un manuscrit arménien du XVIIe s. conservé dans la collection de Manasser Lazarian, résidant à la Nouvelle-Julfa (près d'Ispahan).

ՄԵՂՎԱՊԱՀԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԽՐԱՏ-ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Մեղվապահությունը հայերի հնագույն դրաղմունքներից մեկն է, որը գոյություն ունի մինչև այսօր և իր համեստ տեղն է դրաղեցնում ժողովրդական տնտեսության մեջ: Ուստի նրա մասին մեզ հասած ամեն մի բանավոր, առավել ևս գրավոր տեղեկությունները, խրատ-խորհուրդները ոչ միայն պատմամշակութային, ճանաչողական, այլ նաև գործնական, կիրառական նշանակություն ունեն:

Այս տեսակետից առանձին արժեք են ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված մեղվապահական խրատ-խորհուրդները: Առաջինը Մատենադարանի № 8185 ձեռագրում Ալեքսիանոս բժշկի «Բժշկարանի» մեջ պահպանված «Վասն մեղուաց» քսանչորս խրատ-խորհուրդներն են: Այն շուրջ վաթսուն տարի առաջ հրատարակել է բանասեր Ն. Ակինյանը «Մեղվապահությունը հայերի մոտ» հոդվածում («Գյուղատնտեսական կյանք», № 6, 1926, Երևան, էջ 45—50) և օգտագործվել Ա. Կոթոլյանի, է. Վարդանյանի, Զ. Քումանյանի «Մեղվաբուծություն» գրքում (Երևան, 1961 թ., էջ 18—20): Առաջին հրատարակությունը այժմ ամսագրային հաղվագյուտ նմուշ է, իսկ նշված գրքում օգտագործված է առաջին հրատարակությունից տասնմեկ խրատ:

№ 8185 ձեռագիրը գրված է Ալեքսիանոսի ձեռքով XVI դարում: Բացառությամբ սկզբի տասներկու թերթերի (սկզբից 2 թերթ պակաս է), մնացած մասը բժշկարան է (վերջից թերթի)՝ բաժանված ութսուն գլուխների (որոնց ցանկը գրված է սկզբում), իսկ գլուխները՝ ենթաբաժիններ ունեն: «Բժշկարանը» կազմելիս Ալեքսիանոս բժիշկը ոչ միայն օգտագործել է ուրիշ բժշկարաններ, այլև որոշ բան ավելացրել է սեփական փորձից, ուստի սույն «Բժշկարանի» ոչ միայն գրիչը, այլև հեղինակը պետք է համարել Ալեքսիանոս բժշկին:

Ալեքսիանոս բժիշկը եղել է նաև մեղվաբույժ և «Վասն մեղուաց» (էջ 84բ—91բ) խրատ-խորհուրդները շարադրելիս բերել է նաև իր փորձը՝ «Նս մեղատը Ալեքսանիոս աչօք տեսեալ եմ և արարեալ»: Իսկ ինչ ձեռքի տակ չի ունեցել և չի իմացել, առաջարկել է այլ աղբյուր. «Ահա որդեակ իմ, — ավարտում է իր խրատները նա, — մեղուաց թիմարն այս է, որ մի ըստ միտջէ գրեցի պարզ և լիստակ բանիս: Եւ այն, որ մնաց, իմաստուն մարդու հարց և ուսիր, և զմեղատը Ալեքսիանոս յիշեա ի տէր»: Ալեքսիանոս բժիշկը ապրել և ստեղծագործել է Շամշորաձորի շրջանում:

Մատենադարանի № 2154 ձեռագրի (գրված է XV դարում) 6բ-7ա ազատ մնացած էջերում XVII դարում մի մեղվապահ գրում է. «Խրատ մեղի» խորհուրդները, որը շրատարակված նյութ է: Անանուն մեղվապահի խրատների մի մասը համընկնում են Ալեքսիանոս բժշկի խորհուրդներին: Սակայն կան նաև խրատներ, որոնց միայն այստեղ ենք հանդիպում:

Գիտական հասարակայնության և մեղվապահությանը զբաղվողների սեփականությունը դարձնելու նպատակով հրատարակում ենք սույն խրատները բնագրական և բանասիրական որոշ սրբագրություններով, հույս ունենալով, որ նրանք օգտակար կլինեն ինչպես գիտնականների, այնպես էլ մեղվապահների համար:

84ա

ՎԱՍՆ ՄԵՂՈՒՅՑ*

84բ

Խոտ մի կայ, որ ձագախոտ ասեն, և ունի գեղեցիկ շնորհս վասն մեղաց. ի բազում ամաց գիտացեալ և յուրով ժամանակաց փորձեալ, և դտաին նա ի ձորն Շամքօռա, ի գիւղն, որ կոչի Գառնակեր՝ ի վերայ Չարերք գետոյն, ի նոցա յայգետանքն լինի, որ է բաղերն. և թէ այլ տեղ բուսանի՝ ո՛չ գիտեմ՝: Եվ ով ոք կամի առնուլ զնա, գարնանա[յ]ին ժամանակին երթա[յ] և բահով առնու զարմատ նորին զհողովն և տանի զնէ ի պարտիզի կամ ի ջրարբին տեղ. և այնպես է սահմանք, քանզի առանց ծաղկի և առանց սերման է: Եւ յորժամ ձագ ելանէ ի փեթակէն², առնուն սակաւ մի ի խոտէն և կանգն[են] ի դուրս դեհն փարախին, ճմռեն

85 ա

զխոտն ի մէջ ափին և տաք փշեն ի վերայ նորա, և ձգեն ի փետակն². և առ ժամայն ժողովին ամենայն մեղուքն և մտանեն ի փեթակն² առաջնորդովն իւրոց և ապա կալնուն, զբերանն փեթակին² և տանին զնեն ի կարգն՝ առանց աշխատանց: Եւ թէ ձագ փախչի, առնուն ի խոտէն և վազեն յետևանց, և ի հասանելն ճմռեն զխոտն և տաք փշեն ի վերայ նորա. յայնժամ թողուն զառաջնորդն իւրոց և դառնան ի վերայ խոտոյն. և այնպէս արգելուն զմեղուքն ի փախչելոյն, մինչև հասուցանիցեն ի փեթակն:

Ես մեղաւոր Ալեքսիանոսս աչօք տեսեալ եմ և արարեալ. Տէրն գիտակ է, որ սուտ չէ:

85բ

Ոմանք ասեն, թէ այն խոտոյ հոտն նման է իւրոց առաջնորդի հոտոյն, վասն այն սիրեն զխոտն զայն:

[Վ]ասն մեղաց պահելո[յ]

Թէ ուզես որ զքո մեղուքն աճեն և շատանան, այս ԻԴ (24) խրատովս պահես զոր գրեմս.

Առաջին խրատ այս է, որ փարախի տեղն տաք պիտի և անքամի, երեսն դէպի հարաւ, որ արևն շուտ անկանի և յուշ անցանէ:

Երկուսն այս է, որ փարախն խիստ ամուր պիտի շինած, որ ի գողէ և ի արջէ³ և այլ պատահմանէ անահ և անկասկած լիցի:

86ա

Երեքն այս է, որ փարախն շափով պիտի շինած. զերկայնութիւնն՝ Լ (30) թիզ, և զլայնութիւնն՝ Ի (20), և զպատին բարձրութիւնն՝ ԺԲ (12), և զգլուխն՝ փշով ամրացուցած: Նոյնպէս և զսրահն, որ է դափն, ամուր և ազուր պիտի շինած, վերեն տախտակած, ծեփած և հողով ամրացուցած. զերկայնութիւնն սրահին՝ Ժ (10) թիզ և զլայնութիւնն ԺԸ (18), զբարձրութիւնն՝ Ը (8). մէջն կող ծեփած ու Գ (3) դիմաց պատուհան. և թէ ուզես որ փարախն այլ մեծ լինի կամ այլ փոքր, դու այս հսապովս արա զմեծութիւնն և զփոքրութիւնն:

* Մատենադարան, ձեռ. № 3185, Թերթ 84ա-81բ:

Գ (4) այս է, որ փեթակներն միաշափ պիտի. կողանակին երկայնութիւնն՝ Բ (2) թիզ ու Ժ (10) մատն պիտի, և լայնութիւնն՝ Ա (1) թիզ և Բ (2) մատն, զգլուխն և սոքն միապէս, մէջքն՝ քիչ մի հուպ⁴ տուած: Գարձեալ հաստ ուռն Գ (4) պիտի ճզած, բարակն՝ Գ (3), կոշտ մէրերն ընտրած և կակուզ մէրերն բարակ ուռով. մէրն և ուռն կոկ տաշած պիտի և դայիմ արած Գ (3) արձով: Ա (1) հալզա || գլխոյն պիտի և Ա (1) հալզա՝ ոռքին, Բ (2) լաւ բոլոր և իրար պարապար, ո՛չ աւելի և ո՛չ պակաս: Տցանակին⁵ երկայնութիւնն՝ Բ (2) թիզ և Գ (4) մատն պիտի Բ (2) արձով, գլխո լայնութիւնն՝ Ա (1) թիզ և ոռքին՝ Ա (1) թիզ և Բ (2) մատն, գլխո[յ] հալզէն՝ փոքր և ոռքին՝ մեծ, գլուխն դիֆարած և Գ (3) դիմաց կեռ տուած: Այս է շափն կողանակին և ցցանակին⁵. քան զայս աւելի մեծն և փոքրն՝ շատ զարար ունի:

Ե (5) այս է, որ յորժամ զփեթակներն² ծեփել կամիս, յիստակ թրիք ժողովէ. որ հողախառն լինի գեաիւնն, լաւ աւելէ ու թրիք վերայ ած, մանր մոխիր մաղէ, քիչ մի ջուր ած, լաւ կոխ տուր, որ աղէկ ջիւլանա[յ]. ապա զփեթակներն || ծեփէ ի դէմ արևուն. յորժամ լաւ շորանա, հորթի թրիք ժողովէ, մոխիրն քիչ մի շատ արա քան զառջինն, որ սպիտակ գա[յ], ապա լաւ երեսածեփ արա, հէնց որ ո՛չ մէրն երևա և ո՛չ ուռն. բարակ ծեփածն լաւ շի լինիր, հաստ պիտի ծեփած, և պատրասա կաց, որ մէջն ցեխոտ չլինի. յորժամ հաւասար շորանա[յ], մէջն հաւասար շոր քսէ և շարահոտ տուր. ապա փեթակներուն կիսէն յառաջն ճէճակ տուր, որ դայիմ լինի, փուլ չգայ: Ոմանք ասեն, թէ զումաշի թրքով ծեփած փեթակն ճանճ շի կենալ. սուտն և իրանն ո՛չ դիտեմ. ով որ հաւաս ունի, թող փորձէ: Զ (6) այս է, [որ] յորժամ || փեթակներուն տեղն շինել կամիս, Բ (2) թիզ բարձր արա, որ ներքէն ցցանակ⁶ շարմեա, ապա թէ զայս ո՛չ առնես, Ա (1) թիզ բարձր արա, որ փեթակին մէջն հեշտ տեսնուա և⁷ զմեղրն⁸ հեշտ կտրես: Եւ զմեղաւորս չիշես ի Տէր:

Է (7) այս է, որ յորժամ գարունն հասանիս, համբեր[ե]ա մինչև ձիւնն հաւասար հալի և ծառքն ծաղկին: ապա զփեթակն ի դուրս դիր. և թէ մեղուն ձիւն տեսանէ կամ ուժով քամի՝ մեղանի ի ճանապարհին և ոչ ժամանէ ի փեթակն իւր:

Ը (8) այս է, որ փեթակներն Գ (3) դաս լինի. առաջինն՝ ծանր և վերջինն՝ թեթեւ, և միջինն՝ ծանր քան զվերջինն. յորժամ ի կարգ դնես, յառաջ զծանր փեթակներն շարէ, || յետ այնորիկ՝ զմիջակն, որ լաւ լինի:

Թ (9) այս է, որ յետ դուրս դնելոյն Գ (3) օրն որ անցանի, զու գնա զդիֆարներն վեր առ հաւասար, և բարակ մուխ տուր, դէմ արևուն խաղացո. թէ փակին մէջն ցեխոտ լինի՝ դանակով քերէ, և թէ փար կա կամ մեռած մեղու, փոքր աւելով կամ շորով լաւ սրքէ, ապա զփարներն դիր, բոլորքն շոր մամուռով կալ, որ քամի չմտանէ:

Ժ (10) այս է, որ յորժամ զփեթակներուն ոռքն կալնուա, փարախի միջին հաւասար ջուր ցանէ, յիստակ աւելէ, աղրն դուրս ձգէ, որ փարախն յիստակ պիտի և սիրուն:

ԺԱ (11) այս է, որ դուրս դնելոյն հետ մինչև ի տուն դնելն ամենեկին⁹ || ցելի կամ թրիք մի տանիլ ի փարախն, և թէ բանաս և խփես, բոլորքն շոր մամուռով կալ. դէջ մամուռն զարար է:

ԺԲ (12) այս է, որ գարունն զդիֆարներն ճանճէն մօտիկ դիր. քանի

որ ճանճն շատանա[ւ] դու դիֆարն յետ քաշէ, և թէ փեթակն լցւի, դիֆարն դրադին հաւասար դիր և բոլորքն մի՛ կալնուլ, որ փղձկի ոչ: Եւ թէ յաղքատ փեթակ լինի, այնոր դիֆարն յետ մի՛ քաշել՝ մինչև հարուստանա[ւ]:

ԺԳ (13) այս է, որ փեթակներու վերեն լաւ ծածկած պիտի կեչով կամ տախտակով, որ արև կամ անձրև վնաս չանէ և դու ափսոսաս և հայիֆ ասես:

89ա ԺԴ (14) այս է, որ ամ||առն և ձմեռն մեղրն քո տանէն պակաս մի անել. և թէ հէնց ժամանակ հանդիպի, որ քեզ մեղրն չլինի, դու գինի տուր, այլոցէ մեղր առ, որ դապուն ճանճն առանց խեծի չի ապրիլ, նոյնպէս և նոր կալած ձագն թէ եղանակն թոռ ու թաց լինի, առանց խեծի շուր կու դառնա և քեզ տրամեցուցանէ:

ԺԵ (15) այս է, որ յորժամ ձագ ելանէ ի մօրէն, դու պատրաստ կաց, որ փախչի ոչ. ձագախոտն բռնէ առջն կամ ձագակալ ու մէջն մէրատունն ճէճակէ ու փարախին դուրս դեհն դիր:

89բ ԺԶ (16) այս է, որ յորժամ ձագն ի փեթակն կալնուս, ոտքովն մաղած կամ նօսր շալ, որ փղձի ոչ, ապա թէ շուխա[ւ] ածես վերայ՝ շուր||կու դառնա, մանաւանդ թէ ամառնամտին լինի՝ խիստ վնաս է, պատրաստ կաց, որ շիռշիմանիս և ափսոսաս:

ԺԷ (17) այս է, որ թէ առաջնորդն գողանա[ւ], դու փեթակն դուրս կալ տար մութ տուր, ճանճն դուրս արա, առաջնորդն գիտ և սպանէ, ճանճն ձագակալին առ տար մին զապուն ճանճի վերայ ձգէ: Եւ թէ ամառն շոգովն՝ ճանճ կալնուս, և նա ի մէջ փեթակին դարա չբռնէ, մեծ մէրատունն կտրէ և ճէճակէ, որ տուն թող շինի¹: Դարձեալ որպէս ուժով ցուրտն մեծ վնաս է մեղացն, նոյնպէս և ուժով արևն. յորժամ ամառնամուտն հասանիս, փեթակներուն վերայ շուր կապէ մինչև Գ (3) ամիսն թէ տերևով թէ խոտով: ||

90ա ԺԸ (18) այս է, որ յորժամ մեղր կտրես, մութն փեթակէն դուրս բեր. մոռանաս ոչ, որ փեթակներն² փարախովն կու այրի, և դու դարձամահ կու լինիս, այլ հասնիլ շեւ կարել:

ԺԹ (19) այս է, որ տղա[ւ] կամ հարսն կամ աղջիկ թէ իմանաս որ շահիլ է և ճանճի հասպն չգիտել, հրաման մի՛ տալ, որ մեղրն կտրէ կամ փեթակներու մէջն տեսնու, որ զարարն շատ է:

90բ Ի (20) այս է, որ յորժամ գործն հնանա[ւ] և սեանա[ւ], դու այն տարին ամառն կամ աշունն այն փեթակէն² մեղր մի՛ կտրել, թող որ լի մնա[ւ], և ի տուն դնելո[ւ] ժամն դիֆարի ափանն դուռն կտրէ ու ոտքն դիֆարէ, վերայ արձ արա և ծնփէ և տան դիր և յորժամ գարունն հասնիս, փեթակին² շուրջ տուր, ոտքն գլուխ արա||և բան թող, երեք օրն անցնի, ապա զգլուխն բաց և սև մեղրն կտրէ և սպիտակն թող, խիստ լաւ է:

ԻԱ (21) այս է, որ սև մեղրն կճուճն ձգէ և շերեփով լաւ տրորէ, խփէ ու թոնիրն դիր, և թող որ մեղմ հալէ, և ապա դուրս բեր, ի վաչք դիր, որ քիչ մի հովանա[ւ], դրդալով երեսն հաւաքէ ու մոմ եփէ, և մեղրն աման ած, խիստ պատուական է:

ԻԲ (22) այս է, որ թէ գարունն, թէ աշունն փեթակն որ խեծկեր կտրէ, վեր անիլէն ի զատ, այնոր այլ որիչ ճար չկա[ւ], ապա թէ վեր շանես, դու տրամիս և շարկամն ուրախանայ:

Քսաներէքն այս է, [որ] յորժամ կամիս զփեթակներն տուն դնել, յառաջ զմամուռն քաշէ հաւասար և դիֆարներն յառաջ||դիր, մած, ապա իրիք բեր, մոխիր մաղէ վերայ և կազմէ, բարակ կլաւակ արա և բուրբն ծեփէ. թող որ մին շարաթ կենա[յ], որ լաւ շորանա[յ], և ապա տուն դիր:

Ի՞ (24) այս է, որ ճանճատունն ո՛չ խիստ տաք պիտի, ո՛չ խիստ ցուրտ. յերդն և դուռն կալած պիտի, որ իսկի լոյս շնկնի մէջն. փեթակներն լաւ դասած պիտի և տեղն ցամաք, և թէ չիկնի այսպէս, վնասն այս է. թէ տեղն խիստ տաք լինի, ճանճն կու գոշա[յ], ամենեին չի քնիլ, մեղրն կուտէ, յետո սովամահ լինի. թէ խիստ է, նա մեռանի ի սաստիկ ցրտո[յ], թէ լոյս ընկնի, ճանճն կու քամվի և փեթակն դարտակ կու մնա[յ], թէ գէշ լինի, առաջնորդն||կու գողանա[յ] և մեղրն կու թթուի¹²:

Ահա, որդեակ իմ, մեղուաց թիմարն այս է, որ մի ըստ միոջէ գրեցի պարզ և յիստակ բանիւ, և այն որ մնաց, իմաստուն մարդո[յ] հարց և ուսիր. զմեղաւոր¹³ Ալէքսիանոսս յիշ[ե]ա [ի] Տէր:

Բնագրում՝ 1 գիտեն: 2 է փխ ե: 3 առէ: 4 հուսի: 5 ցրց փխ ցց: 7—8 կրկ: 9 ամէնեին: 10 շորովն: 11 չինի: 12 թրթ փխ թթ: 13 մեղավոր

6 բ

ԽՐԱՏ ՄԵՂԻՒ

Երբ ձիւնն¹ ցամաքի և ջեր լինի և գարուն. զփեթակն ի դուրս դիր, հանց տեղ, որ քամի խիստ շառնու. Ա (1) կարգ քար շարէ ի ներքն՝ շանկանի ոփի նման, և կարգ մի խոտ դիր և կարգ մի փեթակ, ի վերէն ջրով ծածկէ. տաք կենալն լաւ² է:

Չամենն տես ի դուրս դնելն՝ թէ գէշ է առեր, բորբոս կայ, Ա(1) տամ դէմ արեգակն դիր և բաց. ի գէշ տեղն մի դներ ձմեռն, ի տաք տեղ դիր, որ ջուրն չի սառի, յարեգակն բաց՝ դիր Ա (1) տամ: Թէ մեղր սակաւ³ լինի, մեղր դիր ի ներս, կամ շամիչ և ձէթ ծեծէ և ջրով տրորէ, և զշանչքն յիստակէ և ամանով ի փեթակն դիր, որ ուտեն և դորանան, կամ ըրուպ կամ մեղրաջուր դնես, բայց յերես շրին ցախ դիր, որ մեղուքն ի ներս շանկանին ի ջուրն և խեղդին: Եւ ծուխ տուր յամէն Ը (8) օր, երբ թուխս լինի, շատ ծուխ մի տար: Երբ ուրի ձագն և շատանայ, ծաղկի երեսն դեղին տայ, Գ (3) օր էլ ձագ տայ. մօտ⁵ կաց, երբ ձագն ելանէ՝ շուտ առնու, մէկ տամ կու կենայ, թաշի և գնայ:

Խոտ մի կայ ձագախոտ առն. զայն առ և զփեթակի մէջն քտէ, կամ մեղրաջուր. երբ զձագն ի ներս դնես, զբերան փեթկին շալով կալ ու|| զբերանն ի գետին դիր և զոտքն ի վեր, որ ծակն ժողովին:

Յորժամ խաղաղին, զմէրն ի տեղացն ի վեր կալ, և զձագն ի մօր տեղն դիր. զմէրն կուտէ, զծաղին ներքն կտրէ, ի ներքն փեթքին զինչքան զոչխարի պտուկ է, զամէն կտրէ, զմէրարոժոժ⁶ ձագ չի տայ և գնայ: Ոմանք զմէրարոժոժն⁷ կու կտրեն, յետ ձգեն և զայլ որդն⁸ կու թողուն, որ ձագ հանեն և շատանայ: Չմէրն տար յայլ տեղ դիր, հանապաղ աչք տուր, ձագ կուտայ և գնայ: Բ (2) շարաթն անգա[մ]⁹ մի ծուխ տուր. ոչխարին աղն է շահ և փեթկին՝ ծուխն: Երբ փեթակն լցի, ի

¹ Մատենադարն, ձև. Մ 2154, թերթ 6բ—7ա:

յօրէ յօր լինի ձագ տալն, ի յետքն Բ(2) տեղ թող, որ շխեղդին: Երբ ձագն քիչ լինի, Բ (2) ձագին Ա (1) մէր թող, ի վերայ միմեանց ձգէ:

Եւ թէ ձագն քիչ մի ծաղ է արարեր, քսսա մի կամ սահ մի մեղրոտ արայ, ի վերայ ծակին, որ մեղ[ն]ւքն ելանեն ի փեթկէն ի քարղան լցւին, և յետքէն ծուխ տուր:

Եւ դմիւս ձագն որ առնուս, ի յետքէն ի ներս լից, քայց յառաջ մեղրաջուր փչէ ի փեթակն և ի վերայ յետին ձագին, որ առաջինք դան և դյետինքն լիղեն որպէս կով գոթին և միաբանին: Եւ յորժամ ցեց անկանի ի փեթակն, Բ (2) կում քացախ առ ի բերանդ¹⁰ և ի նես փչէ:

Բնագրում՝ 1 ձուն: 2. լօ: 3 սակօ: 4 թուր: 5 մաւ: 6 դմէրաբօծօձէ: 7. դմէրաբօծօն, 8 որթն : 9 անկա[մ]: 10 բերանու:

А. ГАСПАРЯН

СОВЕТЫ ПО ПЧЕЛОВОДСТВУ В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ РУКОПИСЯХ

(Резюме)

В публикации представлены два цикла советов по пчеловодству, содержащихся в армянских рукописях Матенадарана № 8185 (XVI в.) и 2154 (XV в.). Текст рукописи № 8185 был впервые опубликован Н. Акиньяном в 1926 г.

A. GASPARIAN

CONSEILS D'APICULTURE DANS LES MANUSCRITS ARMÉNIENS MÉDIEVAUX

(Résumé)

Cette publication présente deux cycles de conseils d'apiculture provenant des manuscrits arméniens du Maténadaran nos 8185 (XVIe s.) et 2154 (XVe s.). Le texte du manuscrit n° 8185 a été publié pour la première fois par N. Akinian en 1926.

ԿՈՒԼԲԵՆԿԻ ՈՐԳԻՆԵՐ ԳՈՒԼԱՔԻԻ ԵՎ ԳԱԼՈՒՍՏԻ 1847 Թ.
ՍՈՒԼԹԱՆ ԱՔԳ-ՈՒԼ-ՄԵՋԻԳԻՑ ՍՏԱՅԱԾ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ

Օսմանյան պաշտոնական գիվանական վավերագրերի ցարգ կատարված աղբյուրագիտական ուսումնասիրություններն ու գիտական հրատարակումները, առավելապես ընդգրկում են ֆեոդալական իմունիտետի կամ մուաֆուսյան, ներքին վարչատնտեսական և հատկապես հարկային սիստեմին վերաբերող վավերագրերն ու հարկացուցակները¹: ներքին և արտաքին առևտրին, ապրանքափոխանակությանն ու առևտրական հարկերին ու մաքսային դանձումներին վերաբերող նյութերը մեծ մասամբ վերաբերում են կայսրության եվրոպական մայր ցամաքում գտնվող նահանգներին: Ուշագրավ են հատկապես անվանի թուրքագետ պրոֆ. Լ. Ֆեքեթեյի 1550—1580 թթ. Բուդապեշտի և մերձակա շրջանների մաքսատնային մատյանների գիտական բարձր մակարդակով կատարված հրատարակումները²:

XVI—XIX դդ. Օսմանյան սուլթանների և նահանգային փաշաների կողմից հրատարակված հրովարտականքի ու հրամանագրերի մեջ յուրահատուկ տեղ են զբաղում առանձին խոշոր վաճառականների և առևտրական ընկերությունների տրված բերաթներն ու բույուրուլիթիները, որոնք կայսրության ներքին և հատկապես արտաքին առևտրի վերաբերյալ առավել հավաստի փաստական տվյալներ պարունակող վավերագրական սկզբնաղբյուրներ են հանդիսանում:

Մասնակի ծանոթությունը վերջերս կատարված մի քանի հրատարակումների հետ, թույլ է տալիս խոսելու, արտաքին առևտրի բնագավառում և վաճառականության նկատմամբ Օսմանյան պետության ընդգծված ուշադրության և շահախնդրության մասին: Այս առումով հետաքրքիր են հատկապես Մ. Գուրոլուի հրատարակած Ռումինական ժող. հանրապետության ԳԱ գրադարանում և Պետ. Արխիվում պահվող XV—XIX դդ. վավերագրերը: Հատկանշական է, որ Կոստանդնուպոլսի գրավումից ընդամենը երեք տարի անց (1456 թ.) հրատարակած հրովարտակում, սուլթան Մուհամմատ 2-րդը գրում է. «Քանի որ Բողդանելի տիրոջ՝ Պետրի վոյեվոդի հետ հաշտություն եմ կնքել և մեր մեջ եղած թշնամությունը վերացրել եմ և հրամայել եմ, որ նրա երկրում՝ Ակկեր-

¹ O. L. Barkan, XV ve XVI inci asırlarda Osmanlı İmparatorlugunda ziral ekonominin hukuki ve mali esasları, I cild «Kanunlar», İstanbul, 1945. H. Inalcik. Hicri 835 tarihli Sûret-i sancak-i Arvanid, Ankara, 1945, Turk tarih Kurumu yayımlarından XIV seri: Tahrir defterleri n. I. Kaldy-Nagy. Gy. Kanuni Devri Budin Tahrir defteri Ankara, 1971. دفتر مفصل ولایت گورجستان، تور کچه متنی ترجمه تدقیق و تحشیه

2. Գալուպե, 1947. آیدن س. جیکیا، برنجی کتاب—متن، تبیلیسی-1947.

Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Քաներ Մատենադարանի», № 5, Երևան, 1960:

² Rechnungsbücher Türkischer Finanzstellen in Buda (ofen) 1550—1580, herausgegeben von L. Fekete und Gy. Kaldy-Nagy, Budapest, 1962.

մանում գտնվող առևտրական նավերով մարդիկ զան և էղիրենում, Բուրսայում և Ստամբուլում ժողովրդի հետ առևտուր անեն ու վաճառականությամբ զբաղվեն, ուստի, երթևեկության ընթացքում իմ սուրաշիներից, սիփահիններից և զուլերից ոչ մեկը նրանց անձին և ապրանքին վնաս չպատճառի, և եթե լսեմ, որ հրամանիս հակառակելով, նեղություն են տվել, թող իմացած լինեն, որ զուլ կուղարկեմ և նրանց մեծագույն աղետի կենթարկեմ»³:

Մ. Գուրոզլուի օսմանյան դիվանագրության և հնագրության ժամանակագրական ուսումնասիրությանը նվիրված մեծարժեք աշխատության մեջ կան վաճառականներին շնորհվող արտոնությունների վերաբերյալ նաև այլ հետաքրքիր հրավարտակներ ու հրամանագրեր⁴:

Օսմանյան տերության պետական բյուջեյում կարևոր տեղ էին զբաղում արտահանվող և ներմուծվող ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: Ղ. Ինճիճյանի հավաստի տեղեկություններով XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին կայսրության պետական բյուջեն գոյանում էր ա) ոսկու և արծաթի հանքերից, բ) նվաճված ժողովուրդների վրա դրված հարկերից, գ) հողային տիրույթներից (մալիքանե, մուզազա, զիամեթ, թիմար, սեհիմ և այլն) և ներմուծվող ու արտահանվող ապրանքներից գանձվող մաքսերից⁵: Լայնածավալ կայսրության նավահանգստային և սահմանամերձ մաքսատնային լայն ցանցը, ինչպես նաև ներքին կարավանային ուղիների վրա գտնվող ճանապահապաշտայան ծառայության կետերը, որոնք շատ հաճախ, արքունի գանձատուն կատարվող միանվագ մեծագումար մուծումների դիմաց կապուլով տրվում էին առանձին վարձակալների, հսկայական եկամտի աղբյուրներ էին, որոնց տեղական գործունեությունը պայմանավորված էր միայն առևտրական կապիտալի անընդհատ և հարաճուն շրջանառությամբ:

Անընդմեջ պատերազմական գոյժողությունների ընթացքում նույնիսկ, ինչպես Արևմուտքում, այնպես նաև Արևելքում, թուրքական օկուպացիոն իշխանությունները նվաճված երկրների ընդհանուր մարդահամարին և հարկատու բնակչության ցուցակագրությանը զուգահեռ, շտապում էին կարգավորել նաև ներքին և արտաքին առևտուրը և ապահովել վաճառականական ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: 1729 թ., երբ օսմանյան բանակը ներխուժելով Անդրկովկաս ու Ատրպատական ռազմակալման էր ենթարկել Արևելք-Արևմուտք առևտրական գլխավոր մայրուղու վրա գտնվող վաճառաչահ քաղաքները, Թավրիզի գլխավորական նահանգապետը շանքեր էր ներդնում վերականգնելու Իրանից արտահանվող մետաքսի գեպի Թուրքիա և Եվրոպա առաքումը: Հատուկ շրջաբերական-հրամանով նա տեղեկացնում էր երկրի վաճառականներին, որ նրանց ներկայացուցիչների հետ փոխադարձ պայմանավորվածությամբ մետաքսի բեռներից գանձվող մաքսի նոր սակեր են նշանակվել և սահմանվել է, որ մետաքսի առևտրով երթևեկողները մաքս վճարեն միայն Արդաբիլի և Թավրիզի մաքսատներում⁶:

³ M. Guboglu, Paleografia și diplomatica Turco-osmana, Editura Academiei Republicii Populare Romine, 1958, doc. 3.

⁴ Նույն տեղում, վավ. 15, 28, 89, 103, 115, 186 և այլն:

⁵ Ղ. Ինճիճյան, Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1804, էջ 45—49:

⁶ Հ. Փափագյան, Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969:

Ապրանքափոխանակությունը հարևան և հեռավոր, արևելյան և եվրոպական երկրների հետ, իրագործվում էր տերություն սահմաններում բնակվող, նվաճված, մեծ մասամբ քրիստոնյա վաճառականության միջոցով, որոնց համար սահմանված էին հատուկ օրենքներ և տրված՝ որոշակի իրավունքներ: Կար առևտրի առանձին միևնույնություն (Քիջարեթ նեղարեթի), որը վերահսկում էր այդ օրենքների կիրառմանը և հսկում, որ վաճառականների առևտրական գործունեությունը ընթանա այլ երկրների հետ կնքված առևտրական պայմանագրերի սահմաններում:

Սակայն պետության բնույթից բխող անհանդուրժողական վերաբերմունքը այլակրոն, հատկապես օտարերկրացի քրիստոնյաների նկատմամբ և դրա հետևանքով ստեղծված անապահով վիճակը դժվարացնում էր երկրի համար կենսական նշանակություն ունեցող ապրանքափոխանակությունը եվրոպական երկրների հետ: Խոսելով եվրոպական երկրների, Քուրքիայում ձեռք բերած «կապիտուլացիոն» իրավունքների մասին, 1854 թ. Կ. Մարքսը գրում էր. «Քանի որ Ղուրանը յուրաքանչյուր օտարերկրացու թշնամի է հայտարարում ոչ ոք չի համարձակվի գտնվել մուսուլմանական երկրում, առանց նախագուշական միջոցներ ձեռք առնելու: Այդ պատճառով, առաջին եվրոպացի վաճառականները, որոնք համարձակություն են ունեցել առևտրական հարաբերությունների մեջ մտնելու այդպիսի մի ժողովրդի հետ, փորձել են նախ և առաջ անձամբ իրենց ապահովել բացառիկ պայմաններով և առանձնաշնորհումներով, որոնք, սակայն, հետագայում տարածվել են նրանց ողջ ազգի վրա: Այսպիսին է կապիտուլացիաների ծագումը»⁷:

Առաջին միջպետական համաձայնագիրը, որտեղ դիվանագիտորեն ձևակերպված են այլակրոն օտարերկրացիների վաճառականությանը տրվող արտերկրային (էքստերիտորիալ) առանձնաշնորհումները, դա 1535 թ. սուլթան Սուլեյման Կանունիի և Ֆրանսիայի կայսր Ֆրանսուա I-ի միջև կնքված պայմանագիրն է, որի օրինակով էլ հետագայում հար և նման պայմանագրեր կնքվեցին եվրոպական մյուս տերությունների հետ⁸:

Եվրոպացի վաճառականության արտոնյալ վիճակը զգալի չափով դժվարացնում էր տեղական, հատկապես հայ վաճառականության գործը: Ինքնին հասկանալի է, որ առևտրում անխուսափելի մրցակցության մեջ, այս պարագաներում նրանք առավել անբարենպաստ պայմաններում էին գտնվում և պարզ է, որ պիտի ուղիներ որոնեին դուրս գալու անիրավահավասար վիճակից և ձեռք բերելու որոշ իրավունքներ, մրցակցությանը դիմանալու և արդյունավետ առևտրական գործունեություն ծավալելու համար:

Օսմանյան կայսրության արտաքին առևտրում հայ վաճառականության գրաված տեղի և իրավական վիճակի մասին ուշադրավ մանրամասներ են պարունակում նշանավոր Կյուլպենկյան առևտրական տան նախնիների 1847 թ. սուլթան Արդ-ուլ-Մեջիդից ստացած երկու արտոնագիր-հրովարտակաները: Այդ հրովարտականների (բերաթ, ֆերման) վավերական պատճենները պահպանվում են Կյուլպենկյան հաստատության կիսարոնի կենտրոնում, որոնց լուսանկարները հրապարակման իրավունքով տրամադրել է մեզ հաստատության տնօրեն Ռ. Կյուլպենկյանը⁹:

7 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 10, М., 1958, стр. 168.

8 История дипломатии, т. 1. М. 1959, стр. 258.

9 Ցավոք, այդ լուսանկարները հաջող չեն Ուտի, կից հրապարակվող հրովարտական

Պատճենները հանված են Կ. Պոլսի Մահմուդ-փաշա թաղամասի Շարի ատյանում (մահքամե), պահպանելով բնագրի ձևն ու շափը, ոսկեզօծված և դարդանկարված են բնագրերին համանման և հաստատված՝ «Իսկականին համապատասխան է» մակագրությամբ և գրասենյակի պետ, գործավար Սելիդ Իսմայիլի կնիքով: Ընդօրինակությունը կատարված է, նման բերաթներին բնորոշ, գեղեցիկ «ոիկ'ա» գրությամբ: Վավերագրերի ընդհանուր վիճակը գոհացուցիչ է, վնասված են միայն առաջին հրովարտակի 40 և 41-րդ տողերը:

Բերաթները թեև տրված են Կեսարիայում հիմնված Կյուլպենկյան առևտրական տան արտոնատեր Կուլպենկի որդի Գուլաբին և որպես լիազոր (վեքիլ) հանդես եկող եղբորը՝ Գալուստին, սակայն դրանց մեջ որոշակիորեն ուրվագծված են Օսմանյան Թուրքիայում բնավկվող հայ վաճառականության իրավունքները:

Նախապես նշելով սուլթանի հատուկ ուշադրությունը առևտրի ու վաճառականական դասի նկատմամբ, բերաթում ասված է, որ «անհրաժեշտ է բարձր տերություն զիմմի ռայաթների առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այսպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը»:

Հրովարտակներից պարզ երևում է, որ եվրոպական երկրների հետ առևտուր անող զիմմի վաճառականության իրավունքները սահմանելիս, նկատի են առնված այդ երկրների քաղաքացիներ հանդիսացող վաճառականներին Թուրքիայի սահմաններում շնորհված արտոնությունները, «Որքանով որ վերոգրյալ մարդկանց (զիմմի վաճառականներ) առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթեմին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է»:

Դժվար է ասել, թե այս արտոնությունները ո՞ր ժամանակից և ո՞ր սուլթանի օրոք են շնորհվել եվրոպական երկրների հետ առևտուր անող հայ վաճառականներին: Գիտենք միայն, որ յուրաքանչյուր նոր սուլթանի օրոք վերանորոգվում էին նախորդի կողմից տրված բերաթները: Ինչպես որ այս բերաթները ևս տրված են հիշք. 1249 (1833) թ., նախորդ սուլթան Մահմուդ II-ի բերաթի հիման վրա, և առևտրի մինիստրության կողմից ստուգվելուց (յոքլամա) հետո, նախորդ բերաթը վերցվել ու անվավեր (բատալ) է դարձվել: Ուրեմն միշտ ուժի մեջ է եղել գահակալ սուլթանի բերաթը, իսկ նախորդինը որպես հիմք վերցվել և պահպանվել է արքունի դիվանում: Հետևաբար պարզ չէ նույնիսկ, թե Կյուլպենկյաններին տրվող նմանատիպ առաջին բերաթը երբ և որ սուլթանի կողմից է հրապարակված:

Եվրոպական երկրների քաղաքացիները բերաթներում անվանվում են Մուսթեմին բեռլումանլար, որ բառացի նշանկում է «աման» կամ ապահովություն վայելող թարգմանիչներ: Ծոսքը վերաբերում է արքունի ծառայության մեջ գտնվող եվրոպացի թարգմանիչներին, որոնք օժտված էին դիվանադիտական մարմիններին հատուկ արտերկրային իրավունքներով: «Մուսթեմին թեռլումանլար» տերմինի կիրառումը առևտրականներին տրվող արտոնագրերում, գալիս է հաստատելու, որ կապիտուլացիոն արտոնությունն-

հայերեն թարգմանությանը առընթեր տալիս ենք միայն թուրքերեն վերձանված բնագիրն, առանց լուսանկարների:

րը, ըստ էության նույն այդ իրավունքներն էին բովանդակում: Հետևաբար հենց այդ իրավունքներից էր, որ պիտի օգտվեին Առևտրի մինիստրությունում գրանցված հայ վաճառականները, որոնք անվանված են «ղեֆթերլու թաշիր»:

Այսպես, օրինակ, ազատ երթևեկության մասին, բերաթում ասված է «օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով, համբողջության հրամանագրեր տրվեն» և ապա մանրամասնելով նշված է. «Ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ միջամտություն և ստնձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն և ստնձգություն չպետք է լինի»: Այնուհետև յուրաքանչյուր արտոնության մասին նշելիս միշտ վկայակոչվում է մուսթե՛միներին տրված արտոնությունները:

Բերաթներում ուշագրավ մանրամասնություններ կան ներմուծվող և արտահանվող ապրանքներից դանձվող մաքսերի տարրեր սակերի և իրացման կարգի, գլմմիներից դանձվող գլխահարկի կամ ջիզյաչի հատուցման ձևերի, առևտրական բազմաբնույթ վեճերի քննության համար սահմանված օրենքների, վախճանված վաճառականների ունեցվածքի անօրինման կամ ժառանգության, ինչպես նաև վաճառականական դասի համբարական կազմակերպությունների ու ավազների (կոշարեկի) քնտրության կարգի վերաբերյալ: Խստագույն հրամանով, բոլոր հրահանգների ճշգրիտ կիրառությանը հետևելու պարտավորությունը գրվում է պետական բարձրաստիճան պաշտոնություն՝ վալիների, հաքիմների, դարիթների և այլոց վրա, զգուշացնելով, որ բերաթ ունեցող վաճառականների նկատմամբ «նոր հաստատված օրենքներին հակասող ստնձգություններ թույլ չտան, նեղություն չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանության պահանջով, բոլոր դեպքերում հավանավորեն և պաշտպանություն ցույց տան»: Միաժամանակ շեշտված է նաև, որ «նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերողրյալ վաճառականներին և նրանցից յուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում: Իսկ նրանց զավակների, ազգականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մյուս ռայաթների նկատմամբ»:

Ստորև հրատարակվող հրովարտակներից առաջինը սուլթան Աբդուլ-Մեջիդի բերաթն է տրված Կուլբենկի որդի Գուլարիին, իսկ երկրորդը նույն բերաթի հիման վրա, Կեսարիո Շարի նաիրին ուղղված ֆիրմանն է (հրաման), որով հայտնում է ի գիտություն, որ Կուլբենկի որդի Գալուսար ևս, սահմանված կարգով ջիզյա վճարելուց հետո, որպես Գուլարիի երկու գործակատարներից մեկը, օժտված է նույնպիսի արտոնություններով:

I

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Ընդօրինակվեց բարձրագահ մալրաբաղարի Մահմուդ-փաշայի առյանի (մահբամա), լիազոր-փոխարինող, նվաստագույն ծառա Սելիդ-Իսմայիլ Տահիմի կողմից:

Տերն է անօրինում Սելիդ-Իսմայիլ ֆահիմի գործերը:

ԲԱՐՉՐԱՇՈՒՔ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Օսմանյան բարերախո գահի արքայական գերերշանիկ գահակալությանը արժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության ընթացիկ օրենքներին համապատասխան, ձեռնարկեցինք հրովարտականների ու հրամանագրերի նորոգմանը և տիրոջ օգնությամբ ձեռնամուխ եղանք երկրի բարեկարգմանն ու առևտրի ծավալմանը, ուշադրության առնելով հատկապես վաճառականների և ռայաթների վիճակի կարգավորումը:

Այս տեսակետից հարկ համարվեց, գործի ղեկավարման կատարելությանն ու արդյունավետությանը նախանձախնդիր և պետությունների օրենքների և բոլոր ազգերի միջև ընդունված կարգի համաձայն, նույն օրենքներին ենթարկվելով, թե ցամաքային և թե ծովային ուղիներով Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտուրով զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և ընկերակցելու ցանկություն ունեցող մեր բարձր տերության զիմմի ռայաթների առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այդպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը:

Արքայական պետության համոզմամբ, այս գործի անհրաժեշտ նախապայմաններից է հիշյալ վաճառականների վերաբերյալ, արքունական հրամանագրով հաստատված կարգի համաձայն, իրենց կողմից ընտրված վստահելի մարդկանցից բարձրագույն հրամանով, երկու հոգու որպես լիազոր նշանակումը:

Այս լիազորները ամեն տարի կարող են փոխվել և նրանց տեղը, կրկին բոլորի ներկայությամբ ու ընտրությամբ, ուրիշներ կարող են նշանակվել:

Որքանով որ վերոգրյալ մարդկանց առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթե՛մին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է:

Եվ քանի որ վերոհիշյալ վաճառականներին և սրանց երկուական գործակատարներին առևտրի վերը նշված նախապայմանների և այլ իրավունքների մասին այլևայլ բարձր հրովարտական և հրամանագրեր են տրվում, նույն հիմունքներով մեր բարձր տերության ռայաթներից, եվրոպական երկրների հետ առևտրով զբաղվող Կեսարիո բնակիչ և արքայական բարձր հրովարտակ ստացող Կուլբենկի որդի Գուլարի կողմով վաճառականին 1249 թվականի ռաբի II ամին (1833 թ. սեպտ. 11—14) տրված բարձր հրովարտակը նորոգված լինելու պատճառով և Առևտրի մինիստրության կողմից կրկին ստուգվուց հետո վերոհիշյալ հին հրովարտակը վերցված և անվավեր դարձված լինելու պատճառով, սույն արքայական հրովարտակը շնորհեցի:

Միաժամանակ հրամանագրեցի, որ հիշյալ Կուլբենկի որդի Գուլարին այսուհետ ևս ճանաչվի որպես զրանցված (ղեֆթերու) վաճառական և եթե ընդունված կարգով նշված եվրոպական վաճառականներից մեկը կամ նրանց գործակատարն ու պաշտոնյան պետք ունենան առևտրական նպատակներով որևէ տեղ գնալ, վերոգրյալ լիազորներից կնքյալ խնդրագրեր ներկայացնելու դեպքում, օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով, ճամ-

բորոգության հրամանագրեր տրվեն, և ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի և հագուստի (ուտելիք և հագնելիք) նկատմամբ միջամտություն և ոտնձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն չպետք է լինի:

Հրովարտակ ունեցող վաճառականների իրենց եղած վայրում, այլևայլ հրովարտակներով նրանց հատկացված երկուական գործակատարները ևս թող նույն առանձնաշնորհումներին արժանի համարվեն: Այդ երկու գործակատարներից մեկը անհրաժեշտության դեպքում իրավունք ունի Իզմիրում, կամ առևտրական կենտրոն հանդիսացող այլ վայրում հաստատվելու:

Հրովարտակ ստացողներից որևէ մեկը եթե ստորագրված և վճարման ենթակա մուրհակի համաձայն կամ լիազորների ու համքարության (էսնաֆ) անդամների բանավոր վկայությամբ հաստատված պահանջ ունենա, ձեռքում եղած մուրհակը դատավորին (հաբիմին) ցույց տալուց և ապացուցելուց հետո, պահանջված գումարը ենթակա է գանձման և հարչուրին երկու տոկոսից ավելի տուրք (ռեսմ) չպետք է պահանջվի:

Հիշյալ վաճառականներից մեկը, լինի դա մուսուլմաններից, թե ուլաթներից, իր իրավունքները պաշտպանելու համար դատարան կամ բարձրագույն դուռը ուղարկելու նպատակով...^{*}

Հաստատված վաճառականներն ու նրանց գործակալները առևտրի մինիստրության կողմից վերակացունեն...^{**} կողմից վերակացու շնշանակվի: Իսկ եթե հարկ լինի նրանց կալանքի տակ վերցնել, հիշյալ մինիստրության հանձնարարությամբ միայն կարելի է այդ անել:

Որքանով որ սրանք մեծ մասամբ եվրոպական ապրանքների առևտրով են զբաղվում, թե՛ օտարների, թե՛ մահմեդականների կամ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ վեճ ու տարաձայնություն առաջանալու դեպքում, հիշյալ մինիստրության համաձայնությամբ, վաճառականների և նրանց կողմից ընտրված, ճանաչված, վստահելի ու արժանահավատ մարդկանց ներկաչացմամբ, վաճառականաց օրենքների համաձայն, առևտրական սանը գործին վերահասու լինեն ու վեճը հարթեն: Իսկ եթե հարկ լինի դիմել սրբազան Շարի-ին, այլ վայրում հարցը չքննեն, միայն շեյխ-ուլ-իսլամի ներկայությամբ, Շարի օրենքների համաձայն գործին նայեն և հարցը լուծեն:

Մրանից բացի, այդ վաճառականներին վերաբերող այլ կարգի գործերը ևս առևտրական փաստաթղթերում, հատկապես հաշվապահական մատյաններում թող մուտք արվի, և քանի որ դրանք հիշյալ մինիստրությանը վերաբերող գործեր են, որպիսությունը վերոգրյալ ձևով և հիշյալ վաճառականների ընդհանուր վիճակը հաշվի առնելով, նույն մինիստրության կողմից, ըստ ժամանակի պահանջների վերանայվի, և այդ ձևով միայն պատահող գործերը, մինիստրության վերահասուությամբ նայվի և կարգադրվի:

Ինչպես որ պայմանագրում նշված կարգով 4000 ակչիից ավելի գումարների շուրջ եղած վեճերը կարգադրված է լսել միայն մեկ երջանիկ սեմում, այնպես նաև այս վաճառականների օտարների հետ ունեցած վեճերը նույն ձևով թող ներկայացվեն երջանիկ սեմին: Ի նկատի պետք է ունենալ, որ մեք

* Երեք տող չնշված է:

** Երեք բառ չնշված է:

բարձր տիրութեան բերաթափոր ուսյաթների և այլ պետութեան վաճառականների միջև վեճեր ծագելու դեպքում, պետք է հաշվի առնել երկու պետութեանների միջև կնքված պայմանագրերում նշված պայմանները և դրանց հակասող ոչինչ թույլ չտալ:

Այս դասի մարդկանց, նման իրավունքներ տալու նպատակն է դուրսութեաններ ստեղծել: Ուստի այդ վաճառականներն միջոցով օտար երկրներից մեր ապահով երկրները բերվող ապրանքներից և իրերից, Անգլիայի, Ֆրանսիայի և որոշ այլ բարեկամ պետութեանների հետ վերջերս կնքված առևտրական պայմանագրերի և սահմանված սակագների համաձայն, ներմուծվող ապրանքներից, որպես մուտքի (ամադիյե) հարկ հարյուրին 3%, իսկ ելքի (ռաֆթիյա) թամդայի և այլ տուրքերի դիմաց, հավելյալ, հարյուրին 2% մաքսատուրք պետք է վճարել: Իսկ մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքները, իրերն ու մթերքները արտահանելիս, տեղում վաճառողի տասնորդից և պահանջվող թամդայի տուրքից բացի, ըստ վերոհիշյալ սակագնի, նավահանգստում ապրանքն իջեցնելիս, հարյուրին 8% մուտքի տուրք, իսկ շրջանները տանելու համար հարյուրին 3% ելքի տուրք թող վերցնեն: Մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքների, երկրի ներսում կատարվող առևտրի ժամանակ նմանապես, բոլոր, տեսակի ապրանքներից, իրերից և մթերքներից գանձվող տուրքերը ևս սահմանված կարգով առանց հարկադրանքի և խախտումների պետք է հատուցվի:

Երբ հիշյալ վաճառականները, նշված կարգով, պահանջվող մաքսատուրքը վճարած և վճարումը հաստատող անցաթուղթ ձեռք բերած կլինեն, նրանցից կրկին հավելյալ մաքս չպահանջեն և գանձումներ չկատարեն, և եթե մաքսատան լիազորները հավելյալ կամ կրկնակի մաքսի անվան տակ դրամ գանձած լինեն, անմիջապես ետ վերադարձնեն:

Վալիները, հաքիմները և այլ պաշտոնյաներն ու զարիթները հիշյալ վաճառականների նկատմամբ սրբազան Շարիին հակառակ և նոր հաստատված օրենքներին հակասող ոտնձգութեաններ թույլ չտան և նրանց նեղութեան չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանութեան պահանջով բոլոր դեպքերում հովանավորեն և պաշտպանութեան ցույց տան:

Բերաթ ունեցող վաճառականների և նրանց գործակատարների նահանգային գործերին և ավագութեան (կոշաբաշիլք) հարցերին ոչ մի դեպքում չմիջամտեն, նախապես եղած արտոնութեաններով և կարգով թող լինի: Հակառակը չի թույլատրվում: Միայն եթե որոշ երկրներում բերաթավորներից գատ, լավատեղյակ անձանց մեջ ավագութեան պաշտոնին հարմար մարդ չլինի և կարիք լինի այդ վիլայեթի ուսյաթներին ղեկավարելու և գործերին հասնելու համար, բերաթավոր վաճառականներից ավագ նշանակել, և եթե այդ երկրում գտնվող բոլոր ուսյաթները ցանկանան, այդպիսի վայրում կարելի է միայն նրանց թույլատրել ավագութեան պաշտոնը վարել:

Սակայն ավագութեան պաշտոնը վարող անձնավորութեանը, այլևայլ առանձնահատկութեաններից զերծ լինելու պատճառով, ուսյաթների նկատմամբ չհեղափոխի օրենսդրութեանը հակառակ, որևէ բնութեան կամ անվայել արարք թույլ չտա, իսկ եթե թույլ տա, նրա նկատմամբ պետք է գործադրել պատժական օրենսդրությամբ նախատեսված պատիժները:

Վերոհիշյալ վաճառականներից եթե մահացողներ լինեն, նրանց խառնութեանը, գրասենյակները և այլ ստացվածքները Շարիից և հիշյալ մինիս-

տրրությունից բացի ոչ ոք իրավունք չունի կնքել: Նրանց թողած անշարժ կաշքն ու կալվածները և այլ մեծ կամ փոքր իրերն ու կանխիկ գրամբ, եթե ժառանգներ կան, պետության (միրի) կողմից միջամտության, կնքման և գրավման ենթակա չեն: Եթե տղա կամ աղջիկ անշափահաս ժառանգներ կան, օրենքով հաշվառման ենթարկվածներից հավելյալ տուրք պահանջելով նեղություն չպատճառեն, այլ ըստ սրբազան Շարի օրենքների, հիշյալ մինիստրության իմացությամբ, բաժանեն ժառանգների միջև: Իսկ անշափահաս կամ բացակա որդիներ և դուստրեր չլինելու դեպքում, բաժանման շենթարկվող ժառանգությունը ստիպմամբ կամ խնդրանքով գրանցման շենթարկեն:

Ջիղջայի առավելագույն շափր 12 դուրուշ է, որ 8 դուրուշ միրի եկամտախ հավելյալ գումարով դառնում է 20 դուրուշ: Բերաթ ունենալու մասին փաստաթուղթ ներկայացնելուց հետո 1232 (1817), 1240 (1824—1825) և 1243 (1827—1828) թվականների հավելումներից բացի, այդ 20 դուրուշ ջիղջան 1250 (1834—1835) թ. մուհառամ ամսից սկսած, կատարված ընդհանուր նոր հավելումներով մեկտեղ, մեր արքայական բարձր կամքով հաստատված օրենքներին համապատասխան, ամեն տարվա մուհառամ ամսի սկզբին իրենց տեղում հատուցեն:

Իսկ մեր բարձր հրամանագրերով գործակատար եղողները, կանոնադրության պայմաններին համապատասխան, վճարելիք միջին շափի շորս դուրուշ ջիղջան [12]32(1817), [12]40 (1824—1825) և [12]43 (1827—1828) թվականների հավելյալ գումարից բացի, նորերս կատարված հավելումի հետ միասին, թող ամեն տարի որոշված ժամկետին հատուցեն:

Նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերողրյալ վաճառականներին և նրանցից յուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում, իսկ նրանց դավալանների, ազգականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մեր մյուս ուսյաթների նկատմամբ:

Բերաթներ և հրամանագրեր ձեռք բերած վաճառականներն իրենց հերթին պետք է մեր բարձր պետության ուսյաթը լինելու արժեքը հասկանան և իրենց պատիվն ու հարգանքը բարձր պահեն և ուսյաթների սովորույթին հակասող արարմունք թույլ չտան և ջանադիր լինեն իրենց շնորհված այս օժանդակությունն ու ողորմածությունը, հանապաղ փառարանությամբ և մեր թագավորական փառապանծ տերությանը երկար կյանք ու արեշատություն մաղթելով հատուցելու:

Թող այսպես իմանան և վստահեն սրբազան գրությանը:

Գրվեց 1263 թվականի ջումադի II ամսի սկզբներին (1847 թ. մայիս 17—22), ապահով Կոստանդնուպոլսում:

II

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Ընդօրինակվեց բարձրագահ մայրաքաղաքի Մահմուդ-փաշայի ատյանի (մահրամա) լիազոր փոխարինող, նվաստագույն ծառա Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի կողմից:

Տերն է տնօրինում Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի գործերը

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԻ ՊԱՏՃԵՆԸ

Կեսարիո Շարի վեհագույն տեղակալ (նախ) մեզիանա ...ին,--թող ա-
վելանա նրա իմացությունը:

Արքայական բարձր հրովարտակն ստանալիս թող հայտնի լինի Ձեզ, որ
Օսմանյան բարեբախտ գահի արքայական գերերջանիկ գահակալությունը ար-
ժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության բնթացիկ օրենքներին համա-
պատասխան, ձեռնարկեցինք հրովարտակների և հրամանագրերի նորոգմանը,
նպատակ ունենալով Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով
զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և բնկերակցելու ցան-
կություն ունեցող, մեր բարձր տերության սայաթների առևտրական գործու-
նեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել:

Ըստ այդմ կարգադրվեց, որպեսզի օտար (մուսթեմին) թարգմանիչների
և նրանց գործակատարների նկատմամբ գործադրվող առանձնաշնորհումների,
սպահնությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, առանց խտրու-
թյան, ամբողջությամբ, սրանց նկատմամբ ևս կիրառվի: Դրա համար էլ Եվ-
րոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով զբաղվող վաճառ-
ականներին և նրանց գործակատարներին առանձին-առանձին հրովարտակներ:
ու հրամանագրեր շնորհվեցին:

Այս ուրույն կարգից ելնելով, դրանցված (դեֆթերլու) վաճառականներից,
բնդարձակ և մանրամասն վաճառականական հրովարտակի արժանացած,
Կեսարիո բնակիչ, Կուլբենկի որդի Գուլարի անունով վաճառականի երկու
գործակատարներից, Կուլբենկի որդի Գալուստ անունով գործակատարի հո-
վանավորության և պաշտպանության մասին հրովարտակում նշված պայման-
ներով, նախապես ստացած բարձր հրամանագիրը նորոգելու առնչությամբ,
առևտրի մինիստրության կողմից ստուգում է կատարված և նշված է Արքունի
դիվանում պահվող հրովարտակի վերաբերյալ: Ուստի ելնելով այն բանից,
որ վերոգրյալ վաճառականը Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ
առևտուր անող վաճառական է, նրան ևս սույն բարեբախտ տարվա շումարի II
ամսից, մեր հրովարտակը տրվելու մասին դրվել և նշվել է և վերոգրյալ գոր-
ծակատարից վերցվել է այդ հին հրամանը, անվավեր դարձվել և սպա սույն
սրբազան հրամանն է նրան շնորհվել:

Այժմ արգեն վերոգրյալ վաճառականի երկու գործակատարներից, վերո-
գրյալ Կուլբենկի որդի Գալուստը, առաջվա պես կարող է նրա մոտ ծառայել
և օրինական պայմաններով, հրամանագիր ունեցող գործակատարներից պա-
հանջվող միջին շափի ջիզան, բնդհանուր կարգադրությամբ կատարված նոր
հավելումով և վերջերս հաստատված հիմունքներով, 1250 թ. մուհառամ ամ-
սից սկսած (1834 թ. մայիսի 10-հունիս 9), ամեն տարի, նշված ժամկետին
որոշված վայրում հատուցել, որից հետո այլևս նրանից վերստին ջիզյա չպետք
է պահանջվի և այլ ուսնձգություններ չպիտի թույլատրվի կամ նեղություն
տրվի: Այլ հարկ եղած դեպքում պետք է նրան հովանավորել ու պաշտպանու-
թյուն ցույց տալ:

Դու որ տեղի տեղակալն ևս (նախ), տեղեկանալով այս մասին, վերը
բացատրված ձևով պետք է վարվես և խուսափես բնթացիկ օրենքներին և պայ-

մաններին ու մեր այս խիստ կարգադրութեանը հակասող ընթացքից: Այսպէս իմացած եղիր և վստահիր սույն սրբազան գրութեանը:

Գրվեց 1263 թ. ջումադի II ամսի սկզբներին (1847 թ. մայիս 17—22) ապահով Կոստանդնուպոլսում:

عبد العالی

بسم الله الرحمن الرحيم، الخلاق العلی محکم محمود پادشا

المولیک الخلاق سید اسماعیل سعید

- - -

ر - مصلحت امور سید اسماعیل سعید

بر ا - عالیشان نثری

بسم الله الرحمن الرحيم، الخلاق العلی محکم محمود پادشا
 سیدی قاعد، سرعیت سلطنت سعید، اورره عمومأ تحدید سروات، احکام اولیئمه
 اولیئو، و ناوری توفیق ناری ایک اعمار، مملکت، بسیم سعید، مطلقاً نظام
 حال، نخار، و رعیت خصوصاً سعید سعید و نظارت سون سعید، اسماعیل سعید اسباب
 روضاتک استعمار، استکماله منوفا، و موقوف، و موقوف، و فواید دون و رسوم و آئین
 ملکی بالاعتدال و نظام، اورره مکتول و مصوغ اولیئو سعید سعید سعید سعید
 اورویا، و عم و هندستان، نخار، مکتول اولیئو، و ملک نخار، اشراک حواض و
 آورسند، سولمان دولت علیه، اهل ذمت، رعایای نخار، سعید سعید سعید سعید
 احوال اولیئو، انواع فواید و منافی مستلزم اولیئو سعید سعید سعید سعید
 تصور و حسن مطالعه ایله نخار مرفوعه حقلرند، نا اراده سعید تأسیس ار لئان
 نظام اقتصادیه کندولرینک معنر و منتخبلرین سافرمان عالی ایکی ندر وکیل
 نص و تعمیر لئوری و سهرسه اشو وکیلر تبدیل اولیئو برلریه سعید سعید
 سک معرفت و انتخابیه اخرلری سعید اولیئو، طائف مرفوعه سک نخار نلری
 اورویا دیارلریه منصر اولدیعدن مستأمر نخار و خدمتکارلری سک نایبل
 اولدیئر ایسیار، امانیت و مساعد، و رعایه سولرک، ایکیسر نلر خدمتکار
 لرینک حقلرند سعید سعید سعید سعید سعید سعید سعید سعید سعید
 و ایکیسر نلر خدمتکارلریه ذکر ای نخار، سر ایطو، و سرو سعید سعید سعید
 سیامیه سعید سعید سروات و اوامر علیه و برلمکد، ایدو سک سعید، اولیئو سعید
 رعایای دولت علیه مدن اولیئو اورویا تجارینک مکتول سولمان سعید سعید

1. Բնական և արհեստական խարտիչ և խարտիչի արտադրությունը և վաճառքը
 2. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի ընդհանուր կանոնները
 3. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի հարկերը
 4. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցությունը
 5. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորումը
 6. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորման հարկերը
 7. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորման հարկերի մասին օրենսդրությունը
 8. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորման հարկերի մասին օրենսդրության կարգավորումը
 9. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորման հարկերի մասին օրենսդրության կարգավորման հարկերի մասին օրենսդրությունը
 10. Բնական և արհեստական խարտիչի արտադրության և վաճառքի մրցակցության կարգավորման հարկերի մասին օրենսդրության կարգավորման հարկերի մասին օրենսդրությունը

خصوصاته وحباً من الوجوه مداخلة ايلميه لير و بوجوه افدم اسباب امتياز و نظام
 اولمغه سروفنده، خلاصی تحوير اولميه شو قدر كه اگر بعضی مملكتده سراتلو
 اولاندى ماندا ارباب بغيردن فوجه مانيله ثابان كمره بولمسونك رعایای ولایتك
 حسن اداره و رؤیت امورات بچون سروات اصحابی اولان نچاردن سرتك فوجه مانی
 اولسی ضرورنی ابحاث ایدرکن اول مملكتده اولان رعایانك عموماً اسندعالری
 وقوعولورایسه فقط ار مقوله محلده سونلرك فوجه مانيله رؤیت ایلمه حائز
 اولحق شخص نخی اشو امتیازاته نیابت (۴) مسمی مانیردن سرت اولمسی
 سبيله رعایا حنده خلاف تنظیمات حربه سرگونه تعدی و اطوار ناشاسته
 وحباً من الوجوه تصدی ایلمه و ایدرایسه سرحوت فایدهمانه حرا نادیمات یا
 لازمه سی احرا قلنه و نچار مرفومه دن فوت اولنلرك دكان و اوطه و سائر املاكلك
 جانب شرعدن شفه و نظارت مشارالیه طرفندن شفه صهبر اولمعیوت املاك مفروك
 و املاك و غفار و سائر حروری و كللی اشیا و نفودلریسه درته لری موجود اولدغه
 جانب میریدن تعرض و صهبر و صط اولمیه و صعیر و صعیره لرك بولموت شرعاً
 تحریری لازم گلنلردن ریاده رسم طلبيله تصبیق بیدر لمعیوت سرفقتضای شرعتریف
 سیر الورت نظارت مشارالیه معرفتيله تفصیم ایتريله و صعیر و صعیره و غائب
 و غائبه سی اولمعیوت سیر الورت تفصیمی مراد اولمعیان تركه نخی سر درلو (۱)
 حسر و اسرام ایله تحریر ایدر لمیه و اعلى حربه اون ایكی عروش ایكن صعباً
 للمیری سكر عروش صعبه اصحاب سروات سندی ویره حككه بگر میشر عروش حربه سی
 ایكیورا ونور ایكی و فوی و فوی اوج نار یخلری صعبه سندن شفه اللی سده سی
 محرمندن اعتناراً عمومی واقع اولان صم حدید ایله معاً و نوحراً اراده سبيله
 شاهانه مله تأسیر اولمان اصوله نظیفاً سهر سده عره محرمده محلده نسلیم
 ایلیه لیر و اوا سر علیه مله خدمتكار اولنلر نخی شروط نظاملری مقتصاسحه
 درت عروش صعباً ویره گلدكلری اوسط حربه سی كدلك اونورا ایكی و فوی و فوی
 اوج سده لری صعبه سندن ماندا بیگی اولان صم ایله براسر سهر سده وقت و
 زمانده تأدیبه ایدر لیر و اشو امتیارات اسحق نچار مرفومه و ایكیشر ندر
 خدمتكارلرینك كندو حقلریسه محصور اولموت اولان و متعلقانلر ویرنده امر
 بالیشانم اولمعیان خدمتكارلری حقلرنده سائر رعایای دولت علیه نصل
 معامله اولنمنده ایسه اولوجهله اجرا اولنه و یدلریسه سروات و اوا امر عریفم

خدمتکاری شروط سرائی موصیحه حمایت و صیانت اولیغو ناسند. مقدماً ما در اولان امر عالی تحدید اولغوق اورره بحار و نظاری طرفنددر سولفما اولغوق و دیوان حمایتی سنده. خطوط نشان خدمت مراعص اولغوقنددر تاجر مرفوم اورویا د عجم و هندستان بحار بندر اولغوق اورره اشغول سنا سرک اولانل حمادی الآخره سندن خدمت تحدیداً سرات عالیباشم ویرلغوق اولدیغی مضور و مقید سولغوق اولغوق خدمتکار مرفومک د حی بدنده اولان عقیقو امر عالی احد و بطالب حفظ ایله تحدیداً اشغول امر شریفم اعطا اولغوقنددر اسدی تاجر مرفومک اسکی. سرفخدمتکار لرمدن مرفوم فالوس ولد قول سنا کما کار کند سنا خدمتکار اولغوق شرط نظاملرک موصیحه اولغوق اعصار یله فرما یلو خدمتکار لرک ویره گلد کوری جریه بی الی سنا سنی مرفومدن اعتماراً عمومی واقع اولان صه حدیدانک سنا و موخرراً أسیر فلان اصوله تنظیماً سهر سنا وقت و زمانه. مرفوم بحی محلیه تسلیم ایلدیکه سکر حریه طلبی و سائر وجهک معدن و رحیده اسندر لمیور سرف موجب شروط حمایت و صیانت اولغوق لارمدن ایله دکی سرک نائب عمومی السیه سنا معلومک اولغوقنددر سرف وجه مشروح عمل و حرکت و معایر شروط نظام حالات مرفومدن محاسبه ایلیه سرف شوپله سیک سرف علامه شریفه اعتماد قیله سنا .
تحریراً فی اوائل شهر حمادی الآخره سنه ثلث سنه و ماہین و الف
حرره قسطنطینیه

А. Д. ПАПАЗЯН

ЛИЦЕНЗИИ, ПОЛУЧЕННЫЕ В 1847 Г. ОТ СУЛТАНА АБД-УЛЬ-МЕДЖИДА СЫНОВЬЯМИ ГЮЛЬБЕНКА ГУЛАБИЕМ И ГАЛУСТОМ

(Резюме)

Публикуемые здесь две лицензии—грамоты, полученные в 1847 г. жившими в Кесарии предками известного торгового дома Гюльбенкян от султана Абд-уль-Меджида, содержат заслуживающие внимания сведения о правовом положении и месте, которое занимало армянское купечество во внешней торговле Османской империи. Их заверенные копии хранятся в центре того же фонда, находящегося в Лиссабоне.

Дешифровка турецких оригиналов грамот осуществлена на основании любезно предоставленных директором фонда Р. Гюльбенкяном не очень удачных фотоснимков. Наряду с оригиналом вниманию специалистов предоставляется полный научный армянский перевод, сохраняющий формулировки и стиль, присущие османской дипломатике.

В кратком введении сделана попытка очертить источниковедческое

значение публикуемых документов, составленных по примеру экстерриториальных прав, даваемых европейским купцам.

Документы дают возможность изучить многие вопросы, связанные с деятельностью христианских купцов в Османской империи: привилегии, предоставляемые купцам-христианам, являющимися подданными империи (зимми), взыскиваемые с ввозимых и вывозимых товаров таксы пошлин и порядок оплаты, формы уплаты взыскиваемого с зимми подушного налога (джизья), порядок рассмотрения торговых споров, цеховую организацию, управление купеческого сословия и др.

H. D. PAPAZIAN

LICENCES REÇUES EN 1847 DU SULTAN ABD-EL-MEDJID
PAR GULABI ET GALOUSTE, FILS DE GULBENK

(Résumé)

Les deux licences publiées, reçues en 1847 par les ancêtres résidant à Césarée de la célèbre maison de commerce Gulbenkian du sultan Abd el-Medjid, contiennent des données dignes d'attention sur la situation juridique et la place qu'occupaient les marchands arméniens dans le commerce extérieur de l'Empire Ottoman. Leurs copies certifiées sont conservées au Centre du Fonds Gulbenkian à Lisbonne.

Le déchiffrement des originaux turcs de ces licences a été effectué sur des photographies, d'ailleurs peu réussies, aimablement mises à notre disposition par le directeur du Fonds R. Gulbenkian. Outre l'original, les spécialistes pourront prendre connaissance de l'entière traduction arménienne scientifique qui conserve les formules et le style propres à la diplomatie ottomane.

La courte préface est un essai de mise en valeur de l'importance, du point de vue de l'étude des sources, des documents publiés, rédigés sur l'exemple des droits ex-territoriaux accordés aux commerçants européens.

Les documents donnent la possibilité d'étudier de nombreuses questions relatives au statut des marchands chrétiens dans l'Empire Ottoman: privilèges donnés aux commerçants chrétiens citoyens de l'Empire (zimmi), taxes des droits de douane perçus lors de l'importation et l'exportation des marchandises et leur paiement, formes de perception de l'impôt d'âme (djizzia) payé par les zimmi, examens des différents commerciaux, organisation syndicale ("esnaf"), administration des commerçants, etc.

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒՅԱԿՆԵՐ (1801 թ.)

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական գիվանում պահվող փաստաթղթերի մեջ մեր ուշադրութունը գրավեցին 1801 թ. կազմված երեք ցուցակներ: Դրանցից մեկը էջմիածնի վանքի միաբանների և ծառայողների ցուցակն է, մյուսները՝ ոչ անվանական ցուցակներ են էջմիածնի վանքի ու Վաղարշապատ գյուղի եկեղեցիների, ճոզևորականների ու սպասարկող անձանց:

Առաջին ցուցակում հիշատակված են էջմիածնի վանքի եպիսկոպոսները, վարդապետները, սարկավազները, դպիրները, վանական դպրոցի աշակերտները, ներքին սպասավորները, պահապան հրացանակիրները և մյուս բոլոր աշխատողներն ու ծառաները: Հոգևորականներն ու ծառայողների մի մասը թվարկված են անվանապես, մյուսներն՝ ըստ մասնագիտության ու արհեստի:

Այդ ցուցակը ճշգրիտ տեղեկություն է տալիս էջմիածնի վանական տնտեսության, նրա միաբանների ու սպասարկող անձնակազմի վերաբերյալ բաղաբական այնպիսի լարված ժամանակաշրջանում, ինչպիսին XIX դարի ամենասկիզբն էր: Այդ ժամանակ նոր էր ավարտվել պարսից թագաժառանգ Աբրահա Միրզայի արշավանքը Երևանյան երկրի վրա, որը մեծ վնասներ էր հասցրել նաև էջմիածնի վանքին: Մեծացնելով իրենց ազդեցությունը Երևանի վրա, պարսիկները ձգտում էին դարձնել այն ամուր հենակետ ուսաների առաջխաղացումը դեպի հարավ կասեցնելու համար: Այդ պատճառով ուժեղացել էր հսկողությունը նաև էջմիածնի միաբանների նկատմամբ, որոնք անհամբեր սպասում էին հյուսիսի քրիստոնյա տերության զորքերին: Այդ ամենի հետևանքով ծանր վիճակ էր ստեղծվել էջմիածնում, որն ավելի բարդացավ նորընտիր կաթողիկոսի հանկարծահաս մահով:

1801 թ. մարտի 9-ին Ռուսաստանից էջմիածին գալու ճանապարհին՝ Քիֆլիսում վախճանվել էր Հովսեփ Արղությանը և էջմիածնի միաբանությունը կանգնած էր նոր վեհափառի քնարության դժվարին կացության առջև: Ահա այս ժամանակ կամ գուցե փոքր ինչ ավելի ուշ, անհրաժեշտություն է զգացվել կազմելու վանքի միաբանների ու մյուս անձանց ցուցակը:

Ինչպես երևում է այդ փաստաթղթից, 1801 թ. Վանքում եղել են 22 եպիսկոպոս, 30 վարդապետ, 6 քահանա, 25 սարկավազ, 15 դպիր և ուրիշներ, ընդամենը 197 հոգի: Միաբանների թիվն, անշուշտ, ավելի մեծ է եղել, բայց նրանցից ոմանք իրենց ուղեկցողների հետ միասին բացակակալում էին վանքից՝ նվիրակի պաշտոնով մեկնած լինելով շրջակա վայրերը կամ էլ հեռու երկրներ: Դրանից բացառապես միաբանների թիվն ավելի մեծ էր: 1781 թ. հունվարին Ղարսի մեծահարուստներից մեկին՝ պարոն Գեորգին ուղղված նամակում Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը (1780—1799 թթ.), հանձնարարելով նրան վանքի համար գնել ցորեն, գրել է հետևյալը. «Բացի մշտական երթևեկողաց բազմաց... մշտական հացակերքն սրբոյ Աթոռոյս լի-

նին իբրև հինգ հարիւր՝», (ընդգծումն իմն է, Վ. Գ.)¹: Ինչպես երևում է, միաբանների կազմը ղգալիորեն պակասել էր: Պատճառները գլխավորապես պետք է որոնել քաղաքական աննպաստ պայմանների մեջ:

Այդ երկու տասնյակ տարիների ընթացքում Արարատյան երկիրը ենթարկվել էր օտար ուժերի հարձակումների, նրա տարածքում տեղի էին ունեցել զինված ընդհարումներ, որոնք, բնականաբար, բացասական ազդեցություն էին ունեցել թե՛ միաբանության, և թե՛ վանքի տնտեսության համար: Վանականներից շատերը հարկադրված են եղել երբեմն ժամանակավորապես, իսկ նրանցից ոմանք էլ՝ ընդմիշտ, հեռանալ էջմիածնից. թաքցվել կամ այլ վայրերն են ուղարկվել վանքի ունեցվածքն ու անասունները: Այսպես է պատահել 1785—1786 թթ. լեզգիների արշավանքի, 1786—1787 թթ. Երևանի խանության մեջ տեղի ունեցած ներքին կռիվների, Մակուի սուլթանի որդի Հասան խանի հարձակման (1795 թ.) և Աղա Մուհամմեդ շահի արշավանքի (1795 թ.) ժամանակ: Հատկապես մեծ կորուստներ ունեցավ միաբանությունը 1797 թ. Արարատյան երկրում մոլեզունդ ժանտախտի օրերին: Այդ հիվանդությանը զոհ գնացին Ներսես, Ղունկիանոս և Գրիգոր եպիսկոպոսները, Գրիգոր վարդապետը և ուրիշներ²: Ահա այս ամենի պատճառով միաբանների թիվը նվազել էր և մյուսների հետ միասին XIX դարի ամենասկզբում կազմում էր մոտ երկու հարյուր մարդ:

Յուցակի կազմման ամսաթիվը նշված չէ: Հոգևոր դպրոցի սաներից մեկի մասին գրված է. «Յ...ի յապրիլի Ա (1) վախճ.»: Ուրեմն այն կազմվել է ապրիլի մեկից հետո: Յուցակը ստեղծվել է միաբանության անդամներին և մյուս անձանց նվեր տալու կապակցությամբ: Այդ մասին ցուցակի այն մասում, որտեղ գրանցված են եպիսկոպոսների անունները, գրված է հետևյալը. «Վանայ նուիրակ Արրահամ վարդապետի բաժանեալ ընծայի դաւթարն է»: Այն ժամանակ սովորություն էր նման ձևով նվերներ տալը, ուստի և կազմվել է համապատասխան ցուցակ: Նվերները, ինչպես կտեսնենք հաջորդ փաստաթղթից, լինում էին նաև փողի ձևով և նրա քանակը կախված էր ստացողների զիրքից ու պաշտոնից:

Հայտնի է, որ էջմիածնի տնտեսության ղեկավարումն իրականացնում էին հենց իրենք՝ միաբանները և այդ հանգամանքն արտացոլում է գտել ցուցակի մեջ: Եպիսկոպոսներից մեկի անվան մոտ առկա «շիրաշի» (զինեգործ) բառը վկայություն է այն բանի, որ նա զբաղվել է այդ գործի ղեկավարությամբ: Նույնը կարելի է ասել վարդապետներ Ալեքսանդրի և Հարություն Անչեցու վերաբերյալ, որոնցից առաջինը հիշվում է որպես շորապան, մյուսը՝ տնտես: Փիլիպոսը «քեավրան պաշի» էր՝ քարավանապետ:

Յուցակում նշված են վանքի տնտեսությամբ զբաղվողները՝ հացապան, մածնապան, ձիթապան, մառանապետ, պարտիզպան, ախոռապետ, խոհարար, փոնապան, սեղանապետ, կովկիթ, փայտահատ, աչքեսպանների պետ, դարբին, դարմանապահ, մազ մանող, աղոն անող, ալյուր կրող, մոմ սարքող, բրինձ ընտրող, հացթուփ, թիկնապահ, դոնապան, ծառա:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 59ա:

² Մանուկ Գյումուշյանցի, Ցաղագս մահտարածամի, որ է լեռկիրն Քիֆիզոյ և էջմիածնի և ի դիւզս Վաղարշապատ (Մատենադարան, Արխիվային բաժին, Ա. Երեցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 142):

Վանքը սահմանափակ թվով հրացանակիրներ ուներ, որոնց վրա դրված էր վանքի պաշտպանութիւնը և այլ վայրեր մեկնող հոգևորականներին ուղեկցելու պարտականութիւնը: Անվանապես հիշատակված են 23 հրացանակիրներ՝ իրենց տասնապետ Պետրոսի հետ միասին: Հետաքրքրական է, որ այդ հրացանակիրներից մեկը՝ Կարապետը եղել է «ղուշլի»՝ բաղեպան: Ուրեմն այն ժամանակ էջմիածնում էլ ընդունված է եղել բաղեներով որս անելը և եղել է նաև այդ գործը գլխավորող կամ բաղենները վարժեցնող անձ:

Մի քանի հոգի զբաղված են եղել գրագրութիւն գործով՝ դրել կամ արտագրել են կաթողիկոսի նամակներն ու կոնդակները, հատուկ մատչանների մեջ արձանագրել նրանց հակիրճ բովանդակութիւնը և կատարել այդ բնույթի աշխատանքներ: Ցուցակում հիշվում են նրանցից երկուսը՝ Ստեփան և Մկրտիչ գրագիրները: Սովորաբար գրագիրների աշխատանքին հետևում էր եպիսկոպոսներից կամ վարդապետներից մեկը, բայց այստեղ այդ բանը չի նշված:

Ուշագրավ է ցուցակի այն մասը, որտեղ թվարկված են էջմիածնի վանական դպրոցի սովորողները: Հայտնի է, որ այդ դպրոցի համար դեռևս Միմեոն Երևանցու օրոք (1763—1780 թթ.) էջմիածնի վանքի հյուսիսային կողմում կառուցվել էր հատուկ շինութիւն, որը նորոգել էր Ղուկաս Կարնեցին³: Միմեոնի բնարութիւն ժամանակ դպրոցում սովորում էին ընդամենը տասներեք աշակերտներ⁴, որոնց թիվը հետագայում մի քիչ ավելացավ: Ղուկասի բնարկելուց մի քանի ամիս անց դպրոցում կային 24 երեխաներ (1780 թ. հոկտեմբեր)⁵: 1781 թ. սովորողների թիվը հասնում է 32-ի⁶: Մեկ տարի անց սաների թիվը մի քիչ պակասում է (26 հոգի)⁷: 1783 թ. դպրոցում կային 28 աշակերտներ⁸, իսկ 1785 թ.՝ 29 հոգի⁹:

Հրասպարակված ցուցակից երևում է, որ 1801 թ. էջմիածնի հոգևոր դպրոցի աշակերտներն ընդամենը 17 հոգի էին, որոնցից մեկը, ինչպես վերը նշեցինք, վախճանվել էր՝ անպիլ ամսվա սկզբին: Սովորողների թվի այսօրինակ նվազումը ևս պետք է բացատրել քաղաքական աննպաստ պայմաններով: Հետագայում սովորողների թիվն ավելի է նվազում: Նույն արխիվում պահվող մի փաստաթղթից, որը կազմվել է 1802 թ. դեկտեմբերի 19-ին, երևում է, որ այդ ժամանակ էջմիածնի դպրոցում սովորել են 11 աշակերտներ: Համենայնդեպս, այդ թվով աշակերտներ են հիշվում այն ցուցակում, որը կազմված է նրանց զգեստներ տալու կապակցութեամբ (յուրաքանչյուրին տրվել է մեկական արխալուզ, երկուական շապիկ և ոտաց շոր)¹⁰:

Այժմ մի քանի խոսք ցուցակում հիշատակվող հոգևորականների մասին: Վարդապետների թվում նշված է նաև նշանավոր քաղաքական ու եկեղեցական գործիչ Ներսես Աշտարակեցու անունը, որը հետագայում այնքան մեծ դեր խաղաց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում:

Ցուցակում առաջինը հիշված Միմեոն եպիսկոպոսը հայտնի դեմք էր.

3 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 135:

4 Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 2:

5 Նույն տեղում, էջ 30:

6 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 276:

7 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 11, էջ 104:

8 Նույն տեղում, էջ 108:

9 Նույն տեղում, էջ 117:

10 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, № 27ա:

Ղուկաս Կարնեցու մահից հետո նա ստանձնել էր «աթոռակալի» պարտականությունը: Նա էր, որ մեկնել էր Քիֆլիս՝ Պետերբուրգից ժամանող Հ. Արղուժյանին դիմավորելու համար: Նրա հետ էին նաև ցուցակում հիշատակվող գրադիր Անդրեաս և Բարսեղ Աշտարակեցի եպիսկոպոսները, ինչպես և Քաղեսուր, որն անվանված էր ատենադպիր¹¹: Այն հանգամանքը, որ Սիմեոն եպիսկոպոսը ցուցակում նշվում է որպես «աթոռակալ», հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ այն կաղմվել է մինչև Գավթի կաթողիկոս դառնալը, այսինքն՝ մինչև 1801 թ. ապրիլի 28-ը:

Ցուցակում հիշատակվող Ղուկաս եպիսկոպոսը եղել է Ղուկաս Կարնեցու խոստովանահայրը: Հ. Արղուժյանի մահից հետո Երևանի խանի օժանդակությամբ կաթողիկոս հռչակված Գավթիթը, Հովհաննես եպիսկոպոսի Քիֆլիս փախչելուց հետո, բանտարկել է տալիս մի շարք անձանց, որոնց մեջ էր նաև «ծերունի առաքինակրօն Ղազար եպիսկոպոսն՝ խոստովանահայր Ղուկաս կաթողիկոսի», որին միաբանները մի կերպ ազատում են: Ուրեմն նա դեմ էր խանի հովանավորչալին Գավթի-Դանիելյան վեճի ժամանակ: Հայտնի է, որ այդ օրերին միաբանների մի մեծ խումբ գրավոր դիմում է ներկայացնում Երևանի խանին՝ պահանջելով կաթողիկոս դարձնել ոչ թե Գավթին, այլ Դանիելին: Ստորագրողների թվում էին նաև այս ցուցակում առկա Ալեքսան, Հովակիմ, Ստեփաննոս, Գրիգոր, Սողոմոն, Աստվածատուր, Ղազար և Հովհաննես եպիսկոպոսները, ինչպես և երկու տասնյակից ավելի վարդապետներ¹²: Կաթողիկոսական գահի համար Գավթի ու Դանիելի և սրանց կողմնակիցների միջև ծավալված համառ ու երկարատև պայքարը վեր էր ածվել քաղաքական հակամարտության: Ռուսական իշխանությունների հովանավորությունը վայելող Դանիելի կողմնակիցները հակադրվելով խանի դրածո Գավթին, փաստորեն բացահայտում էին իրենց ռուսական կողմնորոշումն այն պայմաններում, երբ այլևս գաղտնիք չէր ռուսական իշխանությունների մտադրությունը Երևանյան երկրի վերաբերյալ: 1801 թ. սեպտեմբերի 26-ին ռուսական Ալեքսանդր I ցարը, սխալ համարելով Գավթի ընտրությունը, հատուկ հրովարտակով կաթողիկոս է հռչակում Դանիելին: 1802 թ. մայիսին նա հաստատության հրովարտակ է շնորհում Դանիելին: Այդ կապակցությամբ համապատասխան հրաման տրվեց Կովկասի կառավարչապետ Կնորինգին, իսկ Երևանի խանին նամակով հանձնարարվեց օգնել Դանիելին՝ զբաղեցնելու կաթողիկոսական գահը¹³:

Երևանի խանը ոչ միայն չկատարեց թագավորի ցանկությունը, այլև բռնություններ կիրառեց Դանիելի կողմնակիցների նկատմամբ: Նա բանտարկել է տալիս Աստվածատուր, Բարսեղ և Ավետիս եպիսկոպոսներին, իսկ մյուսներին, որոնք Երևան էին եկել Դանիելի հարցով, ձիավոր զինվորների առջև գցած ձեծելով տանել է տալիս մինչև էջմիածին¹⁴: Այնտեղ Գավթիթը շարունակում է բռնությունները՝ բանտարկում է Աբրահամ վարդապետ Աստրախանցուն, Փիլիպպոս Եվդոկացի, Ռեթեոս վարդապետներին և էլի մի քանի անձանց:

11 Աղեֆաևդը Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր 19-րդ դարում, մասն Ա, Քիֆլիս, 1894, էջ 14:

12 «Գիւան հայոց պատմութեան», հ. Ա-Բ, Քիֆլիս, 1893, էջ 140—141:

13 Աղեֆաևդը Երիցյանց, Եջվ. աշխ., էջ 20, 24:

14 Նույն տեղում, էջ 143:

Ինչպես տեսնում ենք, ցուցակում հիշատակվող հոգևորականների մեծամասնությունը Դանիելի կողմնակիցներից էր:

Ցուցակում եղած Մարտիրոս եպիսկոպոսը ներսես Աշտարակեցու հետ միասին մասնակցել է Ուշքիլիսեի 1802 թ. մայիսի 25-ի հայտնի ժողովին, որի ժամանակ կաթողիկոս է հռչակվել Դանիելը: Հայտնի դեմք էր նաև ախալցխացի Անտոն վարդապետը, որը ժամանակին կաթողիկոսություն էր ընդունել և Հյուսիսային Կովկասի հայերի մեջ զբաղվում էր կաթողիկ քարոզով: Հետո նա դարձի եկավ և Մոզզոկ քաղաքում Հ. Արղուճյանին տվեց ուխտի ու երգման գիր: Վերջինիս մահից հետո այդ վարդապետը գալիս է էջմիածին և, ինչպես երևում է ցուցակից, դառնում միաբանության անդամ: Նա զբաղվում էր նաև բժշկությամբ, ուստի Երևանի խանի ցանկությամբ մեկնում է Երևան: Հետո հայտնի է դառնում, որ նա նորից զբաղվում է կաթողիկոսություն տարածելով: Երևանից նա փախչում է Բայազետ, այնտեղից Կարին ու հետո՝ Թիֆլիս: Այդ կապակցությամբ Դավիթ կաթողիկոսը նամակներ է գրել Թիֆլիսահայությունը, գեներալ Լազարովին և ուրիշներին¹⁵:

Հաջորդ փաստաթուղթը կազմվել է 1801 թ. ապրիլի 28-ին՝ Դավիթ կաթողիկոսի օժման օրը: Դա նույնպես ցուցակ է, բայց, ինչպես նշել ենք վերը, ոչ անվանական, և կազմված է օժման կապակցությամբ տրվելիք նվեր դրամը՝ «պաշտամանցը» բաժանելու գործը դյուրացնելու համար: Առանձին-առանձին նշված են հոգևորականները և մյուս բոլոր անձինք: Վավերագրի մյուս երեսին կա մեկ այլ ցուցակ, որն արված է «պաշտամանցի» բաշխումը ճիշտ կատարելու նպատակով՝ «Պաշտամանց բաժանելոյ կերպն աստ նշանակեցաք՝ ի դիրութիւն բաժանողին» (վավերագիր, № 3):

Երևանի խանության սահմաններում այն ժամանակ շրջանառության մեջ էին գտնվում թե՛ պարսկական (թուման, արասի, շահի) և թե՛ թուրքական (դուռուշ, փարա) դրամները: Ըստ ցուցակի, պաշտամանցը բաշխվել է այդ դրամներով: Մեծ մասամբ սկզբում գրել են թուրքական դրամը, հետո նրա պարսկական արժեքը և ներքևում կատարել գումարում՝ թուրքականի հաշվով: Օրինակ, «3.00, վանքին լուսագին ԲՌ (2000)»: Սա նշանակում է: որ տրվել է 3 դուռուշ, որը հավասար էր 2000 դիանի: Կամ «2.20, Ա (1) սևագլխի Ճ (100) փարայ»: 100 փարան հավասար էր 2 դուռուշ 20 փարայի: այդպես էլ գրված է՝ 2 դուռուշ 20 փարա: Մեկ արասին հավասար էր 12 փարայի, իսկ մեկ դուռուշը՝ 40 փարայի: Օրինակ, տրվել է 6 շահի: Մեկ շահին անում էր 3 փարա, ուստի և սկզբում գրել են 12 փարա: Կամ արասին հավասար էր 12 փարայի: Գրված է՝ «Բ (2) տնտես և դոնապան Ա Ա (1,1) ապասի», իսկ դրանից առաջ գրված է՝ 24 (փարա):

Գումարումը կատարվել է դուռուշի հաշվով: Օրինակ, ս. Հոսիսիմեի վանքին և միաբաններին տրվել է ընդամենը 7 դուռուշ 12 փարա: Գումարումը հետևյալ ձևով է կատարվել՝ 3 դուռուշ + 2 դուռուշ 20 փարա + 1 դուռուշ 8 փարա + 24 փարա հավասար է 7 դուռուշ 12 փարայի (կամ 292 փարայի):

Վերահիշյալ ցուցակները լրացնելով միմյանց, հնարավորություն են ընձեռում ավելի պարզ պատկերացում կազմելու էջմիածնի վանքի, ինչպես և Վաղարշապատ գյուղի եկեղեցիների հոգևորականների և սպասարկող կազմի և, վերջին հաշվով, վանական տնտեսության վերաբերյալ:

¹⁵ «Գիւան հայոց պատմութեան», գիրք 2, Թիֆլիս, 1904, էջ 353—354:

Վավերագրերի մեջ, ինչպես ընդունված էր այն ժամանակ, մի շարք մասնադիտությունների ու արհեստների անունները թուրքերեն, պարսկերեն կամ արաբերեն են: Դրանց թարգմանությունը սալխա ենք օտար բառերի փոքրիկ բառարանում:

ՎԱՎԵՐԱԳԻՐ N 1

Ի ՌՄԾ (1801) ԹՈՒԻՆ ՆԵՐԿԱՅ ԳՏԱՆԵՅԵԱԼ ՄԻՎԲԱՆՔՆ ԵՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ:

(Վանայ նուիրակ Աբրահամ վարդապետի բաժանեալ ընծայի դարբան է).

Եպիսկոպոսն են

Սիմէօն աթոռակալ
Ալեքսան ժամօրհնօղ
Յովակիմ վարժապետ
Ստեփան ծերունի
Գրիգոր շիրաշի
Աստուածատուր
Անդրէաս
Բարսեղ
Սողոմօն
Թադէոս
Ղազար
Յօհաննէս
Ստեփան
Յօհաննէս
Մարտիրոս
Յակոբ Գեանշ[եցի]
Վարդան
Աւետիք
Աբրահամ
Յօհաննէս
Գէորգ
Յօհաննէս

Ջաքարիա էջմ[իածնեցի]
Գրիգոր վէքիլ
Աղէքսանդր շորապան
Ղուկաս լուսարար
Անտօն վարդապետ
Յարութիւն Առնշեցի տնտես
Սահակ էջ[միածնեցի]
Փիլիպպոս Թօխ[աթեցի]
Փիլիպպոս քեավրան պաշի
Մկրտիչ
Մովսէս
Փիլիպպոս
Ներսէս Աշտարակեցի
Յակոբ Ղարիպ վարժապետն
Եսայի
Կարապետ
Հռէթէոս
Տէր Յակոբ
Տէր Պօղոս
Տէր Ահարոն
Տէր Մարկոս
Տէր Մատթէոս
Տէր Մկրտիչ
Թադէոս Առաքելոյ միարան

Վարդապետն են

Գրիգոր
Աբրահամ
Յօհաննէս պառաւի
Յօհաննէս Գառն[եցի]
Աբրահամ Հաշտարիսանցի
Գէորգ Երևանցի
Յօհաննէս Կարբեցի
Մինաս էջմիածնեցի
Ստեփան Ջուղայեցի

Ներսային սպասաւորն

Կարապետ վարդապետ
Ղազար վար[դապետ]
Աբրահամ վար[դապետ]
Յօհաննէս վար[դապետ]
Աղամ սարկ[աւազ]
Մկրտիչ սարկ[աւազ]
Մկրտիչ փոքրիկ
Սրապիոն սար[կաւազ]
Ստեփան սար[կաւազ]

Խաչատուր
Յարութիւն
Յարութիւն փոքրիկն

Սարկաազունք

Ստեփան գրագիր
Ստեփան
Գալուստ վար.
Եփրեմ
Մարտիրոս
Յօհաննէս
Մկրտիչ գրագիր
Սահակ
Պօղոս
Յակոբ
Բարսեղ
Գրիգոր
Սրապիոն
Մկրտիչ
Մեսրոպ
Գէորգ
Խաչատուր Պօլ[սեցի]
Պօղոս Հաճի
Գրիգոր
Դանիէլ
Տրդատ

Եցի դպիրքն

Խաչատուր
Յօնան
Սարգիս
Յօհաննէս
Սարգիս
Յարութիւն
Եղիայ
Աւետիք
Յարութիւն
Գէորգ
Գարրիէլ
Յօհաննէս
Կարապետ
Գալուստ
Մկրտիչ

Վարժաւան տղայքն

Աւետիք
Սահակ
Կարապետ
Յարութիւն
Պաղտասար
Գարրիէլ
Խաչատուր
Յօհան
Գարրիէլ
Հայրապետ
Յովսէփ
Յ... ի չապրիլի Ա(1) վախճ.
Քաղէոս
Արիստակէս Շահրիարցի
Պետրոս
Աբրահամ
Վարդան պապի թոռն Մկրտիչ

Մահտեսիք և այլք

Գրագիր Յարութիւնն
Հացապանն
Մահտեսի Դաւիթ պաղար պաշին
Մածնապան Յովսէփն
Զիթապան Պետրոսն
Մառնապետն
Դահպաշին
Մինախոռն
Ներսի դոնապանն
Գ(3) սեղանապետքն
Բ(2) խառատքն
Դերձակ մահտեսին
Նաւասարդն
Բաղշաշին ներսի
Նալբանդն
Դ(4) աշխիքն
Ե(5) փոնջիքն
Դ(4) դոնապանքն
Մոմատան մահտեսին
Աթոռակալի շաթիրն
Աղօն անօղն
Ալիւր կրօղն

Պալթաշին
Կատեպան պաշին
Գարմանապանն
Կով կթօղն
Բ(2) մազմանքն
Բ(2) տղայքն Ղազարապատի
Բ(2) բրինձ բնարողքն
Բ(2) բաղջաշիքն

Թ ու ֆ է ն գ շ ի ք ն է

Գահպաշի Պետրոսն
Գրիգորն քօսայ
Գէորգն
Թուշանն
Սանփանն
Եփրեմն
Յօհաննէսն վէլի
Յակօրն
Աւետիքն
Մկրտումն
Յօհաննէսն մահտեսու
Յօհաննէսն մոծակ

Կարապետն դուշշի
Մէլքոնն
Յարութիւնն
Սիմէօնն
Խաչատուրն
Մնացականն
Յարութիւնն դազախ
Յարութիւնն միւս
Ապէրն
Մէլքիսէթն
Սիմէօն իրիցի
Գ (3) շաթիրքն
Բ (2) Իսրայէլ և Մկրտիչ փա-
ռաշք
Բ (2) աղջոց
Ա (1) հացթուխ

(Մաշտոցի անվան Մատենադա-
րան, Արխիվային բաժին, կա-
թողիկոսական դիվան, Թղթ. 2,
վավ. 11, № 27 և):

ՎԱՎԵՐԱԳԻՐ N 2

Ի ՌՄԾ (1801) ԹՈՒԻՆ Ի ՅԱՊՐԻԼԻ ԻԸ (28)-ԻՆ ՆՈՐՈԳ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻ
ՕԾՄԱՆ ՕՐՆ ԱՅՍՈՒ ԿԵՐՊԻ ԲԱԺԱՆԵՑԱՔ ՊԱՇՏԱՄԱՆՅՆ ԹԷ ՄԻԱԲԱՆԻՅ
ԵՒ ԹԷ ՎԱՆՈՐԷԻՅ ՄԻԱԲԱՆԱՅ ԵՒ ԳԻՒՂԻՄ ՔԱՀԱՆԱՅԻՅ:

Եպիսկոպոսաց՝ Դ Դ (4—4) դուռուշ:
Վարդապետաց՝ ԱՃ (100) փարայ:
Նարկաւազաց՝ Մ (50) փարայ:
Դպրաց և մահտեսեաց՝ Բ Բ (2—2) ապասի:
Ամալայից՝ Ա Ա (1—1) ապասի:
Շախրաց, աղջոց, դերձակ Նաւասարդին, մառանապետին, դոնապանին՝
Ճ Ճ (10—10) շահի:
Մաժնապան Յովսէփին՝ Մ (50) փարայ, որ կարգաւորի տամք:

ՍՈՒՐԵ ՀՈՒՓՈՒՄԻ ՎԱՆՔԻՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԻՅ

03:00 Վանքին լուսագին՝ ԲԹ (2000):
02:20 Ա(1) սեազլիսի՝ Ճ (100) փարայ:
01:08 Բ(2) դպրաց՝ Դ (4) ապասի:
00:24 Ա(1) տնտես և Ա (1) մահտեսի՝ Բ(2) ապասի:

- 30 փարայ Ա(1) կարգաւորի:
 24 փարայ Բ (2) դպրի:
 12 փարայ Ա(1) մահտեսու:
 06 փարայ Ա(1) տնտեսի:

- 72 փարայ, որ է Ա(1) դուռուշ
 1Բ (32) փարայ:

Այս հասարակ պաշտամանց է ի ժամ առնելն սրբազան վեհին, ի մայիսի 5:

ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԻ ՎԱՆՔԻՆ ԵՎ ՄԻԱԲԱՆԱՅ

- 3:00 վանքին լուսագին՝ ԲՌ (2000):
 7:20 Բ(2) սևագլխաց և սարկաւազ Խաչատուրին ձ(100) փարայով:
 1:08 Բ(2) դպրաց՝ Բ Բ (2—2) ապասի:
 0:24 Ա(1) մահտեսի՝ Բ(2) ապասի:
 0:12 Ա(1) տնտեսին՝ Ա(1) ապասի:

12:24

3,12 յետին պաշտամանցն էր ի մայիսի 5:

ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔԻՆ ԵՎ ՄԻԱԲԱՆԻՑ

- 3:00 վանքին լուսագին՝ ԲՌ(2000):
 5:00 Բ (2) կարգաւորաց ձ (100)-ական փարայ:
 2:16 Դ (4) դպրաց՝ Բ Բ (2—2) ապասի:
 0:124 Բ(2) տնտես և դննապանաց՝ Ա Ա (1—1) ապասի:

11:00

- 1:20 Բ(2) կարգաւորաց:
 1:08 Դ(4) դպրաց:
 0:12 Ա(1) մահտեսի:
 0:06 Ա(1) տնտես:

3:06

Հասարակն է ի մայիսի 5:

ԳԻՆՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ

- 01:20 Եկեղեցույն՝ ԱՌ (1000) լուսագին:
 00:24 Աւագ իրիցին:
 03:15 Թ(9) քահանայից՝ Ե Ե (5—5) շահի:
 00:18 ժամուց՝ 2(6) շահի:
 00:12 ժամհարաց երկուց:

06:09

(Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, Քղթա-
 պանակ 2, վավերագիր 11, № 277, էջ 1):

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 3

Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍՐԲԱԶԱՆ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՎԱՆՈՐԷԻՏ ՊԱՇՏԱՄԱՆՅՆ ԱՅՍՊԷՍ ՏԱՅԱՔ, ՄԵԶ ԱՅՆՊԷՍ ԱԻԱՆԴԵԱԼ ԷՐ ՄԿՐՏԻԶ ՎԱՐԴԱՊԵՏՆ. ՆՈՑԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՒՍ ԱՅՆՊԷՍ ԵՂԵԱԼ Է: ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻ ՕԾՄԱՆ ՏՕՆԻՆ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻՆ:

ԲՌ (2000) դիան հկեղցւոյն լուսագին:

Ա (1) զուտուշ հպիսկոպոսին:

Ժ (10) շահի վարդապետաց:

Ա(1) ապասի սարկաւազաց:

Բ(2) շահի դպրաց և մահտեսեաց, բայց յերբ լուսաւորեալ հոգին վախճանեցաւ, Մինաս լուսահոգի վարդապետն հաւասար միարանից բաժանել ետ պաշտամանցն, որպէս գրեալ ունիմք յայլ տեղ, որ տեսանելոց էք:

ԳԻՂԻ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒՍ ԱՅՍ ԿԵՐՊ ՏԱՅԱՔ,

ԱՌ(1000) դիան հկեղցւոյն լուսագին:

Բ(2) ապասի աւագ իրիցին:

Ե Ե(5—5) շահի միւս քահանայից:

Զ(6) շահի ժամուց:

Բ Բ(2—2) շահի ժամհարաց:

ՊԱՇՏԱՄԱՆՅ ՔԱԺԱՆԵԼՈՅ ԿԵՐՊՆ ԱՍՏ ՆՇԱՆԱԿԵՑԱՔ Ի ԴԻՐՈՒԹԻՒՆ ՔԱԺԱՆՈՂԻՆ:

Ա (1) զուտուշ հպիսկոպոսաց:

Ժ (10) շահի վարդապետաց:

Ե (5) շահի սարկաւազաց:

Ա (1) ապասի դպրաց և մահտեսեաց:

Բ (2) շահի ամալայից ոմանց և ոչ ամենեցուն:

Ժ (10) շահի մածնապան Յովսէփին և ներսի աշջոցն:

Ե Ե(5—5) շահի շաթրաց, բայց սրբաղան Վեհի Բ (2) տօնին՝ Ժ Ժ (10—10) շահի տուր:

Ա (10) ապասի դահպաշուն:

Ա (1) ապասի մինախոտին:

Ա (1) ապասի նալբանդին:

Ե Ե (5—5) շահի ներսի դոնապանին և դերձակ նաւասարդին:

Ա (1) ապասի միւս դերձակաց:

Ա (1) ապասի գրագիր Յարութիւնին:

Ա (1) ապասի բաղջաշուն ներսի:

Ե (5) շահի մառանապետին:

Գ (3) շահի մեծ դարվազի դոնապանին:

Ե (5) շահի աշջու մուգուրիկին, Էթէ լինիցի, կամ Ա (1) ապասի:

Ե (5) շահի հացթուխ սլառաւին:

(Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, Թղթապանակ 2, վաղերագիր 11, № 27բ, էջ 2):

ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ՀԱՆԻՊՈՂ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

Ամալայ — (արար.) սևագործ բանվոր
 Աշշի — (թուրք.) խոհարար
 Ապասի — պարսկական դրամական միավոր (հավասար էր 4 շահու)
 Բաղշաշի — (պարս.-թուրք.) պարտիզպան
 Դահաշի — (պարս.-թուրք.) տասնապետ
 Դարվաղ — (պարս.) դարպաս
 Դիան — պարսկական դրամական միավոր (10000 դիանը հավասար էր մեկ թումանի)
 Բուֆենքշի — (թուրք.) հրացանակիր
 Կասեպան պաշի — (հայ.-թուրք.) այլ-պեպանների պետ
 Ղուշշի — (թուրք.) բազկպան
 Ղուսուշ — թուրքական դրամական միավոր (հավասար էր 40 փարաշի)

Մինախոս — (պարս.) ախոսապետ
 Նալբանդ — (պարս.) դարբին
 Շաթիր — (արար.) ծառա
 Շահի — պարսկական դրամական միավոր (հավասար էր 10 փուլի)
 Շիրաշի — (թուրք.) գինեգործ
 Պազար պաշի — (թուրք.) շուկայապետ
 Պալթաշի — (թուրք.) փայտահատ
 Վեքիլ — (արար.) լիազոր, հավատարմատար
 Փառաշ — (արար.) թիկնապա՛
 Փարայ — թուրքական դրամական միավոր
 Փոնշի — (թուրք.) փոնեպան
 Քեափրան պաշի — (թուրք.) բարավանապետ

V. ГРИГОРЯН

СПИСКИ МОНАСТЫРСКИХ БРАТИЙ ЭЧМИАДЗИНА (1801)

(Резюме)

Впервые публикуемые списки хранятся в архивном отделе Матенадарана (Архив католикосата, папка № 2, документ № 11). В них упоминаются духовные лица, учащиеся церковной школы, члены вооруженной охраны и весь обслуживающий персонал Эчмиадзинского монастыря, а также четырех церквей с. Вагаршапат (св. Рипсиме, св. Шогакат, св. Гаяне и сельская церковь). Списки, составленные накануне присоединения Восточной Армении к России, дают интересные и достоверные сведения о структуре, а также монастырском хозяйстве духовного центра армян. Списки публикуются с предисловием и словарем.

V. GRIGORIAN

LISTES DES CONFRERIES MONACALES D'ETCHMIADZINE (1801)

(Résumé)

Ces listes, publiées pour la première fois, sont conservées aux Archives du Maténadaran (Archives du Catholicossat, dossier n°2, document n°11). Elles mentionnent les ecclésiastiques, les élèves du séminaire, les membres de la garde armée et tout le personnel du monastère d'Etchmiadzine et des quatre églises du village de Vagharchapat (Ste-Hripsimé, Ste-Choghakat, Ste-Gayané et l'église rurale). Ces listes, dressées à la veille du rattachement de l'Arménie Orientale à la Russie, donnent des renseignements intéressants et dignes de foi sur la structure et l'organisation économique du centre spirituel des Arméniens. Les listes sont publiées avec une préface et un vocabulaire des mots étrangers.

Բ. Լ. ԶՈՒԳԱՍՉՅԱՆ

«ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐԻ» ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

(Նմանահանության պատրաստման առիթով)

Հայերեն առաջին տպագիր գրքերը վաղուց են մատենագիտական հազվագյուտ նմուշներ դարձել: Գեոև հայկական տպագրության 400-ամյա հոբելյանի տոնակատարության նախապատրաստման օրերին, 1912 թ., երբ հայ տպագիր երախայրիքների հարցերը աշխուժորեն քննարկվում էին մեր բանասիրության մեջ, արդեն իսկ կարևոր էր համարվում այդ գրքերի նմանահանությունները հրատարակելու խնդիրը: «Հոբելյանի առիթով ցանկալի է ունենալ անդրանիկ հայ տպագրության՝ Պարզատումարի ամբողջական լուսատիպ հրատարակությունը (նմանահանությունը)», — գրել է մեծանուն հայագետ Ստեփանոս Մալխասյանցը¹: Իսկ գործի իրականացումը նա Վիեննայի Մխիթարյանների պարտականությունն էր համարում, որովհետև այդ գրքերից մի քանիսը պահվում էին նրանց մոտ²: Սակայն վրա հասած համաշխարհային առաջին պատերազմը՝ մեր ժողովրդի համար իր աղետալի հետևանքներով, խափանեց այս և բազում այլ ազգաշեն ծրագրեր:

Հայագիտության ժամանակակից վերելքը այժմեական են դարձրել մեր գրավոր և տպագիր եզակի հուշարձանների նմանահանությունների հրատարակումը: 1974 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի նախաձեռնությամբ Գ. Կյուլպենկյան հաստատությունը Վենետիկի Մխիթարյանների տպարանում իրականացրեց հայերեն առաջին տպագիր գրքերից երկուսի՝ «Ուրբաթագրքի» և «Տաղարանի» նմանահանությունների հրատարակումը³, իսկ շուտով «Հայաստանի գրքասերների ընկերության» կողմից հրատարակի վրա կդրվի նաև «Պարզատումարի» նմանահանությունը:

Հայերեն հնագույն տպագիր գրքերը հայագիտության մեջ ուշադրության առարկա դարձան անցյալ դարի 60-ական թվականներից, երբ 1865 թ. Ղևոնդ Ալիշանը առաջին անգամ մատնանշեց Աբգար Գալիի Եվդոկիացու հրատարակած «Մաղմոսարանից» (1565 թ.) ավելի վաղ տպագրված «Աղթարքի» առկայությունը⁴: Այնուհետև 80—90-ական թվականներին անվանի բանասերներ Գ. Զարբհանալյանի, Գ. Գովրիկյանի, Ա. Տիրոյանցի, Գ. Գալիմբյարյանի, Ա. Խապալանի և Տ. Պալյանի⁵ ջանքերով նորանոր տեղեկություններ հրատարակվե-

1 «Մշակ», 1912, № 38:

2 «Մշակ», 1912, № 57:

3 Ուրբաթագրքի և Տաղարանի նմանահանություն հայերեն առաջին տպագիր գրքերի (1512—1513): Առաջարկեց Բ. Զուգասյանի, Վենետիկ, 1974:

4 «Բազմավեպ», 1865, էջ 214:

5 Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 20, 300: Գ. Գովրիկյան, Հայ տպագրության ամենահին երախայրիքը, «Հանդես ամսօրնայ», 1899, էջ 209—212: Ա. Տիրոյան, Առաջին դար հայկական տպագրության, «Բազմավեպ», 1890, էջ 90—104:

ցին ևս շորս հայերեն տպագիր երախայրիքների վերաբերյալ, սահմանելով նրանց տպագրության հետևյալ կարգը՝ Պարզատումար, Պատարագառետ, Ուրարագիրք, Տաղաբան, Աղբարք:

Հայ տպագրության 400-ամյա հոբելյանի առիթով 1912—1913 թթ. փորձեր կատարվեցին (Լեո, Ստ. Մալխասյանց, Ն. Ակինյան, Թեոդիկ, Ց. Մակլեր, Գ. Գալեմբյարյան և այլք) ճշգրտելու արդեն իսկ հայտնի այդ գրքերի տպագրության ժամանակը, վայրը, տպագրիչի ինքնությունն ու տպարանը, տպագրության հերթականությունը, ինչպես նաև դրանց արտաքին ձևավորման հարցերը: Շատ ավելի ուշ, 1946 թ., այս նույն խնդիրներին ամփոփ կերպով անդրադարձել է նաև Գարեգին Լեոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ:

«Պարզատումարը» առաջին անգամ հայտնաբերվել է 1875 թ. Կարինում և ուղարկվել է Վիեննա, Մխիթարյան միաբանության գրադարանին⁶: «Պարզատումարի» մասին բնդարձակ հաղորդումով 1889 թ. «Հանդէս ամսօրեայում» հանդես է եկել Գ. Գովրիկյանը՝ նրա տպագրության տարին որոշելով 1512 թվականը և այն համարելով հայկական տպագրության առաջնեկը: Գովրիկյանը իր եզրակացության համար հիմք էր ընդունել գրքի սկզբում գտնվող հայկական 961 թվականը (961 + 551 = 1512), որը 35 տարիների պարզատումարի առաջին տարին էր. «զօրաւոր կռուան մըն է այս 961 թվականը,—գրում է հետազոտողը,—որով կրնանք քանի մը քալ առնուլ և հետևութեանց հասնիլ... մատեանը տպուած է կամ այն տարին, զոր կը ցուցընէ թուականը, այսինքն՝ 961 = 1512 և կամ քանի մը ամիս և գուցե նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէս զի նշանակած 961 տարւոյն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլա»⁷:

«Պարզատումարի» տպագրության Գովրիկյանի առաջարկած 1512 տարեթիվը 22 տարի հետո կասկածի տակ վերցրեց Ստ. Մալխասյանցը և տոմարական մանրամասն հաշվարկներով եզրակացրեց, որ «Պարզատումարի» տպագրության ամենահավանական թվականը 1513-ն է: Խնդիրը այն է, գրել է խոհուն գիտնականը, որ «մեր հին գրքերում հայոց տոմարը հաշվում էին մեծ շարժական տոմարով և ոչ թե անշարժ կամ Սարկավագագիր տոմարով»⁸ և փրկչական թվականը ստանալու համար ավելացնում էին 552 թիվը և ոչ թե 551, ինչպես վարվել էր Գովրիկյանը: Մալխասյանցը իր հաշվումները կատարել էր «Պարզատումարի» մասին մամուլում եղած հաղորդումների հիման վրա՝ առանց ձեռքի տակ ունենալու գիրքը ամբողջությամբ:

Շուրջ մեկ տարի անց, 1913 թ., Մալխասյանցի հաշվարկները հաստատվեցին Գ. Գալեմբյարյանի շահեկան ուսումնասիրությամբ⁹: Պարզվեց, որ «Պարզատումարի» մեջ պահպանված է արարչության և հայկական թվականների օգնությամբ փրկչական թվականը որոշելու մի բանաձև, որը սպրդել էր Գովրիկյանի ուշադրությունից: Ահա այդ բանաձևի այն հատվածը, որ վկայակոչել է Գ. Գա-

Հ. Գ. Գ. [Գ. Գալեմբյարյան], Հայ տպագրութեան երախայրիք մ'ալ, «Հանդէս ամսօրեայ», 1890, էջ 161—163: Տ. Պալյան, Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ'ալ, «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357—363:

6 Տե՛ս Գ. Գալեմբյարյան, 1513-ի Հայ տպագրին գիտին պատմականը և նոր լուսարանութիւններ, «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 711:

7 «Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 210:

8 «Մշակ», 1912, № 57:

9 «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 709—718:

լեմբյարյանը. «Եթէ կամիցիս իմանալ զամս... ի Քրիստոսի ծնընդենէն մինչև ի մեզ. կալ հինգ հարիւր և յիսուն և երկու և զհայթուական ի վերայ բեր և այն է»¹⁰. Գ. Գալեմբյարյանը այս բանաձևը կիրառելով գրքի սկզբում գտնվող տոնացույցի առաջին տարվա նկատմամբ, գալիս է այն եզրակացութեան, որ «Պարզատումարի» տպագրութեան տարին 1513-ն է: Եզրակացութեանը այնքան ակնբախ ու ճշգրիտ է եղել, որ Վիեննայի Մխիթարյան միաբանութեանը աններեր ընդունել է առաջարկված թվականը որպէս «Պարզատումարի» տպագրութեան թվական և այդ հաշվով էլ 1913-ին տոնել է հայ տպագրութեան 400-ամյակը¹⁰:

Հայտնի է, որ հայերեն առաջին տպագիր գրքերից միայն «Պատարագատետրը» որոշակի հիշատակարան ունի, որտեղ նշված են ժամանակը՝ ԶԿԲ = 962 թ., վայրը՝ Վենեթ (= Վենետիկ) և տպագրողի անունը՝ Հակոբ, որ իրեն համեստորեն «մեղապարտ» է կոչում: «Պատարագատետրը» 1894 թ. մանրամասն նկարագրող Տ. Պալյանը հայոց ԶԿԲ թվականը մեր թվականութեան վերածելու համար նախորդ ուսումնասիրողների նման առաջնորդվել է հայկական անշարժ տումարով և ստացել է 1513 թվականը ($962 + 551 = 1513$): Գ. Գալեմբյարյանը իր վերահիշյալ ուսումնասիրութեան մեջ, հիմք ընդունելով «Պարզատումարի» բանաձևը, ճշգրտել է նաև «Պատարագատետրի» տպագրութեան ժամանակը¹¹. Եթե «Պարզատումարի» դեպքում փրկչական թվականը որոշելու համար հայկական թվականութեան վրա առաջարկվում է ավելացնել 552, ապա «Պատարագատետրի» դեպքում ևս ԶԿԲ = 962 թվականի վրա պետք է ավելացնել 552, այլ կերպ՝ $962 + 552 = 1514$:

Գ. Գալեմբյարյանի հիմնավորված, պարզ ու շիտակ հաշվարկները, որ հրապարակվել էին համաշխարհային առաջին պատերազմի նախօրեին «Հանդէս ամսօրեայի» 1913 թ. դեկտեմբերի համարում, բնականաբար անմիջական արձագանքներ չունեցան մեր ժողովրդին պատահասած ծանր աղետների տարիներին, իսկ հետագա ուսումնասիրողներն էլ սովորույթի ուժով շարունակեցին 1512-թ. համարել «Պարզատումարի» և 1513-ը «Պատարագատետրի» տպագրութեան թվականները և խորամուխ շեղան Գալեմբյարյանի հաշվարկումների մեջ: Անգամ 1963 թ. լույս տեսած «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակում» «Պարզատումարի» տպագրութեան տարին 1512-ն է համարված¹²: Ավելին, մատենագետ Ա. Բարյանը 1980 թ. ետ է վերագառնում անցյալ դարի 90-ական թվականները և կրկնում է Գ. Գովրիկյանի վաղուց սրբազրված տեսակետը՝ հայտարարելով, որ ինքը «համակիր է... ընդունել գրականութեան մեջ արդեն որպէս հաստատուն ավանդույթ դարձած հայ առաջին տպագիր գրքի՝ «Պարզատումարի» թվականը՝ 1512 թիվը»¹³:

Հայ տպագրութեան 450-ամյակի առթիվ 1963—64 թվականներին հետաքրքիր հոգվածներով հանդես եկավ բանասեր-մատենագետ Ռաֆայել Իշխանյանը, որը իր հետազոտութեանների ընթացքում քննութեան առնելով հայերեն հնագույն տպագիր գրքերի էջախորհարային ժապավենաձև ճակատազարդերի տեսակները, գործածութեան հաջորդականութեանը և մաշվածութեան աստիճանը,

10 Ա. Մառտիկյան, Համազգային մեծ յորելիանը, «Հանդէս ամսօրեայ» 1913, էջ 705—708:

11 «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 713:

12 «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ» (1512—1800), Ե., 1963, էջ 3:

13 Ա. Բարյան, Ո՞րն է վերջապես հայ առաջին տպագիր գիրքը, «Գրքերի աշխարհ» ամսաթերթ, 1980, № 3:

հանգեց այն ընդունելի եզրակացության, որ «Ուրբաթագիրքն» է եղել հայերեն առաջին տպագիր գիրքը և տպագրված է 1512 թ.¹⁴ Պարզատումարի» տպագրության «ամենահավանական» տարին Ռ. Իշխանյանը 1977 թ. հրատարակած իր արժեքավոր աշխատության՝ «Հայ գրքի պատմություն» առաջին հատորում համարում է 1513 թվականը, միաժամանակ հարց է դնում, թե «Արդյո՞ք իրավացի էին նրանք (Ստ. Մալխասյանց, Գ. Գալեմբյարյան) ովքեր տոմարացույցի 961 թվականը արդի թվականության 1513 էին համարում»¹⁵:

«Պարզատումարի» սկզբում հիշատակված հայոց ՋԿԱ (961) թվականը մեր թվականության 1513 թ. համարելու օգտին խոսող մի այլ կովան ևս կա, որ պահպանվել է «Պարզատումարի» խնդրո առարկա տոմարական բանաձևի սկզբի մասում, բայց, ըստ երևույթին վերծանման որոշ դժվարության պատճառով, դուրս է մնացել Գ. Գալեմբյարյանի վերոհիշյալ ուսումնասիրությունից և հետագա հետազոտողների ուշադրությունից:

Ահա այդ կարևոր բանաձևը ամբողջությամբ:

«Եթէ կամիցես իմանալ դամս ի սկզբանէ արարածոց մինչև ուր ևս, կալ ր. և ջ. հո. և դհայ թուական ի վերայ բեր և այն է: Եւ ի Ք [քրիստոս] ի ծննդենէն մինչև ի մեզ. կալ հինգ հարիւր և յիսուն ւ երկու և դհայ թուական ի վերայ բեր և այն է» (է պրակ, էջ 7—8):

Ըստ էսայան կամ հինգհարյուրյակի՝ արարչությունից մինչև հայկական թվականության սկիզբը ընկած ժամանակաշրջանը $ԲՁԶԶ = 5976$ տարի է, կամ, ինչպես Հովհաննես Իմաստասերն է գրում, «յԱզամայ մինչև հայ թուական... Ըստ Շ. եկին թուականին ԲՁԶԶ»¹⁶: Իսկ երբ սրան ավելացնում ենք «հայ թուականը», որ ավյալ դեպքում գրքի սկզբում տեղադրված տոնացույցի առաջին տարին է՝ 961, ստացվում է ժամանակի փրկչական թվականը, այլ կերպ՝ $5976 + 961 = 6937$, որից դուրս բերելով արարչության էսայան թվականը մինչև մեր թվականության սկիզբը ($5420 + 4^3 = 5424$), ստանում ենք 1513 թ. ($6937 - 5424 = 1513$): Մի թիվ, որ համընկնում է հիշատակագրության երկրորդ հատվածի Գալեմբյարյանի հաշվարկին՝ $961 + 552 = 1513$:

Փրկչական թվականը որոշելու այս բանաձևերը հանդիպում են Հովհաննես Մարկավագի (Իմաստասերի) (XI—XII դդ.) տոմարական աշխատություններում («Եթէ կամիցես դիտել՝ ի ծննդենէ Քրիստոսի մինչև ուր ևս՝ Եթէ քանի ամ է, կալ ՇԼԲ (552), դհայ թուականն ի վերայ բեր և այն է»): Մատենադարան, ձեռ.

14 Ռ. Իշխանյան, Ո՞րն է առաջին հայ տպագիր գիրքը, «Գրական թերթ», մայիսի 31: Նույնի՝ նորը հայ հնագույն տպագրությունների վերաբերյալ, «Բանբեր Մատենադարանի» հ. 7: 1964, էջ 275—295: Նույնի՝ Հայ հնագույն տպագրությունների ժամանակագրության հարցի շուրջ: Անդ, հ. 8, 1967, էջ 183—188:

15 Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977, էջ 47, 158:

16 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956, էջ 224:

* Այս հավելյալ 4 տարիները Հովհաննես Իմաստասերը համարում է Ազամից հետո անցած հարյուրամյակներում նահանջ տարիներից զոչացած 4 տարին. «...ժողովին աուրքն նահանջականի 346 (365) ի յամաց ՌՆԿ-ից (1460-ից) և անցանէ շարժմունս եղանակացոյ ի միս ամն միով թուով և ժողովին ի թուականացո՞ որ յելիցն Ազամայ ի դրախակն աուրք իրրե շորից ամաց սակաւ ինչ կամ նուազ կամ աւելի մինչև ի զիր մատենիդ» (Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 262: Տոմարական այս մի բանի տարիների տարբերությունը նկատել է Մ. Զամչյանը (տե՛ս Պատմություն հայոց, հ. Գ. Վենետիկ, 1786, ժամանակագրություն, էջ 6): Այս 4 տարիների փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրեց երիտասարդ տոմարագետ Զուլե-տա էյնաթյանը:

1999, էջ 22ա, «Եթէ կամիցես գիտել... կալ ՐՁՁԶ (5976), գհայ թուականն ի վերայ բեր...» Մատենադարան, ձեռ. 1973, էջ 6ա)¹⁷: «Պարզատումարի» և Հովհաննես Սարկավազի այս բանաձևերի զուգադրումը, ինչպես և գրքի սկզբում տեղադրված 35 (Ա-Փ) յոթներակներով տոնացույցը, վերագիրը և լուսնի ծնունդը որոշելու կարգերի հիշատակումը խորհել են տալիս, որ ի դեմս Հակոբ տպագրիչի մենք ունենք հայկական տոմարին քաջագիտակ մի անձնավորություն, որ անսպասելի առաջնորդվել է իր տպագրած գրքերում առկա բանաձևերով, հետևաբար դրանց մեջ հիշատակելով հայոց 961 և 962 թվականները, անսպասելի նկատի է ունեցել մեր թվականության 1513 և 1514 թվականները, որովհետև ապրելով ու աշխատելով Վենետիկում, նա չէր կարող շփոթել իր միջավայրում գործող փրկչական թվականը:

Կատարված այս հաշվարկումներից հետո, նկատի առնելով նաև Ռ. Իշխանյանի առաջարկած ճակատագրողների մաշվածության աստիճանը, հայերեն առաջին տպագիր գրքերի (ներառյալ նաև «Ուրբաթագրքի» մեջ որպես առանձին ԳԳ սրակ տեղադրված «Վասն զանի» հատվածը) տպագրության հերթականությունը պայմանականորեն պիտի սահմանել հետևյալ կերպ.

1. Ուրբաթագիրք [1512], 2. Պարզատումար (1513), 3. Պատարագատետր (1514), 4. Աղթարք, 5. Տաղարան¹⁸:

Այս կարգը «սպասմանական» ենք անվանում, որովհետև ամբողջովին չի կրկնում Ռ. Իշխանյանի առաջարկած եղանակով մեր հնագույն տպագիր գրքերի տպագրության հերթականությունը, բայց և միաժամանակ չի հակասում դրան, հատկապես եթե նկատի ունենանք, որ, ինչպես ներկայումս, այնպես էլ հնում փոքր տպարաններում հաճախ մի երկու գիրք միասին են շարվում և ըստ շարված պրակների պատրաստվածության աստիճանի են տպագրվում, իսկ դրանց զարգացրերն ու ճակատագրողները, սահմանափակ քանակության պատճառով, մի պրակից տեղափոխվում են մյուսի վրա: Հակոբ Մեղապարտի դեպքում ևս այս ձևը կարող էր կիրառված լինել, հատկապես եթե չբացառենք այն իրողությունը, որ Հակոբը կարող էր մեկ-երկու գրաշար-տպագրիչ գործընկերներ կամ աշխատակիցներ ունենալ և յուրաքանչյուրը մեկ գրքի վրա կաշխատեր:

Մեր այս ենթադրությունը ավելի համոզիչ է դառնում, երբ նկատի ենք ունենում «Պատարագատետրի» հիշատակարանը, որտեղ ասված է՝ «Գրեցաւ սուրբ տառս... ձեռամբ մեղապարտ Յակոբին»: Բանասիրության մեջ այս զրեցաւ արտահայտությունը առաջարկում են տպագրեցաւ հասկանալ: Չբացառելով հանդերձ այս բացատրությունը, կարծում ենք զրեցաւ-ը կարելի է նաև ուղղակի ընկալել, այն առումով, որ Հակոբին՝ որպես զարգացած ու գրագետ անձնավորության, գիտենք որպես գրիչ ու խմբագիր, մեկը, որ տպագրվելիք առաջին գրքերի բնագրերը ընտրել և ընդօրինակել է ձեռագիր մատյաններից - և իր գլխավորությամբ տպագրել է տվել գործընկերներին կամ աշխատակիցներին, որով Հա-

17 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե. 1956, էջ 201, 207:

18 Գրքագիտության պատմության մեջ մինչև վերջերս հայ առաջին տպագիր գրքերի շարքում վերապահությամբ հիշատակվում էր և մի «Սաղմոսարան», որ իբր ժամանակին Սերաստիայում տեսել էր Կարապետ Դարբիկյանը (տե՛ս «Հայ բժշկության շուրջ» նրա հոդվածը, «Բիւզանդիստ», 1906, № 2963), սակայն, ինչպես պարզել է բեյրութարենակ մատենագետ Արտաշես Տեր-Խաչատրյանը («Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ա տարի, 1980, էջ 314), և Դարբիկյանը հետագայում ճշգրտել է իր հաղորդումը այն առումով, որ իր տեսած հաստիպը Թրգոսը Դպրի «Սաղմոսարանն» է եղել (տե՛ս, ԽՆՊՀԿ, Ամենուրեք տարեցույց, Պոլիս, 1915, էջ 24):

կորը ոչ միայն հայկական տպագրության, այլև հրատարակչական գործի նախա-
կարապետն է դառնում:

Նման աշխատածևի արդյունքը կարող էր լինել այն, որ գրքերից մի քանի-
սի տպագրությունը կավարտվեր միաժամանակ: Սա են վկայում հակորյան հրա-
տարակութունների մեծ մասի համատեղ կազմված լինելու իրողությունը, որ
այնքան դիպուկ նկատել է Ռ. Իշխանյանը¹⁹: Եվ հիրավի, դեռևս իրենց նախնա-
կան կազմերով պահպանված հայերեն առաջին տպագիր գրքերի մեզ ծանոթ
հետևյալ օրինակները կազմված են միասին. այսպես՝

Մաշտոցի անվան Մատենադարանում՝

Տաղարան և Ուրբաթագիրք—հնատիպ N N 644, 656

Պարզատումար և Աղբարք—հնատիպ N N 640, 665

Ուրբաթագիրք և Պարզատումար—Հնատիպ N N 1632, 1633

Երևանի Մյասնիկյանի անվան պետական գրադարանում՝

Պարզատումար և Ուրբաթագիրք—հնատիպ N 3623

Հայաստանի պատմության թանգարանում՝

Ուրբաթագիրք, Տաղարան և Պարզատումար—հնատիպ N 463

Կեսարիայում՝ Տ. Պալյանի տեսած օրինակները²⁰:

Պատարագառետ, Ուրբաթագիրք և Տաղարան

Օբսիդորգի Բողեկյան գրադարանում՝ Վ. Ներսիսյանի տեսած օրինակները²¹

Աղբարք և Պարզատումար—N N 3365(1) և 3365 (2)

Հակորյան գրքերը տպագրությունից հետո միաժամանակ կազմվելու փաս-
տարկ են նաև տպագրական ամենավերջին միավոր «Վասն գանի»-ի պրակը
առաջին տպագրություն համարվող «Ուրբաթագրքի» մեջ մերթ Գ և մերթ Զ
պրակներից հետո տեղադրված լինելու հանգամանքը²² և Օբսիդորգի Բողեկյան
գրադարանի «Աղթարքի» Գ և Ե պրակների միջև «Տաղարանի» Զ մամուլի սխալ
տեղադրումը²³:

Գրքագիտության պատմության համար նվազ հետաքրքրություն չեն ներ-
կայացնում հայերեն առաջին տպագիր գրքերի կազմերը, որոնք ցարդ քստ էու-
թյան քննության շնն անվել: Գրանց՝ մեզ հասանելի հայաստանյան օրինակնե-
րից մի քանիսը պահպանել են սկզբնական վիճակը, որոնց քննությունը նույնպես
նպաստում է համոզվելու, որ հակորյան հրատարակությունները կազմվել և
հրատարակ են հանվել դրանց բոլորի տպագրությունից հետո, ամենայն հավա-
նականությամբ 1513—1515 թվականներին:

Մաշտոցյան մատենադարանի համատեղ կազմված «Տաղարանի» և «Ուր-
բաթագրքի» (N N 644, 656) և Հայաստանի պատմության թանգարանի նույն-
պես համատեղ կազմված «Ուրբաթագրքի», «Տաղարանի» և «Պարզատումարի»
(N 463) կաշեպատ տախտակի կազմերը դրոշմված են միևնույն զարդերով՝
վարդակներ, կրկնագիծ ձվաձև և միագիծ կլոր շրջանակներ, որոնք մի դեպքում

¹⁹ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, էջ 162:


²⁰ «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357:

²¹ Vrej Nersissian, Catalogue of Early Armenian books, 1512—1850, London 1930
p. 47.

²² Գ. Գալմեկյան, նշվ. հոդվածը, «Հանդէս ամսօրեայ» 1913, էջ 71, Ռ. Իշխանյան,
նշվ. աշխ., էջ 142, «Ուրբաթագիրք և Տաղարան» (նմանահանություն): Երևու խոսք, էջ ԺԷ-ԺԸ.

²³ Vrej Nersissian, ննդ.

(Մատենադարանի օրինակ) երկրաչափական խիստ դասավորութեամբ տեղադրված են եռագիծ կրկնակի շրջանակի մեջ (նկ. 1), իսկ մյուս դեպքում (Պատմութեան թանգարանի օրինակ) երկգիծ կրկնակի շրջանակի մեջ՝ անկանոն դասավորութեամբ (նկ. 2)։ Մատենադարանի օրինակը ունի նաև բացվածքի բերանակալ նույն դրոշմադարդերով, իսկ պատմութեան թանգարանի օրինակի բերանակալը կտրված է²⁴։




նկ. 1.

²⁴ Կապմերի դրոշմադարդերը վերականգնել է Մատենադարանի աշխատակից, նկարչուհի Կլիթ Ամիրջանյանը։

Մաշտոցյան մատենադարանի համատեղ կազմված «Ուրբաթագրքի» և «Պարզատումարի» (№ № 1632 և 1633) կազմը նույնպես սկզբնական է, բայց եռագիծ շրջանակների մեջ խաչաձև դրոշմված են վեցթևանի աստղազարդեր, ինչպես նաև վարդակներ:

Կազմերը ունեցել են կաշվե ամրակներ, որոնց միայն փայտե մեխերի անցքերն են մնացել:



Նկ.2

Ուշադրության են արժանի Մատենադարանի և Պատմության թանգարանի վերահիշյալ կազմերի աստառը, որ նույնորակ հաստ թելով գործված մուգ կա-

պուշտ կտալ է, ինչպէս նաև կոնակի վերևի ու ներքևի եզրաքուղերը, որոնք գործված են սպիտակ ու կարմիր թելերով: Նման եզրաքուղեր ունեն Մատենադարանի № № 1632 և 1632 համատեղ կազմված և Մյասնիկյանի անվան պետական գրադարանի № 3623 գրքերի կազմերը: Վերջինիս կազմը շնայած սկրզրնական է, բայց զուրկ է դրոշմազարդերից, վերանորոգվել է հետադաշում և ունի մագաղաթյա պահպանակներ (թերևս ժ կամ ժԱ դարերի, մասն Ղուկասի ավետարանի):

* * *

«Պարզատումարը» իր բովանդակությամբ միջնադարյան մարդուն հետաքրքրող, գործնական նշանակություն ունեցող, երբեմն նաև սնտապաշտության հետ առնչվող աշխարհիկ բնույթի նյութերի մի ժողովածու է, որ իր խորագիրը ստացել է գրքի սկզբում տեղադրված տոնացույցի անունով:

Ժողովածուի մեջ ընդգրկված են հետևյալ նյութերը.

1. Տարվա տաճոտերների աղյուսակ:

2. «Պարզատումար».— Հայոց եկեղեցու, ինչպէս նաև մյուս քրիստոնեական եկեղեցիների տոները ժամանակային առումով շարժական բնույթ են ունեցել և դարերի ընթացքում օրացույցի կատարելագործման հետ մեկտեղ մի քանի անգամ բարեփոխումների են ենթարկվել: Տոմարական բարդ հաշվարկումները, որոնք աստղաբաշխական ճշգրիտ գիտելիքներ են պահանջել, միշտ չէ, որ հասանելի են եղել եկեղեցու, մասնավորաբար նրա ստորին դասի սպասավորներին, ուստի դեռևս վաղ ժամանակներից սկսած եկեղեցական տոների ու միջոց ուտիքների (եկեղեցական կարգով սահմանված պահքից ազատ օրերի) համար կազմվել են տոնացույցի պարզ և համառոտ ձևանարկներ, որոնք կոչվել են պարզատումար (պարզատումար): Հայկական ձևադիր մատյաններում երկու ձևի պարզատումարներ են հանդիպում՝ աղյուսակային և պարզ արձակ շարադրանքով: Հակոբ Մեղապարտը օգտագործել է վերջին ձևը՝ տալով 35 տարիների տոնացույց՝ սկսած հայոց 961 թվականից:

3. Տարվա ամսանուններն ու նրանց օրերի թիվը, լուսնի ծնունդի, ինչպէս և տարվա վերադրի որոշման բանաձևեր:

4. «Յաղագս ամսաց և երկնից».— Այս բաժնում երկնային մարմինների ժողովրդական դարավոր դիտարկումների փորձի հիման վրա տրված են եղանակի փոփոխությունների կանխատեսումները, մի բան, որ շափաղանց կարևոր էր հիմնականում գյուղատնտեսությամբ զբաղվող հայրենի երկրի ժողովրդի, ինչպէս նաև Արևելք-Արևմուտք համաշխարհային տարանցիկ ճանապարհների վրա ուղևորությունների մեջ գտնվող հայ վաճառականության համար:

5. «Թէ կամիս իմանայ զձմեռն թէ դժար գայ, թէ ոչ».— Տոմարական հաշիվներով կանխագուշակումներ են առաջարկվում խիստ և թույլ ձմեռվա մասին:

6. «Մերոյն Կիրզի հայրապետին ասացեալ է վասն կաղանդաց».— Ըստ տարվա առաջին օրվա տոմարական զուգադիպության կանխագուշակումներ են արվում ողջ տարվա վիճակի, եղանակի, բերքատվության, հիվանդությունների և տեղի ունենալիք սպասելիքների մասին:

7. «Ումեմն իմաստասիրի ասեալ յաղագս լուսնին ամուրցն, որ գերագն յայտնէ».— Տարբեր բնույթի աշխատանքներ կատարելու՝ տան հիմք դրելու, ցանկելու, ճանապարհ ելնելու, հիվանդին բուժելու, երեխայի ծննդյան համար նըշ-

վում են լուսնային ամսի յուրաքանչյուր օրվա նշանկութունը, ինչպես նաև երազների կատարման ժամկետները:

8. «Տղայի ծննդեան, վասն տղայի է ատուն...».—Երեխայի ծննդյան օրվա անունով կանխագուշակվում են նրա բնավորության գծերը, կյանքի տևողութունը:

9. «Նշանացոյց».— Տյառնընդառաջի տոնի 4-րդ օրվա եղանակի և աստղերի ցուրքի հիման վրա կանխագուշակումներ են առաջարկվում ողջ տարվա վիճակի մասին:

10. «Յաղագս շարժմանց».— Տարվա տարրեր ժամանակներում տեղի ունեցող երկրաշարժերով կանխատեսումներ են արվում ողջ տարվա ընթացքում տեղի ունենալիք դեպքերի մասին:

11. [Տումարագիտական բանաձև] .— «Եթէ կամիցես իմանալ զամս ի սկզբանէ արարածոց մինչև ուր ես՝ կալ ր. և ջ. հ. դ. և զհայ թուական ի վերայ բեր և այն է: Եւ ի Ք[րիստոս]ի ծնընդենէն մինչև ի մեզ՝ կալ հինգ հարիւր և յիսուն և երկու և զհայ թուական ի վերայ բեր և այն է»:

12. «Վասն լուսնի, որ բակ առնու».— Լուսնի շուրջ երբեմն գոյացող ծրածանագույն շրջանաձևի հիման վրա տարվա վիճակի մասին կանխատեսումներ են առաջարկվում:

13. «Մարմնախաղաց».— Մարմնի տարրեր մասերի շարժումների՝ խաղերի հիման վրա կանխատեսումներ են արվում մարդու հետ առաջիկայում տեղի ունենալիք դեպքերի համար:

«Պարզատումարի» տպագրական արվեստը նույնն է, ինչ Հակոբ Մեղապարտի մյուս չորս գրքերինը. տառատեսակը բոլորագիր է, տպագրությունը երկգույն, բնագրերը սև, վերնագրերը և պարբերությունների սկզբնատառերը կարմիր, էջի շարվածքի շափսերը՝ 6,5×13 սմ, կազմի շափսերը՝ 9,5×14,5 սմ, պրակները՝ 8 (Ա-է՝ 16 էջ, Ը՝ 8 էջ, որից երկու էջ դատարկ), ընդամենը 120 էջ, ունի ժապավենաձև էջախորադրային ճակատադարձեր, զարդագիր գլխատառեր, տիտղոսաաթերթի վրա՝ «Այս է պարզայտումար հայոց», էջ 118-ի վրա՝ տպարանանիշը լատիներեն D. I. Z. A. սկզբնատառերով:

«Պարզատումարի» 9 օրինակներ²⁵ պահվում են՝

Մաշտոցի անվան Մատենադարանում	2 օրինակ
Հայկ. ՍՍՀ ԱԼ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում	1 »
Հայաստանի պատմության թանգարանում	1 »
Վիեննայի Մխիթարյան գրադարանում	2 »
Երուսաղեմի Մ. Հակոբյանց վանքի գրադարանում	1 »
Մյունխենի պետական գրադարանում	1 »
Օքսֆորդի Բողոքյան գրադարանում	1 »

В. Л. ЧУКАСЗЯН

ДАТА ИЗДАНИЯ «ПАРЗАТУМАРА»

Резюме

В связи с подготовкой факсимильного издания «Парзатумара» («Объяснительного календаря») — одного из первых армянских печат-

²⁵ 1946 թ. 9. Լուսնյանին հայտնի էին միայն 6 օրինակ. տե՛ս նրա «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946, էջ 44:

ных изданий, автор статьи изучил вопрос времени и последовательности издания первых армянских печатных книг. Принимая за основу формулу календарных исчислений Ованеса Саркавага (XI в.), приведенную в «Парзатумаре», автор статьи считает, что после «Урбатагирка» («Молитвенника», 1512 г.) был издан «Парзатумар» (1513 г.), а затем «Патаракатетр» («Требник», 1514 г.).

B. L. TCHOUKASZIAN

LA DATE D'ÉDITION DU "PARZATOUMAR"

(Résumé)

A l'occasion de l'édition en fac-simile du "Parzatoumar" ("Calendrier expliqué"), l'un des premiers livres arméniens imprimés, l'auteur de l'article a étudié la question des dates d'édition et de la succession des premiers livres arméniens imprimés. Se basant sur la formule des calculs du calendrier de Hovhannes Sarkavag (XIe siècle), découverte dans le "Parzatoumar", l'auteur considère que le "Parzatoumar" (1513) a été précédé de l'"Ourbataguirk" ("Livre de prières", 1512) et suivi du "Patarakatetr" ("Missel", 1514).

**ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԵՆՆ ԶԵՌԱԳՐԱՅ
ՀՍԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ**

Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանի գրքային ֆոնդում, բազմաթիվ հնատիպ գրքերի հետ, առկա են նաև մի քանի ձեռագրեր—ժն դ. առաջին քառորդի մի Ավետարան (№ 692), 1734 թ. մի Տոնացույց (№ 592), ժՁ դ. առաջին կեսի մի Ժողովածու (№ 741), 1850 թ. մի Բառգիրք (№ 693) և հնատիպ գրքի վերանորոգության 1675 թ. մի Հիշատակարան (№ 438), ընդամենը հինգ միավոր: Դրանք թեև 30-ական թվականներից ի վեր գտնվում են թանգարանի ֆոնդերում, սակայն ցարդ դուրս են մնացել բանասերների տեսադաշտից:

Ստորև տալիս ենք դրանց նկարագրությունը:

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԱՎԵՏԱՐԱՆ

(Պատմության քանգառան, № 692)

Ժն—XV

Գրիչ, ծաղկող և ստացող՝ Մկրտիչ:

Թերթ՝ 288, չգրված՝ 1ա, 22ա, 24ա, 39ա, 84ա—85ա, 136բ—137ա, 185ա, 223ա, 242ա, 246ա: Պրակ՝ Ա-ԻԵ×12 (ժԳ, Ի—ԻԲ 10, ժԹ 8): Նյութ՝ թուղթ, բամբակյա: Մեծություն՝ 18,5×14: Դրություն՝ երկսյուն: Գիր՝ բուրբուռի: Տող՝ 21: Կազմ՝ զրոշմազարդ շաղանակազույն կաշի՝ դռնակով, Ա փեղկի կենտրոնում արծաթյա փորրիկ խաչ, որի կենտրոնում եղել է ակ (այժմ ընկած), միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր կտավ: Պահպանակ՝ 2 թերթ չգրված թուղթ սկզբից:

Պատառիկ-պահպանակ—2(Ա-Բ)÷2(Գ-Դ), ստացված 1-ական ամբողջական թերթերի ընդլայնակի երկտակումից: Մազազաթ, երկսյուն, ուղղազիծ երկաթագիր, մասն ինչ-որ ճառի:

Մանրանկարչություն—տերունական նկարներ՝ 4ա Փախուստ լճափառու, 5ա Մնունդ և երկրպագութիւն մոզուց, 7ա «Ննջումն Յովսեփու», 9ա «Մկրտութիւնն է Քրիստոսի Աստուծոյ մերոյ», 81բ «Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», 82ա «Աւերումն դժոխսց», 110բ «Պայծառակերպութիւնն է Քրիստոսի», 140բ Յայտնութիւն, 146 բ Քառասնօրեայ զալուստն ի տաճար, 217բ «Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», 254ա «Ղազարու Յարութիւնն է», 256բ «Ծաղկազարդ», 261բ «Պատարագելն Քրիստոսի Աստուծոյ մերոյ», 264ա «Հոգւոյն Սրբոյ իջումն ի վերնատանն՝ ի սուրբ յառաքեալսն», 271բ «Ըմբռնումն Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի», 276բ «Խաչելութիւն», 278բ «Բաղումն Քրիստոսի Աստուծոյ»: Ավետարանիչներ՝ 1բ Մատթէոս, 85բ «Մարկոս

անտարանիչն է», 137բ «Ղուկաս ան[տարանիչ]», 218բ «Յովհաննէս ան[տարանիչ], Պոստորոն»: Կիսախորան՝ 2ա, 86ա, 138ա, 219ա: Լուսանցագարդ՝ րուսական, տանար, տերունական նկարներ (81ա Մարիամ Մագդաղենացի): Զարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր և ավետարանիչների խորհրդանիշերով: Գույներ՝ կարմիր, կապույտ, դեղին, շագանակի, սևի:

Վիճակ՝ բավարար. խոնավութունից ստորին լուսանցքները գունափոխված և լուսանցանկերը բամբակալած, վերջին մամուլի ստորին արտաքին անկյունը փտած և քայքայված՝ պատարիկ-պահպանակը վնասված և գիրը գունաթափ: Կաղմի Ի փեղկի ստորին մասը սև կաշվով XIX դարում նորոգված:

Մանար. վերջում 1 թերթ երբայեցներեն գրությամբ մագաղաթյա պատարիկ, որ պատահարար է դրված ձեռագրի մեջ:

ԲՈՎԱՆԳԱՌԻԹՅՈՒՆ

1. 2ա—83բ Աւետարան քառ Մատթէի:
2. 86ա—136ա Աւետարան քառ Մարկոսի:
3. 138ա—218ա Աւետարան քառ Ղուկասու:
4. 219ա—284ա Աւետարան քառ Յովհաննու:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

136ա Երես ի գետին դնեմ և աղաչեմ զձեզ՝ յիշել զճնաւդսն իմ, զհայրն իմ՝ զԱւապէլ և զմայրն իմ՝ զԳովլլադ, և Աստուած զձեզ յիշէ. ամէն:

(Նկարների շրջանակների կապույտ կողերի վրա՝ սպիտակադեղով).

110բ Զստացող և զնկարող Մկրտիչ աղ[աչեմ]:

261բ Զնկարող և ստացող մեղապարտ Մկրտիչ աղաչեմ յիշել:

276բ Զստ[աց]ող և զնկարող Մկրտիչ:

278բ Զստացող սուրբ Աւետարանիս յիշ[ել]:

Թրպիլի և Գովլաթի սրդի Մկրտիչը եղել է Գրիգոր Տաթևացու աշակերտներից: 1407—1432 թթ. Տաթևում, Մեծոփա և Հուսկան սրդվո վանքերում, ինչպես և Արճեշում ընդօրինակված մի շարք ձեռագրերում Մկրտիչը հիշատակվում է սրպես թուղթ կոկող, գրիչ կամ ստացող (տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, ՓՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 743, № 16): Այստեղ հայտնի է դառնում, որ նա եղել է նաև նկարիչ:

ՀԵՏԱԳԱՅԻ

284ա Գարձեալ յիշեցէք զստացողն սուրբ Աւետարանիս՝ զխոջայ Յովա-նէս (տողամեջ՝ «գորդիսնն Բաառն»), որ քստացաւ զսայ ի հայալ վաստակոց իւրոց, և ծնողս իւր՝ զխոջայ Միխայէլն, և զմայրն իւր՝ զՄաղսումն, և զգուր արեան մերձաւորքն, և եղից (տողամեջ «ի Բաղէշ»), ի դուռն հինխորանին՝ յիշատակ իւր ծնողացն: Թէ որ յանդգնի կամ ծախէ կամ գրաւէ, զպատիժն Յո[ւ]դաին առցէ և զհաշուածոց. ամէն: Թվին ԶԾԴ (1505):

284բ Ես՝ աստուածասէր և բարեմիտ Ղալաբէկիս Էսու նորոգել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն, հօրն՝ Ամիրջանին և մօրն՝ Մ[ա]յրգ[ա]յրտին, և որդոցն՝ Աշխանին, Ամիրաղին, որ ի պարսիցն սրա-

հողհող եղեալ կատարեցաւ առ Աստուած, և դստերացն՝ Գուգալաղային, Սալամուն, յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

285ա Գարձեալ յիշեցէք [ի] Քրիստոս զբարէմիտ տանուտէրն Շահենն և զկողակիցն՝ զՆբարն, և որդուն՝ Մաւրատին, Գրիգորին, Մինասին, Գիլաֆին, Միֆաէլին, և դստերացն՝ Ուլիդին, Ասլմատին, և ծնողացն՝ Գիլաֆին, Սուլթանին, որ պատճառ եղեալ զՍուրբ Գէորգն իւր յալալ վաստակովն և ձեռաց ամակով շինեաց ի Ջննի գեղն և ետ յիշատակ ի դուան Սուրբ Գէորգայ զսուրբ Աւետարանս, սուրբ նիշան մի, Բ(2) խաշ՝ անջինն յիշատակ հոգուն իւրոյ: Եւ որ հանդիպի, լի բերանով և բոլո[բո]վ սրախ Աստուած ողորմի ասացէք, և Աստուած [զձեզ ողոր]մեսցի իւր միւսանդամ [զալստ]եան. ամէն: Եզիցի, Եզիցի: [Թ՛վին Ռ]ՃԾ (1701):

2

ՏՈՆԱՅՈՅՅ

(Պատմության քանգարան, N 592)

ՌՃԶԳ — 1734

Թերթ՝ 4+էջ 1—292+4. չգրված՝ սկզբի և վերջի շէջակալված 4-ական թերթերը: Պրակ՝ 1×4+Ա.—ԺԹ×8+1×4: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 15,5×10: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր: Տող՝ 25: Կազմ՝ զրոշմագարդ շաղանակազույն կաշի, միջուկը՝ սովարաթուղթ, աստառը՝ թուղթ:

Վիճակ՝ բավարար:

Մանր. գրված 1664 (—1665)-ին Ամստերդամում հրատարակված Շարակնոցի սկզբում:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

էջ 1 Տօնացոյց հաշոց ուղղափառաց—Տօնացոյցս այս շարադրեցաւ ըստ կարգի տարեգրոցն՝ վասն բաճնալոյ զամենայն դժուարութիւն...

Հաջորդում է շարժական տոների աղյուսակը՝ ՌՃԶԳ-ՌՄՂԹ (1734—1843): Հետևապէս ՌՃԶԳ (1734)-ն պետք է համարել զրշության թվականը:

3

ԺՈՂՈՎԱԾՈՒ

(Պատմության քանգարան, N 741)

ԺԸ—XVIII

Թերթ՝ 72. չգրված՝ 1թ, 72աթ: Պրակ՝ Ա-Զ×12: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 9×13,3: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր: Տող՝ 17: Կազմ՝ սև լաթ, միջուկը՝ սովարաթուղթ, աստառը՝ թուղթ: Պահպանակ՝ թուղթ 1+3, չգրված:

Վիճակ՝ բավարար:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 1ա-41բ [Պաղտասար Գպիր]: Գրգուկս Շահալտ. ունի յինքեան բազում ինչ հաւաքեցեալ աստի և անտի յաղագրս օգտի որոց միտս ունին և լսելիս: Տպեցեալ կարողութեամբ Աստուծոյ, ի հա[յ]րապետութեան սրբոյն էջմիածնի՝ Տեառն Աստուածատրոյ սրբազան կարողիկոսին Ամենայն Հայոց, ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ Տեառն Գրիգորի շնորհազարգ եպիսկոպոսի, ի հրշակաւոր մայրաֆաղափին Կոստանտրնուպօլսի, հրամանաւ նորին առաջնորդի՝ Տեառն Յօհաննիսի աստուածաբան վարդապետի: Տեսութիւն վասն հաւատոյ — Յառաջ բան դամենայն հարկաւորութիւն պարտ է քրիստոնէին գիտել զհաւատն...

Աստվածատուր Համազանցի կաթողիկոսի օրոք (1715—1725) կատարված այն հրատարակութիւնը, որից ընդօրինակված է այստեղ, մատենագիտական աղբյուրներում չի արձանագրված: Այդ մասին խոսվում է 1750 թ. հրատարակութեան անվանաթերթում (տե՛ս «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ», Երևան, 1963, էջ 236, № 999):

2. 42ա-71բ [Այլ բնագրեր]

ա. 42ա—49ա Հարցմունք սրբոյն Բարսեղի Կեսարացոյ և պատասխանիք եղբօր խոյ սրբոյն Գրիգորի — Բարսեղ ասէ. Ոչ էին երկինք և երկիր, աստուածութիւն ո՞յ վերայ կազմէր...

բ. 49ա-59ա Հարցմունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և պատմելո[յ] հրեշտակին վասն հոգոց — Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց զբառասուն տիւ և քղբառասուն գիշեր հաց ոչ եկեր...

գ. 59բ-70բ Տեսիլ սուրբ Աստուածածնին, զոր ետես ի լեառն Չիրեմեաց — Խորհեցաւ ամենասրբունհի Աստուածածինն Մարիամ երթալ ի լեառն Չիրեմեաց՝ կալ յաղօթս...

դ. 71բ [Անխորագիր] — Ուրախ լիք, Գառին մայր և հովիւին մայր... Յունաց բառիցն թարգմանեալ է:

4

ԲԱՌԳԻՐՔ

(Պատմութեան բանգարան, № 693)

Նովրուզու

1850—1853

Գրիչ և ստացող՝ Մելքոն դպիր Տէր Մելքիսէթեանց Ազուլեցի:

Թերթ՝ 3 (Ա-Գ)+1 (Դ)+1—241+1 (Ե)+6 (Զ-ԺԱ), շարված՝ Ա-Գ, Ե-ԺԱ (գրչափորձեր): Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 17,5×10,5: Գրութեան՝ միասյուն: Գիր՝ շղաղիք: Տող՝ 40—50: Կազմ՝ սև կաշի, միջուկը՝ տախտակ, աստաղը՝ թուղթ:

Վիճակ՝ բավարար:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

1ա-241ա Տեսակ բառից ի գրքառէ յաշխարհարառ—Ա. միջարկութիւն, զարհուրանք: Վա՛յ, Վա՛յ, Ո՛հ, ո՛հ... Յորայ կամ ֆօքի (լատ.-յուն.). Որթ ծովային: Տե՛ս Փոկ: Վերջ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Դա. Ի 1850 ամից մինչև ց. 1853 ամ սկայ գրել, բազում զանազան բառիք գծագրեցի և կատար հասուցի. գեղեցիկ ոճով գրարանէ թարգմանեցի աշխարհարան ալլազգի բառիք. Տիրացու Մելիքն զպիր Տէր Մելիքիսեղեան Ազուլեցի Վանիան:

ՀԵՏԱԳՈՅԻ

Դր. Ի գրեանց Մելիքում Տէր Մելիքիսեղեանցին: Գրեցաւ 1854 ամի Ի 16 յուլիսի, Ի պիզն նովրուզաւ: Այս թվականին եղև պատերազմ օսմանցոց ընդ ռուսաց. վերնական խնամոցն պարտեցաւ օսմանն ընդդէմ ռուսաց: Գեղարճունոյ բնակիչ, Արծրունեաց արծիւ, հաստատ բազուկն մահզէսի Մարգարէն, բառ հեղինան (sic) Դաթի, կոտորեաց զբազում ջալալիսն և աղատեաց զգիզն Ալիզըրլ. քսան և երեք քրտի զլուխ կտրեաց և երեքն կենդանի ըմբանեաց:

5

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՍՏԻՊ ՇԱՐԱԿՆՈՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ

(Պատմության քանգարան, № 438)

ՌՃԻԴ—1675

Գրիչ և վերանորոգող՝ Բարսեղ երէց: Ստացող՝ Սարգիս Բնյ.:

Թերթ՝ 1: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 15,5×10: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բուրբգիր, համաշափ և գեղեցիկ:

Վիճակ՝ բավարար:

Մանր. Գրված 1664(—1665)-ին Ամստերդամում հրատարակված Շարակնոցի 780-րդ աղատ էջի վրա:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ

էջ 780 Զվերջին նորոգել առող վարդափթիթ բուրաստանիս, որ կոչի Շարակնոց, հեղահոգի, բարեմիտ և աղքատասէր Սարգիս քահանայս, որ ետ գտա նշուշտել և կրկին զարդարել վասն յիշատակ անջինջ լինելոյ հոգւոյ իւրոյ և ծնողացն, հօրն... (բաց) և մօրն ... (բաց) և եղբօրն՝ Յովսէփին և իւրոց [որ]դոցն: Այլ և յիշեցէք զտէր Սարգիս, զնորարարոջ զորդիսն իւր՝ գնեսէս և գՊօղոս զպիրն... (բաց): Այլ և յիշեցէք զտէր Սարգիսն և զկենակիցն իւր՝ գՊուլազարն: Դարձեալ յիշեցէք զտէր Սարգիսն և զամենայն արեան մերձատրաց. կենդանեացն՝ կեանք և առողջութիւն և խաղաղութիւն խնդալ յԱստուծոյ, ննջեցելոցն՝ հանգիստ և ողորմութիւն [և] զերկնից արքայութիւն: Յիշողքն յիշեալ լիցի[ն] Ի Յիսուսէ՛ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Նորոգեցաւ Շարակնոցն Ի թուականիս Հայոց ՌՃԻԴ (1675) ամին, յունուար ամսոյ ԻԵ (25) օրն՝ ձեռամբ բազմամեղ և փժուն Բարսեղ իրիցու՝ որդի

Գրիգոր քահանայ[ի] և շնորհալից վարպետի, որ և յայսմ ամի փոխեցաւ
առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն:

Արդ, ով որ հանդիպիք սմա, [յիշեց]էք զվերոյգրեալ տէր Սարգիսն և
զամենայն արեանատու մերձաւորսն իւր և մեղաց թողութիւն խնդրել յԱս-
տուծոյ: Ընդ նմին և զիս՝ զանարժան Բարսեղ գրիչս հանդերձ ծնողօք և ազ-
գականաց մերոց թողութիւն խնդրել, և ձեզ մասն բարի լիցի ի Քրիստոս:
Աստուծոյ մերոջ. ամէն: Հայր մեր:

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԱՅ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՉԱՆՅ*

Չեռագրերի այս խումբը նկարագրել են Օ. Ս. Եզանյանը (№ 25—27) և Յ. Հ. Վարդանյանը (№ 28—34):

25

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՌՄԾԳ—1805

Գրիչ, սաացող՝ Տէր Գէորգ:

Քերթ՝ 85 (1ա—78ա էջակալված՝ Ա.-ՃԾէ). չգրված՝ 79բ—85 բ: Պրակ 9×10 (Ա՝ 7, Ը՝ 8): Նյութ՝ թուղթ, թագանշան լուսադրոշմով և լուսագծերով: Մեծուրյուն՝ 16,7×22,5: Գրուրյուն՝ երկսյուն, կարմրագիծ շրջագծերի մեջ: Գիր՝ նոսրգիր: Տող՝ 29—37: Կազմ՝ բալագույն կաշի, սսկեզօծ ծաղկադրոշմ շրջանակազարդով, միջուկը՝ սավարաթուղթ, աստառը՝ կարմիր ծաղկաթուղթ: Պահպանակ՝ 1 թերթ վերջից:

Վիճակ՝ բավարար: Սկզբի պահպանակն ու Ա. սյրակի առաջին չգրված թերթը կտրված ընկած՝ երևում են հետքերը: Տեղ-տեղ կան խոնավության հետքեր:

Ծանոթ. Պատկանում է երևան քաղաքի բնակիչ. պարտիզակցի Հակոբ Արզումանյանին:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՔՆՈՒՆ

1. 1ա—27բ Յուդակ մեկնելի բառից ինչ նաբէկին—Ազանիլ՝ կենալ տեղ մը—օթուրագ էթմէք. Հե, ԺԳ... Օցաօղ՝ բաժանօղ՝ ցրտօղ, բաժանուած, զլուխ—տաղրտան. ԺԳ, Դ. կամ՝ բաշած, այրվիչ, պաշ շէրմիչ: Խ. Լ.:

Առաջին սյունակում նշված են զլխարտները և հայերեն բացատրությունները, իսկ երկրորդ սյունակում՝ թուրքերեն համարժեքներն ու նարեկի զլուխներն ու տնահամարները:

2. 28ա-50ա Կռակ առաւելալ տեառն Յակոբայ հագիրնկալ աստուածարան պատրիարգէ ի Կոստանդնուպօլտոյ: Ողբ և սուգ վասն մեծի աւուր ուրբարի և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի—Ո՛վ ամենասքանչ և գեղեցիկ հարսդ երկնաւոր փեսային... Որ և շնորհ յայսմ սգոյ գիշերիս և շարշարանաց շնորհին և զմեզ մաքրեսցէ Քրիստոս Աստուած ամենայն մեղաց մեքոց, ամէն:

բ. 50ա-51ա Տաղ ի վերայ սուրբ խաչելութեան և սուրբ քաղմանն Քրիստոսի— Յիսուս որդեակ՝ գառնան գուշակ, Որպէս ծաղիկ՝ վարդ մանուշակ... Սխտօր աւաղ իմ արեւոյս, Ձի եղէ ևս որդէկորոյս:

*Սկզբը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հ. 13, Երևան, 1980, էջ 297—333:

3. 51ա-52ա Փեղեցկայարմար տաղս բանահիստեցեալ ի հոգեկիր հոնառել սրբոյն Գրիգորի նարեկացոյ, զոր ասացեալ է ի վերայ բոլոր տնօրենութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ—*Սայլ իջանէր ի լեռնէն Մասեաց, ի՞նչ վերայ նորա աթոռ սկեղէն...* Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

4. 52ա Հստ առաքելոյ՝ Սաստեայ, յանդիմանեայ և մխիթարեայ, և այս խնամակալութեան սիրոյ է—*Զի յանդիմանել ասաց և ոչ եթէ դանել...* ոչ մնացէ առ քեզ հետք մեղացն:

5. 52ա-բ Վարժ սրբոյն Յօհաննու—*Առաջին՝ զի զինի ոչ ըմպէր...* սրբոց մխիթարիչ:

6. 53ա-77ա Կտակ շարշարանաց և խաշելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (հայատառ թուրքերեն)—*Այսօր մայրս մեր սուրբ եկեղեցի... Պուկին վալիաէմիզ սուրբ եկեղեցի... վէ քէնտի սուրբ շնորհքունու իւզէրիմիզէ հազո նազրո էյլեսին:*

7. 77բ-78ա [Ողբ]—*Մենացիր, անձն իմ խղճալի, ի՞նչ բազմութեանց լեալ ի բաց/, Յումմէ յուսաս գրարութիւն, ի՞նչարեպաշտօն շք մնաց.../ Արածութիւնք, սովք և ժանտ ախտք/ Արդէն զմեզ պաշարեալք, Քառ եղանակքք խանգարեալք/, Յանդորութիւն շմնաց:*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

51ա. Գրեցաւ տետրակս կամ Կտակ շարշարանաց Քրիստոսի, քնդ հովանեաւ Սրբոյն Վէարգայ ի նորաշէն սուրբ եկեղեցոյն, մէղասպարտ և անարժան սպասաւոր ձեռամբ անգոսնանոց որումն հրիցու, ի ՌՄԾԴ (1805), փետրվարի ԻԷ (27), աւարտեցաւ օրն հրկուշարթի: Զի տիպ սորա ասեցաւ Սուրբ Կարապետի նուիրակ էտիմնիկցի հեղահոգի Սարգիզ ամենիմաստ վարդապետէ, զոր Տէր Աստուած ակնունելի աստիճանի իւրում շեշտիւ ժամանեցուցէ. ամէն:

ԳՐՉԻ ՀԵՏԱԳԱՅԻ ՆՇՈՒՄՆԵՐ

1. Հայոց թուականն ՌՄԾԸ (1809)-ինտէ, յունվարն ԻԶ (26)-սրնաայ, տաճիկլէրին զիլհիճճէ այլնրն Ի (20)-սինտէ, սալի կին սահաթ պէշի կէշէրէկ պիր շէտիտ զէրզէլէ օլտու. էլլիվէ սէքսէն հաշրնտա ատէմլէր պէօլլէ զէրզէլէ կէօրմէտիկ տէտիլէր: Վէ պէնտէնիզ հիւմլէնին այագ թիրապը տէր Վէարգ, հրաշագործ Սուրբ Վէարգ եկեղեցիինն սօլ թարաֆրնտայ իւշիւնճիւ տիրէկին տիպիւտէ օթուրմուշ, արագահաս սուրբ Սարգիզին պատմութիւննունու օհուրուում, հալլընըզ քէնտիմ, լաքին սուրբ Խաչն վէ պու աղիզ նահատակլարն վէ աղիզ հրեշտակլարն վէ հիւմլէ սուրբլարն հրֆիզէթ մէլէթիւլէն պինալէր վէ ինսանլար սէլամէթ պուլտու. փառք Աստուծոյ: Լաքին իւշ էվ եքրլար վէ պիր տաճիկ գարբսը թէլէֆ օլտու տէտիլէր: Պիլմէք իշին հազըլմըշտըռ. վէսէլամ:

2. 79ա Հայոց թուականն ՌՄԾԶ (1807)-սրնաայ, փետրվարն է (7)-սինտէ, հինգշարթի կին ժԱ (11) ինկլիզ կէմիսի աղիմ ճէնկ էտերէկ, պու Դ (4) քալէնին մապէլնինտէն կէշտի, վարտը նաղարանն իշինտէ, օսմանլընն Թ (9) կէմիսինի հաքտը, վէ քէնտի կէմիսինին Բ (2)-սինի նաղարատայ պրաքտը Թ (9)-ունու օլ կէճէ տօղրու Խտամպօլայ վարտը, Սուլքան Սէլիմէն նէ միւշէվէրէ էրտիլէր, քիմսէ պիլմէտի, վէ թէքրար կէլտի փետրվարըն ժԸ (18)-ինտէ

կէշտի կիրտի աշաղեայ Գումբալէնին աշրդնտայ տէմիրլէտիլէր, լաքին պու կէշմէսինտէ շօք սաքաղլանար, գիրայ մէնշուր Սիմիր գումանտար տախի էօլտիւ տէտիլէր, վէ մարտըն Թ (9)-ունտայ Մօսկօֆ պօհնա ատասընը ճէնկիլէ գապգ էդտի:

3. 79ա Հայոց թուականն ՌՄԾէ (1808)-սինտէ, սեպտեմբերին ԻԳ (24)-ինտէ, հինգշաբթի կին սահաթ ժԱ. (11)-տէ, աղշամ ժամընը սէօյլէրիքէն աստուածապարգև պիր էրքիկ շօճուկ տօղտու. ատր Գէորգ գօնուլտու:

4. 79ա Հայոց թուականն ՌՄԾԸ (1809)-ինտէ, յունվարն ժ (10)-ունտայ ինկիլիզ պարըշար Սուլքան Մահմուտլան, լաքին պու արալրկտայ իքի փատիշահ թէլէֆ օլթու. պիրի՝ Սուլքան Սէլիմ, վէ պիրի Սուլքան Մըստաֆայ աղիմ ճիլլիս օլդու իւշ տէֆա Խսամպօլտայ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

(Պահպանակի ա էջի վրա) Արգումանեան Յակոբ Տանկաստանցի՝ Պարտիզակ Զագար գիւղացի. 1921-ին յունիսին 11-ին Յունաստան եկանք: 1947 օգոստոս 15-ին Հայաստան եկանք՝ Երեվան:

26

ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ

ԺԸ—XVIII

Սաացոդ՝ Մահդասի պրն. վարդ:

Թերթ՝ 82. շրված՝ 1ա-2բ, 11ա: Պրակ՝ Ա-է×12 (Ա, 2-է՝ 10, Բ-Գ՝ 14): Նյուլ՝ թուղթ, լուսագծերով: Մեծուրյուն՝ 11×8: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 13—16: Կազմ՝ սե կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ շիք:

Մանրանկարչուրյուն—Ներսես Շնորհալի՝ 2բ, ամկտարանիչներ՝ 12բ, 13ա: Կիպրիանոս՝ 23բ, Գավիթ՝ 36ա, Աստվածածին՝ 45ա, Ս. Մարգիս՝ 60ա, Գրիգոր Նարեկացի՝ 76բ: Գույներ՝ կարմիր, դեղին:

Վիճակ՝ խոնացած, խոնավությունից գունափոխված, սևացած, կազմի կաշին քայքայված, տախտակները ջարդված, աստառներն ընկած:

Մանր. նկարագրման պահին (30.06.1981) եղել է «Երեկոյան Երևան» թերթի ինֆորմացիայի բաժնի վարիչ Միհրան Ստեփանյանի մոտ:

ԲՈՎԱՆԴԱՌԹՅՈՒՆ

1. 3ա-10բ Տեանն Ներսեսի հայրապետին է ասացեալ—Հաւատով [խոստով]անիմ...

2. 13բ-23ա Ուրբաքազիւք, Կարդան ի վերայ հիւանդի յատու ուրբաքի-նէ ևս խաղաղութեան... Ընթերձած Եղեկիկէլէ մարգարէէ. Եւ եղև բան Տեանն առ իս...

3. 24ա-35բ Աղօրք սրբոյն Կիպրիանոսի և Յուսա[ի]անէ կուսին—Յայնժամ կայր ի քաղաքին Անտիօք կոյս մի գեղեցիկ...

4. 36բ-41բ Աղօրք սուր և պիտանի, կարդան ի վերայ հիւանդ[ին] յատու ուրբաքի—Կարդամք առ բեղ Հայր, Տէր երկնի և երկրի...

5. 42ա-4բ Գիր գլխացաւի և ամենայն ցեղ ցաւոց—Ժառ մի կայր ի մէջ երկրի տիեզերաց, որ ոչ ճուղ ունէր...

6. 45բ-49բ Աղօրք տիրամայր սուրբ Աստուածածնին—Բարեբանեալ ես, ս՛վ ամենասրբուչի Աստուածածին...
7. 49բ-50ա Գիր պահպանութեան—Գայր գեան Յորդանան...
8. 50ա-52ա Գիր գլխացալի—Յորժամ գայր Յիսուս ի Գալիլիեայ ի Յորդանան...
9. 52բ-62ա [Բարեխօսութիւն վասն հիւանդաց]
— 52բ-3ա Բարեխօսութեամբ սրբոյն Մարութայի...:—53բ-5ա Անուամբ անեղին և անմահին Աստուծոյ Հօր...:—55ա-6բ Տէրըն տէրանց, արքայդ վեհից, հայեաց յազօթս քում ծառայից...:—56բ-7բ Բարեխօսութեամբ սուրբ մարգարէիցն Եղիայի, Եղիշէի...:—57բ-8ա Բարեխօսութեամբ սուրբ նահապետացն Ադամայ, Աբելի...:—58բ-9բ Բարեխօսութեամբ ամենայն միանձնացելոց առաքինասէր և աստուածուայց կրօնաւորաց...:—60բ-2ա Բարեխօսութեամբ սուրբ դօրավարաց սրբոյն Սարգսի...
10. 62բ-65բ Գիր շար աշիչ և շար նիարից և շար լեզաց դիմ—Ես՝ ծառայ Աստուծոյ զԵսայիոս առի ելերնառիօսի և մուշրուպայ ջուր...
11. 65բ—67ա Գիր գլխացալի և լեզակալի—Սուրբ կոյս տիրամայր Աստուածածին նստեալ էր ի վերնատուն...
12. 67բ-68ա Գիր շար աշից և շար նիարից—Ելեալ երթայր շար ալն...
13. 68բ-69ա Գիր կարմիր քամու և խումբայի: Զայս է գիրս գրէ ի վերայ և Ե հետ կարդայ՝ լաւան[ա] աստուծով—Խ, Ս, Ք, Է, Վ, Փ, Բ: Խէն՝ այսինքն խաշեալ...
14. 69բ Գիր խմայի է—Զի՞ կասիր արարի, կատակ արարի...
15. 69բ-70ա Գիր շեման: Աւ[ուր] ուրբարի գրէ—ի սկզբանէ էր Բանն...
16. 70բ-73ա [Գիր շար աշից և շար լեզուաց]—Բարեխօսութեամբ սուրբ հրեշտակացն Գարրիել[ի], Միքայէլի ... կասեցի ամենայն շար աշք, շար լեզու...
17. 73բ Գիր աշաց ցալի—Երանելին Փռաինայ խնդրեաց յԱստուծոյ...
18. 74ա Վասն ալեկոծութեան ծովու—Սուրբ Լախակոպոս Փսկաս խնդրեաց յԱստուծոյ, թէ որք յիշեն զանուն իմ ի վերայ ծով[ու], փրկեա զնոսա...
19. 74ա-76ա Կին [յ]որժամ դժար ճնանի—Սաղմոս. Առ Տէր համ[բարձի]: Ընթերձուած յնսայի մարգարէէ. Այսպէս ասէ Տէր...
20. 76ա Գիր ծծացալի: Գրէ Գ անգամ ի վերայ, լաւանայ աստուծով—Զի՞ կաս իրար, արի կատակ արարի...
21. 77ա-88բ [Գրիգոր նաբեկացոյ] Վերստին լաւելուած... խօսք բնդ Աստուծոյ—Եւ արդ, ի վերայ [այս]քանեաց յուսահատութեանց...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍՏԱՅՈՂԻ

1. 11բ Աւետիւն, կողակցուն՝ Չինարին, էլէքսանի կողակցուն՝ Շուշանին, Սարգսին, կողակցուն՝ Խամբէկուն:
- 12ա Յիշատակ է Ուրբաթագիրքս մահդասի պարոն Վարդին, որդոցն՝ Աւետրսին, էլէքսանին, Սարգսին, Մարգարին, Շահենին, Յուսէփն, Մեհրօին:
- 23ա ... Ողորմեա, Տէր, ծառային Աստուծոյ՝ մահդասի պարոն Վարդին (նման՝ 45ա, 65ա, 73բ):
- 35բ ... մահդասի պարոն Վարդին, կողակցուն՝ Զարգարին:
- 81ա Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք մահդասի պարոն

Վարդին, կողակցուն՝ Զարդարին, որդոց՝ Աւեսսին, կողակցուն՝ Զինարին, էլեֆանի, կողակցուն՝ Շուշանին, Սարգսին, կողակցուն՝ Խամբէկուն, || (81 ր) թոռանց՝ Մարգարին, Շահենին, Յուսեփին, Մէհրօին:

ՏՀա Մահդասի պարոն Վարդին, որ ստացաւ զսա յիշատակ հոգս իւր և որդոցն: Աստուած բարով վայելել տացէ. ամէն:

2. 81 ր (Այլ ձեռք) Այս է շահի գալն ||| թիվն ՌՃԶ (1731):

3. 81 ր (Այլ ձեռք) ... Յ[իշատակ է Ուրբ]աթգիր[բս...] Աստուածայարին և [......] թվին ՌՄԺէ (1768):

27

ՀՄԱՅԻԼ

ԺԵ—XV

Թերք՝ 1: Նյութ՝ մագաղաթ: Մեծութուն՝ $64 \times 8,5$: Գրութուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր:

Մանրանկարչութուն՝ Գրիգոր նարեկացի (սկզբում), Ղուկաս ավետարանիչ (վերջում):

Վիճակ՝ բավարար, սկզբից և վերջից պակասավոր:

Մանր. Պատկանում է Երևան քաղաքի բնակիչ Կառլեն Սիմոնյանին:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

1. Սերուն Գրիգորի նարեկացուն Բան մախրանաց—Աղաչեմք զանփոփոխելի տէրութեանդ...

2. Աւետարան բստ Ղուկասու—Եւ եղև ի հասանելն նորա ի մի քաղաքացն...

28

ԱԻԵՏԱՐԱՆ

Բռնաշէն գիւղ (Մոկֆ)

ՉԻԶ — 1477

Գրիչ՝ Մխիթար քահանայ: Մաղկող՝ Առաքել քահանայ: Կազմող՝ Յովանէս քահանայ: Ստացող՝ Մահդասի Սառայ:

Թերք՝ 318. չգրված 1ա, 11բ, 17բ—18ա: Պրակ $1 \times 11 + 1 \times 6 + 16 \times 12$ (Չ՝ 10, ԺԳ՝ 11, Գ, Ե, Թ, ԻԵ՝ 13): Նյութ՝ թուղթ: Մեծութուն՝ $16,7 \times 18,3$: Գրութուն՝ երկսյուն ($19,5 \times 5,5$): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Կազմ՝ մուգ շագանակագույն դրոշմադարդ կաշի, դռնակով և զույգ կապիշով. միջուկը՝ տախտակ, աստառը՝ բրդե կարմիր գործվածք: Ա փեղկի կենտրոնում արծաթե հավասարաթև խաչ, որ կենտրոնում և թևերին ունի հինգ կարմիր ակ. խաչի շուրջը 69 կոստղ:

Պատառիկ-պահպանակ՝ Գիրք հարցմանց Բարսղի Կեսարացու: ԺԱ-ԺԲ դդ: $1 (Ա) + 1 (Բ) = 2$ թերթ: Մագաղաթ, միասյուն, ուղղագիծ երկարագիր, եզրահատված: Կարդալ՝ Բար—Աար. առաջին (Բ) թերթը պարունակում է ՃԶէ—ՃՂԱ, երկրորդը (Ա)՝ ՃՂԹ-ՄԳ հարցերը: «Պատասխան» բառի փոխարեն օգտագործված է՝ «Ասող»:

Մանրանկարչութիւն—տերունական նկարներ. «Գուշ[ակ]ումն մարգարէից»՝ 1բ, «Աւետիքն է»՝ 2ա, «Մնունդն է և բազմութիւն հրեշտակաց»՝ 2բ:

«Գալուստ ի տաճար»՝ 3ա, «Մկրտութիւն»՝ 3բ, «Պաշտօնակերպութիւն»՝ 4ա, «Հարսան[ի]քն [ի Կանայ]»՝ 4բ, «Անդամալոյժն է» և Պետրոսը ծովի վրա՝ 5ա, «Գալուստն փրկչին Երուսաղէմ»՝ 5բ, «Ի վերնատունն»՝ 6ա, «Յարութիւն Ղազարու»՝ 6բ, «Եւ Յուդա համբուրէ»՝ 7ա, «Խաչելութիւն»՝ 7բ, «Աւարտմն դժոխոց»՝ 8ա, «Յարութեան փրկչին. Յարութիւն Քրիստոսի»՝ 8բ, «Համբարձումն»՝ 9ա, «Հոգոյ գալուստ»՝ 9բ, «Զորեքկերպեան յաթոնն»՝ 10ա, «Ի դատաստան»՝ 10բ, «Դժոխքն է և մեղաւորքն ի խաւարն»՝ 11ա, ունի նաև լուսանցային նկարներ. Մատթէոս 18բ, Մարկոս՝ 114բ, Ղուկաս՝ 168բ, Յովհաննէս՝ 254բ: Խորաններ՝ 12բ—13ա (Թուղթ եւեբի առ Կարպիանոս), 13բ—17ա (Համարարբառ կանոնք). կիսախորաններ 19ա, 115ա, 169ա, 255ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչնային, հուշկապարիկք, տաճար. սկզբնատառեր՝ կարմիր երկաթագիր. զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գույներ՝ կարմիր, վարդագույն, կանաչ, մոխրագույն, բաց դարչնագույն և այլն:

Վիճակ՝ բավարար. նկարազարդ թերթերի եզրերը հնում նորոգված, սկզբի և վերջի թերթերի եզրերը շուր տեսած, երբեմն կեղտոտված:

Ծանոթ. պատկանում է ծագումով ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Մարգարա գյուղացի, այժմ երևանարնակ (Նիկողայոս Տիգրանյան փողոց, 7/42) Տիգրան Գարրիելի Մարգարյանին: Տիրոջ բարեհաճ նախաձեռնութեամբ 1979 թ. հոկտեմբերին ձեռագիրս բերվել է Մատենադարան, ախտահանվել և վերադարձվել:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

— 12բ-13ա. Թուղթ եւեբի առ Կարպիանոս:—13բ-17ա. Համարարբառ կանոնք՝ Ա.-Ժ:

1. 19ա-113ա. Աւետարան ըստ Մատթէոսի: 113ա-113բ [Նախադրութիւն Աւետարանին ըստ Մատթէոսի]:

2. 115ա-167բ. Աւետարան ըստ Մարկոսի: 167բ [Նախադրութիւն Աւետարանին ըստ Մարկոսի]:

3. 169ա-253բ. Աւետարան ըստ Ղուկասու: 253 բ [Նախադրութիւն Աւետարանին ըստ Ղուկասու]:

4. 255ա-315բ. Աւետարան ըստ Յովհաննու: 254ա [Նախադրութիւն Աւետարանին ըստ Յովհաննու]:

Ծանոթ. շունի «Իրք կնոջն շնացելոյ»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Գրչի

ա. 315բ. Փա՛ռք...|| (317ա) պատուական և հարկեր և ի բարի հարմատոյ շառաւեղն Սառայ մահդասին ցանգացաւ այսմ աստուածախաւս և պաշտաւ լուսափալ սուրբ Աւետարանիս. զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւս սուրբ Աւետարանիս և ետ գրել զսայ ի հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողացն իւրոց, հարն՝ Ազատուն և մարն՝ Նազհարունին, և եղբարն իմում՝ Յովանէս քահանային, որ տարածամ փոխեցաւ առ Քրիստոս և սուք մեծ եթող մեզ, և միւս եղբար՝ Մարաթեոս միակեց, զոր բարի վարիւք հանգեաւ ի Քրիստոս, պահքապահ էր և աղաւթարար, և միւս եղբայր՝ Կարա-

պետ, և զգուտոր՝ զՄարգարիտն (այլ ձեռքով), որ անգաւակ անմխիթար եկաց յաշխարհս, և միւս եղբարս՝ Թումայ և Վարդան, և զգուտորն՝ Աննայ, և զգուտորն՝ Շամամ, և որդին՝ Շահիկն, և զՍտեփանոս քահանայն (այլ ձեռքով), և ամենայն արեան մերձաւորս սորայ յիշեայ, Քրիստոս Աստուած, յորժամ գաս ի դատաստան, քաղցր ձայնիւ կոչեայ զՍառայ մահգասին և զժնաւղսն իւր և զեղբայրսն իւր և զամենայն ազգականս իւր. ամէն:

|| (317 բ) Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Մխիթարի անիմաստ և ախմար գրչի. և իմ անընդունակ գոլ յարուեստս գրչութեան՝ այլ ըստ կարի մերուս, զոր պարգևեաց մեզ մարդայսէրն Հոգին Աստուած, գրեցի, անարժան ձեռամբս՝ յընդիւր և ի ստոյ՛ արինակէ, ի Բրաբերութեանս Հայոց Ջիջ (1477), ի յարքայանիս[տ] յերկիրս Մոկաց, ի գեաւղս. որ կոչի Բոնայշէն, ընդ հովանեան ամենայսուրբ Հոգայն, ի հայրապետութեան Աղբամարայ տեան տէր Ստեփանոսի: Դարձեալ կրկին անգամ պաղատանօք ազաշեմ դձեղ՝ յիշման [ա]րժան անէք զիս՝ զանարժան սուտանուն քահանայ Մխիթար, և զհայրն իմ՝ զՅոհանէս քահանայ, և զմայրն իմ՝ զՄարբայ, և զեղբարսն իմ՝ զԳրիգոր քահանայ և զԿարապետ քահանայն, որ տարածամ փոխեցաւ ի Քրիստոս. և զաւակս իմ՝ զՅովանէս Բահանայ, որ կապեաց դսայ. և զԱռաքել քահանայն և ծաղկազարդեալ պայծառացոյց զսուրբ Աւետարանս: Տէր Աստուած անփորձ պահեսցէ զնոսս ընդ երկայն աւուրս. ամէն: Եւ զՄկրտիչ և զԿարապետն և զՄովսէս սարկաւազն. ամէն:

Մանոթ. «Փառք»-ի բանաձեր հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5027, էջ 263բ:

բ. 113բ

Արդ, ազաշեմ զամենեսեանդ,
որք հանդիպիր այսմ խորան.
որ է հաւաստ մեր պատուական.
ծաղկեալ գրով մատթէսեան՝
զհրաշս և զգործս փրկչական,
սկսեալ ի ծնունդն արրահամեան
ի թիւ առեալ զազգն յուղայեան,
մինչ ի Դաւիթ՝ շորեքտասան,
և ի Դաւթայ շորեքտասան՝
առ գերութեան բարելական,
և անտի թիւ համարեցան
մինչ ի Քրիստոս շորեքտասան,
և արժանի համարեցան
ազինք լինել քրիստոսական:
Ի սուրբ ծնաւղէն իւր մայրական՝
Աստուածածին յոյս փրկութեան,
զստացող սորայ արայ արժան՝
զՍառայ մաղգասին և իւր ծնողն ամենայն
յարքայութեանն քո կոչմանն,
աստուածային տեսչն արժանն. ամէն:

գ. 167բ

Մարկոս գոչէ առիւծայպէս,
հնչմամբ ահեղ և զաւրապէս՝

ի զարհուրումն աղգաց պէսպէս,
 գերդ զախոյեան ձայն ուժգնապէս,
 ցասմամբ թուցեալ թեթևապէս,
 զոր ըմբոնէ արաղաչպէս,
 սկիզբն կաշեալ ի մարգարէս
 զԾսայիասս և զՅովհաննէս,
 և զփորձութիւնս աստի պէսպէս,
 և զսքանչելիքն հրաշաչպէս,
 և զշարշարանքն մեծաչպէս,
 ըզսուրբ թաղումն մարդկաչպէս
 և զյա|| (16Յա) րութիւն անճառապէս
 և զհամբարձումն աստուածաչպէս:

զստացող սուրբ Աւետարանիս զՍառայ մահդասին, որ շորս տարի յԵրուսաղէմ կացեր և շորս լոյս է տեսեր, Քրիստոս աստուած, լուսաւորեալ և դասաւորեալ ընդ սուրբ կուսանացն և ընդ առաքելոցն զհոգի նորա և զծնողացն իւրոց. հարն՝ Ազատին և մարն՝ Նազհարունին, և եղբարցն՝ Յովանէս քահանային և Մարտիրոս միակեցին, և Կարսուպետին, և Վարդանին և Թումային, և զաւակին՝ Աննային, և Շամամին. ամէն:

Դարձեալ կրկին մաղթանաւք, ո՛վ դասք լուսերամից, սուրբ քահանայք և մանկունք եկեղեցոյ և ժողովուրդք հաւատացեալք, ընթերցողք և լսողք, առ ոտս ձեր անգանիմ՝ արտասուալից պաղատանօք և ուղիղ մտաւք, և անխարդախ սիրով, մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ ինձ և ձեզ, և Սառայ մահդասուն, և ծնողաց և աղգականացն նորա. ամէն, ամէն, եղիցի. յիշման արժանի առնէք զմեղաւոր գրիշս՝ զՄխիթար և զծնողս իմ՝ զՅովհանէս քահանայն, և Աստուած զձեզ յիշէ. ամէն:

դ. 253բ Ով եղբայր. զմեղաւորս յիշեա՛ զՄխիթար գրիշն:

ե. 254ա Իսկ Յոհանէս սրայթոհիշ շաշմամբ

մորնչելով արժուաչնման.

հնչեաց ուժգին ահեղ տրփման,
 երաց հրաշիւք զանճառ խորանն,
 և որոտաց ամբոյ նման.

պատմեաց զանճառ Բանն ի սկզբան,
 ի ծոց ծնողին անհատական,
 թէպէտ յարգանդն էր կուսական,
 նոյնպէս ի խաչն, ի գերեզմանն,
 գերդ շող անհատ արեգական,
 և զՅովաննէս յառաջ կոշման,
 վկայ լուսոյն անստուերական,
 և զԱստուած ոչ որ երբէք տեսան,
 բայց միածին ծնունդ Բան,
 սկսեալ յիննին որ ի սկզբան,
 մինչ յետին ունի լրման,

ստացող գրոցս սորայ արժան,
 յարբայութիւնդ բ[ո] կոշման,

զՍառայ մահդասին և զիւր զաղգականքն ամենայն. ամէն:

2. ծաղկոլի

ա. 10ա («Զորեկերպեան յաթոռն» նկարի տակ). Սառայ մահդասին աղաչի իւր մեղաց թողութիւն, նկարող սորայ անիմաստն. փառք Աստուծոյ. ա[մէն]:
 Մանթ. նկարի ստորին մասում իրար կողքի, դեպի աջ նայող երկու դեմք՝ ճերմակահեր կին, մակագրված՝ «Սառայ մահդասին», մյուսը՝ անմորուս սևամազ պատանի, մակագրված՝ «Առաքել». ձախ կողմում՝ նրանց դիմաց և նրանց նայող ծնկաշոր երկու հոգի, առաջինի մակագրութունը՝ «դիս» այսինքն՝ գրիչը, մյուսինը՝ «Սիրուն»: նկարների մակագրութուններն արված են գրչի ձեւերով:

բ. 254բ (Յովհաննէս աւետարանչի և Պրոխորանի նկարի տակ). Առաքեալ յիշեցէք ի Քրիստոս, Աստուած ձեզ յիշէ. ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԼԵՏԱԳԱՅԻ

1. 318ա (բոլորգրով). Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերստին նորոգել տուող սուրբ Աւետարանիս՝ զԶանաղէն և զկողակիցն՝ զԲարսեղն, և զԾնօղան. զհայրն՝ զԲարունակն և զմայրն՝ զԽումարն, և զորդիքն՝ զՆերսէսն և զՄուրաան, և զգտտերքն՝ զԹանաղէն և զՄանրուկն, և զեղ[բ]այրն՝ զՂազարն, և զկին՝ զՇաղրեկն, և զորդիքն՝ զԲարունակն և զՆազարն, և զամենայն ազգատոհմն նորին՝ զկենդանիքն և զհանգուցեալսն. լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք նոցա. ամէն: Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք Զանաղին, որ ետ նորոգել զսուրբ Աւետարանս և զնել ի դուռն Բարիձորոյ Սուրբ Աստուածածնին. և ով որ յանդգնի ծախելով և կամ դրով զնելով, նա զանէժք Կայնինն առցէ և զպատիժն Յուդային և զխաշահանուացն կրեսցէ. ամէն: Գարձեալ Աստուած ողորմի ասացէք բարեմիտ և սրբակրօն մահդասի տէր Յովանէս կրանաւորին. որ յայսմ ամի եկաւ յԵրուսաղէմայ և եղև հերասպետ վանացս, և պաշտառացոյց սուրբ զեկեղեցիս. պաշտառացոյ, Տէր Աստուած, զհոգի նորին և զիւր ծնօղացն. ամէն: Եւ ես՝ Վարդան մեղապարտ Ղաւասուեցի զսուրբ Աւետարանս նորոգեցի. ով որ հանդիպիք, ասացէք նմայ Աստուած ողորմի, և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի լիւր միտանգամ գալուստն. ամէն: Նորոգեցաւ սա ի թվին ՌՃԺԲ (1663). Հայր մեր:

2. ա. 114ա (Բոլորգրով, ժԸ դ.) Յիշեցէք ի Քրիստոս զհաւատարիմ քրիստոնէայն զՄելիքէսէր միակեցն, որ վերըստին ետ նորոգել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց (մի տող բաց) և եղ ի դուռն Բարիձորոյ Սուրբ Աստուածածնին. Աստուած հատուցանէ լիւր հոգին. ամէն:

բ. 318բ Յիշեցէք ի Քրիստոս զՄելիքէսէր, զիւր եղբար՝ Շաղմուրատ, զուրանց կողակից՝ զՆ[ու]րա[ր], զորդին՝ զՈվանէս, զդուստր՝ զԱւմաղան, Շահէն, որ ըստացան զսուրբ Աւետարան յիշատակ իւրանց ամենայն արեան ազգայկանաց. Աստուած զիւրեանց մեզք թողնոյ. ամէն:

գ. 318բ Յիշէք ի մաքրափայլ յաղօթս, ով սուրբ քահանայք, սուրբ բերանով ասացէք. Աստուած, ողորմ զՄելիքէսէրին և կողակիցն՝ Նուրարին, և որոց՝ Հովանէսին, և եղբար՝ Յարութէնին. Աստուած ողորմի ասացէք. ամէն:

Գառձայլ յիշացէք զՄելիքէսէր և եղ[բ]ար Շաղմուրաղին և կողակից նորա և զոր<իս>դիս նորա: Գառձեալ յիշացէք զՄէֆօ, որ առաւ զԱւետարան ի գերութենէն գնոյ, իւր յիշատակ, որ է անմախ մինչ ի գալուստն Քրիստոսի. կամ որ ծախելով կամ գրաւ զնելով զանգէժ Կայնենն առցէ և խաշահանողաց:

Գառձեալ յիշեցէք զՅովանէս, որ է մեղապ[ա]րտ և զիր [կողա]կից ||| որդոց՝ Խէրապետ և |||:

3. Պահպանակ Բա (Շղագրով, ժԸ դ.). Պատուհասից արդարև արժան է գրիչ ախմար, որ իբրև զսա իցէ: Եւ դու՝ տիրացու, սակս շղործելոյ:

4. 12ա (Շշագրով). Մարգար որդի աէս Սարգսի՝ յԱրտոնէ գեղջէ Մշոյ աղատեալ զայս սուրբ Աւետարան յանօրինաց, ի գալն յերկիրս Արարատոյ ի սկզբան բանակի յԲզղիբ, և ապա հրաման առեալ ի խանէն Երևանայ՝ ի սկիզբն ժԹ դարու, առեալ զոմանս ի հայոց Իզդիբու, գայ և առ ձախ ափամբ Երասխ գետոյ, շինէ գիւղ, որ յիւր անուն կոչի Մարգարա. ի 1816 ամի փրկչին շինէ եկեղեցի հողաշէն, և զայս Աւետարան՝ գնեալ յանօրինաց հալալ արդեամբ իւրով, թողու եկեղեցւոյն ի յիշատակ նախնեաց իւրոց, իւր և սերնդոց: Որք քնթեոնոյք, յիշեցէք զՄարգարն և զամենայն արեանառու մերձաւորս իւր:

29

ԱԻԵՏԱՐԱՆ

ժԵ—XV

Թերք՝ 2: Նյութ՝ թուղթ: Մեծուրջուն՝ $25,5 \times 18$: Գրուրջուն՝ երկսյուն (20×6): Գիր՝ բոլորգիր (անկանոն): Տող՝ 21:

Վիճակ՝ եզրամաշ:

Մանր. պատկանում է ծագումով ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Մարգարա գյուղացի, այժմ երևանաբնակ (Նիկողայոս Տիգրանյան փողոց, 7/42) Տիգրան Գարրիելի Մարգարյանին: Գտնվում է նրա ունեցած ամբողջական Աւետարանի (N 28) մեջ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա-2բ [Աւետարան քսա Յովհաննու]. ժԷ. 12—25. «ետուն ինձ և պահեցի ... և նորա ծանէ», Ի. 4—17. «Պետրոս, և եկն նախ ի գերեզմանն ... այլ երթ դու առ եզրարան իմ և»:

30

ՀՄԱՅԻՎ

Ստացող՝ Պօղոս:

ժԸ—XVIII

Թերք՝ 1 (ժապավենաձև): Նյութ՝ թուղթ: Մեծուրջուն՝ 328×11 : Գրուրջուն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր (անփուլթ):

Մանրանկարչություն՝ «Յիսուս Քրիստոս» և «Հրեշտակ» (միագույն՝ սև թանաքով):

Վիճակ՝ սկզբից և վերջից թերի, վերջնամասը քայքայված, եզրամաշ:

Մանր՝ նկարագրելու պահին (30 հունիսի 1981 թ.) եղել է երևանաբնակ Եղիշե Մարգարյանի մոտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վասն դատաստանի — Յանուն Միսիայ, որ անուանեցաւ փրկիչ Յիսուս Քրիստոս...
 2. Վասն շար աշից, շար նիարի — Տէր մեր Յիսուս Քրիստոս երթար...
 3. Վասն գլխացաւի — Սուրբ Միսիանոս և սուրբ Արինոս...
 4. Քիւր գլխացաւի — Յելանէր յանկարծովէն, գոջէր մըռնջէր...
 5. Քիւր վասն նանապարհի ասայգն և ամենայն շար նկարի—Սուրբ նանու սուրբ Միսիանոս...
 6. Քիւր շար աշաց, շար լեզի, շար նիարի — Չար աշք ի ճանապարհին հանդիպեցաւ Տէր մեր Յիսուս Քրիստոս...
 7. Աղօթք պահպանութեան — Եւ ևս յամենայն ժամ դայս ասեմ...
- Մանր. Վեց տարբեր տեղերում ունի հմայանշաններ. երեքը՝ բոլորակի մեջ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

(Բոլոր նյութերի վերջում) «...ի դէմս ծառայիս Աստուծոյ Պօղոսին»: «...ի դիմաց ծառայիս Աստուծոյ Պօղոսին»: «...փրկեցէք ծառայիս Աստուծոյ Պօղոսին և օգնեցէք» և այլն:

31

ԺՈՂՈՎԱԾՈՒ

[ՌՃՂԱ.]—174²

Քերք՝ 344: Պրակ՝ Ա-ԼԲ×8,10 կամ 12 (Ա՝ 6, Ի-ԻԳ, Իէ-ԼԲ՝ 8, Ի-ԻԲ, ԻԳ, ԻԳ՝ 10, Բ, ԺԴ՝ 11, Գ, Ե-ԺԳ, ԺԵ-ԺԺ, ԻԵ՝ 12, Դ՝ 14): Նյութ՝ թուղթ (լուսադրոշմներով, որոշ թերթեր՝ դեղին): Մեծություն՝ 21,3×15: Գրություն՝ միասյուն(15,5×10,2): Քիւր՝ նոսրգիր: Տող՝ 24: Կազմ՝ դրոշմազարդ կաշի (մի կապիչով). միջուկը տախտակ. աստառը ծաղկաթուղթ:

Մանրանկարչություն — ճակատազարդ. 7ա, 81ա, 106ա, 159ա:

Վիճակ՝ բավարար: Սկզբից և միջից սլակասավոր. 6 և 7-րդ թերթերը կիսով չափ պատուված, 106-րդի եզրը պոկված ընկած: Խոնավութունից գունափոխված և թանաքը տեղ-տեղ ճապաղած:

Մանր. Պատկանում է մոսկվարենակ ճարտարապետութեան պատմարան Հովհաննես Խալիփախչյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

—1ա-2բ [Յանկ նիւրոց]—||| Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ՝ ԻԳ... Յաղագս վասն հաւատոյ՝ ՀԴ:

1. Յա-6բ [Ոտանաւոր ըստ տառից այբուբենի]:—... դարդարութիւն յայժմ զգեսցի ք [և անդ փառօք պայծառացի ք:] էից լուսոյն հանուրց ծագող ... Չան շար ասէ զազահութիւն|||:

Մանրթ. սկզբից ընկած է Ա-Ե տառերի և Գ-ի առաջին երկտողի թերթը, Գ-ի վերջին երեք տողի և Պ-Վ տառերի թերթը՝ 6-րդը կտրված է, Տ-Ք տառերի թերթն՝ ընկած:

2. 7ա-57բ Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանչին—Այս է որ ասէ. Երանի աղքատաց հոգով... և ասէ. Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ կամաւ երեսխայութենէ ի մկրտութիւն. մկրտի յայնժամ ի ձեռս իմ՝ յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ և այլն:

3. 58ա-65բ. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մարկոսի — Մարկոս աւետարանիչ՝ քանզի Աւետարանաւ ի Քրիստոս Յիսուս ծնեալ էր զնա... զերիս ամս և ամիս վեց, որ և ասէ Պողոս. Սատակեցէ Յիսուս հոգով բերանոց իւրոյ:

4. 65բ-73ա. Համառօտ պատմութիւն Յեսուեա որդոյ Նաւեա—Յեսու որդի Նաւեա էր ազգէն Երրեմի՝ որդոյն Յովսէփայ... և վաղճանեցաւ Եսու ճ և ժ ամաց, և թաղեցին զնայ:

5. 73ա-75բ. Եւ այլ խրատ Դանիէլի մարգարէի. որ ասէ. Փոխեցաւ քաղաւորն կերպարս զազանի—Եւ զի թագաւորն Նաբուգոդոնոսոր յորժամ ետես զհրաշս... և ոչ իմանան զկորուստ անձանց իւրեանց ի տանջանս յախտենից:

6. 75բ-77ա. Աղագս անառակ որդոյն — Որպէս պատմէ Աւետարանն, երէց որդին կոչէ հրեշտակս... Եւ դարձուցէ յերկինս ի հայրենի ժառանգութիւն մեր ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք և զօրութիւն յախտեանս. ամէն:

7. 77ա-79բ. [Գրիգորի Տաթևացոյ] Քառոզ ի բան մարգարէին Դարի. Առաջնորդեա ինձ ի շախղ պատուիրանաց Բոց — Երկու են ճանապարհք կենցաղոյս... ամենայն բազմահոյլ տանջանաց դժխոցն ի փառս և ի գովեստ անուան իւրոյ. և նմա փառք յախտեանս ամէն: (Ամբան հատոր, քարոզ Ա):

8. 80ա-80բ. Նշանք այնոցիկ՝ որք հաւատան, երբիցեն զհետ այնոցիկ՝ անուն իմ զես հանցեն—Ո՛ւր իցէ գտանել այսօր զհաւատացեալն որ... սուտի ասէ ցՀայր. Որ ինչ իմ է, ամենայն քո է, և որ ինչ քո է, այն իմ է:

9. 81ա-103բ. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին քառ Ղուկասու՝ ստաշարանութիւնս — Ղուկաս պատկերահան և բժիշկ անտիրացի ... զոր իսկ արար յերրորդում աւուր աննելով ի մահուանէ:

10. 104ա-105բ. Ատուն կիրակէի Յարութեան Տեառն—Աշակերտք երկու երթային ընդ երեկս ի գիւղ մի ... որպէս մտմ որ հալէ զհօրն, հզր աստուածութեան այնպէս հալէր զկերակուրն:

11. 106ա-133ա. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին քառ Յովհաննու՝ յառաջարանութիւնս — Յօհաննէս առաքեալ և աւետարանիչ՝ սիրական Յիսուսի... զնոյն ներողութիւն և քաւութիւն քահանայից և ժողովրդոց. ամէն:

12. 133բ-139ա. [Գրիգորի Տաթևացոյ] Քառոզ վասն համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի — Ի վերայ յայսմ բանի շորս ինչ տեսանելի է ... ելանել յերկինս զօրութեամբ և ողորմութեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յախտեանս. ամէն: (Չմբան հատոր, քարոզ ՃԾ):

13. 139ա-144բ. [Գրիգորի Տաթևացոյ] Դարձեալ քառոզ համբարձման՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, և նստիլն ընդ աջմէ Հօր — Ասէ թէ Որդին Աստուծոյ որչաք կայր... և երկրպագութիւն ընդ Հօր իւրում և Սուրբ Հոգոյն յախտեանս. ամէն: (Չմբան հատոր. քարոզ ՃԾԱ):

14. 144բ-155ա. [Գրիգորի Տաթևացոյ] Քառոզ վասն Սուրբ Հոգոյն զպստեան՝ բան որ ասէ. Դոյ ի նմա հոգի մտաւոր — Այս է Երրորդութիւն Սուրբ գերագոյնդ ... ասէ առաքեալն. Մի՛ շիշուցանէք Հոգին Սուրբ: (Չմբան հատոր. քարոզ ՃԾԲ):

15. 155թ-158թ. [Գրիգորի Տաթևացույ] Գառնեայ ֆարոզ վասն Սուրբ Հագոյն. երևեցաւ իբրև հրոյ, լցան ամենեկեան Հոգով Սրբով—Առջնոյն՝ թե որպէս ճանաչեն... յոյժ և անդրաւ փառք յաւտեանս յաւիտենից. ամէն: (Չմբան հատոր, քարոզ ՃԶԹ):

16. 158թ-165թ. Նորին ֆարոզ ի բանն, որ ուսոյց մեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Հայր մեր որ երկինս, յորժամ յաղօրս կացցէիք, ասասցիք. Հայր մեր որ երկին — Են ամենայն աղօթք յոյժ պատուական ... և դարձուցէ յերկինս ի հայրենի ժառանգութիւն մեր՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս: (Ամբան հատոր, քարոզ Բ):

17. 165թ-175ա. Նորին ֆարոզ. Հայր մեր որ երկինս—Երեք են եղանակք օրհնութեան... զօրութիւն և բարեբանութիւն յոյժ և անդրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: (Ամբան հատոր, քարոզ Ժ):

18. 175ա-179թ Նորին առաջին ֆարոզ վասն հաւատոյ՝ քէ է Աստուած, և որ խնդրեն. լինի պարզեալու — Ուսուցանէ աստուածարան մարդարէն նսալիս... և սովաւ ընթացուք յաւիտենից կեանս: (Ամբան հատոր, քարոզ ԺԲ):

19. 179թ-185թ. [Նորին] այլ և հաւատ առանց գործոյ մեռեալ է — Ասեն վարդապետք թէ առաքինութիւն է... և հանդերձեալ բարեացն արժանացուք: (Ամբան հատոր, քարոզ ԺԳ):

20. 185թ-186թ. Նորին ֆարոզ յուսոյ — Երեք են աստուածային առաքինութիւնք ... հաստատէ և գործք բարի անէ յոյս բարի: (Ամբան հատոր, քարոզ ԺԵ):

21. 186թ-190թ. Յայլմէ ֆարոզ վասն սիրոյ — Ասեն իմաստունք թէ թշնամութիւն ... որ և զմեզ արժանիս արասցէ Քրիստոս սիրոյն իւրոյ. ամէն: (Ամբան հատոր, քարոզ ԺԶ):

22. 191ա-192ա. [Նորին] և այլ ֆարոզ՝ Գովելի են գեղեցիկ և պարսաւելի են զարշելիկ — Եւ բազում զովութիւն են առաքինութիւն ... զանազան պարգևս բարեաց Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերում փառք և զօրութիւն ընդ Հօր մեր և ամենասուրբ Հոգոյն. ամէն: (Ամբան հատոր, քարոզ ԺԷ):

23. 192ա-193թ. Քարոզ վասն օր մահուան — Ո՛վ մարդ, մինչև յերբ անկեալ դնիս... անուան իւրոյ մասնակից արասցէ զձեզ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք և զօրութիւն ընդ Հօր և Ամենասուրբ Հոգոյն. ամէն:

24. 193թ-195թ. [Գրիգորի Տաթևացույ] ֆարոզ վասն ամ[ու]սնութեան — Յորժամ քստեղծ Աստուած առաջին մարդն ... և անդ ի հրոյն տանջանաց, որում փառք յաւիտեանս ամէն: (Ամբան հատոր, քարոզ ԻԶ):

25. 195թ-199թ. Նորին ֆարոզ վասն արդարութեան, որ ասէ. Սերմանեցէիք և հեծեցէիք պառզ կենաց — Վասն է՞ր է սերման օրինակ զարդարութիւն ... զբարութիւն յաւիտենական կենաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն: (Ամբան հատոր, քարոզ ԻԷ. սկ. էջ 128-ից):

26. 199թ-208ա. Նորին ֆարոզ վասն է (7) խորհրդոյ. Մկրտութեան. երէ ով ոք ձնցի ի ջրոյ և ի հոգոյ — Բայց նախ զայս հարցանեմք ... զի սոքա ի մեզ իցեն... զի տեսանիցեն զփառս իմ: (Ամբան հատոր, քարոզ ԼԲ):

27. 208ա-217ա. [Նորին]՝ այլ ևս որ առ Յիսուս հաց, օրհնեաց, զոհացաւ, երեկ և ետ աշակերտս, ասէ. Առէի կերէիք, այս է մար[մին իմ] — Վարդապետք ասեն, թէ սէրն ... եկ ծառայ բարի և հաւատարիմ, մուտ ուրախութիւն Տեառն, բո, ի փառս ամենասուրբ Երրօրդութեան... (Ամբան հատոր, քարոզ ԼԶ):

28. 217ա-220ա. Ետին քարոզ վասն պսակի օրհնութեան, որ ասէ. Անն-
ցէք և բազմա[ցարուք] — Արարչագործն Աստուած յորժամ ստեղծեաց...
տեսեան անմահ փեսային ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր ... (Ամբան հատոր,
քարոզ ԽԳ):

29. 220ա-224բ. [Ետին] Քարոզ վասն մեղաց՝ վնաս հոգոյ և մարմնոյ —
Ձի մեղքն ոչ միայն հոգոյն... Աստուած մոռանա և անյիշաշար լինի, զի մարդա-
սէր և ողորմած է և նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: (Ամբան հատոր,
քարոզ ԽԹ):

30. 225ա-236ա. Գիրք խոստովանութեան զղջացելոց — Կարգ և սահ-
մանն պարտ է ... մեղաւորաց որ ապաշխարիցէ, և Քրիստոսի փառք յաւի-
տեանս. ամէն:

31. 236ա-238բ Քարոզ վասն ապաշխարութեան — Այժմ ասասցուք ա-
պաշխարութեան հատուցումն ... հասանիլ յերկնից արքայութիւնն ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր, զոր ընդ Հոգոյն...

32. 238բ-239բ. Վասն հպարտութեան — Եսայի ասէ. Վա՛յ քեզ... հպար-
տութեան վիշապին, և Քրիստոսի յաւիտեան թագաւորին փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

33. 240ա-241ա. Վասն նախանձու. — Եւ կոչի սա Աստուածային գիրսն
... հոգին իջանի ափակոծ դժոխոց:

34. 241ա-242ա. Վասն բարկութեան — Երբորդ բարկութիւն ասէ... զհո-
գիս մեր, զոր Տէրն մեր Քրիստոս շնորհեցէ մեզ. ամէն:

35. 242ա- 242բ. Վասն ծուլութեան — Եւ զինչ է ծուլութիւնն ... նոյնոյ
տեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է պատիւ և փառք յաւի-
տեանս. ամէն:

36. 242բ-243ա. Վասն ազահութեան — Եւ թէ զի՞նչ է ազահութիւն... ախտ
է ազահութեան, որում պատիւ և փառք յաւիտեանս. ամէն:

37. 243ա-244բ. Վասն որկրամոլութեան — Որ է որովայնամոլութիւն...
արժանի լիցուք յաւիտենական կենացն և նմա փառք յաւիտեանս. ամէն:

38. 244բ-246ա. Վասն բղջախոտութեան — Բղջախոտութիւն, որ է անկարգ
ցանկութիւն... արժանասցուցէ զմեզ Քրիստոս, և նմայ փառք յաւիտեանս.
ամէն:

39. 246ա-247ա. Հարանց վարք — Կին մի զղջացաւ ընդ շար գործ իւր
... ասէ Յովհաննէս ի սուրբ Աւետարանն, թէ Բանն մարմին եղև և բնակեաց
ի մեզ:

40. 247ա-248ա. Վասն խոստովանութեան՝ որպէս տեսանէք սատանա
զմարդիք, որ խոստովանէին և կու գային և սպիտակ կելուին — Քահանայ
ուն... և ոչ այն կեանք ունիս թողութիւն մեղաց:

41. 248ա-255ա. Սահմանք կանոնականք — Այս է, թէ յորժամ յաղօթս
կան երէկի պահանել ... այլ որ ետ ձեզ յորէնս դայս, հաստատուն կացէք յա-
մենայնի, զոր լուարուք յինէն, և մի անցանէք, զի ձեզ բարի լինիցի և երկայ-
նակեաց լինիցիք:

42. 255ա-268ա. Կանոն Փիլիպոսի առաքելոյն — Ձի հրամայեաց առա-
քեալն... եմ քան քեզ ասելով ելանէ, առնեն պատուհաս կրեսցէ:

43. 268ա-268բ. Կանոնական բանք Անտիոքայ — Երիցունք որ ի գիւղս կամ
ի քաղաքի իցեն ... ննչեցելոց քան զամենայն առաւել օգուտ է պատարագն:

44. 268բ-275բ. Սերոյն եղիչէի Վասն դիահարաց՝ թէ պա՞րտ իցէ օրէնս

տալ մինչդեռ դեռ նմա իցէ կամ երեխայից և վասն որացողաց — Բազում ախար են ի մարդ ... առքինութենէ՝ մինչև օր վախաճնի իւրոյ:

45. 275բ-277ա. Յովհաննու Ոսկերեւանու ասացեալ՝ ննջեցելոց — Արդ, օգնեսցուք գնացելոցն... բնդ ծառայութեան արկանել, որ հաշտեսցի բնդ մեզ մարդասէրն Աստուած, և Հոգին Սուրբ եղիցի բնդ ձեզ. ամէն:

46. 277ա-282ա. Վասն Բահանայից գգուչութեան — Քահանայից պարտ և արժան է գգուչութեամբ... և Քաղկեդովնի դաւելորդ հրամանսն ոչ բնդու նիմբ:

47. 282բ-283բ. Վասն նկարեալ պատկերի — Պատկերս նկարեալս փրկչական ... փառատրեալն ամենայն արարածոց յաւ. յաւ. ամէն:

48. 284ա-293ա. Աղագս վասն հաւատոյ — Եւ արդ, Քրիստոս ասպէս աւետարանեաց... և իմաստասցի առնել դամենայն գրեալսդ ի դմայ:

49. 293ա-296բ. Յաղագս ծնընդեան — Արդ, և մեզ արժանի է գնալ... պատանեցի և ելեալ հոգ ի սրբոյ տաճարէն:

50. 296բ-306բ. Վասն [Հոգւոյն] իշանելոյն առ կոյսն — Զարարիայ մարգարէն զիւր հրաշքալի ... նայ և աւագակն հմոյծ ի գրախտն ի ձեռն խաշին իւրոյ:

51. 306բ-310բ. Յաղագս ջրոյ և խմորոյ — Դարձեալ դջրոյն խառնումն իմանամբ ... ոչ է պետք այլ և այլ ջուր խառնեցեալ:

52. 310բ-312բ. Վասն տօնի ծննդեան Տեառն, որ է յունուարի վեց — Յաղագս ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... և արդ, զօճուան ձեր դուք գիտէք:

53. 312բ-313բ. Յաղագս մկրտութեանն — Դարձեալ տեսանեմք զմարմին և դարինն ... նայ և բաղմին ոչ հնազանգի:

54. 313բ-314բ. Յաղագս չորս արոտոյն աւետարանչացն — Դարձեալ Դ (4) աթոռակալ էք գտեալ... Եւ արդ, ահայ ասացաք ձեզ զչորից աթոռոցն, զոր գրեցէք առ մեզ:

55. 314բ-315բ. Յաղագս Հայոց, որ ոմանք ասեն հերձուածս — Եւ արդ, բազում թուղա են եկեալի ի Հոռմոց ի աշխարհս Հայոց... բայց յետոյ պատու խաղաղութեան:

56. 315բ-320բ. Յաղագս ցեղից երկոտասան ազգ, որ միոցն Իսրայէլի — Դարձեալ ասեմ և խօսիմ իսկ բնդ ձեզ... առաջինք յետինք և յեփնք առաջինք՝ ինքն Յիսուս ասէք:

57. 320բ-322բ. Յաղագս որ Հայոց և վերջին ասել է փոքր — Արդ, լուր բանիցս այսոցիկ... զորդիք Աստուծոյ գոչեսցին, հրամայեաց Յիսուս:

58. 322բ-323բ. Վասն առաջատրի պահոցն — Եւ արդ, ահայ լսեմք բազում անգամ ... ունիմք հաստատուն մինչև ցկատարած աշխարհի:

59. 323բ-325ա. Յաղագս Զառակին մատաղ առնելոյ — Դարձեալ լսեմք ի ձեռն և զարս ինչ, թէ Զատիկն ... ի կերակուրսն յաւուրս պահոցն որպէս զձեզդ:

60. 325բ-326ա. Յաղագս ձկան ուտելոյ — Իսկ ամենայն Աստուածայշունչ գիրք ... մատաղն ի բնութիւն առնէք և արհամարհէք:

61. 326ա-334բ. Վասն Յինանց չորեքշաբ[ա]րու և ուրբարու — Եւ դուրք Յարութեան ... ևս Պօղոս թէ նստաւ բնդ աշմէ զօրութեանց ի բարձունս:

62. 334բ-335բ. Փիլոնի բառնայն — Դարձեալ պատանեցաւ ի ձենջ կարգ ... ոչ գիտնոց շնորհ և ոչ դօրաւարաց պատերազմ:

63. 335բ-337ա. Յաղագս անկար պատմունանին Քրիստոսի — Պարտ է իմանալ վասն անկար պատմունանին... ամենայն հաւատացեալ բրիստոնէից, ևս՝ անարժան գծողիս:

64. 337բ-339բ. (Անխորագիր) Նախ քան դամենայն խնդրեսցուք թէ արարածս պատճառ լինի գիտութեան... Քրիստոսի սիրոյն համար զշարակամաց ոտքն համբուրես:

65. 340ա-340բ. Ողբ եղկելոյս — Ռահին կենաց ոչ հետեցայ, ի որ քահանայ ևս անուանեցայ, Նովիւ լինել յանձին քնկալայ ի և ի գալլուն ոչ պատրաստեցայ... Սոքօք մատիր աղերս մայրօրէն՝ առ միածին ծնեալն որ ի քէն, իմի թէ գթայ ի ժողովս ամէն՝ և զմեզ փրկէ ի շար բանսարկուէն:

Մանր. 70 տողանոց այս շափածոն, հնարավոր է, գրված է հիմնականում ծածկագիր ծայրակապով (ակրոստիքոս), որովհետև այդ եղանակով ընթերցվում է երկու բառ. «Վարդապետի երգ». տողերի սկզբնատառերի հերթագայությունն այս է. «ՌՈՂԵԻԿՅԵՄԱՄԿԻԼՅՔՈՍԷԽԱՎՊՄՈՒԶԶԿՏԵՄԵԶԱՍՔՄԵԹԵԹԹԳԱՔՈԶԻԶԶԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳ ԼՍԱՄԵ», իսկ քառյակների առաջին տողերի սկզբնատառերը՝ «ՌԻՄԻՈՍՈԿԵԹԵԳԶԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳ ԼՍԱՄԵ»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

341ա-344ա. |||եպի աստուածային շնորհացն ժողովարան՝ անխախտելի տեղի և հոգւոյ... իսկ մեք ըստ մերում աղարութեանս սուղ ինչ պատճառս տուաք բանի և զկա|||:

Մանրթ. հավանքար այժմ էական մասն ընկած այս գրչության հիշատակարանից է ժժ դարում Օվանես Ասմաովը կարգացել գրչության թվականը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

(Կազմի Բ փեղկի աստառին, շղագրով). Այս գիրքը կրթվել է 1742-ին. ևս գրենցի պաղարէն 1850-ին, օհոստոսի 10-ին. Օվանէս Միֆաէլեան Ասմաով:

ՅԱՂԱԳՍ ՊԱՄՄՈՒԹԻԻՆՆ ՎԱՐՔ

Նոր-Նախիջևան

ԺԹ—XIX

Թերք՝ 103. չգրված՝ 1աբ, 99ա-103բ: Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 17,4 × 10,5: Գրուրյուն՝ միասյուն (14 × 7,6): Գիր՝ շղագիր (նոտրանման): Տաղ՝ 32: Կազմ՝ դրոշմաղարդ կաշի. միջուկը՝ սովարաթուղթ. աստառը՝ ծաղկաթուղթ: Պահպանակ՝ 1-1, մաս կազմաստառի:

Վինակ՝ կազմն անջատված, կաշին մեջքի մասում պատառոտված, թրղթերը որոշ տեղերում ջուր տեսած, թերթերի մեծ մասը խիտա թանաքակեր՝

ձախ լուսանցի դժով թերթերի մեծ մասը պոկված կամ պոկվող, թանաքի թթվայնության քայքայող ներգործությունը շարունակվում է և ձեռագիրը հիմնավին փշանալու եղբին է:

Ծանոթ. Պատկանում է մոսկվարենակ Հարտարապետության պատմարան Հովհաննես Խալփախչյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

— 2ա. Յաղափս պատմութիւնն վաբէ: Քրիստոնեաից յարկ է գիտնալ թէ հայրքն որպէս կուսուձանեն:

[ա]. Գլուխ առաջինն՝ թէ Տէրն հայն ապկիս որքան կու սիրէ և որքան աշխատաններով յրբաշկներ արիլ է:

[բ]. Գլուխ երկուսում՝ թէ որպէս գիտնալ և ճաշնալ Սուրբ Երրօրդութիւնն.

[գ]. Գլուխ երեքում՝ թէ որպէսի հաւատ ունենալ և հաւատալ Աստուծոյ

[դ]. Գլուխ 4-ում՝ որպէսի գործք և ծառայութիւնն և աղգատած տալ ոգորմութիւնն.

[ե]. Գլուխ 5-ում՝ որպէսի խօստովանել և մեղած թողութիւն էստանալ.

[զ]. Գլուխ 6-ում՝ մարդ անհաւատ և մարդ հաւատով՝ սոձա երկոձաին խօսածկութիւնն, որ է վիճարանութիւններն:

Ծանոթ. Շարադրված է աստվածաշնչական (հիմնականում՝ նոր-կտակարանային) քաղվածք-բնարանների մեկնությունների ձևով:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2ա. Թէպէտ ատու՛ պիտի պատմեմ. բայձ յառաջ դայս ծանուձանեմ, որ ես ամենևլին գրավարժ՝ Էիր և կարգալ յմուտ շէմ և մի՛շտ տէէտութեամբ սղալ կէբեմ:

33

ԿԱՄՔ ԲԱԲՑ ԵՒ ՉԱԲՑ

Նոր-նախիջևան

[ՌՅԱ.]—1852

Թերք՝ 32 (էջակալված՝ 1—64): Պրակ՝ Ա-Գ×8: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 18,4×11: Գրություն՝ միասյուն (13,2×6,7): Գիր՝ շղագիր (նոտրանման): Տող՝ 31—34:

Վիճակ՝ անկաղմ, թուղթը փշրվող, եզրամաշ, որոշ թերթեր անջատված:

Ծանոթ. Պատկանում է մոսկվարենակ Հարտարապետության պատմարան Հովհաննես Խալփախչյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա (էջ 1). Կամք բարօ և շարօ — Կամք բարօ, որ է՝ կամեցաւ Աստուած ամենայն ինչ բարի անել և արաւ, նա ևս կամեցաւ արարացօց ուսուցանել ըզբարեբարութիւն և ուսուց...: Կամք շարօ, որ է՝ Սաղաեին կամեցաւ ամենայն

ինչ շարութիւն անել և արաւ, նա ևս կամեցաւ արարացօց ուսուցանել ըզշարութիւնն իւր և ուսուց...

